

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՆՈՐ ԲԱՌԵՐ

Դ պրակ



Երևան

«Աստղիկ» հրատարակչություն  
Երևան- 2018

The National Academy of Sciences of the Republic of Armenia  
H.Acharian Institute of Language

Национальная академия наук Республики Армения  
Институт языка имени Р. Ачаряна

# **NEW WORDS**

**Volume 4**

# **НОВЫЕ СЛОВА**

**Выпуск 4**

**Yerevan – 2018 - Ереван**

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա.Ս.Գալստյան, Ս.Ա.Գալստյան, Ֆ. Ա. Հակոբյան Գ.  
Կ. Հովսեփյան, Ա.Գ. Սահակյան, Լ.Ե. Սահինյան:

ՆՈՐ ԲԱՌԵՐ  
Դ ԿՐԱԿ

«Ասողիկ» հրատարակչություն  
Երևան-2018

ՀՏԴ 81՝374=19  
ԳՄԴ 81.2Հ-4  
Ն 930

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ ք. գ. դ. Վ. Լ. Կատվալյան  
Գրախոս՝ ք. գ. թ., դոցենտ Լ. Գ. Թելյան

Ն 930 Նոր բառեր/ Կազմողներ՝ Ա. Ս. Գալստյան (ղեկավար), Ս.  
Ա. Գալստյան, Ֆ. Ա. Հակոբյան, Գ. Կ. Հովսեփյան, Ա. Գ.  
Սահակյան, Լ. Ե. Սահինյան.- Եր.: «Ասողիկ» հրատ., 2018. Դ  
պրակ.- 172 էջ:

Սույն գիրքը «Նոր բառեր. Գ պրակի» շարունակությունն է:  
Գրքում ներկայացված են մամուլում, գեղարվեստական և գիտական  
գրականության մեջ գործածված բառեր, որոնք գրանցված չեն բա-  
ցատրական և նորաբանությունների բառարաններում: Աշխատանքը  
կարող է օգտակար լինել հայոց լեզվի բառագիտությամբ հետա-  
քրքրվող մասնագետներին, ուսուցիչներին, բանասիրական ֆակու-  
տետների ուսանողներին, լրագրողներին, հրատարակիչներին, թարգ-  
մանիչներին:

ՀՏԴ 81՝374=19  
ԳՄԴ 81.2Հ-4

ISBN 978-9939-50-424-7

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2018

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Նոր բառեր. Դ պրակը» պարունակում է շուրջ 1700 բառամիավոր, որոնք գրանցված չեն պրակի վերջում թվարկված բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են խոսքի մասային պատկանելությունը, բառի բացատրությունը, օրինակը, աղբյուրը: Տրվում են բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը տրվում է ըստ տվյալ տեքստում ունեցած նշանակության:

Բառարանը կազմել են՝ Ա.Ս.Գալստյան (300 բառահոդված), Ս.Ա. Գալստյան (600 բառահոդված), Ֆ.Ա. Հակոբյան (300 բառահոդված), Գ. Կ.Հովսեփյան (250 բառահոդված), Ա.Գ. Սահակյան (150 բառահոդված), Լ.Ե.Սահիճյան (100 բառահոդված):

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ած- ածական

բ. - բայ

բժշկ. - բժշկական

բնատ. - բանաստեղծական

գ. – գոյական

գղտնտ. – գյուղատնտեսական

գրկն. – գրականագիտական

դրձվ. - դարձվածք

դիպվ. -դիպվածային

երժշտ. – երաժշտական

ժրգ. - ժարգոնային

իմ.նորբ. – իմաստային նորաբանություն

իրավ. – իրավաբանական

լեզվբ. -լեզվաբանական

խակց.- խոսակցական

կենս. -կենսաբանական

կր. և չբ. – կրավորական և չեզոք բայ

հեզն. – հեզնական

հզվդ. - հազվադեպ

հրկտր դ. – հարակատար դերբայ

մկբ. – մակբայ

մարգ. – մարգական

մանգ. - մասնագիտական

նբ. – ներգործական բայ

շին. - շինարարական

ռազմ. – ռազմական

սնտո. - սնտոխապաշտական

տեխն. - տեխնիկական

տնտգ. – տնտեսագիտական

փխբ. – փոխաբերական

քղբ. - քաղաքական

## Ա

ԱԴԱՄԱՆԴԱԿՆԻՔ, գ. **Ադամանդե կնիքով, որպես կնիք ծառայող ադամանդով: Ադամանդակնիքով** մատանի (*ԺՄ, էջ 416*):

ԱԴԱՄԱՆԴԱՊԱՏ, ած. **Ադամանդներով պատած:** Հասան Ջամալը նայում էր իր դեմ հանդիման նստած կնոջ ականջներին, որոնց վրա պսպղում էին **ադամանդապատ** երկու գինդեր (*ՄԵ, էջ 98*):

ԱԶԳԱԲԱՇԽԱԿԱՆ, ած. **Ըստ ազգային պատկանելության նշված:** 1914թվականի հունվարի 1-ի մարդահամարի՝ ցարական կառավարության վիճակագրության համաձայն գծվել է Արցախի **ազգաբաշխական** քարտեզը, որտեղ տարբեր գույներով նշված են հայկական և այլ բնակավայրեր (*Ազգ, 25.11.2016*):

ԱԶԳԱՆՎԻՐՈՒՄ, գ. **Ազգին նվիրվելը: Ազգանվիրումի,** հայրենասիրության, ինտելեկտի փոխարեն փողը դարձավ չափանիշ (*Իր., 19.05.2017*):

ԱԶԴԱԿԱՆՉԵԼ, բ. (փխբ.): **Ձայնել, ազդարարել:** Դեռ հեռվից նկատեցի նրան. տներից մեկի պեռավաքին կանգնել, իր նման մեկին էր **ազդականչում** (*ՄՀ, էջ 44*):

ԱԶՆՎԱՏԻՊ, ած. **Ազնիվ տիպ՝ տեսք ունեցող: ... Ազնվատիպ** մարդ (*Բ 2, էջ 667*):

ԱԹՈՌԱԹԻԿՆԱԿ, գ. **Աթոռի հենակ՝ թիկնակ:** Նստել ուղիղ, առանց **աթոռաթիկնակին** կոնթելու (*ՀԱՅ*):

ԱԼՄԱՍՏԱԶԱՐԴ, ած. **Ալմաստ(ներ)ով զարդարված:** Աստղացան սքանչելի գիշերները թվում էին **ալմաստազարդ** թավիշ հագած հպարտ դիցուհիներ (*Մեր., էջ 104*):

ԱԼՐԱՂԱՑԱՏԵՐ, գ. **Ալրադացի տեր: ... Ալրադացատերերի ...** մեծ մասն իրենց աղջիկների համար երագում են կրպակի հաշվեսեղանը .... (*Բ 10, էջ 257*):

ԱԼՐԱՂԱՑՊԱՆ, գ. **Ջրադացյան:** ... Հաշվենկատությունից էր ամուսնացել .... **ալրադացյանի** միակ դստեր հետ (*Բ 10, էջ 186*):

ԱԾԽԱԶՅՈՒԹ, գ. **Ածխի՝ ածուխից ստացվող ձյութ: ... Ածխաձյութից** և կերակրի աղից նյութեր մշակող գործարանների տրեստ ... (ԱՏ, էջ 22):

ԱԿԱՆԱԲՈՒՅՐ, գ. **Թանկագին քարերով գլխարկ՝ խոյր:** Երբ արդեն շատ նեղն է ընկնում, հերթով մի քար է հանում տոհմական **ականախոյրից** և թաշկինակի մեջ փայթաթած տանում է ականագործի մոտ (Կվին, էջ 229):

ԱԿԱՆԱԳԱՅԹՅՈՒՆԱՅԻՆ, ած. **Ականի պայթյունից առաջացած:** Սպանվածն ապրիլյան պատերազմի ժամանակ **ականապայթյունային** վնասվածք էր ստացել (ՀԱԳ):

ԱԿՈՒՄԲԱՏԵՐ, գ. **Ակումբի տնօրեն՝ տեր:** Թայվանցի **ակումբատերերը** հետաքրքիր լուծում են գտել նման տեսարան ստանալու համար.... (ԳԹամ., էջ 20):

ԱՂԱՃԱՏԻՃ, գ. **1.Աղակալած ճահիճ: 2. Ճահիճ, որտեղից աղ են արդյունահանում: ... Աղաճահիճները** այցելելու իր ցանկությամբ նա ինձ խաբել չի կարող (Բ 8, էջ 96):

ԱՂԱՆԴԱԲԱԶՄՈՒԹՅՈՒՆ, գ. **Աղանդավորների բազմություն:** ... Շատ հեշտ է դիմագուրկ հոտի վերածված **աղանդաբազմությանը** ցիրուցան անելը (Իր., 17.04.2018):

ԱՂԱՎՆԱԹՈՒՅՐ, ած. (բնստ., փխբ.): **Մաքուր, անարատ:** – ....Քո աղոթքը բարի, բեղուն, //Մեր սրբազան հայոց հողում, // **Աղավնաթոյր,** սիրով լեցուն // Թև է առնում ու թևածում (ԳԹ, 01.07.2016):

ԱՂԲԱԿՈՒԼ, գ. **Աղբատար:** Երբ արջուկը **աղբակուլի** անցքի մեջ չմտավ, Ազնեսը պոկեց նրա թևերը (ՊՇ, էջ 108):

ԱՂԵՐՄԱՃԻՉ, ած. **Աղերսագին ճիչ պարունակող:** Վկայությունն էմ ես նրանց **աղերսաճիչ** աղոթքների (ԳԹ, 20.04.2018):

ԱՂՈԹԱԾԻՆ, ած. **Աղոթքից ծնված:** Մինչև աշխարհի **աղոթածին** լինելու մեջ համոզվելը, Սամվել Խալաթյանը անցել է կյանքի երեք բովով.... (ԳԹ, 23.09.2016):

ԱՂՈԹԵՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Աղոթերգ:** Այստեղ՝ (փխբ.) **դայլայլ:** Խոտը իշխշաց, թռչունների առավոտյան **աղոթերգությունը** մի պահ լռեց.... (Աղին, թ. 5, 2017):



ԱՂՎԱՄԱԶԱԾԱԾԿՈՒՅԹ, գ. **Աղվանագի ծածկույթ**: Բեղիկների առաջին **աղվանագածակույթը** և ակնոցը, որ ես վերջերս սկսել էի կրել, ինձ նրա առաջ ավելի օտարուտի էին դարձնում (Հ, էջ 100):

ԱՄԱՆԱԶՈՒՐ, գ. **Ամանի՛ ամանը ողողելու՛ լվանալու ջուր**: .... Այդ ապուրը ամանաջրի պես մի բան էր, ու երջանիկ էր այն մարդը, որ մի լոբի էր որսում (*Սյուրմ.*, էջ 82):

ԱՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Ամեն ինչ խոսելը, անտաժված խոսք**: .... Թվում է՝ մենք դեռ լիովին չենք ձերբազատվել խոսքի ազատությունը **ամենախոսությունից**, ֆեյսբուքյան աղմուկը հոգեմտավոր տաճարներում արտահայտվող դատողություններից չտարբերելու արատավոր ինտերցիպից (*ԳԹ*, 27.04.2018):

ԱՄԵՐԻԿԱՏՅԱՅ, ան. **Ամերիկան՝ ամերիկացիներին ատող**: Մյուս մասնավոր հավաքորդը **ամերիկատյաց** էր (*Գոլու. 3*, էջ 486):

ԱՄՊԱԳՈՐՇ, ան. **Գորշ ամպերով ծածկված, ամպերը գորշ**: **Ամպագորշ** երկնքի տակ սևակուտակ հավաքվում էր բազմությունը (*Գոլու. 2*, էջ 325):

ԱՄՊԱԶԳԵՄՏ, գ. (փխբ.): **Ամպի քուլա**: .... Արևը կամաց մայր էր մտնում՝ հազվադեպ ամպերի հետևում թաքնվելով, ասես մեկ մի, ապա մի ուրիշ **ամպազգեստ** փորձելով (*ՆԱ*, էջ 73):

ԱՄՐԱԾՆՈՏ, ան. **Ամուր ծնտով**: .... Սպիտակահեր, ....**ամրածնտ** [նկար] (*Գոլու. 5*, էջ 418):

ԱՄՐԱԶԻԳ, ան. **Ամուր և ձիգ**: Այնուհետև ես լիովին **ամրաձիգ** եմ դառնում, ու այլևս ոչինչ չի կարող իմ անդորրը վրդովել (Հ, էջ 149):

ԱՄՈՒՐԻԱՎԱՐԻ, մկբ. **Ամուրիի նման, ինչպես ամուրի**: - Մենանկ եք ապրում, **ամուրիավարի՞** (*Դյունա*, էջ 435):

ԱՄՓՈՓՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ամփոփված լինելը**: Նրանց համառ միջամտությունները .... ավելի վատ տպավորություն էին թողնում, քան մյուսների **ամփոփվածությունը** .... (*Կաֆկա*, էջ 32):

ԱՅԼԵՐԵՆ, ան. , գ. (ղիպվ.): **Այլ՝ օտար (այստեղ՝ ոչ հայերեն) լեզու**: .... Իսկ հետո, երբ թող դու հայերենը չհասկանա կամ դու՛

իր **այլերենը**, նորից լաց կլինես, թե աշխարհը ուղիղ չէ, ծուռ է ու միակողմանի (ԳԹ, 09.02.2018):

ԱՅԾԱՄԻՍ, գ. **Այծի միս**: Դա կիսամյակի վերջի երկար սպասված խնջույքն էր՝ **այծամիս** և վարսակի շիլա (Աւրին, թ. 3, 2017):

ԱՅՐՈՎԻ, ան. **Այրելով-հրկիզելով, այրելու-հրկիզելու միջոցով կատարվող**: ... Անտառահատական **այրովի** հողատարածություն (Դ., Մ., էջ 163):

ԱՅՐՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Բժշկության՝ այրվածքային հիվանդություններով և դրանց բուժմամբ զբաղվող բնագավառ**: Ապակիների արտադրամասում պայթյունից 2-րդ տուժածին նույնպես **այրվածքաբանության** կենտրոն են տեղափոխել (Հնգ, news.am):

ԱՅՑԵԼԱՎԱՅՐ, գ. **Այցավայր**: ... Ծիծեռնակաբերդը կդառնա նաև գիշերային **այցելավայր**... (ԳԹ, 13.04.2018):

ԱՆԱՆՈՒԻՆԱԳՈՒՅՆ, ան. **Անանուխի գույնի**: ... Մի թռչուն ... պտտվեց **անանուխագույն** շներից մեկի գլխավերևում (ԲՇ, էջ 109):

ԱՆԱՌԱՎԱՍԵՐ, ան. **Անառակությունը՝ անառակներին սիրող, անառակության հակումներ ունեցող**: Տղամարդկանց մեջ դու նույնն ես, ինչ ես եմ կանանց մեջ՝ **անառակասեր** (Բ 10, էջ 405):

ԱՆԵԿԴՈՏԱՇԱՐ, գ. **Անեկդոտների շարք**: Անեկդոտներ եզրույթով հայտնի անայուժե երկխոսական ստեղծագործությունների խոսուն վկայությունը ԽՍՀՄ հանրապետություններում և աշխարհում մեծ տարածում գտած «Հայկական ռադիոյի» **անեկդոտաշարն** է (ՊԲՀ, 2017, 1, էջ 87):

ԱՆԻՍՈՆԱԲՈՒՅՐ, ան. **Անիսոնի բույրով՝ բույր ունեցող**: Նա հանկարծ ցանկացավ ... թարմանալ **անիսոնաբույր** ապերիտիվով ... (ԺՄ, էջ 62):

ԱՆԼՌՈՒՄ, մկբ. **Առանց լռելու, անլռին**: ... Ես խոսում էի **անլռու** միջավայրում (էջ 333):

ԱՆԿԱՇԿԱՆԴՈՐԵՆ, մկբ. **Անկաշկանդ կերպով, անկաշկանդաբար: Անկաշկանդորեն** նա ասաց.- Երևի պետք է ներկայանանք իրար ... (ԲՇ, էջ 221):

ԱՆԿՈՂՆԱՀԱՐԿ գ. **Անկողնու հարկ, հարկ, որտեղ անկողիններն են:** Աղախինների սենյակում **անկողնահարկը** նրան էր սպասում (*Կաֆկա, էջ 355*):

ԱՆՀՐԱԺԵՇՏԱԳՐԵԼ, նք. **Անհրաժեշտաբար գրել՝ մատնանշել:** Գրականության ... նշանակության ընկալումը պետք է անխուսափելիորեն **անհրաժեշտագրեր** նաև ակտիվ դիքորոշում լեզվի հարցում(*Հայրունի, էջ 40*):

ԱՆՁՐԵՎԱՍՈՒՅՁ, ած. **Անձրևի մեջ սուզված, տեղատարափ անձրևից դժվար երևացող:** ... Նայելով **անձրևասույզ** տանիքներին ... նա ինքն իրեն կրկնում էր .... (*Մոր., էջ 124-125*):

ԱՆՇԱՐԺԱԳՐԱՎ, գ. **Անշարժ գույքի գրավ:** Քո հարստությունը այնքան էլ մեծ չէ՝ ազատել կարողանալու համար երեք միլիոնի մի **անշարժագրավ**(*Բ 2, էջ 481*):

ԱՆՇՐԹՈՒՆՔ, ած. 1. **Առանց շրթունքների:** 2. **Փոքրիկ՝ քիչ նկատելի շրթունքներով:** ... Դահլիճում նկատեցի քո փոքրիկ, ճերմակ, համարյա **անշրթունք** դեմքը (*Մոր., էջ 5*):

ԱՆՈԹԱՑԱՆՑ, գ. **Անոթների ցանց:** Արդյունքում դեմքին կարող է **անոթացանց** առաջանալ (*Հւց, newsarmenia.am*):

ԱՆՎԱՆԱՔԱՐՏ, գ. **Անունը նշող քարտ:** Ես նրա **անվանաքարտի** վրա կարդացի անունը՝ Մարգարետ (*ՊՇ, էջ 97*):

ԱՆՏԱՌԱԹԱՎՈՒՏ, գ. **Անտառի թավուտ՝ թավ հատված՝ մաս:** ... Հաջորդ օրերին արդեն գնում էին ... ճահիճների միջով ու **անտառաթավուտներով**(*ԱՏ, էջ 240*):

ԱՆՏԱՌԱԿՈՒՏԱԿՈՒՄ, գ. **Ծառակուտակում:** Դուրս եկանք քաղաքից դեպի դաշտի ինձ անծանոթ կողմերը՝ **անտառակուտակման** բազայի հակառակ կողմը (*ՌՂ, էջ 115*):

ԱՆՏԱՌԱՄԵՁՑԻ, գ. **Անտառամեջ գյուղի բնակիչ:** Այսօր **անտառամեջցու** և հեռախոսի հարաբերությունները նույնը չէ, ինչ երեսնական թվերին (*ՀՄ, էջ 383*):

ԱՆՑՅԱԼԱԿԻՐ, գ. **Անցյալ կրողը:** ... Մեր ներկան միշտ **անցյալակիր** է՝ դարձնելով մեզ մի տեսակ անանցյալ ժողովուրդ՝

կառչած մոտ ժամանակի հետ միայն, որով միշտ վտանգվում է նաև մեր գալիքը (Ազգ, 09.09.2016):

ԱՇԱԿԵՐՏԱԿԵՆՏՐՈՆ, ան. **Աշակերտին որպես կենտրոն ունեցող:**.... Կրթությունը պետք է լինի **աշակերտակենտրոն**, պետք է գնահատվեն ոչ թե վերացական, այլ իրական գիտելիքներ (ՀԱԳ):

ԱՇԽԱՏԱԽՈՒՑ, գ. **Փոքր աշխատասենյակ:** Եթե չգամ, բարի եղեք ինքներդ իջնելու իմ **աշխատախուցը** (ԳԱ, էջ 63):

ԱՇԽԱՏԱԿՈՂՈՎ, գ. **Աշխատանքային կողով, աշխատելու դեպքում օգտագործվող կողով:** .... Քարե նստարանի վրա ընկած էին .... մի **աշխատակողով** և մի բատիստե թաշկինակ (Դյուսնա, էջ 581):

ԱՇԽԱՐՀԱՑԻՐ, ան. **Աշխարհասփյուռ:** .... Այդ գիրքը [«Հուշարձան հայրիկիս»] իր հույժ արդիական հարցադրումներով, ...հայրենիքի արժևորման և **աշխարհացիր** հայության համախմբման պատգամախոսությամբ .... հասցեագրված է նաև ներկա ու գալիք սերունդներին (ԳԹ, 13.04.2014):

ԱԶՔԱՇՈՅՄԱՔ, գ. (բնատ.): **Աչք շոյելը:** Կապույտ երկնքում քեզ տեսա , հոգին, //Ինձ էիր նայում **աչքաշոյանքով** .... (ԳԹ, 01.07.2016):

ԱՊԱԿԵՏՈՒՓ, գ. **Ապակյա տուփ:** Մանդուղքի կեսին, հարթակում, կանգ առավ մի **ապակետուփի** առաջ (Գոյս. 3, էջ 444):

ԱՊԱՀՈՎԱԳՐԱՏԵՍԱԿ, գ. **Ապահովագրության տեսակ:** Ոլորտի վերաբերյալ ձեզ հուզող բոլոր հարցերի պատասխանները՝ **ապահովագրատեսակ** ընտրելուց մինչև փոխհատուցում ստանալը (ՀԱԳ, abcfinance.am):

ԱՊԱՐՈՇԱՆՄԱՆ, ան. **Ապարոշի նման՝ տեսք ունեցող:** .... Թուրք «սիմիթջինները» .... ֆեսերի շուրջ էլ **ապարոշանման** թաշկինակներ .... աշխույժ առևտուր էին անում .... (Սյուրմ., էջ 39):

ԱՌԱԳԱՍՏԱԼԱԹԵ, ան. **Առագաստալաթից պատրաստված:** Նա մոտեցավ **առագաստալաթե** մահճի մեջ կարված հանգուցյալին (Մեր., էջ 332):

ԱՌԱԳԱՍՏԱԿՏԱՎ, գ. **Առագաստ պատրաստելու կտավ:** Նա ուներ մոտավորապես քառասուն հազար արծաթյա մարկ, որ

վաստակել էր վենետիկյան ամենագոր նավատորմի համար **առագաստակտավ** պատրաստելով (*Բ 10, էջ 532*):

ԱՌԱՆՁՆԱՀԱՆԴԻՊՈՒՄ, գ. **Հանդիպում երես առ երես, առանձնագրույց**: Անկարայում **առանձնահանդիպումներ** եղան միայն Պուտին-Էրդողան և Պուտին-Ռեհանի ձևաչափով ... (*Իր.*, 13.04.2018):

ԱՌԱՔԱՆԱՎ, գ. **Առաքման՝ փոստատար նավ**: Մի առաքանավ եկավ կողքը ... (*Մյուրմ.*, էջ 275):

ԱՌԵՂԱՍԱՐՔ, գ. **Սայլի թափքի երկու կողմերի հաստ ձողը**: Նա պատկած էր գյուղական մի սայլի առաջ՝ դեռևս **առեղասարքին** լծված... (*Հ*, էջ 65):

ԱՌԵՎՏՐԱԺԱՄԱՆՅԱՅԻՆ, ան. **Առևտրական և ժամանցային**: Պուտինը ծաղիկներ է դրել Կեմերովոյի հրդեհված **առևտրա-ժամանցային** կենտրոնի մոտ՝ ի հիշատակ զոհերի (*Հւց, news.am*):

ԱՍԵՂԱՅԻՆ (բժշկ.), գ. **Ասեղի միջոցով կատարվող**: **Ասեղային** բիոպսիան՝ կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշման թերագնահատված միջոց (*Հւց, news.am*):

ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹՈՒԹՅՈՒՆ, գ. **Աստիճանաձև (բարձրացող, իջնող) հարթություն**: ... Ճամփեզրի սեպ **աստիճանահարթությունների** վրա մշակված քաղցր եգիպտացորեն ... (*Մյուրմ.*, էջ 140):

ԱՍՏՂԱՁՈՆ, գ. **Աստղերին նվիրված ստեղծագործություն**: Այս հողակտորն էլ բոլորեքյան ջրապատ կղզյակ ենք համարում ու բանաստեղծություններ ենք գրում ծովաձոն կամ **աստղաձոն** (*Ար*, էջ 102):

ԱՍՏՎԱԾԱՀԱՄ, ան. (բնստ.): **Աստվածային համ ունեցող, շատ համեղ**: Քեզնից քամեմ **աստվածահամ** մեղր բորբ (*ԳԹ, 27.04.2018*):

ԱՎԱՐԱՊԱՐԳԵՎ, գ. **Ավարի՝ ավարի համար տրվող, պարզ**: ... Սահմանվում էր **ավարապարզ** յուրաքանչյուր բռնագրավված նավի համար (*ԱՏ, էջ 281*):

ԱՎԻԱՐՇԱՎԱԽՈՒՄԲ, գ. **Օդային արշավախումբ**: Կանադայում շուրջերկրյա **ավիաարշավախմբի** մասնակիցները ինքնաթիռները լիցքավորելու խնդրի հետ են բախվել (*Հւց, news.am*):

ԱՎԻԱԳՈՐԾԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Օդային հաղորդակցություն իրականացնող գործակալություն:** «Յունիբանկը» պրոմո-կետ է բացել նաև «Ավիատրանս» **ավիագործակալության** սպասարկման սրահում (*ՀԱՂ, news.am*):

ԱՎԻԱԹՈՒԻԶՔ, գ. **Օդանավային թռիչք:** Շվեդիայում **ավիաթռիչքների** հարկն ուժի մեջ է մտել (*ՀԱՂ, news.am*):

ԱՎԻԱԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ, ամ. **Օդային ճարտարագիտական:** «Պրոգրեստելս-Արմենիա» **ավիահինժեներական** ընկերությունը կարող է դուրս գալ Հյուսիսային և Հարավային Ամերիկայի շուկա (*ՀԱՂ, news.am*):

ԱՎԻԱԼԻԶՔԱՎՈՐԻԶ, գ. **Օդանավի լիցքավորիչ:** Boeing-ը հաղթել է ԱՄՆ ռազմական օդուժի համար **ավիալիցքավորիչներ** կառուցելու 35-միլիարդանոց տեղերը (*ՀԱՂ, news.am*):

ԱՎԻԱԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Օդային ծառայություն:** Արքայազն Ուիլյամսն ավարտում է **ավիածառայության** օդաչուի կարիերան (*ՀԱՂ, news.am*):

ԱՎԻԱՀԱՐՁԱԿՈՒՄ, գ. **Օդային հարձակում:** Իսրայելի կողմից Գազայի հատվածում **ավիահարձակման** հետևանքով 10 մարդ վիրավորվել է (*ՀԱՂ, news.am*):

ԱՎԻԱՄԻԶԱԴԵՊ, գ. **Օդային միջադեպ:** Ավիամիջադեպ Կանադայում. տուժել է 3 մարդ (*ՀԱՂ, news.am*):

ԱՎԻԱՄԻՆԻԹՅՈՒՆ, գ. **Օդային հաղորդակցություն իրականացնող կազմակերպություն:** «Արմավիան» չի հերքում, որ մտադիր է միանալ նորաստեղծ **ավիամիությանը** (*ՀԱՂ, news.am*):

ԱՎԻԱՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ, գ. **Թռչող սարքերի մոդելավորում:** Երևանում էստուգիաստները վերածնունդ են **ավիամոդելավորման** խմբակները (*ՀԱՂ, news.am*):

ԱՎԻԱՆՇԱՆԱՌՈՒՄ, գ. **Օդային մարտերի նշանառու:** Հայաստանում սկսվել են ՌԴ Հարավային ռազմական օկրուգի **ավիանշանառուների** հետ հավաքները (*ՀԱՂ, news.am*):

ԱՎԻԱՇՈՒԿԱ, գ. **Օդային փոխադրումներ իրականացնող շուկա:** Վերջին 2 տարում հայկական **ավիաշուկա** է մուտք գործել նոր ավիաընկերություն (*Հւճ, news.am*):

ԱՎԻԱՊԱՍԱՀԱՐ, գ. **Օդային պատահար:** ԵՏՄ-ն կստեղծի **ավիապատահարների** քննության մարմին (*Հւճ, news.am*):

ԱՎԻԱՍԵՐՎԻՍ, գ. **Օդային թռիչքների սպասարկում:** «168 ժամ». Ըստ ՊԵԿ-ի՝ Գագիկ Ծատուկյանին պատկանող **ավիասերվիսում** խոշոր չարաշահումներ կան (*Հւճ, news.am*):

ԱՎԻԱՍՐԱՀ, գ. **Օդանավաշինական արտադրանքը ցուցադրելու սրահ:** Մինգապուրի **ավիասրահում** հարավկորեական ինքնաթիռ է բռնկվել (*Հւճ, news.am*):

ԱՎԻԱՏԻԵԶԵՐԱԿԱՆ, ան. **Օդային-տիեզերական:** Ռուսաստանի **ավիատիեզերական** ուժերը Սիրիայում մոտ 4 հազար մարտական թռիչք են իրականացրել (*Հւճ, topnews.mediamall.am*):

ԱՎՇԱԲՈՒՅՐ, ան. **Ավիաչի բույր ունեցող:** Եթե **ավշաբույր** գարուն լիներ շուրջը, ....դիմանա՛լ չէր կարելի (*Գոլու. 2, էջ 37*):

ԱՎՍՏՐԱԼԱՀԱՅ, ան. **Ավստրալիայում բնակվող հայ:** **Ավստրալահայ** Շահան Բեքարյանի նոր վավերագրական ֆիլմը անդրադառնում է Հայոց ցեղասպանությանը և վերապրումների երկրորդ և երրորդ սերնդի վրա նրա թողած հոգեբանական ազդեցությանը (*Ազգ, 02.04.2017*):

ԱՎՏՈՒՊԱՀՈՎԱԳՐՈՂ, գ. **Ավտոմեքենաներ ապահովագրող:** Հայաստանի **ավտոապահովագրողների** բյուրոն հորդորում է ԱՊՊԱ պայմանագիր կնքել (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈՒՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ավտոմեքենաների ապահովագրություն:** Տուգանքներ կկիրառվեն պարտադիր **ավտոապահովագրություն** չիրականացրած անձանց նկատմամբ (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈԳԱԶԱԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ, գ. **Ավտոմեքենաները գազով լիցքավորելը:** **Ավտոգազավիցքավորման** 12 ճնշակայանում խախտումներ են արձանագրվել (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈՂՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ավտոմեքենա արտադրող ընկերություն:** ԱՄՆ-ում Tesla **ավտոընկերության** ապրանքանշանով մահացու թմրանյութեր են հայտնաբերել (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈԹՈՒՆԵԼ, գ. **Ավտոմեքենաների թունել:** Պետք է կրկեսի մոտ նոր ստորգետնյա **ավտոթունել** կառուցել (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ, գ. **Ավտոմեքենաների լիցքավորում:** Բնական գազի մատակարարումների ուղիղ քառորդ մասը ծախսվում է **ավտոլիցքավորման** կայաններում (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈԼՎԱՅՈՂ, գ. **Ավտոմեքենա լվացող անձ:** Յանա Եգորյանը՝ **ավտոլվացողի** դերում (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈԼՐՏԵՍ, գ. **Ավտոարտադրության ոլորտում լրտեսությամբ զբաղվող:** **Ավտոլրտեսները** նկարահանել են դեռևս չթողարկված BMW X5-ը (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Ավտոմոբիլային ծառայություն:** N գորամասի **ավտոծառայության** պետը 1,5 մլն դրամի բենզին և դիզվառելիք է յուրացրել. նա տուգանվեց 700 հազար դրամով (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈԿԵՆՏՐՈՆ, գ. **Ավտոմոբիլային կենտրոն:** Սանկտ Պետերբուրգի Hyundai **ավտոկենտրոնում** հրդեհ է բռնկվել (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈՀԱՄԱՐԱՆԻՇ, գ. **Ավտոմեքենայի համարանիշ:** ԱՄՆ-ում էլեկտրոնային **ավտոհամարանիշներ** են ստեղծել (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈՀԱՆԳՍՏԱՎԱՅՐ, գ. **Ավտոմեքենաների գերեզմանոց:** Մեծ Բրիտանիայում աշխարհի առաջին **ավտոհանգստավայրը** կբացվի (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈՀՄԿԱ, գ. **Ավտոմեքենա արտադրող խոշոր ձեռնարկություն:** Ֆրանսիական PSA Peugeot Citroën **ավտոհսկան** քննարկում է Opel-ը գնելու հարցը (*Հւճ, news.am*):

ԱՎՏՈՅՈՒՂ, գ. **Ավտոմեքենաներում օգտագործվող յուղ:** Ընկել են **ավտոյուղի** տարայի մեջ և խեղդվել (*Հւճ, news.am*):



ԱՎՏՈՆԵՐԿ, գ. **Ավտոմեքենայի ներկ:** Թբիլիսյան խճուղում այրվել է **ավտոներկերի** խանութ-պահեստը (*Հւց, news.am*):

ԱՎՏՈՆԵՐԿՐՈՂ, գ. **Ավտոմեքենա ներկրող:** ԵՏՄ-ն է ազդել ՀՀ Կառավարության վրա. **ավտոներկրողը`** չգանձվելիք ԱՀՀ-ի մասին (*Հւց, news.am*):

ԱՎՏՈՆԵՐՄՈՒԾՈՂ, գ. **Ավտոմեքենա ներմուծող: Ավտոներմուծող.** Վրաստանից ՀՀ ներմուծվող մեքենաների մաքսազերծումը չպետք է թանկանա (*Հւց, news.am*):

ԱՎՏՈՇՈՒԿԱ, գ. **Ավտոմեքենաների շուկա:** Աջդեկով մեքենաների ներմուծման արգելքը **ավտոշուկայում** գների էական բարձրացման չի հանգեցնի (*Հւց, news.am*):

ԱՎՏՈՍԵՐՎԻՍ, գ. **Ավտոմեքենաների սպասարկում, նորոգում իրականացնող ձեռնարկատիրական կետ:** Հայ ավտոսիրողների խումբը ՀՀ-ում լավագույն **ավտոսերվիսի** ընտրության միասնական պորտալ է մշակել (*Հւց, news.am*):

ԱՎՏՈՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ, գ. **Ավտոմեքենայի սեփականատեր:** Մեկանգամյա արտոնություն կտրվի **ավտոսեփականատերերին** Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի կողմից (*Հւց, news.am*):

ԱՎՏՈՍՊԱՍԱՐԿՈՒՄ, գ. **Ավտոմեքենայի սպասարկում:** Մոսկվայի **ավտոսպասարկման** կետերից մեկում այրվել է Mercedes-Benz Gelandewagen մակնիշի 5 մեքենա (*Հւց, news.am*):

ԱՎՏՈՎԱՐԿ, գ. **Ավտոմեքենա ձեռք բերելու համար հատկացվող վարկ:** Պետությունը երիտասարդներին կօգնի **ավտովարկ** ստանալ (*Հւց, news.am*):

ԱՎՏՈՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ, գ. **Ավտովարկի հատկացում:** «Tuning Show-2012» մրցույթ-ցուցահանդեսին «Յունիբանկը» ներկայացրեց **ավտովարկավորում** (*Հւց, news.am*):

ԱՎՏՈՓՈՐՁԱԳԵՏ, գ. **Ավտոմեքենաների փորձագետ:** **Ավտոփորձագետը** պատմել է երկրորդ փոխանցումից մեքենան գործի դնելու վտանգավորության մասին (*Հւց, news.am*):

ԱՎՏՈՔՐՈՍ, գ. **Ավտոերթ, մրցարշավ:** Անփոփվել են «BeeCross 2012» **ավտոքրոսի** մրցույթի արդյունքները (*ՀԱԶ, news.am*):

ԱՏԱՄՆԱՍԱՅՐ, գ. **Ատամի նման սուր ծայր՝ սայր ունեցող:** ... Ներքևում, արտատոց **ատամնասայրերի** բոլորակի մեջ, սատած լավայի ... լին էր (*ԱՏ, էջ 252*):

ԱՏԱՄՆԱՍՅՈՒՆ, գ. **Ատամնաձև սյուն:** Երևաց սարսազդու **ատամնասյուներով** գարշահոտ պարիսպը (*ՌՇ, էջ 258*):

ԱՏԼԱՍԱՓԱՅՏԵ, ած. **Ատլասափայտից պատրաստված:** ... Նստել էր իր **ատլասափայտե** գրասեղանի առաջ ... (*Գոյս. 5, էջ 697*):

ԱՐԱՐՈՂԱՍԵՐ, ած. **Արարողություն սիրող:** Նա մեզ բարի գալուստ էր մաղթում **արարողասեր** արևելքի քաղաքավարի, բանաստեղծական խոսքերով ... (*Սյուրմ., էջ 31*):

ԱՐԳԵԼԱՑԱՆՑ, գ. **Արգելող՝ փակող (երթևեկությունը) ցանց:** **Արգելացանցը** անմիջապես բարձրացրին, ... և կտոքը շարունակեց իր ճանապարհը (*Գյումիս, էջ 425*):

ԱՐԴԱՐԱՀԱՏՈՒՅՑ, ած. **Արդար հատուցում պահանջող:** ... Յուրաքանչյուր գործողություն իր մեջ պիտի ունենա ծիսական ենթատեքստ՝ ոգեշնչման և **արդարահատույց**, կենսունակության և հստատեսության, ոգեղենության խորհուրդ (*ԳԹ, 13.04.2018*):

ԱՐԴԱՐԱՄԱՐՏԻԿ, գ. **Արդարության համար մարտնչող մարտիկ:** Նախկին **արդարամարտիկները** կարծում էին, թե կյանքն իրենք իրենց պատկերացրածով են փոխելու... (*ԳԹ, 08.07.2016*):

ԱՐԵԳՆԱՑՈՂ, ած. **Արևից՝ արեգակի ճառագայթներից ցոլացող:** Տարաշկիները աչքերը շեց **արեգնացու** գետին ... (*ԱՏ, էջ 9*):

ԱՐԵՎԱԽԱՐԿ, ած. **Արևից խարկված՝ խանձված:** ... Թողել էին գործ, ծառայություն՝ Սան Ֆրանցիսկոյի **արևախարկ** առափները ողողելու համար ... (*ԱՏ, էջ 313*):

ԱՐԵՎԱԿԱԼ, գ. **Արևի ճառագայթներից պաշտպանող:** ... Ծղոտն այթոնները ծածկող շերտավոր **արևակալների** տակից գիշերային գինետների թթվական հոտ էր փչում ... (*ԱՏ, էջ 135*):

ԱՐԵՎԱՇԱՂԱԽ, ան. **Արևով շաղախված:** .... Արևաշաղախ մարմին (*ԱՏ, էջ 138*):

ԱՐԵՎԸՆԾԱ, ան. Այստեղ՝ **արև ընծայող:** Շուրջդ Նարեկի **արևընծա** նկարներն են (*ԳԹ, 29.06.2018*):

ԱՐԵՎՇԱՏԱԿԱՆ, ան. **Արևշատություն մաղթող:** Բազում մաղթանքներից, թատերագիտական վերլուծություններից , **արևշատական** օրինանքներից հետո.... խնջույքը շիկացել ու հասել էր իր գենիթին (*ԳԱ, էջ 112*):

ԱՐԺԱՆԱՎԱՍՏԱՀ, ան. **Արժանի վստահության, վստահության արժանի:** - Զգուշությունն ավելի **արժանավստահ** է դարձնում ձեր պատմությունը (*ՌՇ, էջ 263*):

ԱՐԺԵԴԱՇՏ, գ. **Արժեքների դաշտ:** ....Մեր **արժեղաշոր** ձևավորենք (*Հեռ., Շանթ, 26.09.2018*):

ԱՐԺԵՔԱՍՏԵՂԾ, ան. **Արժեք ստեղծող:** Այժաբուծությունը՝ օրգանական ու **արժեքաստեղծ** ճյուղ (*ՀՀ, 18.11.2016*):

ԱՐԺՈՒԹԱՊԱՆԱԿ, գ. **Դրամապանակ:** Այդ խառնաշփոթի մեջ ես կորցրի իմ **արժութապանակը** (*Հմց*):

ԱՐԾԱԹԱԴԱՐՉՆԱԳՈՒՅՆ, ան. **Արծաթագույնի երանգով դարչնագույն:** Դեմիանը.... **արծաթադարչնագույն** վերարկուով ճանապարհ ընկավ (*Հ, էջ 209*):

ԱՐԾԱԹԱԹԵՓՈՒԿ, ան. **Արծաթագույն թեփուկներով:** Իսկ հետո սրնգի հնչյուններ լսվեցին, ու մի մեծ, **արծաթաթեփուկ օձ**, դանդաղ սողալով մտավ բեմ (*ԹԶ, էջ10*):

ԱՐԾԱԹԱԽԱՅՏ, ան. **Արծաթագույն խայտեր ունեցող՝ խայտերով, արծաթաբիծ, արծաթապուտ:** .... Այդ օրերին մտածում էր նաև **արծաթախայտ**մի նծույգի և դրան հեծած մի աղջկա մասին (*Գուլ. 2, էջ 202*):

ԱՐԾԱԹԱԿԱՆԱՉԱՎՈՒՆ, ան. **Արծաթի գույնին տվող կանաչավուն:** .... Ճգնում էր լեզու սովորել թախծոտ այքերով, **արծաթականաչավուն** ինչ-որ կենդանուց (*ՌՇ, էջ 119*):

ԱՐԾԱԹԱԿԱՐՄԻՐ, ած. **Արծաթի գույնին տվող կարմիր: Արծաթակարմիր** թռչունները կրկին սկսեցին ճախրել բարձր երկնքում (ՌՇ, էջ 122):

ԱՐԾԱԹԱՍՊԱՍ, գ. **Արծաթե սպաս՝ սպասք: ... Արծաթասպասին** փոխարինում էր խղճուկ, ոչ զնգուն մելքիորը (Բ 10, էջ 74):

ԱՐԾԱԹԱՎԻՋ, ած. **Արծաթագույն վզով: ...** Պատկերված էին ծաղիկները .... Մի **արծաթավիզ** լեյդի .... (Գոլու. 5, էջ 376-377):

ԱՐԾՎԱԲԱՐՈ, մկբ. **Արծվի նման, քաջաբար:** Դժնի ճակարագրի զարկով հայրենի ջրերը ներկվել են արյան գույնով և հարկադրված պատասխարվել քարանձավներում, ապրել **արծվաբարո** (ԳԱ, էջ 100):

ԱՐԿԱԾԱՇՈՒՆՉ, ած. **Արկածային շունչ ունեցող: ...** Որ աշխարհում լինեն **արկածաշունչ** դեպքեր .... (ԳԹ, 02.02.2018):

ԱՐՄԱԹ, գ. (հավ.): **Ռորոտաշինության լաբորատորիա:** Հայաստանի դպրոցներում **Արմաթ** (Armath) լաբորատորիաների գործարկման շուրջ առաջացել են խնդիրներ .... (Ազգ, 13.04.2018):

ԱՐՄԱԹՑԻ, գ. **Արմաթ լաբորատորիայի սան:** Արցախի Նորջենում **արմաթցիների** ստեղծած «Ճանաչիր մարմինդ» նախագիծը դրամաշնորհի է արժանացել (Իր., 27.03.2018):

ԱՐՆԱԳՈՒՆԵԼ, չբ. **Արյան գույն ստանալ:** Դրանցից ձախ փքվեցին զգուզ քուլաները, վատ **արնագունեցին** .... (ԱՏ, էջ 296):

ԱՐՆԱՇԱԳԱՆԱԿԱԳՈՒՅՆ, ած. **Կարմրին տվող շագանակագույն:** Վերջինս թեթևակի ցնցվեց, հետո ործկաց, դուրս թափելով **արնաշագանակագույն** մի հեղուկ (ԱԹ, էջ 62):

ԱՐՎԵՍՏԱՊԱՇՏ, ած. **Արվեստ պաշտող:** Արժևորելով մեր **արվեստապաշտ** անձը, մենք ընկերություն էինք անում .... շատ մեծ դերասանների հետ (ՌԴ, էջ 178):

ԱՐՏԱԳԱՂԹԱՑԱՎ, գ. (դիպվ.): **Արտագաղթի հիվանդագին մոլուցք:** .... **Արտագաղթացավը** շարունակում է համաճարակ մնալ Հայաստանում (Ազգ, 13.10.2017):

ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԵՐՊ, գ. **Արտահայտչաձև:** Որպես ժանր ողբերգությունն իր **արտահայտչակերպով** մնացել է անցյալում ... (ԳԹ, 09.06.2017):

ԱՐՏԱՄՂԱՆՔ, գ. **Դուրսմղանք:** Այակիները ծայրեծայր ծածկված էին ճանճերի ու այլևայլ միջատների **արտամղանքներով** (ՌԴ, էջ 354):

ԱՐՑՈՒՆՔԱԾԻՆ, ած. (բնստ.): **Արցունք ծնող:** Ուշացած օրն այսօր հաշմանդամի նման// Կաղ քայլերով մենակ անցնում է լուռ, անձայն, // Փողոցներով խոնավ մուրացկանի նման// Արցունքածին ցավը շաղտալով մութ ճամփին// (ԳԹ, 01.07.2016):

ԱՌԴԻԻՌԱՐԶՐԱԽՈՍ, գ. **Ձայնային բարձրախոս:** Ֆրանսիական ֆիրման վարդագույն ոսկուց անթել **աուդիոբարձրախոս** է ստեղծել (Հւց, news.am):

ԱՌԴԻԻՌԳԻԻ, գ. **Բանավոր՝ հնչող խոսքով բացատրող:** Վիրտուալ **աուդիոգիդը** զբոսաշրջիկներին կօգնի Երևանը տեսնել նրա բնակիչների աչքերով (Հւց, news.am):

ԱՌԴԻԻՌԴԱՐԱՆ, գ. **Ձայնադարան:** Ներկայացվել է audiobook.am խոշորագույն հայերեն **աուդիոդարանը** (Հւց, news.am):

ԱՌԴԻՈՂՈՒԿԻԱԿԱՆ, գ. **Ձայնաբանական:** «Մալաթիա» բժշկական կենտրոնն **աուդիոլոգիական** լաբորատորիա կհիմնի (Հւց, news.am):

ԱՌԴԻՈՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Ձայնային համակարգ:** Cadillac-ի ֆլագմանը կունենա «ամենաառաջադեմ» **աուդիոհամակարգը** (Հւց, news.am):

ԱՌԴԻՈՈՒՂԵՐԶ, գ. **Ձայնային ուղերձ:** Քաղաֆիի դուստրը **աուդիոուղերձով** դիմել է Լիբիայի ժողովրդին (Հւց, news.am):

ԱՌԴԻՈՍՏՈՒԿԻԱ, գ. **Ձայնային ստուդիա:** «Զիլ է». վարչապետի արձագանքը Կողբի գյուղապետի՝ **աուդիոստուդիա** ստեղծելու խնդրանքին (Հւց, news.am):

ԱՓԵԶԵՐՔ, գ. **Ափեզր, ափի եզրը.եզրի շերտ:** Սևանի **ափեզրը**(Հայրունի, էջ 53):

ԱՔՏՈՐԱԽՈՒՄԲ, գ. **Աքտորականների՝ արքայական խումբ:** .... Նրան միշտ էլ կարելի է **արքայախմբի** հետ Ռուսաստան ուղարկել Լեհաստանով .... (US, էջ 46):

## Բ

ԲԱԶՄԱՀԱՄԱԿԱԶՄ, ան. **Տարբեր դասարանների առարկայական ծրագրեր յուրացնող աշակերտներից բաղկացած:** Հաստատման փուլում են դասարանների կազմավորման, **բազմահամակազմ** դասարանների ձևավորման կարգերը (ՀԱՂ, news.am):

ԲԱԶՄԱՆԳԱՄՅԱ, ան. **Մեկից ավելի անգամ գործածության համար նախատեսված:** S7 Space-ը նախատեսում է 5 տարուց ավելի քիչ ժամանակում **բազմանգամյա** հրթիռ ստեղծել (ՀԱՂ, news.am):

ԲԱԶՄՈՅԱՍՐԱՀ, գ. **Բազմոցների սրահ.սրահ, որտեղ դրվում են բազմոցները:** Վարի հարկի հյուրասենյակը ավժիրական **բազմոցասրահի** պես մի բան էր .... (Դյունա, էջ 441):

ԲԱԺԱՆԱՔԱՐ, գ. **Բաժանող քար, բաժանող սահմանաքար:** Ատում եմ այն ամենը, ինչ կարող է **բաժանաքար** դառնալ մեր միջև (Բ 10, էջ 595):

ԲԱԺՆԵՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ, ան. **Բաժնետերերի մասնակցության առնչվող:** Այսօր Երևանում բացվել է համաժողով՝ նվիրված Հայաստանում **բաժնեմասնակցային** ֆինանսավորման և ներդրումային խնդիրներին (ՀԱՂ, banks.am):

ԲԱԼԹԻԿԾՈՎՅԱՆ, ան. (դիպվ.): **Բալթիկ ծովի ափին գտնվող:** Գնացինք Յուրմալա, Տիրուղա և մյուս **բալթիկծովյան** հանգստավայրեր... (ԱՄ, էջ 334):

ԲԱՃԿՈՆԱՎՈՐ, գ. **Բաճկոն հագածը:** **Բաճկոնավորը** հիմա նորից է խփելու (ՀՄ, էջ 685):

ԲԱՄԲՈՒԿԵ, ան. **Բամբուկից պատրաստված:** .... Վերարկուն իջեցրեց **բամբուկե** կախարանից (ԺՄ, էջ 577):

ԲԱՆԱԿԱՏԵՐ, գ. **Բանակի տեր:** Մարդ, երբ դառնաս սեր- կարոտի **բանակատեր** //Որ աշխարհից հավերժ չքվեն Չարք ու բանտեր (ՌԿ, էջ 15)

ԲԱՆԱՍՏԵՂԾԱՇԱՐՔ, գ. **Բանաստեղծությունների շարք**: Սոնա Վանի այս **բանաստեղծաշարքերը** ազդակ են .... (Իր., 02.02.2018):

ԲԱՆԱՍՏԵՂԾԱՎԱՅԵԼ, մկբ. **Բանաստեղծին վայել, պատշաճող**: Նա հենց **բանաստեղծավայել** է նայում հեռացման իրողությանը .... (ԳԹ, 23.06.2017):

ԲԱՆԱՎԵՃԱՀԱՐՈՒՅՑ, ած. **Բանավեճ հարուցող**: **Բանավեճահարույց** նյութն է բացակայում (ԳԹ, 27.04.2018):

ԲԱՆԱՑԱՅՏՔ, գ. **Խոսքային ամենաուժեղ արտահայտության միջոցները, կատակախոսությունները և այլն**: .... Չցանկանալով ետ մնալ բարեկամից՝ գործի դրեց իր բոլոր սրամտություններն ու **բանացայտերը** (Բ 10, էջ 271):

ԲԱՆՏԱԽՑԻԿ, գ. **Փոքրիկ բանտախույց**: Նա մի խումբ սպաների հետ .... գնաց բանտախցիկ .... (Կոպեր, էջ 233):

ԲԱՌԱՔԱՐՏ, գ. **Խաղաքարտ, որի վրա գրված են բառեր**: Սեղանին հակառակ ուղղությամբ դրվում են **բառաքարտեր**, որոնց վրա գրված են մարմնի տարբեր մասերի անվանումներ (Հնգ, wordpress.com):

ԲԱՐԱԿԱՄԱՏ, ած. **Բարակ մատներ ունեցող**: .... **Բարակամատ** իմ տիրուհին // Իմ էջերում պիտի պահի // Այրող խոսքեր .... (Բ 4, էջ 71):

ԲԱՐԴԱԳԻՐ, ած. **Ոչ մատչելի ոճով գրված**: ....Հրաչյա Սարուխանը կարողացավ հանգուցել իրականության ու ազգային բանաստեղծության ավանդույթների, պատմության ու նորարարության թելերը, խուսափել **բարդագիր** նորարարությունից.... (ԳԹ, 25.11.2016):

ԲԱՐԵԿԱՌՈՒՅՑ, ած. **Լավ կառուցված**: .... **Բարեկառույց** կամուրջներ անցկացրեց հազարավոր գետերի վրայով .... (ՌՇ, էջ 219):

ԲԱՐԻԿԱԴՌԱՍԵԼ, նբ. **Բարիկադներով պատել՝ ծածկել**: Երրորդը ամուր **բարիկադապատում** է դռներն ու լուսամուտները (Դյուլմա, էջ 526):

ԲԱՐԿԱՐՈՒՅՐ, ած. **Բարկ՝ թեժ, կիզիչ բույր ունեցող՝ բույրով**: Փայտի **բարկաբույր** ծուխը (Գուլու. 2, էջ 194):

ԲԱՐՁՐԱՑԱՏԿԵԼ, չբ.**Բարձրացատկ կատարել**: Կարճատև այդ պահը բավական եղավ, որպեսզի .... վազեն դուրս, հեռացատկեն

դեպի անկյունը, **բարձրացատկեն** մի մայթից մյուսը և ձողացատկեն դեպի ազատություն (*ՌՇ, էջ 218*):

ԲԱՐՈՅԱԷԹԻԿԱԿԱՆ, ան. **Բարոյական և էթիկական**: Թեմատիկ նախասիրությունները հստակ ուղղվածություն ունեն, գրական գործերի ընտրությունը որոշակիացնում է դրանց **բարոյաէթիկական**, սոցիալ-քաղաքական բնույթը (*Ազգ, 17.06.2016*):

ԲԱՐՈՅԱՀՈԳԵՎՈՐ, ան. **Բարոյական և հոգևոր**: Ամեն ինչի հիմքը որպես ամբողջական օրգանիզմ հանդես եկող հանրության **բարոյահոգևոր** վիճակն է (*ԳԹ, 30.09.2016*):

ԲԱՑԱՍԱԿԱՆՈՐԵՆ, մկբ. **Բացասական կերպով, բացասականաբար**: .... **Բացասականորեն** ներգործելով կյանքի այլազան բնագավառների վրա՝ կարող է .... արգելակել նրա բնականոն ընթացքը .... (*Հայրունի, էջ 114*):

ԲԵԺԱԳՈՒՅՆ, ան. **Բեժ գույնի**: .... Մաքրեց **բեժագույն** կոստյումի վրայի բիծը (*Սել., էջ 290*):

ԲԵԼԳԻԱՀԱՅ, գ. **Բելգիայում բնակվող հայ**: .... **Բելգիահայերը** թուրքական դեսպանատանն ուղղված բողոքի ակցիայից հետո, միաժամանակ, երթը շարունակեցին հայկական դեսպանատան ուղղությամբ.... (*Ազգ, 27.04.2018*):

ԲԵՂԱՊԱՆԱԿ, գ. **Բեղերի դիրքը և ձևը (քնած ժամանակ) պահպանելու հարմարանք**: Նա գիշերը **բեղապանակ** չէր դրել .... (*ԺՄ, էջ 133*):

ԲԵՄԱԴՐԱՊԱՍՏՈՒՄ, գ. **Բեմադրվող պատում**: ...Երկու **բեմադրապատումները** համակցելով, կառուցվածքային ամբողջականությունը անվնաս [է]պահել (*Ազգ, 30.09.2016*):

ԲԵՄԱՄԵՐԶ, ան. **Բեմին մոտ գտնվող, բեմից ոչ հեռու**: .... Միշտ էլ կարելի է գտնել **բեմամերձ** օթյակ .... (*Բ 6, էջ 258*):

ԲԵՅՄԲՈԼԱՅԻՆ, ան. **Բեյսբոլ խաղի ժամանակ հագնվող**: Ես էլ վերցրի ու սկսեցի նկարագրել իմ պատիկ եղբոր .... **բեյսբոլային** ձեռնոցը (*Սել., էջ 46*):

ԲԵՌՆԱՊԱՐԿ, գ. **Բեռան պարկ, բեռները մեջը լցնելու պարկ**: Մոնղոլական դատարկ **բեռնապարկ**(*ՌՇ, էջ 216*):



ԲԵՐՔԱԹԱՓ ԼԻՆԵԼ, ք. **Բերքից գրկվել:** ...Երկիրը կա որպես հեռվից հեռու բոլորին սիրող մայր, որպես հանգիստ շնչող, աշնան արևի տակ մեջքը արևին տված հող, որպես **բերքաթափ եղած** ծառ (ԳԹ, 09.02.2018):

ԲԶԵԶԱՆՄԱՆ, ած. **Բզեզի նմանող՝ տեսք ունեցող:** Բզեզանման **«Ֆոլքլավազեններով»** (Կվին, էջ 240):

ԲԻՆՏԱՊԱՏ, ած. **Բինտով պատված:** ....Զգաց, որ իր **բինտապատ** գլխում ծնունդ է առնում աղոտ մի կասկած ....(ԺՄ, էջ 105):

ԲԼՐԱԾԱԾԿ, ած. **Բլուրներով ծածկված:** .... Սլացանք **բլրածածկ** հովիտով (Կվին, էջ 2427):

ԲԼՐԱՏԻՊ, ած. **Բլրի նմանություն ունեցող:** Գիտնականները... ներկայացնում էին նախկին Հարավսլավայի տարացքում գտնված **բլրատիպ**, անտառածածկ բուրգերը (ԱՊ, էջ133):

ԲՆԱՆՎԵՐ, ած. **Բնությանը նվիրված:** Կարդալով գրողի ստեղծագործությունները և ծանոթ լինելով նրա **բնանվեր** գործունեությանը, հավատում ես, իրոք, բնության հետ ունեցած ամուր կապի մեջ է կյանքի հյուրը, ուժի և կենսունակության երաշխիքը... (ԳԹ, 08.07.2016):

ԲՆԱՎԵՐՈՒՄ, գ. **Բույնը քանդելը, ավերելը:** Բնավերման այս արշավը հույժ անհրաժեշտություն է (ԳԹ, 29.06.2018):

ԲՆԷՈՒԹՅՈՒՆ, գ. **Բուն էություն:** Այդպիսին է ինքն իր դիմանկարներում՝ կամային, խառնվածքի հաստատակամությամբ, միաժամանակ փխրուն կանացի **բնէությամբ** (Ազգ, 11.11.2016):

ԲՈԼՈՐԱՇՐԶԱԶԳԵՍՏ, գ. **Կոր՝ շրջանաձև զգեստ:** .... Շքախումբը, սանրվածքը, **բոլորազգեստը** լցնում էին վերսալյան մեծ սանդուղքը (Բ 6, էջ 635):

ԲՈԼՈՐՔԱՎՈՐ, ած. **Բոլորք՝ եզր ունեցող:** Պաճուճահնար **բոլորքավոր** գլխարկ (ԺՄ, էջ 542):

ԲՈՍՈՐԱՈՍԿԵԳՈՒՅՆ, ած. **Կարմրատսկեզույն:** Հագին թեթև գեղակերտ զրահազգեստ էր, որի վրայից ծանր, **բոսորատսկեզույն**, թավշյա թիկնոց էր զգած (ՆԱ, էջ 184):

ԲՈՐԵՆԻԱԲԱՐ, մկբ. **Բորենու նման, գազանաբար:** .... Թուրք ցեղասպանության ղեկավար ոհմակը .... հայասպանության անպատմելի ոճիրի գործադրությունը սկսեց .... մեր լույս առաքյալներին խոշտանգելով **բորենիաբար**(ՎՆ, էջ 257-258):

ԲՈՑԱԼԵՋ, ած. 1. **Բոցի՝ կրակի կողմից թեթևակի քաված, շոշափված:** 2. **Արևահար:** Այն հիշեցնում է .... եգիպտական արևի **բոցալեզ** սֆինքսների գլուխները(Բ 8, էջ 77):

ԲՁՋԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ, գ. **Բջիջների կազմավորում՝ կազմավորվելը:** **Բջջակազմավորման** ոչ մի նշան (ՌՇ, էջ 106):

ԲՈՒՑԲԱՀԱՐԹԱԿ, գ. **Բոնցքամարտի հարթակ:** Ես անմիջապես **բոնցքահարթակ** բարձրացա (ՀՄ, էջ 44):

ԲՐԳԻԿ, գ. **Փոքրիկ բուրգ (բրգաձև իր՝ առարկա):** .... Սեղանին **բրգիկներ** էին շարված(ԱՏ, էջ 62):

ԲՐԴԱԶՈՒՐԿ, ած. **Բրդից զուրկ:** .... Ցրտից ծածկել էր **բրդազուրկ** մարմինը .... (Դ., Մ., էջ 64):

ԲՐՈՆՋԱՆՍԿԵԳՈՒՅՆ, ած. **Բրոնզի գույնի նման ոսկեգույն:** .... Կարգի բերեց իր **բրոնզաոսկեգույն** պատյանը(ՌՇ, էջ 219):

ԲՈՒԼԴՈԳԱՆՄԱՆ, ած. **Բուլդոզի՝ բուլդոզ շան նման:** .... **Բուլդոզանման** բարապանը .... հիմա հանկարծ .... զգոնություն ցուցաբերեց (Կվին, էջ 348):

ԲՈՒՅՐԱՍՓՅՈՒՌ, ած. **Բույր՝ անուշահոտություն սփռող՝ տարածող:** .... Պատրաստականություն հայտնեց ծառայելու այդքան լավ **բույրասփյուռ** մի կնոջ (Բ 6, էջ 411):

ԲՈՒՍԱԴԵՂ, գ. **Բույսերից ստացված դեղ:** .... Նրան անտառում պահում են մեկ տարի, սովորեցնում **բուսադեղեր** պատրաստել .... (Դ., Մ., էջ 89):

ԲՈՒՐԱՍԵՐ, ած. **Բույրը՝ հոտավետությունը սիրող:** Դուք **բուրասեր եք**(Գոլու. 2, էջ 123):

ԲԲԱԽԵՂԴՈՑ, գ. **Բքի խեղդոց, խեղդոց բքի պատճառով:** - .... Էնտեղ էնպիսի **բքախեղդոց** է, որ ոտ ոտի առաջ դնել չի լինում (ԱՏ, էջ 258):

## Գ

ԳԱԶԱԼԱՄՊ, գ. **Գազի՝ գազը այրելով լուսավորող լամպ:** Սենյակը լուսավորող միակ **գազալամպը** կամացուկ հագում էր մերթ ընդ մերթ (*ԺՄ, էջ 5*):

ԳԱԶԱՀԱՆՔ, գ. **Գազի հանք:** ՉԺՀ-ն ծրագրում է Կիպրոսում **գազահանքի** մասնաբաժին ձեռք բերել (*ՀՄԳ, news.am*):

ԳԱԶԱՄՈՄ, գ. **Այրվող գազով մոմ:** .... Բրզիկը հանկարծ կարող էր **գազամոմ** դուրս գալ .... (*ՄՏ, էջ 17*):

ԳԱԶԱՆԱՎԱՐԺ, գ. **Գազաններ վարժեցնող:** Ռուսական կրկեսային արվեստի պատմության մեջ իրենց անունն են թողել մի շարք հայորդիներ՝ .... **գազանավարժներ** Բաղդասարովները (*Ազգ, 10.11.2017*):

ԳԱԶԱՆԶԱՏՈՒՄ, գ. **Գազի մատակարարման դադարեցում:** Ավանում և Առինջում **գազանջատում** է լինելու (*ՀՄԳ, news.am*):

ԳԱԶԱՍՊԱՌՈՒՄ, ած. **Գազ սպառելը՝ օգտագործելը:** Բաժանորդները պետք է վճարեն ներտնային **գազասպառման** համակարգերի սպասարկման համար (*ՀՄԳ, news.am*):

ԳԱԶԱՍՊԱՍԱՐԿՈՒՄ, գ. **Գազամատակարարման համակարգի սպասարկում:** **Գազասպասարկման** համակարգ. մենաշնորհն է կարևոր, թե՛ անվտանգությունը (*ՀՄԳ, news.am*):

ԳԱԶԱՎԻԿ (խսկց.), գ. **Գազի ոլորտի աշխատող:** Ընդդեմ **գազավիկների.** պատգամավորները ստաջարկ են անելու կառավարությանը (*ՀՄԳ, news.am*):

ԳԱԶԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ, ած. **Գազի փոխադրում իրականացնող:** Հունաստանը չի վաճառի DESFA **գազատրանսպորտային** համակարգն Ադրբեյջանի պետական նավթային ընկերությանը (*ՀՄԳ, news.am*):

ԳԱԶԱՓՈՒՆԱԴՐՈՂ, ած. **Գազ փոխադրող:** Թուրքիան ու Բուլղարիան կմիավորեն **գազափոխադրող** համակարգերը (*ՀՄԳ, news.am*):

ԳԱՀԱՀՐԱԺԱՐՈՒՄ, գ. **Գահից հրաժարվելը:** .... Այս ճակատագրական վայրում Նապոլեոնը փորձեց վիթխարի մի ճիգ կատարել իր **գահահրաժարման** նախօրեին (*Բ 6, էջ 356*):

ԳԱՂԱՓԱՐԱԳՈՐԾՆԱԿԱՆ, ան. **Գաղափարական և գործնական:** ... Համայնքային կյանքը Սփյուռքում **գաղափարագործնական** առումով արմատապես վերանայելու և վերակազմակերպելու համար (ԳԲՀ, 2017, 2, էջ 284):

ԳԱՂԱՓԱՐԱՀՈՍՔ, գ. **Գաղափարների հոսք՝ արտահայտում:** Անօրգանական քիմիայի արքայի **գաղափարահոսք...** (ԱՏ, էջ 29):

ԳԱՂՏՆԱԲԱՌ, գ. (իմ. նորբ.): **Գաղտնի բառ կամ արտահայտություն, որն օգտագործվում է անձնական կայքէջ մտնելու համար:** Twitter-ն իր բոլոր օգտատերերին թախանձագին խնդրում է անմիջապես փոխել **գաղտնաբառերը** (Հնց, news.am):

ԳԱՂՏՆԱԴԵՏ, ան. **Գաղտնի դիտող:** Հաջորդ օրը, հետաքրքրասիրությամբ մղված, մի քիչ էլ **գաղտնադետ**, նույն ժամին տեղավորվեցի պատուհանի մոտ (Ասդիս, թ. 3, 2017):

ԳԱՂՏՆԱԴԻՏԵԼ, նր. **Գաղտնի դիտել:** ... Պատուհաններից ու դռներից մեզ **գաղտնադիտող** կանայք ու աղջիկները ժպտում էին (Սյուրմ., էջ 128):

ԳԱՂՏՆԱՀԱՎԱՔ, գ. **Գաղտնի հավաք:** Ես կարող էի փեսային խնդրել, որ ինձ էլ տաներ իր հետ այդ կախարդական **գաղտնահավաքին** (ԲԴ, էջ 223):

ԳԱՂՏՆԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Գաղտնի տեսնելը:** Բայց այն հիշողությունները, որոնք մինչև ամենաձածուկ **գաղտնատեսությունները** վերարտադրում էին իմ ողջ կյանքը, չէին բավարարվում միայն երեկով ու այսօրով... (Հ, էջ 154):

ԳԱՂՏՆԱՏԵՍՔ, ան. **Գաղտնի տեսք ունեցող:** Չեզոք էր, ինքն իր համար և նաև **գաղտնատեսք** տազնահարույց էր այս թղթի կտորը (ԱԱ, էջ 115):

ԳԱՃԱՃՈՒՀԻ, գ. **Գաճաճ կին, կին գաճաճ:** Սպիտակ **գաճաճուհին:** (Գայանե, էջ 44):

ԳԱՆԳՐԱՄՈՐԹ, գ. (փխբ.)**Գանգուրների նմանվող, գանգրատեսք:** Իմ թագավորությունն այս լույս ու մութ աշխարհում է. «ասարել

ճշմարտության մեջ»(Ֆրանց Կաֆկա), պայծառ արեգակի ու դեղնալուկ լուսնի տակ, **գանգրամորթ** ամպերի շվաքում .... (LՋ, էջ 86):

ԳԱՆՁԱԺԱՊԱՎԵՆ, գ. **Մեծ արժեք ունեցող ժապավեն:** Դիտում եմ այդ պատմական ժապավենը և մտածում, եթե ֆրանսուհի տնօրենը արտոններ նկարել, թերևս այս **գանձաժապավենը** չէի ունենա (ԱՄ, էջ 510):

ԳԱՆՁԱԿԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Գանձակում բնակվող հայություն:** Այն անողդակի հարված հասցրեց նաև **գանձակահայությանը** (ԱՄ, էջ 30):

ԳԱՆՁԱՊԱՀՈՑ, գ. **Գանձերի պահոց՝ պահելու տեղ:** Դիկտատորի անձնական **գանձապահոցն** էր դա (ԱՏ, էջ 347):

ԳԱՐԵՀԱՄԿ, գ. **Գարու հասկ:** .... Յուրաքանչյուր **գարեհասկ** ըմպում էր իր բաժին արևը.... (ՀՄ, էջ 209):

ԳԱՐԵՇԱՔԱՐ, գ. **Գարուց ստացված շաքար:** Մի օր էլ նա լիաբուռն ու լիաբերան **գարեշաքար** է ուտում.... (Բ 2, էջ 19):

ԳԱՐՆԱՅՆՈՐԵՆ, մկբ. **Գարնան նման, ինչպես գարնանը:** .... Ինքը տեսնում է, թե ինչպես են **գարնայնորեն** փթթում փողոցները .... (ԺՄ, էջ 83):

ԳԱՐՇԱՊԻՂԾ, ած. **Գարշ և պիղծ:** ....Մթության քողն ասես յաթաղանի շեղբով պատովեց, լեռները գունատվեցին **գարշապիղծ** հևքից, ցնորքի լեզվակը թրթռաց բարձունքների կատարներին, ու թուրքը դեմառաջ եկավ սև հեղեղի ավերիչ թափով (ԳԹ, 02.09.2016):

ԳԱՐՈՒՆԱՇՈՒՆՉ, ած. **Գարնանաշունչ:** Հիրավի, **գարունաշունչ** համերգ (Իր., 13.04.2018):

ԳԴԱԼԱՅՈՒ, գ. **Գդալ պատրաստելու համար հարմար նյութ՝ փայտ:** ....Նա ծառի բնից գլուխը կախ պոկեց երեսուն **գդալացու**, երեք շերեփացու (ՀՄ, էջ 209):

ԳԴԱԿԱԶԵՎ, ած. **Գդակի ձև ունեցող:** .... Ես գտա այս աղամանդը այն **գդակաձև** անոթի մեջ .... (Բ 10, էջ 740):

ԳԻԱԿԱՍՏԱՌ, գ. **Գոթակի աստառ: Գոթակաստառը** նորոգում էր Նանտում (Բ 8, էջ 41):

ԳԵՀԵՆԱՊԱՐՏ, ան. **Գեհենի՝ դժոխքի արժանի: ...** Ես կգտնեմ այդ **գեհենապարտ**, թշվառական սապատավորին (Բ 8, էջ 536):

ԳԵՂԱՆԿԱՐԱՅԻՆ, ան. **Գեղանկարին հատուկ, գեղանկարի նման:** Պահը բավականին **գեղանկարային** էր .... (Մեկ., էջ 228):

ԳԵՂԱՍՊԻՏԱԿ, ան. **Գեղեցիկ և սպիտակ:** ... Ներքևում քսան **գեղասպիտակ** անձեռոցիկներ են կախված (Գոլու. 2, էջ 220):

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԷՍԹԵՏԻԿԱԿԱՆ, ան. **Գեղարվեստական և գեղագիտական:** ... Դարերի ընթացքում դժվար թե կարողանար հիմնավորել իր **գեղարվեստաէսթետիկական** ունակությունները (Ազգ., 30.09.2016):

ԳԵՂՋԿՈՐԴԻ, գ. **Գեղջուկի՝ գյուղացու զավակ:** Մեր ինքնության պահպանման մեծագույն ներշնչողները ... մեծ **գեղջկորդու** աշակերտներն էին .... (ՎՆ, էջ 5):

ԳԵՏԱՄԵՋՑԻ, գ. **Գետամեջ գյուղի բնակիչ:** Զանգահարողը **գետամեջցի** էր.... (ՀՄ, էջ 384):

ԳԵՐԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Չափազանց ակտիվություն:** **Գերակտիվությամբ** աշխատող վահանագեղձի պայմաններում մարդը նիհարում է (TV այլը):

ԳԵՐԱՐԴԻԱԿԱՆ, ան. **Խիստ արդիական:** **Գերարդիական** իմ սմարթֆոնն առավել քան հստակ փոխանցեց արտասանված մի քանի բառը.... (ԳԹ, 22.07.2016):

ԳԵՐԲԱԶԱՐԴ, ան. **Գերբով զարդարված:** Նրանց **գերբազարդ** գլխարկները կանոնավոր շարված էին կախիչների գլխին և թախտի վրա (ԲԴ, էջ 184):

ԳԵՐԵԶՄԱՆԱՇՈՒՆՉ, ան. **Գերեզմանի շունչ ունեցող, փխր. ծայրահեղ ծեր, զառամյալ:** Տեսելով **գերեզմանաշունչ** այս մարդկանց՝ ... նողկանք ես զգում այդ մայրաքաղաքի ... հանդեպ (Բ 2, էջ 339):

ԳԵՐՁՄԱՅԼԱՆՔ, գ. **Արտակարգ գնայանք:** .... Հնարավոր չէ արտահայտել շփոթմունքով ու զարմանքով լի .... **գերզմայանքը** (Բ 2, էջ 408):

ԳԵՐԼՈՒՄԻՆ, գ. **Սովորականից խոշոր լուսին:** Այսօր երկնականարում **գերլուսին** կհայտնվի (Հմց, news.am):

ԳԵՐԿԱՏԱՐՅԱԼ, ան. **Արտակարգ կատարյալ:** .... **Գերկատարյալ** կարգ ու կանոն էր տիրում (ԺՄ, էջ 17):

ԳԵՐԿՐԹՎԱԾ, ան. **Խիստ կրթված:** .... Հայաստանցի և ռուսաստանցի օլիգարխների էական տարբերությունը նաև այն է, որ վերջիններս **գերկրթված** անձնավորություններ են (Իր., 13.04.2018):

ԳԵՐՀՄԱՅԻԶ, ան. **Արտակարգ հմայիչ:** .... Ես նրան պարզեցի մի **գերհմայիչ** ժպիտ (Սել., էջ 336):

ԳԵՐՄԱՐԴԱՄՈՏՈՐԵՆ, մկր. **Արտակարգ մարդամոտ կերպով:** .... Արդեն վերջնականապես **գերմարդամոտորեն** ետ դարձանք .... (Սել., էջ 235):

ԳԵՐՆՐԲԱԳԵՂ, ան. **Արտակարգ նրբագեղ:** Ես պատկերում էի երեկոյան կոստյումներով **գերնրբագեղ** զույգեր (Սել., էջ 329):

ԳԵՐՊԱՐՏՔ, գ. **Չափազանց խոշոր չափերի պարտք: Գերպարտքը** այսօր խեղդում է երկրին, այն աղքատության տարածման կարևորագույն աղբյուրն է (Հմց, Itv.ge/am/news):

ԳԵՐՁԵՆՈՒՑՎԱԾ, ան. **Չափից ավելի ձեռուցված:** Չնայած ցուրտ չէր, բայց **գերջեռուցված** գրադարանում ժամեր շարունակ նստելուց հետո դրսում մրսեցի (ՊՇ, էջ 12):

ԳԵՐՄՊԱՌԵԼ, նր. **Արտակարգ՝ չափից դուրս սպանել:** .... Ով պետք է առաջինը խնայի իր կենսական ուժերը, մինչդեռ նա **գերսպառում** է իրեն .... (Բ 2, էջ 340):

ԳԹԱԿԱՐՈՏ, ան. **Կարեկցության կարոտ:** Արդար լույս- խոսքը, ախ՛ որք մանկան պես՝/ Միշտ **գթակարոտ**, մեկուսի, անտես (ՌԿ, էջ 105):

ԳԻՆԵՄԱՏՈՒՅՑ, ամ. **Գինի մատուցելու համար նախատեսված: Գինեմատույց** պոչավոր ալյումինե ամանը մեկնեց ինձ (ԹԳ, էջ 212):

ԳԻՆԵՄՇՈՒՇ, գ. (փխբ., բնստ.): **Գինու՝ խմիչքի ազդեցությանը առաջացած մշուշ:** Աչքերիս **գինեմշուշում** // Ցոլում էր մի արևադրիկ... (ԳԹ, 22.07.2016):

ԳԻՆԵՇԱԲԱԹ, գ. **Գինուն նվիրված շաբաթ:** Շաբաթ օրերին Կարասում գինին կես գին՝ **գինեշաբաթ** է (ՀԱԳ):

ԳԻՆԵՐԳ, գ. **Խրախճանքի երգ:** Եթե կա մի բան, որ վրացին սիրում է ավելի՝ քան գինին, իր հայրենի **գինեբզերն** են (Սյուրմ., էջ 187):

ԳԻՇԵՐԱՍԱԹԵ, ամ. **Սաթի նման խիստ սև ու փայլուն: ...** Մազերը ... **գիշերասաթե** հերակալից վեր էր կիսել (ԹՇ, էջ 273):

ԳԻՇԵՐԱԲԱՐԵ, ամ. **Գիշերաքարից (սև սաթ) շինված:** Կանայք **գիշերաքարե** ուլունքներ են կրում հանգիստ քնելու, զավակ ունենալու և նորածին երեխային չարքերից պաշտպանելու համար (ՊԲՀ, 2017, 2, էջ 127):

ԳԻՏԱԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ, ամ. **Գիտական և գեղարվեստական:** Դրանք իրենց բովանդակությամբ և մատուցման ձևերով տարբերվում են վերջին զանգերին նվիրված հանդեսներից, որովհետև դրանք ոչ թե հրաժեշտի կամ երախտիքի անգիր արված դրսևորումներ են, այլ **գիտագեղարվեստական** ներկայացումներ (Նարեկ, թ.2, 2013):

ԳԻՏԱԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ, ամ. **Գիտաֆանտաստիկ:** Ուրեմն **գիտաերևակայական** շարժանկար է (ՀՄ, էջ 43):

ԳԻՏԱԽՈՂ, գ. **Գիտական խոհ, մտորում:** Ով ճանաչում է գրող Ալիս Հովհաննիսյանին, ինձ նման պիտի զարմանար՝ «Գրական թերթում» շարունակաբար ընթերցելով նրա **գիտախոհերը** առ Բաֆֆին (ԳԹ, 16.02.2018):

ԳԻՏԱԿԵՐՊ, ամ. **Գիտականանման, կեղծ գիտական: ...** Հեսսեն դիմում է ժամանակի գիտության զանազան բնագավառների մեթոդաբանական գինանոցին՝ **գիտակերպ** վարկածներ, ֆիկցիաներ... (Հ, էջ 216):



ԳԻՏԱԿԻՐԱՌԱԿԱՆ, ամ. **Գիտական և կիրառական**: .... Մեր ձեռքին է արժեքավոր, **գիտակիրառական** աշխատություն .... (Ազգ, 01.12.2017):

ԳԻՏԱԿՑԱՓՈՒՄ, ամ. **Գիտակցությունը փոխած**: - Ես քեզ նման **գիտակցափոխ** եմ (ՌՇ, էջ 197):

ԳԻՏԱԿՑԱՓՈՒՄԿԵԼ, չր. **Գիտակցությունը փոխել, այլ գիտակցություն ձեռք բերել**: .... Դուք կարող եք **գիտակցափոխվել** առանց մեխանիկական հարմարանքների .... (ՌՇ, էջ 146):

ԳԻՏԱԿՑԱՓՈՒՄՈՒԹՅՈՒՆ, գ. **Գիտակցությունը փոխելը, այլ գիտակցություն ձեռք բերելը**: .... Չէր կամենում օգտվել **գիտակցափոխության** առավելություններից (ՌՇ, էջ 139):

ԳԼԽԱՄԱՇԿ, գ. **Գլխի մաշկ**: Մաքուր սափրված նրա **գլխամաշկը** շարժվում էր անընդհատ .... (ԱՏ, էջ 170):

ԳԼԽԱՐԿԱՆՇԱՆ, գ. **Գլխարկանիշ, գլխարկին ամրացվող տարբերանիշ**: .... Գլխարկիս վրայից արձակեցի միլիցիայի **գլխարկանշանը** (Կլին, էջ 114):

ԳՅՈՒՂԱՑԱՆԿ, գ. **Գյուղանունների ցուցակ**: 2009թ. մեր հրատարակած **գյուղացանկն** ընդգրկում էր 22 գյուղ և գյուղակ .... (ՊԲՀ, 2017, 2, էջ 50):

ԳՈՂԱԲՈՒՆ, գ. **Գողերի բուն՝ հավաքատեղի՝ ապրելատեղ**: .... Որոնք .... վխտում են ներքնահարկերում, **գողաբներում** .... (Բ 6, էջ 527):

ԳՈՂՈՆԱԹԱՔՈՒՅՑ, գ. **Գողոնը թաքցնելու վայր՝ տեղ**: .... Անմիջապես .... **գողոնաթաքույցները** զգուշացվեցին .... (Բ 6, էջ 561):

ԳՈՄԱԲԱԿ, գ. **Գոմի բակ**: Նա անցավ կողմնակի լուսամուտի առաջ, որտեղից **գոմաբակն** էր երևում (Գոլու. 2, էջ 129):

ԳՈՅԱՄԱՔԱՌՈՒՄ, գ. **Գոյության կոիվ, մաքառում գոյությունը պահպանելու համար**: .... Ճշմարտությունները, որոնք կերպարանագործված են .... ազգային **գոյամաքառման** բախտորոշ ժամանակաշրջաններում, հիմք են դառնում .... հասնելու ընդհանրացման (Հայրունի, էջ 96):

ԳՈՅԱՄԹՆՈԼՈՐՏ, գ. **Գոյության, կեցության միջավայր, կենսամիջավայր:** Նա անհետացել էր մեր գոյամթնոլորտից (ԱՄ, էջ 157):

ԳՈՅԱՊՐՈՒՄ, գ. **Գոյության՝ լինելիության զգացողություն:** Գեներալը ոչ իր կամքով կնոջ հոգում տեղ է բացել **գոյապրումի** անհանգիստ, ինքն իրեն կրծող ռիթմին, որը կանգնեցնելը թվում է անհնար (ՀՀ, 16.06.2017):

ԳՈՏԵՓԱՅՏ, գ. **Գոտենման փայտյա մաս:** Մնում էին .... անջատ ապակիներ, որոնք ամրացված էին շրջանակի **գոտեփայտերով** (Բ 6, էջ 482):

ԳՈՐԳԱԶՈՒՐԿ, ան. **Գորգերից գուրկ, գորգեր չփռած:** .... Շինության պատերին ու **գորգագուրկ** հատակին լայն ճեղքեր կային .... (Կոպեր, էջ 299):

ԳՈՐԳԱԿՏՈՐ, գ. **Գորգի կտոր՝ հատված:** Ինքը նստեց հինավուրց **գորգակտորով** պատված մի փափկաթոռի(ԺՄ, էջ 340):

ԳՈՐԾԱՀԱԳՈՒՍՏ, գ. **Գործի՝ աշխատանքի ժամանակ հագնելու հագուստ:** Հետո գնաց .... յուրոտ **գործահագուստը** փոխելու (ԺՄ, էջ 525):

ԳՈՐԾԱՆԵՆԳ, ան. գ. **Նենգ՝ անօրինական գործեր՝ գործարքներ կատարող (անձ):** Այս կասկածելի գործարքը իրագործվեց .... այն **գործանենգներից** մեկի կողմից.... (Բ 10, էջ 170):

ԳՈՐԾԵԼԱՈՃ, գ. **Գործելու եղանակը, աշխատանք:** .... Ցույց կտան ժամանակն ու ծավալվող իրադարձությունները, այժմ նորակազմ կառավարության **գործելաոճը** (Ազգ, 01.06.2018):

ԳՈՐԾԿԵՆ, ան. **Գործված:** .... Սեղանը .... **գործկեն** սփռոցով էր ծածկված (Կաֆկա, էջ 107):

ԳՈՐՇԱՊԱՅԾԱՌ, ան. **Գորշ և պայծառ:** Մի ավազակույտ կար այնտեղ, **գորշապայծառ** մի հողակտոր, ողջ մնացյալը թաղված էր խավարի մեջ (Հ, էջ 155):

ԳՈՐՈՎԱՄԻՏ, ան. **Գորովով՝ խանդաղատանքով՝ բուռն սիրո և գբության զգացմունքով ուշադիր:** Ես անտարբեր եղա .... , որի

շնորհիվ **ամենագորովամիտ** հասարակությունը ... չինացավ ...  
(Բ 8, էջ 110):

ԳՈՐՈՎԱՇԱՐԺ, մկր. **Գորով շարժող**: –Գրուշինկ, - **գորովաշարժ**  
ասում էր Անատոլիան,- Գրուշինկ (ՆԱ, էջ 63):

ԳՐԱՀՄՈՒՏ, գ. **Գրելու հմտություն ունեցող**:Եվ դու համբերիր,  
ով **Գրահմուտ**, //թող որ փեթակի ես գրույցն անեմ (ԲԿ, էջ 53):

ԳՐԱՇՈՒԿԱ, գ. **Գրքի շուկա**: ... Հայաստանյան **գրաշուկայի**  
ամենամեծ տեսականին հաստատ ապահովել ենք ... (ԳԹ, 09.06.2017):

ԳՐԱՊՐԱՆՔ, գ. **Գրական արտադրանք**: ... Փորձել եմ հնա-  
րավորինս զերծ մնալ անհանգ ու հանգավոր ճամարտակություններից,  
անհարկի բառաբարդումներից ու հեզնահորդոր պարզունակ ծեփ-  
ծեփումներից, ... ընդդեմ լայն սպառման **գրապրանք**«ցրող» դափ-  
նիավոր շարաբանների(ԳԹ, 14.04.2017):

ԳՐԱՏՆԱԿ, գ. **Փոքր գրախանութ**: Առաջին **գրատնակը** բացվել է  
Իսահակյան-Տերյան խաչմերուկում (Իր., 28.11.2017):

ԳՐԱՏՈՆ, գ. **Հանդիսավոր առիթով գրքի տոն**: ... **Գրատոնի**  
հեղինակը, նախաձեռնողը գրողների միության երջանկահիշատակ  
նախագահ Լևոն Անանյանն էր (Իր., 20.02.2018):

ԳՐՉԱՉԱՓ, ած. **Գրիչի չափ ունեցող**: Բուժքույրը...սպիրտով շփեց  
այն տեղը, ուր մի քիչ առաջ հպված էր կնոջ ցուցամատը, և **գրչաչափ**  
ասեղը խրեց վերքիս մեջ (ԳԱ, էջ 141):

ԳՐՉԱՓԵՏՈՒՐ, գ. **Փետրագրիչ, որպես գրիչ հարմարեցված՝  
ծառայող փետուր**: ...Ծնվում են **գրչափետուրը** ականջի հետևը ցցած  
(Դյունա, էջ 83):

ԳՐՊԱՆԵՋՐ, գ. **Գրպանի ծայր՝ եզր**: [Բանալին].... մի ժապավե-  
նով կախված էր **գրպանեզրից** (Բ 10, էջ 577):

ԳՐՔԱՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Գրքի մատենագիտությանը  
վերաբերող**: **Գրքամատենագիտական** ուսումնասիրությունը ցույց է  
տալիս, որ դրանք տպագրվել են աշխարհի բազմաթիվ քաղաքներում՝  
Երևանում, Բեյրութում, Փարիզում.... (ՀՀ, 23.07.2016):

ԳՐՔԱՊԱՇՏ, ան. **Գիրք պաշտող**: Մենք գրքապաշտ ժողովուրդ ենք (ԳԹ, 26.05.2017):

ԳՐՔԱՍՈՒՆ, ան. (դիպվ.): **Գրքերով սնված**: .... Իսկ կարող է մի չորանի հետ նստես, զրույց անես, ավելի մեծ վայելք ունենաս, քան էդ դոկտոր-պրոֆեսորի դեպքում, որը լույս **գրքասուն** է, ձեռնասուն է (ԼՋ, էջ 184):

ԳՈՒՄԱՐԱԴԱՆԱԿ, գ. **Դրամապանակ**: Հանկարծ նկատեցի, որ **գումարապանակ** չկա (Հմց):

ԳՈՒՅՔԱԳԻՐ, գ. **Գույքագրման ցուցակ**: Մյուս թղթապանակումն տան **գույքագիրն** է (Անդին, թ. 3, 2017):

ԳՈՒՆԱԲԻԾ, գ. **Գունավոր բիծ**: Ալվարդ Պետրոսյանը ասես կարդում է Նարեկի կտավների գաղտնագրերը, **գունաբծերով** խազագրված նոտաները (ԳԹ, 29.06.2018):

ԳՈՒՆԱԹԵՐԱՊԻԱ, գ. **Բուժում գույների միջոցով, գունաբուժում**: Գունային այս հագեցված ներդաշնակությունը .... նաև ազդում է] հոգեկան վիճակի վրա.... [դա] վաղուց արդեն **գունաթերապիա** է համարվում (Ազգ, 14.10.2016):

ԳՈՒՆԱԽԱՆՈՒՆ, ան. **Խառը գույներով**: Տեր- Ջորի **գունախառն**, փայլփլուն ուղեցույցը վկայում է, որ քաղաքը ապրել է տնտեսական մեծ առաջադիմություն (ՌՂ, էջ 225):

ԳՈՒՆԱԾԱՎԱԼ, գ. **Գունային ծավալ**: Այս գործերի բնական ձևերը հետագայում փոխակերպվում են... և հյուսվելով արդեն թրթռուն, լայն **գունածավալների**, կտավը վերածում են բեմական, որմնանկարային, նաև հեքիաթային տեսադաշտի (Գայանե, էջ 5):

ԳՈՒՆԱԿԱՌՈՒՅՅ, գ. **Գունային պատկեր, խճապատկեր**: Դեմքը ծածկած աղջկա զգեստը ներդաշնակ է պատերի մեղմաշունչ **գունակառույցին** (ՇԽ, էջ 7):

ԳՈՒՆԱՄԱՏԱԿԱՐԱՐ, գ. (փխբ.): **Ներշնչանք, գույներ մատակարարող**: Ուսանողական տարիներն իր ներկապնակի ամենահարուստ **գունամատակարարն** էին (Անդին, թ. 5, 2017):

ԳՈՒՆԱՄԹՆՈՒՆՈՐՏ, գ. **Գույների մթնոլորտ:**....[Նկարները] միասնական են ներքին վիճակի, աշխարհընկալման, **գունամթնոլորտի** մեջ.... (Ազգ, 14.10.2016):

ԳՈՒՆԱՔԱՆԱԿ, գ. **Գույների քանակությունը, թիվը:** .... Առանձնացվում է առավելագույն **գունաքանակը** .... (ԶԼ, էջ 111):

ԳՈՒՇԱԿԱԳԵՏ, գ. **Գլխավոր գուշակը:** **Գուշակապետը** աչքի պոչով նկատեց, որ այդ ընթացքում նրա դեմքին ոչ մի մկան չչարժվեց (ԱԹ, էջ 46):

## Դ

ԴԱԼԱՐԱՀՈՎԱՆՈՑ, գ. **Կանաչապատ՝ կանաչով ծածկված՝ պատված հովանոց:** .... Պատասխան նամակը ... նա կարդաց պարտեզի խորքում, **դալարահովանոցի** տակ (Բ 8, էջ 190):

ԴԱՄԱՍԿՈՍԱՀԱՅ, գ. **Դամասկոսում բնակվող հայ:** Այս անգամ առիթ ունեցանք ծանոթանալու Կարինե Մելիքյան-Քեշիշյանի հետ, որը 2017թ. կյանքից հեռացած **դամասկոսահայ** համայնքային և ՀՅԴ գործիչ Նուբար Մելիքյանի դուստրն է (Իր., 12.05.2017):

ԴԱՄԲԱՐԱՆԱՆՄԱՆ, ած. **Դամբարանի նման՝ տեսք ունեցող:** .... Սանդուղքով ցած իջան և հայտնվեցին **դամբարանանման** մի տեղում (Դյունս, էջ 426):

ԴԱՄԲԱՐԱՆԱՇԱՐՔ, գ. **Դամբարանների շարք:** Կանգնած են Փյունիկիայի թագավորների **դամբարանաշարքում** (ԱՄ, էջ 435):

ԴԱՇՏԱԹԱՂՈՒՄ, գ. Այստեղ՝ **այգեթաղ:** .... Միայն իր խաղողի տունների **դաշտաթաղումով** էր զբաղված (Բ 2, էջ 477):

ԴԱՇՈՒՆԱՄԱՐՏ, գ. **Մարտ դաշույնով:** Ոճրագործները կարող են միմյանց հետ հաշտվել **դաշունամարտից** հետո (Բ 4, էջ 701):

ԴԱՌՆԱԴԵՂԻՆ, ած. (բնատ.): **Դառը, դեղնագույն:** ....Իսկ հիմա աշուն է, **դառնադեղին** օր (Լ, Զ, էջ 38):

ԴԱՌՆԱՄՈՒՆ, ած. (փխբ.): **Դժվար, ծանր ,դառը:** Նրա **դառնամուխ** կյանքի պատմությունները վաղ հասունացրին հոգիս .... (ԳԹ, 30.09.2016):

**ԴԱՌՆԱՊԱՏԿԵՐ, գ. Դառնություն հարուցող պատկեր:** Նման **դառնապատկերները** քիչ չեն գրքի մեջ (*ԳԹ, 23.02.2018*):

**ԴԱՌՆԱՔԱՂՅՐ, ամ. Դառը և քաղցր:** Մի անգամ՝ աշնանը, գրավված ցախկեռասի պտուղների **դառնաքաղցր** հոտով, պատուհանից ներս եկավ մեղուների մի ողջ պարս (*ՆԱ, էջ 30*):

**ԴԱՍԱՑԱՆԿ, գ. Դասերի ցանկ:** Մեզ մոտ դպրոցները նման խնդիր չունեն, իրենց **դասացանկերում** դա չկա, վճարման մեխանիզմները չկան (*Իր., 22.12.2017*):

**ԴԱՍԱՑՈՒՑԱԿԱՅԻՆ, ամ. Դասացուցակում ընդգրկված:** Մեկ ամիս էր անցել, երբ ամերիկացի երիտասարդները խնդրեցին, որ ներկա լինեն նաև **դասացուցակային** պարապմունքներին (*ԱԱ, էջ 242*):

**ԴԱՎԱԼԻՑՔ, ամ. Դավադիր լիցք պարունակող:** ...Առաջին անգամ ու՛մ գաղջ բերանից հորդեց «Իմ սպարապետ» **դավալիցք** խնկարկումը... (*Իր., 30.03.2018*):

**ԴԱՏԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ, գ. Դատական խարդախություն.խարդախություն դատական ասպարեզում:** Դատանենգության այդ հսկա տաճարը ճգնում է արքայական ատյանը (*Բ 6, էջ 464*):

**ԴԱՐԱՎԱՐՏ, գ. Դարավերջ:** Հիմա մի սպասեք դարակազմիկ եզրահանգումների՝ **դարավարտը** կգնահատի (*Իր., 11.05.2018*):

**ԴԱՐԱՏՈՆ, գ. Դարը նշանավորող տոն:** ... Եռատոնից ու քառատոնից հետո ու **դարատոնից** առաջ կարճ ժամանակ կա ամփոփելու Հայաստանում կատարված փոփոխությունները (*Իր., 11.05.2018*):

**ԴԱՐԲՆԱԳՈՐԾԱԿԱՆ, ամ. Դարբնագործության:** ... Մեզ է թողել ... Հոտենտոտների **դարբնագործական** արվեստի նկարագրությունը (*Դ., Մ., էջ 60*):

**ԴԱՐՉՆԱԳՈՐԾ, ամ. Դարչնի նման գորշ:** ... Գլուխը ուսերի մեջ էր քաշել հսկայական **դարչնագորշ** կրիայի նման (*Կվին, էջ 318*):

**ԴԱՐՉՆԱԹՈՒԻՆ, ամ. Թուխ և դարչնագույն:** Դարչնաթուխ մաշկով կինը հենվել էր լուսամուտի գոգին... (*ՀԱ, էջ 679*):

**ԴԱՐՉՆԱՇԵԿ, ամ. Դարչնագույնին տվող շեկ:** Դարչնաշեկ բեղիկներ (*Սեղ., էջ 332*):

ԴԱՐՄԱԿՈՒՅՏ, գ. **Դարաված կոյտ, իրար վրա դարսելու հետևանքով ստացված կոյտ:** .... Զորանոցների մոտ դարսակոյտերով թափված ոսկին .... զգվեցրել էր բոլորին (ՄՏ, էջ 336):

ԳԵՂԱՊԱՐԿՈՒՃ, գ. **Գեղի պարկուն՝ պատիճ, դեղապատիճ:** Մեկի վրա դրված էին դեղերը՝ .... սրվակներ, **դեղապարկունճներ՝** ամբողջ մի դեղատուն (Կվին, էջ 12):

ԳԵՂԱՏՈՄՍԱՅԻՆ, ան. **Գեղատունով տրվող: Գեղատունա- յին** դեղերը նախկինում էլ չէր կարելի առանց դեղատունսի վաճառել (Հւց, news.am):

ԳԵՂՆԱԹԵՎ, ան. (փխբ.): Այստեղ՝ **թախծոտ:** .... Իր նկարչության մեջ մի կորած երագ կա, **դեղնաթն** անուրջ, որ որքան գեղեցիկ, նույնքան թախծոտ է (Սզգ, 17.06.2016):

ԳԵՂՆԱԼՈՒԾՈՒՅԹ, ան. **Գեղին գույնի լուծույթ:** Հանկարծ նորից եմ արթնանում ու տեսնում՝ **դեղնալուծույթ** մակերեսը փռվել է ոտքերիս և թույլ ցնցումներով վեր է բարձրանում... (Ասդին, թ. 3, 2017):

ԳԵՂՆԱԿՆ, ան. **Գեղին ակ՝ բողբոջ ունեցող՝ բողբոջներով: Գեղնակն** երիցուկ (Գոլու. 2, էջ 302):

ԳԵՂՆԱՄԱՆՈՒՇԱԿԱԳՈՒՅՆ, ան. **Գեղնին տվող մանու- շակագույն:** .... Հակահարձակ էր եղել քամու մի այլ՝ **դեղնամա- նուշակագույն** ամպ (ՌՇ, էջ 153):

ԳԵՂՆԱՆԻՎ, ան. **Գեղին անիվներ ունեցող, անիվները դեղին:** ... **Գեղնանիվ** երկտեղանին սուրաց (Գոլու. 2, էջ 274):

ԳԵՂՆԱՅՈՒԹ, գ. **Գեղնագույն փայլ, ցուլք:** Կնճռապատ, ան- կենդան մագաղաթե դեմք, աչքերում **դեղնացուլք** (ԳԱ, էջ 75):

ԳԵՂՈՒՈՐՏ, գ. **Գեղերի բնագավառ:** Նոր աշխատատեղեր Հայաստանում՝ **դեղոլորտի** մասնագետների համար (Հւց):

ԳԵՐԱԿԵՐՊԱՐ, գ. **Գերի կերպար:** Տիգրան Լևոնյանը իր բազ- մակողմանի տաղանդի արդյունքում նաև կերտեց մի շարք անմոռանալի **դերակերպարներ...**(Սզգ, 23.12.2016):

ԴԵՐԱՆՎԱՆԱԶԵՎ, գ. Այստեղ՝ **Դերանվան հոլովածն**: –Քո իմացած **մեզը** չէ, սա **դերանվանածն** է... (ԱՄԷ, էջ 189):

ԴԵՐԱՏԱՊԱԼՈՒՄ, գ. (դիպվ.): **Դերը տապալելը**: ... Կվարանեն արժանի գնահատական տալ անտանելի **դերատապալմանը** (Ազգ, 13.04.2018):

ԴԵՐԱՏԵՍԱԿ, գ. **Դերի տեսակը**: ... **Դերատեսակի** էությունը զգալով ... (Ազգ, 13.04.2018):

ԴԵՐՄԻՄԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Դերսիմի հայ բնակչություն**: ...Եղեռնից փրկված Սուրբ Կարապետ վանքը... **դերսիմահայության** միակ աղոթավայրն է եղել (Ազգ, 12.05.2017):

ԴԺԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ, ան. (դիպվ.): **Ոչ բանաստեղծական**: Ահա աշխարհի մի անկյունում ապրող բանաստեղծի և՛ բանաստեղծական, և՛ **դժբանաստեղծական** վիճակ(ԳԹ, 01.06.2018):

ԴԻՄԱԿԱԶԱՐԴ, ան. **Դիմակներով զարդարված**: Սարսափելի գլխազարդերը ներկայացնում էին ... **դիմակազարդ** ահագին շրջանակներ ... (Բ 4, էջ 22):

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԵՍԱՅԻՆ, ան. **Դիմակահանդեսի ժամանակ օգտագործվող**: ... Խեղճ Քրիստոսի սիրտը կիսառներ, հավանաբար, եթե նա տեսներ այդ **դիմակահանդեսային** լաթերը (Սեղ., էջ 144):

ԴԻՄԱՅԱՆՑ, գ. **Դեմքը ծածկող, պաշտպանող ցանց**: Մեղվապահը **դիմացանցը** հանելով շտապեց դեպի մեզ (ՌԴ, էջ 46):

ԴԻՄԱԲՈՂ, գ. **Դեմքի՝ դեմքը ծածկող քող**: Դագաղի ետևից մտան թանձր **դիմաքողով** երեք կանայք(ԺՄ, էջ 507):

ԴԻՏԱՊԱՏԱՌ, գ. **Ցուցադրության պատանձ էկրան**: Դահլիճի աջ անկյունում մեծ **դիտապատանի** CNN-ի ֆիլմն էր պատմում Հայաստանի մասին... (Ազգ, 01.06.2018):

ԴԻՏԱԽՈՒԶԵԼ, նբ. **Դիտելով պարզել՝ հետախուզել**: ... Դա մի փախստական էր, որն աշխատում էր **դիտախուզել** զորքի տեղաշարժը ... (Կուսեր, էջ 347):



ԳԻՏԱՌԱՆՑՔ, գ. **Գիտելու առանցք**: Անդամ մարդու **դիտա-  
ռանցքը** երբեք չի շեղվում (*ՀՄ, էջ 39*):

ԳԻՏԱՌԻՆԿՆԴՐԵԼ, ք. (դիպվ.): **Գիտել և ունկնդրել**: Ամանոր  
տոնական օրերին համբերությամբ **դիտաունկնդրեցի** հայկական  
հեռուստաալիքների համերգահումորային ծրագրերը (*ԳԹ, 23.03.2018*):

ԳԻՏՈՐԴՈՒՀԻ, գ. **Կին՝ աղջիկ դիտորդ, դիտորդ կին՝ աղջիկ**:  
Հիացած **դիտորդուհիներն** այք չեն թարթում նրանցից (*Բ., Մ., էջ 108*):

ԳԻՑԱԶՈՒՅԳ, գ. **Աստվածների զույգ**: ... Նավասարդ ամսին  
կատարվող տոնը մինչև արեգակնային տոմարով Նոր տարվա  
օր դառնալն արդեն գոյություն ունեւ որպես Ամանոր-Վանաստոր  
**դիցազույգի** բերքահավաքի տոն ... (*ՊԲՀ, 2017, 2. էջ 98*):

ԳՅՈՒՐԱԾԱԾԱՆ, ամ. (քնստ.): **Հեշտ ծածանվող**: Վեր ենք  
պարզել դրոշի պես // **Դյուրածածան** ու կանացի (*ԳԹ, 27.04.2018*):

ԳՅՈՒՐԱՊԱՏԿԵՐԱՑՆԵԼԻ, ամ. **Հեշտ պատկերացնելի**: ...Մեզ  
համար ցավալիորեն **դյուրապատկերացնելի** մի բան. պատերազմ  
(*Անդին, թ. 3, 2017*):

ԳՄՏԵՐԱԿԱՆ, ամ. **Գստերը՝ աղջիկ գավակին հատուկ**: ...  
Ինգան հաճախ չէր ինձ երես տալիս իր **դստերական** զգացմունքների  
դրսևորումով (*Կվին, էջ 112*):

ԳՐԱԽՏԱՊԵՐՃ, ամ. **Պերճ և դրախտային**: Նրան՝Աստծո գիրկը  
տաք, // **Դրախտապերճ** հիշատակ (*ՌԿ, էջ 29*):

ԳՐՈՇԱԿԱԹՈԿ, գ. **Դրոշակի թոկ՝ պարան**: ... Նետվեցին ...  
դեպի **դրոշակաթոկերը** (*Դյունա, էջ 4*):

ԳՐՈՇԱԿԱՍՅՈՒՆԻԿ, գ. **Փոքրիկ սյուն, որի վրա դրոշ են  
ամրացնում**: Այդ պակասը լրացնում է վարից վեր պտուտակաձև  
սյունը, որի վրա հնում փողփողել է ընտանիքի դրոշակը ... այս  
վայելչագեղ **դրոշակասյունիկը** ... (*Բ 8, էջ 23*):

ԳՐՈՒՅՔԱԶՍՓ, գ. **Դրույքի չափը**: Ռուսաստանում բարձրացվել  
է ծխախտոտի ակցիզային հարկի **դրույքաչափը** (*Հմց, news.am*):

ԳՐՎԱԳԱՆԱԽՇ, ան. **Նախշերով դրվագված:** Տեն ԲԵՄԱ-ՍԵՂԱՆ-ի օրինակը:

ԳՈՒԴՈՒԿԱՆՄԱՆ, ան. **Գուդուկի նման՝ տեսք ունեցող:** Դա իսկապես էլ ֆրանսո էր: Թիկնոցը արտասահմանյան, շավարը՝ **դուդուկանման** (Կվին, էջ 273):

ԳՈՒՌԹԱԿՈՑ, գ. **Գուռը թակելը՝ բախելը՝ ծեծելը:** .... Մեղմ **դուդուկնոցը** երբեք չէր ուշանում (Բ 10, էջ 673):

Ե

ԵԶՐԱԿԱՊ, գ. **Եզրի կապ:** Շերտավոր գունդը կանգնեց **եզրակապին** հաված (ՀՄ, էջ 461):

ԵԿԱՄՏԱԲԱԺԻՆ, գ. **Եկամտի բաժին՝ մաս:** .... Ես նավապետ կլինեմ: Հարյուր լուիդոյո ռոճիկ և **եկամտաբաժին** (Դյումա, էջ 12):

ԵՂԱՅՐԱՓԱՌԱԲԱՆՈՒՄ, գ. (դիպվ.): **Եղբորը գովելը՝ փառաբանելը:** Նա աչքի էր ընկնում միայն ու միայն իր մեկ հատկանիշով՝ համայնավարական **եղբայրափառաբանմամբ** (ԱՄ, էջ 41):

ԵՂԵՆԱԳԻՏԱԿԱՆ, ան. **Ցեղասպանագիտական:** **Եղեռնագիտական** այս կարևոր հրատարակությունը հաստատվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից.... (ՀՀ, 23.07.2016):

ԵՂԵՆԱԼԻԻՑ, ան. **Եղերական:** Ցավոք, 1915 **եղեռնալից** թվականը ճակատագրական դարձավ նաև հայկական մշակութային արժեքների համար (Գիտ., դեկտ., 2017):

ԵՂԵՆԱԿՈՐԾԱՆ, ան. **Եղեռնից կործանված:** .... [Նանսենը] գնաց .... Հայաստան՝ օգնելու **եղեռնակործան** մի հին ժողովրդի (ԳԹ, 21.07.2017):

ԵՂԵՆԱՄԱՀ, ան. **Եղեռնից մահացած՝ եղեռնամեռ, եղեռնակոծ:** **Եղեռնամահ** մտավորականի որդին՝ ֆրանսիական ջազի հիմնադիրը (Ազգ., 22.09.2017):

ԵՂԵՆՈՒՐԱՑ, ան. **Եղեռնը ուրացող:** «Մահվան տեսիլ» պոեմում նա իր ապրած **եղեռնուրաց** ժամանակում հարագատ է մնում

«բոցավառ հանճարի» «Եղեռնի Նարեկին»՝ ի վկայության ներկայի ու գալիքի (ԳԹ, 01.06.2018):

ԵՆԹԱԹԱՂ, գ. **Թաղամասի հատված:** Տողերիս հեղինակը մեծացել է Նոր Արեշում, որտեղ, ինչպես Երևանի՝ հայրենադարձներով բնակեցված այլ թաղամասերում, ժողովրդի կյացրած Ախպարաշեն անունով **ենթաթաղեր** կային (Ազգ, 15.12.2017):

ԵՆԹԱՓԱԹԵԹ, գ. **Փաստաթղթային փաթեթի ենթամաս, հատված:** Երբ բանակցային սեղանի շուրջ խնդիրներն առանձնացվեն, յուրաքանչյուր **ենթափաթեթ** կներկայացնի անհրաժեշտ հարցերը մեկ առ մեկ ... (Ազգ, 18.05.2018):

ԵՆԹԱՔՆՆԻՉ, գ. **Քննություն իրականացնող օժանդակ պաշտոնյա:** Բիրնացի **ենթաքննիչը** և մի քանի հնդիկ ոստիկաններ ինձ էին սպասում... (Անդին, թ. 4, 2017):

ԵՎՐԱԽՄՈՐՈՒՄ, գ. **Եվրոպայում տեղի ունեցող խմորում:** Ընտրությունները Նիդեռլանդներում ու Ավստրիայում, հետո նաև Ֆրանսիայում ու Գերմանիայում հաստատեցին **Եվրախմորումների** միտումները (Իր., 21.11.2017):

ԵՎՐԱՊԱՏԳԱՄՄԱՎՈՐ, գ. **Եվրախորհրդարանի պատգամավոր:** **Եվրապատգամավորի** օգնականները, որոնց վճարումը կատարվել է ԵՄ բյուջեից, իրականում աշխատել են կուսակցական շտաբում՝ կատարելով միանգամայն այլ աշխատանք (ՀԱՂ, news.am):

ԵՎՐԱՋԱՏԱԳՈՎ, գ. **Եվրոպական կողմնորոշման հետևորդ:** **Եվրաջատագովները** հաղթեցին, բայց և եվրասկեպտիկներն ասացին իրենց խոսքը (Իր., 21.11.2017):

ԵՎՐԱՄԿԵՊՏԻԿ, գ. **Եվրոպական կողմնորոշման հանդեպ թերահավատ, եվրաթերահավատ:** Տե՛ս ԵՎՐԱՋԱՏԱԳՈՎ-ի օրինակը:

ԵՏՀԱՇՎԵԿՆԱՅԻՆ, ած. **Հաշվեկշռին հաջորդող:** Դրանք վերաբերում են բանկի պայմանական պարտավորություններին և արտացոլվում **ետհաշվեկշռային** հոդվածներում (ՀԱՂ, www.fineco.am):

ԵՏՆԱԹԱԹ, գ. (փխբ.): **Կամրջի կառուցամասերից մեկը:** Կամրջի **ետնաթաթի** տակով Սերյոզան գնում էր իր աշխատանոցը... (ՌԴ, էջ 159):

ԵՏՆԱՆՐԲԱՆՑՔ, գ. **Հետին նրբանցք**: Այնպիսի երազներ կան, որոնցում հանկարծակի դեմ ես առնում ու անշարժացած մնում կեղտոտ քրքիջների, գարշահոտող աղտեղություններով առլի **ետնանրբանցքներում** (Հ, էջ 99):

ԵՐԱԶԱՇԽԱՐՀ, գ. **Երազանքների աշխարհ**: Հայրս երանելի, երջանիկ երազներ է դիտում, մի կարճ վերադառնում կյանք, ապա՝ դարձյալ **երազաշխարհ** (ԳԹ, 07.09.2018):

ԵՐԴՄՆԱԴՌՈՒՆ, գ. **Աղոթիք, երդման դուռ**: Համոզված եմ, գալու է այն սերունդը, որի համար Հայոց եղեռնի հուշարձանը կդառնա միայն պատմական հաղթանակների **երդմնադուռ**-աղոթարան(ԳԹ, 20.04.2018):

ԵՐԵՆԱՅԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Երեխաներին պաշտելը**: .... Մեր ազգային առանձնահատկություններից մեկն էլ **երեխայապաշտությունն** է (Ազգ, 01.09.2017):

ԵՐԵՄԱՐԿՎԵԼ, կր.և չբ.**Երեսապատվել**: Պատերը **երեսարկված** էին կաշվով .... (ԺՄ, էջ 14):

ԵՐԵՄՊԱՍՏԱՌ, գ. **Երեսապատման պաստառ**: Գունաթափ **երեսապաստառներով** .... այդ ծանրաշարժ կտորը մեծ կարիք էր զգում .... հմուտ վարպետի ձեռքերի .... (Կոսպեր, էջ 292):

ԵՐԿԱԹԱԳՈՐՇ, ած. **Երկաթի նման գորշ**: .... Անցան .... **երկաթագորշ** պատերի կողքով .... (ՌՇ, էջ 258):

ԵՐԿԱԹԱԶՈՒԼԱՐԱՆ, գ. Նույնն է՝ **մետաղաձուլարան**: Տաթևում... **երկաթաձուլարանի** շահագործման հնարավոր ....ծրագրերն են (ԳԹ, 29.06.2018):

ԵՐԿԱԹԱՑԻՑ, գ. **Երկաթից պատրաստված ցից**: Ոչ ոք երաշխավորել չէր կարող, թե այդ դատարկ **երկաթացցերին** չի հայտնվի մեկ այլ սարսափելի բռունցք (ԳԱ, էջ 19):

ԵՐԿԱՐԱԿԱՄ, ած. **Երկարորեն կախված**: Առատորեն աճել էին բաղեղներն ու **երկարակախ** մամուռները (ԳՈՒ. 5, էջ 390):

ԵՐԿԱՐԱԶԵՌՆ, ած. **Երկար ձեռքեր ունեցող՝ ձեռքերով**: Երկրորդ պահնորդը, **երկարաձեռն** ու երկարոտն, .... բարձրացրեց կոշիկներս (Կլիս, էջ 74):

ԵՐԿԱՐԱՆՈՒՆ, ան. **Երկար անուն ունեցող՝ անունով:** .... Վերջերս ստեղծված **երկարանուն** ընկերություններից էին (Կվին, էջ 17):

ԵՐԿՁՈՂ, ան. **Երկձողյա, երկու ձող ունեցող:** Կատարներիս **երկձող** ոսկե խաչեր (Սյուրս, էջ 167):

ԵՐԿՄԱԶԱԲԱԺԱՆ, ան. **Երկու մազաբաժանով՝ մազաբաժան ունեցող:** .... Խոնարհեց **երկմազաբաժան** բարդ սանրվածքով գլուխը .... (Կվին, էջ 169):

ԵՐԿՄՈՄԱՆԻ, ան. **Երկու մոմ ունեցող:** .... Լուսավորված **երկմոմանի** ջահով.... (Բ 4, էջ 66):

ԵՐԿՆԱԾԽՆԱԳՈՒՅՆ, ան. **Երկնագույնին՝ կապտագույնին տվող ծխագույն:** .... **Երկնածխագույն** լեռնապարի ֆոնի վրա երևացին .... շենքերի ուրվագծերը (Կվին, էջ 205):

ԵՐԿՊԼԱՆ, ան. **Երկու պլան ունեցող, երկու պլանից բաղադրված:** .... Երևոյթի .... երկպլան և զուգադիր ցուցադրում .... (Հայրունի, էջ 178):

ԵՐԿՐԱՀՈՂ, գ. **Երկիր մոլորակի հողը:** .... Ժողովուրդ, որը ստեղծել է այսպիսի բարձրարվեստ, **երկրահողում** «ծնունդ առած» գմբեթային բարձունքով երկինք բարձրացող ճարտարապետական կոթող (ՇԽ, էջ 15):

ԵՐԿՐԱՀՈՂՉԱԿ, գ. **Ամբողջ երկրով հոչակված:** Քեռի Գարենը հորեղբայրս էր, **երկրահոչակ** մեքենավար Գարեգին Աբաջյանը (ԳԱ, էջ 47):

ԵՐԿՈՒՐՈՊԵԱՆՈՅ, ան. **Երկու րոպե տևողությամբ:** Ավտոմատը **երկուրոպեանոց** տեղեկություն էր հաղորդում (Կվին, էջ 59):

ԵՐԿՔՂԱՆՑՔ, ան. **Երկու քղանցք ունեցող:** .... Հագիս ավագույն գաբարդինի **երկքղանցք** կոստյում էր (Սև., էջ 332):

ԵՐՇԿԱՆՈՅ, գ. **Երշիկ պատրաստելու՝ վաճառելու տեղ, երշիկարան:** - Ո՞ր տան մոտ դա պատահեց ....: - **Երշկանոցի** կողքի դեղին տան մոտ (ԺՄ, էջ 606):

ԵՐՈՒՍԱՂԵՄԱՀԱՅ, գ. **Երուսաղեմում բնակվող հայ:** Իսկական աշխատավոր, որ ոչ միայն ընտանիքի հոգսերը, այլև **երուսաղեմահայ**

գաղութիւն երբևէ ունենալիք և եղած հանգանակությունների եռանդուն մասնակից էր (ԱՍ, էջ 379):

## Զ

**ԶԱՄԲՅՈՒՂԱԳՆԴԱԿ, գ. Մարզական խաղ՝ բասկետբոլ:** Հագին սև կիպ կաշվե բաճկոն է և կապույտ ջինսե տաքատ, զամբյուղագնդակ խաղացողի ծանր ձեռնոցներ (ՀՄ, էջ 34):

**ԶԱՌԻՎԱՐԵԼ, բ. Զառիվայրով իջնել:** **Զառիվարելուց** առաջ գոմեշը փնչալով կանգ առավ, նայեց (ՀՄ, էջ 217):

**ԶԱՎԵՇՏԱՊԱՏՈՒՄ, գ. Զավեշտական պատմություն:** .... Խորհրդային **զավեշտապատում** հիշեցնող ընտրություններից հետո շատ էին ցանկանում .... (Իր., 06.04.2018):

**ԶԱՐԴԱԹՎԻԿ, ան. Զարդարված թևիկներով:** Շտրիակալ եմ, շնորհակալ, իմ **զարդաթևիկ** բարեկամ (ՄՀ, էջ, 215):

**ԶԱՐԴԱՄԻՐԳ, գ. Մրգաձև զարդ:** Ճենապակյա գույնզգույն **զարդամրգեր** (Գոյւ. 4, էջ 40):

**ԶԱՐԴԱՊԱԿԻ, գ. Որպես զարդ ծառայող ապակի:** Մզկիթի դահլիճներում կախված է յոթ ջահ, դրանք կրում են Սվարովսկու արտադրության բյուրեղյա **զարդապակիներ** (Նարեկ, թ. 3, 2016):

**ԶԲՈՍԱԳՆԱՅՔ, գ. Զբոսանքների՝ էքսկուրսիաների և այլն գնալու համար նախատեսված՝ կահավորված գնացք:** Հետո **զբոսագնացքով** որբանոց գնացի .... (Մյուսւ., էջ 165):

**ԶԲՈՍԱՄԵՔԵՆԱ, գ. Զբոսանքի գնալու ավտոմեքենա:** .... Նրա **զբոսամեքենան՝** .... ոռլս-ոռյսը ...., ծածկակառքը .... հիացք էին առաջ բերել թաղամասում.... (ԱՏ, էջ 36):

**ԶԲՈՍԱՎԱՅՐԱՅԻՆ, ան. Զբոսավայրին հատուկ:** Տունն առանձնահատուկ է քաղաքի ենթատեքստում, նրա **զբոսավայրային** գոտում (Անդին, թ. 3, 2017):

**ԶԳԱՑԱԻՄԱՑԱԿԱՆ, ան. Իմացական և զգացական:** ....Զանազան պատկերային հնարանքները տարբալուծվում են պատումի **զգացալիմացական** պատյանի մեջ (Հ, էջ 216):

**ԶԵԿՈՒՑԱՏԱԽՏԱԿ, գ. Հայտարարությունների՝ նորությունների տախտակ:** Բազմություն էր հավաքված քաղաքի **գեկուցատախտակի** առաջ ու ինչ-որ բան էր կարդում (*Մյուրմ., էջ 230*):

**ԶԵՐՇԵ, ան. Զերշից կարված: Զերշե** հագուստ (*Միր., էջ 118*):

**ԶԻԳԶԱԳԸՆԹԱՑ, ան. Զիգզագներով ընթացող:** Անուշ Վարդանյանի նորահրատ «Շարժման արևը» գիրքը բանաստեղծուհու հոգու շարժն է օրվա խճանկարի միջով, մի այնպիսի անսպասելի խոհերի **զիգզագընթաց** դեգերումներում .... (*ԳԹ, 23.03.2018*):

**ԶՈԼԱՀԱՆ ԱՆԵԼ, բ. (խսկց.): Շերտատել, շերտ-շերտ կտրտել:** .... [Սավանները] .... **գոլահան եմ արել** երեք տարի շարունակ (*Դյունա, էջ 455*):

**ԶՈՀԱԿՐԱԿ, գ. Զոհ մատուցելու ժամանակ վառվող կրակ:** Բռնկվեց իսկական մի **զոհակրակ** (*Մեր., էջ 31*):

**ԶՈՐԱԴԱՍԱՎՈՐՈՒՄ, գ. Զորքերի դասավորում:** Դավադիրները պետք է հավաքվեին, վերջնական **զորադասավորումներ** անեին .... (*ՌՇ, էջ 270-271*):

**ԶՎԱՐԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. Զվարթ, աշխույժ խոսք:** Այդ իրավունքը Վարդան Աճեմյանին էր, և նա էլ հուզմունքը քողարկելով, **զվարթաբանությամբ** հիշեցրեց մեզ մեր ուր գտնվելը (*ԳԱ, էջ 118*):

**ԶՎԱՐՃԱՊԱՐՏԵԶ, գ. Զվարճալիքների պարտեզ:** ....Տոն օրերին էին միայն .... բացվում գինետներն ու **զվարճապարտեզը** (*ԱՏ, էջ 273*):

**ԶՐՈՒՑԱԿՑՈՒՀԻ, գ. Կին՝ աղջիկ գրուցակից, գրուցակից կին՝ աղջիկ:** .... Արդյո՞ք ինքը ճիշտ հասկացավ **գրուցակցուհու** ասածները (*Կոսպեր, էջ 149*):

## Է

ԷԱՎՈՐՎԵԼ, ք. **Էություն՝ գոյություն ստանալ:** Այս երկուսը փոխնիփոխ իրար են ձգում և այդ «ճանաչելի-անճանաչելի» է արտացոլում արվեստը՝ որպես մարդկային աշխարհի ոգեղենություն՝ **Էավորվող** կուլտուրայի ու կրոնի միջև (ԳԹ, 22.07.2016):

ԷԹՆՈՆԵՐԱԺՇՏԱԳԵՏ, գ. **Ազգագրական երաժշտության մասնագետ:** Երաժշտագիտական շրջանակներում Կոմիտասը մեկնաբանվում, ներկայացվում է բազմաշերտ ու բազմազան տեսանկյուններից՝ որպես գիտնական, մտավորական, **Էթներաժշտագետ**, համաշխարհային երաժշտության գիտակ... (Ազգ, 07.10.2016):

ԷԹՆՈՒՇՈՂՈՎՐԴԱԳԵՏ, գ. **Ազգագրաժողովրդագետ: Էթնոժողովրդագետի** գնահատմամբ, այն հարցին, թե վերջին 25 տարիներին մեր հանրապետության բնակչության ընդհանուր թիվն իրականում ինչքան է պակասել, մասնագետները հստակ պատասխան չեն կարող տալ... (Ազգ, 01.07.2016):

ԷԹՆՈՄՄԱՔՐՈՒՄ, գ. **Էթնիկական տարրի արտամղում, զտում:** Նշանակում է՝ եթե այստեղ **Էթնոմաքրում** եղել է, բա այստեղ ինչ է եղել, մեր հայրենիքը չէր մաքրագարվում 1915 թվին (Ազգ, 25.11.2016):

ԷԹՆՈՑԵՆՏՐԻԿ, ած. **Ազգակենտրոն:** Խիստ իդիոմային հումորի զգացումով **Էթնոցենտրիկ** պարզունակ ցուցքին էին մերձենում, ինչը նույնիսկ ֆոլկլորային զվարճահանդեսի նշանողին չի բավարարում (Ազգ, 30.09.2016):

ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ, ած. **Ժողովրդագրական-քաղաքական:** [Դա ] ուղղակիորեն կապված է Մերձավոր Արևելքի **Էթնոքաղաքական** հակամարտությունների հետ (Ազգ, 11.11.2016):

ԷԼԵԿՏՐՈՔԱՐ, գ. **Էլեկտրաշարժիչով մեքենա:** Nissan-ը Leaf-ը վերածել է սպորտային **Էլեկտրոքարի** (Հնգ, news.am):

ԷԿՈԱԿՈՒՄԲ, գ. **Բնապահպանության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություն:** Համագործակցում են տարբեր կազմակերպությունների հետ՝ ... «Տապան» **Էկոակումբ**, Վեդիի «Կենսաց ծառ» **Էկոակումբ** ... (Իր., 02.02.2017):



ԷԿՈԱՇԽԱՐՀ, գ. (փխբ.): **Բնաշխարհ, անխառն, մաքուր աշխարհ:** [Հրաչօն]... իմ կարդացած նյութի՝Բակունցի **Էկոաշխարհի** իրական օրինակն էր (*Ազգ, 01.07.2016*):

ԷԿՈԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Էկոլոգիական արդյունավետություն:** Այն իր **Էկոարդյունավետությամբ** գերազանցում է Հայաստանի գրեթե բոլոր շենք-շինություններին (*Հւց*):

ԷԿՈԳԱՂՈՒԹԱՑՈՒՄ,գ. Այս փաստը կարելի է բնութագրել որպես **Էկոգաղութացում** (*ԳԹ, 29.06.2018*):

ԷԿՈԳՐԻՉ, գ. **Գոյապահպանության չափանիշներին համապատասխանող գրիչ:** Վարչապետի կաբինետում պլաստմասե գրիչները փոխարինվել են թղթե **Էկոգրիչներով** (*Հեռ., Շանթ, 22.11.2018*):

ԷԿՈՀԱՎԿԻԹ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող հավկիթ:** Նատուր Ֆուդի **Էկոհավկիթներ** (*Հւց, news.am*):

ԷԿՈՇԵՆՔ, գ. **Գոյապահպանության չափանիշներին համապատասխանող շենք: Էկոշենքերի** կառուցումը նպաստում է նաև թափոնների նվազեցմանը (*Հւց*):

ԷԿՈՏՆԱԿ, գ. **Գոյապահպանական չափանիշներին համապատասխանող տնակ: Էկոտնակների** գլխավոր հատկանիշներն են էլեկտրաէներգիայի և ջրի խնայումը, թափոնների կրճատումը և դրանց վերամշակումը (*Հւց, armenpress.am*):

ԷՆԵՐԳԱԷՖԵԿՏԻՎ, ամ. **Էներգասպառման տեսակետից էֆեկտիվ:** Ճարտարապետների միության նախագահ. Հայաստանին **Էներգաէֆեկտիվ** շինարարության մասնագետ (*Հւց, news.am*):

ԷՆԵՐԳԱԽՆՆԱՅՈՂԱԿԱՆ, ամ. **Էներգիայի սպառման մեջ խնայող:** Ստորագրվել է 15 մլն եվրոյի վարկային պայմանագիր՝ ՓՄՁ-ների **Էներգախնայողական** նախագծերի համար (*Հւց, news.am*):

ԷՆԵՐԳԱՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Էներգետիկ ոլորտում համագործակցություն:** Ռուս-ադրբեջանական **Էներգահամագործակցությունը** չի ընդլայնվի (*Հւց, news.am*):

ԷՆԵՐԳԱՀԱՐՑ, գ. **Էներգետիկային վերաբերող հարց:** Պուտինը Հունգարիայի վարչապետի և Սերբիայի նախագահի հետ **Էներգահարցեր** է քննարկել (*Հնց, news.am*):

ԷՊՈՍԵՐԳՈՒ, ած. **Էպոս երգող, ասացող:** Ահա և հյուսվում է գեղջուկի, հրասայի և հովազի միաձայն երգչախմբի **Էպոսերգու** պատկերը (*ԳԹ, 01.12.2017*):

ԷՋԱԹԱՓ, գ. (դիպվ.): **Էջերի թափվելը:** Երկրորդ օրը գրքերը չորացան, ու սկսվեց **Էջաթափը**, ասես աշնան տերևներ լինեին (*ՆԱ, էջ 39*):

## Ը

ԸՆԴԵՐՔԱԳՈՂ, գ. **Ընդերքի հարստությունը յուրացնող:** ... Սուրբ օրենքների հինավուրց երկիրը նույնպես վերածելով աղանդավորների, զանազան «իզմերի» ու կուսակցությունների, խաչագողերի ու **ընդերքագողերի**... (*ԳԹ, 11.11.2016*):

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ, գ. **Ընդերքը օգտագործողը:** Վարչապետի երեկվա հայտարարությունն **ընդերքօգտագործողների** շրջանում անհանգստությունն է առաջացրել: Հերթը հասավ **ընդերքօգտագործողներին** (*Իր., 21.04.2018*):

ԸՆԿՈՒՋԱՏՈՆ, գ. **Ընկույզի տոն:** Այս տարվա պտղատոների շարքը ավանդույթի համաձայն եզրափակվեց **ընկուզատոնով** (*ԳԹ, 02.11.2018*):

ԸՆԿՈՒՋԱՓԱՅՏԵ, ած. **Ընկուզափայտից պատրաստված:** .... Կարելի է ննջարանի **ընկուզափայտե** կահույք ստանալ (*ԺՄ, էջ 23*):

ԸՆԿՈՒՅՋԱՀԱՄ, ած. **Ընկույզի համ ունեցող:** ...Մի քանի անգամ **ընկույզահամ** հալած կարագ քսեց ու ծալեց խմորը... (*ՆԱ, էջ 155*):

ԸՆՁՈՒՂՏԱՆՄԱՆ, ած. **Ընձուղտի նմանություն ունեցող:** **Ընձուղտանման** կենդանին հանկարծ նստեց (*ՌՇ, էջ 120*):

ԸՆՏՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Ընտրության արդյունքների կեղծում:** Իշխանությունների կողմից կատարվել է հերթական **ընտրագողությունը** (*Հնց, news.am*):

ԸՆՏՐԱԶԱՏՈՒՄ, գ. **Առանձնացում:** Հիմնադիր խորհրդարանի պատգամավորության թեկնածուների **ընտրագատման** չափանիշներն են դրանք (*Հմց, news.am*):

ԸՆՏՐԱՀԱՆՑԱԳՈՐԾ, գ. **Ընտրական օրենսդրությունը խախտող:** Անհրաժեշտ է բացահայտել և պատժել բոլոր **ընտրահանցագործներին** (*Հմց, news.am*):

ԸՆՏՐԱՆԱԽԱԳԻԾ, գ. **Ընտրական նախագիծ:** ...Մինչև ...**ընտրանախագիծը** լրիվ իրականություն դառնա... (*Ազգ, 23.12.2016*):

ԸՆՏՐԱՇԵՄ, գ. **Ընտրվելու համար սահմանված քվեների նվազագույն քանակը՝ տոկոսային արտահայտությամբ:** Կուսակցությունը կարող է **ընտրաշեմը** հաղթահարել (*Հեռ., հ.1, Լուրեր, 21.09.2018*):

## Թ

ԹԱԳԱԴԻՐՈՇՄ, 1. գ. **Թագի դրոշմվածք:** 2. ած. **Վրան թագի դրոշմվածք ունեցող:** .... Բոլորն էլ գրում են **թագադրոշմ** թղթի վրա (*Բ 8, էջ 303*):

ԹԱԳԱԾԻՐ, ած. **Թագը շրջափակող:** Բարոնական թագի **թագածիր** ժապավենը գտնվում էր այդ պարզ վահանակի ճակատին (*Բ 8, էջ 19*):

ԹԱԽԾԱՄԱԾ, ած. **Թախծոտ:** .... Նա երգում էր **թախծամած** երգեր և բաց թողնում անհամ կատակներ (*Ատին, թ. 3, 2017*):

ԹԱՂԱՄՈՒՏ, ած. **Թաղամաս մտնող:** Կամուրջի ետնամասից **թաղամուտ** ճանապարհը լայն էր, թաղը մեջտեղից երկու մասի կիսելով հասնում էր մինչև դիմացի դաշտը... (*Նորք, 3.2016*):

ԹԱՂԱՐՈՒՅՔ, գ. **Թաղարներով առատ վայր, շատ թաղարներ եղող:** Ճաշից հետո տիկին Կլաեզը առաջարկեց սուրճ խմել այգում, կակաչների **թաղարոյքի** մոտ .... (*Բ 10, էջ 590*):

ԹԱՂՔԱԳՐԻՉ, գ. **Ռետինի վրա գրող գրիչ:** Մաքրելու պարագաների մեջ մի գույգ ռետինե ձեռնոց գտա, որի վրա **թաղքագրիչով** գրված էր «ձեռնոց» (*ՊՇ, էջ 101*):

**ԹԱՂԶԱՊԱՏ**, ան. **Թ-աղիքով պատված**: .... Բացեց իր առանձնասենյակի **թաղքապատ** դուռը .... (ԺՄ, էջ 134):

**ԹԱՄԲԱԲԱՐՁԻԿ**, գ. **Փոքրիկ թամբաբարձ**: .... Հանուն .... **թամբաբարձիկի** հրաժարվելի թրադաշույնից ....(Կոսպեր, էջ 115):

**ԹԱՅՎԱՆԱԿԱՆ**, ան. **Թ-այվանին բնորոշ, հատուկ**: Սակայն **թայվանական** հյուրընկալությունը միանգամայն այլ անակնկալ էր պատրաստել.... (ԳԹամ., էջ 16):

**ԹԱՅՎԱՆՅԻ**, գ. **Թ-այվանի բնակիչ**: Տեն ԱԿՈՒՄԲԱՏԵՐ-ի օրինակը:

**ԹԱՆԳԱՐԱՆԱՑՈՒՄ**, գ. **Թ-անգարան դարձնելը, թանգարանի վերածելը**: ....Նախարարությունը պետք է սկսի **թանգարանացման** գործընթացը (Իր., 11.05.2018):

**ԹԱՌԱՁՈՂ**, գ. **Թ-առելու ձող. ձող, որի վրա թառում են թռչունները**: Մի քանի աղավնի վեր էին թռել իրենց **թառածողերից** (Գոլու. 2, էջ 350):

**ԹԱՎՇԱՄԱՀՈՒԴԵ**, ան. **Թ-ավշամահուդից կարված՝ պատրաստված: Թ-ավշամահուդե** գլխարկ (Գոլու. 4, էջ 196):

**ԹԱՎՇԱՄՈՒԳ**, ան. **Նրբաքնքուշ ու մուգ**: .... Ատլասափայտե դաշնամուր, որին հենվել է մի կին... **թավշամուգ աչքերով** (Գոլու. 2, էջ 138):

**ԹԱՎՇԱՊԱՍՏԱՌ**, ան. **Թ-ավշյա պաստառով պատված**: Կանաչ, **թավշապաստառ** աթոռ (ԺՄ, էջ 548):

**ԹԱՓՔԱԾԾԿ**, ան. **Թ-ափքը ծածկված, ծածկված թափքով**: .... Թռավ **թափքածածկով** վարձու մեքենան .... (ԱՏ, էջ 77):

**ԹԱՔՉԱՏԵՍ**, ան. **Գ-աղտնի տեսնող**: Բայց ես դեռ երբեք այսօրվա պես խաղաղությամբ ու **թաքչատես** կորովով չէի զգացել, թե ինչքան քիչ էր այն ինձ վերաբերում.... (Հ, էջ 178):

**ԹԱՔՉԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ**, գ. **Գ-աղտնի տեսնելը**: ....Պետք է ընդամենը մի հանդիմանություն տանելի, որը ես ծածուկ **թաքչատեսությամբ** մեկ ուրիշ բանի հետ էի զուգորդում (Հ, էջ 25):

ԹԱՔՍՏՈՑԱՅԻՆ, ան. **Թաքստոցից կատարվող:...** **Թաքստոցային** որսորդություն էր կազմակերպված հյուրերի համար (Գոլու. 4, էջ 155):

ԹԵՅԱԳՈՒՅՆ, ան. **Թեյի գույն ունեցող:** Ահա և կոնյակի կիսատ շիշը, բաժակը՝ հատակին մի մատ մուգ **թեյագույն** հեղուկով (ԱԹ, էջ 220):

ԹԵՎԱՏԱԿԵԼ, բ. **Թեխի տակ դնել:** Գրել էր, **թևատակել** և գայթուն քայլերով ճանապարհ ընկել Հովիտ (ՀՄ, էջ 662):

ԹԵՎԱՓՈԽ, գ. **Թևերը փոխելը:** ... Երկու **թևափոխով** հասավ նավակին (Դյունա, էջ 306):

ԹԵՐԱՐԺԵՎՈՐԵԼ, բ. **Թերագնահատել:** Հանցավոր կլինեմ, եթե **թերարժևորում** եմ մեր բժիշկներին... (ՌԴ, էջ 332):

ԹԵՐԱՐՎԵՍՏԱԳԵՏ, գ. **Թերի՝ մասամբ կայացած՝ հաջողության հասած արվեստագետ:** ... **Թերարվեստագետները** հմայիչ են ..., բարձր են թվում իսկական արվեստագետներից ... (Բ 10, էջ 257):

ԹԵՐԹԱՔԱՐԵ, ան. **Թերթաքարից:** Խաղողի վազը... ձգվում էր վեր՝ մինչև **թերթաքարե** կտուրը (ՆԱ, էջ 73):

ԹԵՓԱԶՈՒՐ, գ. **Թեփի ջուր՝ ջրային լուծույթ:** **Թեփաջրով** շպարված դեմք ... (Բ 8, էջ 284):

ԹԻԹԵՂԱՀՅՈՒՄՎԱԾՔ, գ. **Ջարդանձ թիթեյա հյուսվածք:** Դրանք նա հատուկ էր պահում՝ հոր տնից օժիտ բերած գույնզգույն **թիթեղահյուսվածքով** սնդուկում (ԳԹ, 02.09.2016):

ԹԻՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Արհեստական, շինծու, կեղծ արտահայտություն:** Մանկանման դեմքին ջերմաշունչ երանավետության արտահայտությունն այնպես ցավալիորեն դատարկ ու պատրաստի **թխվածության** կերպարանք ուներ... (Հ, էջ 172):

ԹԻՎԱԾՔԱՏԵՍԱԿ, գ. **Թխվածքների տեսակ:** Հրուշակեղենի խանութից ընտիր **թխվածքատեսակներ**, քաղցրավենիք գնեցի, ու գնացինք խնամախոսության (ՌԴ, էջ 71):

ԹՂԹԱԳԼԱՆ, գ. 1. **Գլանաձև փաթաթված թուղթ:** Կանադայում **թղթագլանի** տեսքով ճկուն սմարթֆոն են ստեղծել (Հւգ, news.am):

ԹՂԹԱԿԵՐ, ան. (ղիպվ.): **Թուղթ ուտող:** ... Փոքրիկ թղթակերը նկատում էր, որ ծամում է դուքսի մի անդորրագիրը (*R 4, էջ 762*):

ԹՄՐԱԱՌԵՎՏՈՒՐ, գ. **Թմրամիջոցների առևտուր:** Ջորջիայի բնակիչը վիճակախաղում շահած միլիոնները ներդրել է **թմրաառևտրի** մեջ (*Հւց, news.am*):

ԹՄՐԱԲԱՐՈՆՈՒՀԻ, գ. **Թմրաբիզնեսի մաֆիայի կին դեկավար:** Ջենիֆեր Լոպեսը կխաղա հայտնի **թմրաբարոնուհի** Գրիսելդա Բլանկոյի դերը (*Հւց, news.am*):

ԹՄՐԱԳԼԱՆԱԿ, գ. **Թմրամիջոց պարունակող գլանակ:** Հոլանդացիները էլեկտրոնային **թմրազլանակ** են ստեղծել (*Հւց, news.am*):

ԹՄՐԱԴԻԼԵՐ, գ. **Թմրանյութերի առևտրի միջնորդ:** **Թմրադիլերը** բռնվել է իտալական բանտից ազատվելուց մեկ ժամ անց (*Հւց, news.am*):

ԹՄՐԱԹՐԱՖԻՔ, գ. **Թմրամիջոցների անօրինական շրջանառություն:** Հայաստանում **թմրաթրաֆիքի** դեմ պայքարի ազգային կենտրոն կստեղծվի (*Հւց, news.am*):

ԹՄՐԱԹՈՒՆԵԼ, գ. **Թմրամիջոցների տարածման համար օգտագործվող թունել:** Մեքսիկայի հետ ԱՄՆ սահմանին մեծ **թմրաթունել** են հայտնաբերել (*Հւց, news.am*):

ԹՄՐԱԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ, գ. **Թմրանյութերի մշակման և արտադրման լաբորատորիա:** Իսպանիայում **թմրալաբորատորիայում** պայթյուն է որոտացել, մեկ մարդ զոհվել է (*Հւց, news.am*):

ԹՄՐԱԿԱՐՏԵԼ, գ. **Թմրամիջոցների բիզնեսով զբաղվող խոշոր կազմակերպություն՝ կարտել:** «Գոլֆո» **թմրակարտելի** դեկավարներից մեկը սպանվել է (*Հւց, news.am*):

ԹՄՐԱՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Թմրամիջոցների տարածմանը և գործածությանը առնչվող հանցագործություն:** գ. Չինաստանն աջակցում է **թմրահանցագործությունների** դեմ պայքարի հարցում Ֆիլիպինների քաղաքականությանը (*Հւց, news.am*):

ԹՄՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. **Թմրամիջոցների շրջանառություն:** Ապօրինի թմրաշրջանառություն և վնասագերծում (*Հմց, news.am*):

ԹՄՐԱՊԱՏԵՐԱԶՄ, գ. **Թմրահանցագործություններին առջևիվող խմբերի միջև հակամարտություն, զինված պայքար:** Մեքսիկայում թմրապատերազմի զոհերին նվիրված հուշարձան են տեղադրել (*Հմց, news.am*):

ԹՄՐԱՊՏՈՒՅՑ, գ. **Թմրաշրջանառություն: Թմրապտույտ.** Մանվելը՝ Սեյրանից, Սեյրանն էլ՝ Միսաքից (*Հմց, news.am*):

ԹՄՐԱՌԱՔԻՉ, **Թմրանյութերի առաքիչ, փոխանցող:** գ. Թաիլանդում աֆետամինի հաբեր տեղափոխել փորձող թմրաառաքիչներ են ձերբակալվել (*Հմց, news.am*):

ԹՄՐԱՍՐՃԱՐԱՆ, գ. **Սրճարան, որտեղ արգելված չեն թմրամիջոցները:** Բեռլինում կարող են հայտնվել միանգամայն օրինական թմրասրճարաններ (*Հմց, news.am*):

ԹՄՐԱՍՈՒՐՀԱՆԴԱԿ, գ. **Թմրանյութեր տեղափոխող:** Ստամբուլում թմրասուրհանդակ է ձերբակալվել՝ ստամբուլի մեջ 1,3 կգ կոկաինով (*Հմց, news.am*):

ԹՄՐԱՎԱՃԱՌ, գ. **Թմրանյութեր վաճառող:** Ոստիկանությունը գտել է թմրավաճառին WhatsApp-ում նրա մատների լուսանկարի օգնությամբ (*Հմց, news.am*):

ԹՄՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ, գ. **Թմրավաճառ:** Չինաստանում երկու թմրավաճառականներ դատապարտվել են մահապատժի (*Հմց, news.am*):

ԹՄՐԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. **Թմրանյութերի վաճառք:** ԱՄԷ-ում զբոսաշրջիկը թմրավաճառության համար ցմահ ազատազրկման է դատապարտվել (*Հմց, news.am*):

ԹՄՐԱՎԱՃԱՌԻՔ, գ. **Թմրանյութերի վաճառք:** Ֆիլիպինների ոստիկանությունը սպանել է թմրավաճառքի մեջ կասկածվող 10 մարդու (*Հմց, news.am*):

ԹՄՐԱՏՈՒԻԻԶՄ, գ. **Զրուաշրջիկների այցելություն թմրանյութերի գործածումը թույլատրող հաստատություններ:** Հոլանդական սրճարան-խանութների տերերը փոխհատուցում կստանան **թմրատուրիզմի** արգելքի դեպքում (*ՀԱԳ, news.am*):

ԹՄՐԱՓԱԹԵԹ, գ. **Թմրանյութի փաթեթ: Թմրափաթեթը** ձեռք էր բերել 57-ամյա Վարդիթերից. վերջինիս տանը խուզարկություն է կատարվում (*ՀԱԳ, news.am*):

ԹՆԴԱԼԻՑ, ան. **Թունդ՝ ուժգնորեն հնչող, թնդածայն:** .... Կենսացն ընդունվեց **թնդալից** բացականչություններով (*Դյուսու, էջ 47*):

ԹՈՌՆՈՒՀԻ, գ. **Աղջիկ թոռ:** Հունիսյան այդ առավոտ.... այս անգամ **թոռնուհուս** հետ.... հայտնվեցի բաղձալի տարածքում (*ՄՀ, էջ 79*):

ԹՈՎԶԱՀԱՅԱՑ, ան. **Թովիչ հայացք ունեցող՝ հայացքով՝ նայվածքով:** Իր **թովչահայաց** աչքերից դուրս է ցայտում նրա հոգին .... (*Բ. 8, էջ 78*):

ԹՌԶՆԱԴԻՏԱՐԿՈՒՄ, գ. **Թռչունների կյանքի գնում, դիտարկում:** «Բնասերները» իրականացնում են տարբեր միջոցառումներ՝ ծառատունկ, աղբահավաք, թափոնների վերամշակում, **թռչնադիտարկում** .... (*Իր., 02.02.2018*):

ԹՌԶՆԱԶՈՒՅԳ, գ. **Թռչունների զույգ, զույգ թռչուններ:** .... Դռնից երևում էր վիթխարի մի վանդակ՝ տասնյակից ոչ պակաս **թռչնազույգ**(*ԺՄ, էջ 339*):

ԹՌԶՆԱԾԵՐՏ, գ. **Թռչուն(ներ)ի ձերտ:** .... Խեցե արձանիկներ կային՝ ծածկված **թռչնաձերտով** (*ՄՏ, էջ 187*):

ԹՌԶՆԱՂՈԹԲ, գ. **Թռչունի ճովողյուն, որ նման է աղոթքի:** Մի խորին խորհուրդ էր զգում այդ տարածած **թռչնաղոթքի** մեջ.... (*Անդիս, թ. 5, 2017*):

ԹՎԱՀԱՐԹԱԿ, գ. **Թվերի հարթակ. հարթակ, որի վրա գրանցված են թվերը:** Առաջինը.... մարդկային բռունցքի չափսի գունդ էր, վրան՝ տրամաչափված **թվահարթակ** (*ՌՀ, էջ 72*):

ԹՐՋՈՑԱԼԱԹ, գ. **Թրջոցի լաթ:** .... – Երեկոյան **թրջոցալաթ** պիտի դնեն (*ԺՄ, էջ 596*):



ԹՈՒՆԵԼԱՆՄԱՆ, ան. **Թունելի նմանվող**: Ձյունը ծածկել է դեպի պետքարան տանող **թունելանման** արահետը (ԹԳ, էջ 326):

ԹՓԱՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Թփանման լինելը**: **Թփին նմանվելը**: «Անիծյա՛լ փայտփորիկ» , - մտածեց Քլիվին՝ փորձելով պահպանել **թփանմանությունը** (ԹՇ, էջ 63):

ԹՔԱՀԵՏՔ, գ. **Թքի հետք**: **Թքահետքերով** պատված չոր պատի առաջ կանգնած՝ նա նույն զգացումն էր ունեցել, ինչ Պիատորիոսն ու ես՝ կրակի առաջ (Հ, էջ 136):

## Ժ

ԺԱՄԱՆԱԿԱՓՈՒԼ, գ. **Ժամանակի փուլ, ժամանակահատված**: .... Դեռ խորհրդային **ժամանակափուլից** հուշաբլրի մշտայցելուներիս քաջ ծանոթ էր դեպի Հրազդանի կիրճը խորացող փարթամ անտառում ցայտող աղբյուրը (Իր., 21.04.2018):

ԺԱՅՈՒԱԲԱԽՈՒՄ, գ. **Չղջիկների՝ ժայռերին բախվելը**: Չղջիկների ինքնակործան **ժայռաբախումները**, ճայերի. ...խելագար ծիծաղի արձագանքները...մի ամբողջ սարսափ-հեքիաթաշարի պատրանք էին հյուսում (ԹԴ, էջ 37):

ԺԱՅՈՒԱՄԵՋ, գ. **Ժայռի մեջ գտնվող**: .... Կարողացավ ցույց տալ մեզ .... աշխարհի ամենամեծ **ժայռամիջի** գարածը (Կվին, էջ 137):

ԺԱՆՅԱԿԱԿԱՄԱՐ, ան. **Ժանեկաձև կամար ունեցող՝ կամարով**: Հետո **ժանյակակամար** կողմնային մուտքից մտանք աղոթարան (Կվին, էջ 58):

ԺԱՊԱՎԵՆԱԳՈՏԻ, գ. **Ժապավենաձև գոտի**: .... Ձեռքի բութ մատը խրել էր պիժամայի վարտիքի **ժապավենագոտու** տակ .... (ԱՏ, էջ 325):

ԺԱՊԱՎԵՆԱԿԻՐ, ան. **Ժապավեն կրող**: Նրան պարզևատրել են **ժապավենակիր** շքանշանով (Հմց, *lin tv.am*):

ԺԱՊԱՎԵՆԱՀԱՆԳՈՒՅՑ, գ. **Ժապավենների հանգույց**: .... Ուսին փողփողում էր մի վարդագույն **ժապավենահանգույց** .... (Դյունա, էջ 413):

ԺԱՊԱՎԷՆԱՊԱՏ, ան. **Ժապավեններով պատված:** Հետևից գնում էին ժանդարմները՝ իրենց **ժապավենապատ** փայլուն գլխարկներով(Բ 4, էջ 749):

ԺԽՈՐԱՇԱՏ, ան. **Աղմկոտ:** Նավահանգստային **ժխորաշատ** պանդոկներում նավաստիները խմում էին (ԹԶ, էջ 13):

ԺՊՏԱԼԱԶՈՒՐ, ան. **Կապույտ և ժպտուն:** Հարթավայրից այն կողմ փայլվում էր **ժպտալագուր**, ջինջ գարնանային ծովը (Մոր., էջ 284):

## Ի

ԻՆՆԱԹԻԶ, ան. **Ինը թիզ երկարություն ունեցող:** Համաչափ, առանց ակներև ջանքերի, գործի դնելով ծանր, **իննաթիզ** գերանդին, մոտենում էր դաշտի ծայրին (ՆԱ, էջ 64):

ԻՆՏԵՐՆԵՏԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Ինտերնետով տարվելը:** **Ինտերնետամոլությունը** շատ վատ բան է... (ՀԱԳ):

ԻՆՏԵՐՆԵՏԱՑԱՎ, գ. (դիպվ.): **Ինտերնետացավից** ազատվելու համար գնացի հոգեբանի մոտ... (ՀԱԳ):

ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏԱՆՔ, գ. **Ինքնագնահատում:** ...Մենք **ինքնագնահատանքի** բարձրաթիչք ճախրանքի մեջ ենք (ԱՊ, էջ 104):

ԻՆՔՆԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Ինքնագատ լինելը:** **Ինքնագատությունը** Գայանեին մղել է հետևելու ներքին տեսողությանն ու կերտելու տեսիլքային պատկերներ(Գայանե, էջ 5):

ԻՆՔՆԱԶԲԱՂՎԱԾ, ան. **Ինքնուրույն զբաղմունքի՝ գործունեության տեր:** ... Հարկային մարմինը **ինքնազբաղված** անձին տրամադրում է հարկերից ազատման արտոնագիր (ՀՀ, 09.12.2016):

ԻՆՔՆԱԶԳՋՈՒՄ, գ. **Ինքնագղջալը:** ... Պատճառաբանվում է քավոր Պետրոսի **ինքնագղջման** ու հոգեփրկության գործընթացը (Հայրունի, էջ 93):

ԻՆՔՆԱԶՈՇՈՂԱԲԱՐ, մկր. **Ինքնագոհաբար:** Մայրս ինձ սիրում էր **ինքնագոհողաբար** (ԼԶ, էջ 71):

ԻՆՔՆԱԶՈՐԱՑՈՒՄ, գ. **Ինքնագոր դառնալը, ինքնին հզոր՝ զորեղ, իր ուժով հզոր դառնալը:** ... Լեզվական համակարգի ինքնամաքրման և **ինքնագորացման** կարողություն ... (Իր., 20.04.2018):

ԻՆՔՆԱԶՐԿՈՒՄ, գ. **Ինքը իրեն գրկելը՝ մի բան թույլ չտալը:** ... Նա արդեն ճաշակում էր այդ **ինքնագրկման** ուրախությունը (Մոր., էջ 199):

ԻՆՔՆԱԶՐՈՒՅՑ, գ. **Զրույց ինքն իր հետ:** Ահա մեկ նմուշ իմ «**Ինքնագրույց**» ժողովածուից (ԳԹ, 07.07.2017):

ԻՆՔՆԱԻՐԱՎԱԶՐԿՈՒՄ, գ. **Ինքն իրեն իրավագրկելը:** **Ինքնաիրավագրկման** այս պայմաններում ճշմարիտ և արդար պիտի լիներ ... (Ազգ, 13.04.2018):

ԻՆՔՆԱԼԻՐ, ած. **Ինքնիրեն լցնող՝ պարուրող՝ համակող:** ... Եկեղեցում այդքան նստում էի ես ինքնամոռացության մեջ, այդ արտասովոր, հոգեպարար, ինքնասույզ ու **ինքնալիր** երաժշտությամբ հափշտակված (Հ, էջ 143):

ԻՆՔՆԱԽՂՃԱՀԱՐՎԵԼ, չբ.**Ինքն իրեն խղճահարվել:** ... Ինչոր պոռնիկ **ինքնախղճահարված** հեկեկում էր անկյունում՝ հարբածի առատ արտասուքներ թափելով (ՌՇ, էջ 250):

ԻՆՔՆԱԽՈՐԱՍՈՒԶՎԵԼ, բ. **Ինքն իր մեջ խորասուզվել:** Նա քնած էր կամ **ինքնախորասուզված**. Ես մեկ անգամ էլ եմ նրան այդ վիճակում տեսել (Հ, էջ 198):

ԻՆՔՆԱԿԵՐՊԱՎՈՐՎԵԼ, բ. **Ինքը իրեն կերպավորել:** ... Այս ամենին զուգահեռ՝ **ինքնակերպավորվում** է նաև հեղինակը... (ԳԹ, 13.04.2018):

ԻՆՔՆԱՎԼԱՆՈՒՄ, գ. **Ինքն իրեն կլանելը:** Ապրում է իր համար, մեռնում՝ իր համար, և սա ոչ թե ինքնառչնչացման, այլ **ինքնակլանման** պրոցես է (Իր., 13.06.2017):

ԻՆՔՆԱՀԱԳԵՑՈՒՄ, գ. **Ինքն իրենով հագենալը՝ ամբողջապես բավարարվելը:** Իր մյուս զոհերի նման նրան էլ մղելու էր **ինքնահագեցման** (Մոր., էջ 128):

ԻՆՔՆԱՀԱՄԱՆՄԲՈՒՄ, գ. **Ինքնահամախմբվելը**: .... Ազգային **ինքնահամախմբման** .... իրողության ընկալումը .... պետք է դրդեր .... անհաշտ պայքար մղելու .... (Հայրունի, էջ 97):

ԻՆՔՆԱՀԱՎԵՐԺԱՑՈՒՄ, գ. **Ինքը իրեն հավերժացնելը**: .... Դա մաքուր խարդախություն է եղել: Շարժառիթները՝ փող և **ինքնահավերժացում**(ՌՇ, էջ 167):

ԻՆՔՆԱՀԱՐՑԱԴՐՈՒՄ, գ. **Հարցադրում ինքն իրեն**: .... Պուտինյան այս **ինքնահարցադրումը** բնավ էլ հոետորական չէր .... (Ազգ, 12.01.2018):

ԻՆՔՆԱՀՂԿՎԵԼ, ք. **Ինքը իրեն հղկել**: Սա .... անարյուն հեղափոխություն էր .... որն իրականացվեց հստակ սցենարով, .... ուղղակի մի փոքր էլ **ինքնահղկված** ու ինքնադրսևորված .... (Իր., 04.05.2018):

ԻՆՔՆԱԴԵԿՎԱՐՈՒՄ, գ. **Ինքն իրեն դեկավարելը**: Նրանք էլ ինձ տարան դեպի այդ աշխարհն ու թողեցին ինձ ազատ, **ինքնադեկավարման** (Ատիկն, թ. 5, 2017):

ԻՆՔՆԱՆԿԱՐԱԳԻՐ, գ. **Ինքն իրեն նկարագրելը**: Սովորաբար ինչ գրում ես, **ինքնանկարագիր** է, որովհետև գրիչդ ավելի շատ գիտի քո մասին (TV ալիք ,05.04.2018):

ԻՆՔՆԱՆՈՐՈԳՈՒՄ, գ. **Ինքնիրեն նորոգվելը**: Չէ՞ որ կյանքը մի յուրօրինակ **ինքնանորոգման** անընդհատ ու անվերջ շրջան է (ԱՄԷ, էջ 439):

ԻՆՔՆԱՆՎԱՍՏ, ած. **Ինքն իրեն նվաստացնող**: .... **Ինքնանվաստ** տեսք ընդունելով՝ նույն վանող տոնով շարունակեց (Կուսկեր, էջ 354):

ԻՆՔՆԱՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ, գ. **Ինքը իրեն նվիրաբերելը, ինքնանվիրում**: .... Նրա գործունեության հիմքում առկա են այն բարոյական շահագրգռությունները, որոնցով պայմանավորված է նրա **ինքնանվիրաբերումը**(Հայրունի, էջ 147):

ԻՆՔՆԱԶԱՐԶԱՐԱՆՔ, գ. **Ինքն իրեն չարչարելը**: Ինչ անում եմ, չեմ կարողանում ազատվել ավելորդ հուզումներից, **ինքնաչարչարանքից**.... (ԱՄԷ, էջ 161):

ԻՆՔՆԱՊԱՐՊՎԵԼ, ք. **Ինքն իրեն սպառել, պարպել:** .... Երբեք պաշտոն չունեցավ, այլ ապրեց լոկ խղճին հլու, **ինքնապարպվելով** (ԳԹ, 11.05.2018):

ԻՆՔՆԱՍՏՎԱԾ, գ. **Ինքն իրեն աստվածացնողը:** Օսիկին թույլ տվինք տեսակցել այս գրոց-քրոց ցնծուհու հետ, պայմանով, որ **ինքնաստվածի** պես պահեր իրեն (Սյուրև, էջ 207):

ԻՆՔՆԱՎՆԱՍԱԿԱՐ, ամ. **Իրեն վնասող, իր համար վնասակար:** Երբ պետք է մեր միջից դեն նետենք մեր **ինքնավնասակար** էությունը (Իր., 22.09.2017):

ԻՆՔՆԱՏԱՐԲԱԼՈՒԾՈՒՄ, գ. **Ինքն իր մեջ տարրալուծվելը:** Ես ատում եմ դրամատիկական արվեստի այն դպրոցները, որոնք դերասանի մեջ ճշմարիտ զգացումներ արթնացնելու համար ռեֆլեքսներ և **ինքնատարրալուծում** են պահանջում (Ասդիս, թ. 3, 2017):

ԻՆՔՆԱՏԻՐԱՆԱԼ, նք. **Ինքը իրեն տիրանալ:** Ուրիշին տիրանալը հավասար է նախասկզբնական Ես-ին տիրանալուն. տիրանալը վերածվում է **ինքնատիրանալու** .... (ՌՇ, էջ 168):

ԻՆՔՆԱՓԱԹԹՈՒԿ, գ. **Իր փաթաթածը: Ինքնափաթեռնակի** համար թուղթը ստիպված էր խնայել (ՆԱ, էջ 41):

ԻՆՔՆԻՐԱՑՈՒՄ, գ. **Ինքը իրեն իրացնելը:** Խորհրդապաշտությունը և կռապաշտությունը .... համարվում են անձի, ազգի, հանրության (ժողովրդի) **ինքնարտահայտման, ինքնիրացման** կարողության ձևերից մեկը (Իր., 06.04.2018):

ԻՇԽԵԼԱՏԵՆՉ, ամ. **Իշխելու տենչ ունեցող:** .... «**Իշխելատենչ** բնավորություն» արտահայտությունը չափից դուրս խիստ կլինի նրա կապակցությամբ .... (ԺՄ, էջ 334):

ԻՇԽԵԼԱՏԵՆՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Իշխելու տենչ ունենալը:...** Հայացքը լի էր դառնությամբ ու կորովի **իշխելատենչությամբ** (Հ, էջ 19):

ԻՋԵՎԱՆԱՏԻՐՈՒՀԻ, գ. **1.Կին՝ աղջիկ իջևանատեր: 2. Իջևանատիրոջ կինը:** .... Չէր լսում .... **իջևանատիրուհու** կանչը (Կաֆկա, էջ 33):

ԻՍՊԱՆԱԳԻՐ, ան. **Իսպաներեն գրող:** Պատմեցի, որ ձեռքիս է **իսպանագիր** Ալեքսանդր Կաստնայի վերջերս թարգմանված «Երրորդ խոսքը» պիեսը (*Անդին, թ. 3, 2017*):

ԻՐԱՆԱՀՊԱՏԱԿ, գ. **Իրանի քաղաքացիություն ունեցող:** Եթե Իրանում է ծնվել, ինչո՞ւ **իրանահպատակ** չէ, եթե հայ է, ինչո՞ւ Հայաստանում չի եղել բնավ (*ԱՄ, էջ 364*):

ԻՐԱՊԱՀՊԱՆ, գ. **Իրերը պահպանող:** Ժառանգության հարցում նրա հիմնական հակառակորդը .... **իրապահպանն** [էր]/(*ՌՇ, էջ 267*):

ԻՐԻԿՆԱՀԱՎԱՔ, գ. **Երեկոյան հավաք:** Բաստիլի հրապարակում **իրիկնահավաք** էին շեփոքում (*ԺՄ, էջ 39*):

## Լ

ԼԱԹԱԿՏՈՐ, գ. **Լաթի կտոր:** .... Սև **լաթակտորով** կապված գրանցման մատյանները բացելով՝ սկսեց նայել (*ԺՄ, էջ 454*):

ԼԱՄՊԱՄՈՒՐ, գ. **Լամպի մուր:** .... Նարդուսի ավագ ցանեց .... միջնամասին և ուսահողերը **լամպամուրով** ցայտունացրեց (*ՌՇ, էջ 212*):

ԼԱՅՆԱԿՏՈՒՐ, ան. **Լայն կտուրով, լայն կտուր ունեցող:** .... Կարմիր աղյուսով ծածկված **լայնակտուր** այն աշտարակն իրոք երկրային կառույց էր (*Կաֆկա, էջ 11*):

ԼԱՆՋԱԲԵՐԱՆ, գ. **Լեռնալանջի եզրը:** Թորիան այնքան էլ մեծ գյուղ չէ, **լանջաբերանին** է, ու միջով էլ աղբյուր է անցնում (*Անդին, թ. 4, 2017*):

ԼԱՆՋԱՄԱՍ, գ. Այստեղ՝ **զգեստի կրծքի հատվածը:** Մարգագգեստի **լանջամասում** Ադիդաս պատկերանշանն է (*ՀՄ, էջ 33*):

ԼԱՎԱՀԱՄԲԱՎ, ան. **Լավ համբավ ունեցող:** .... **Լավահամբավ** արհեստանոց էր պահում .... (*Բ 4, էջ 745*):

ԼԱՎԱՇԱՀԱՍ, գ. **Լավաշ:** Կար մի թարեք անբույր **լավաշահացի**.... (*Անդին, թ. 4, 2017*):

ԼԱՎԱՇԱԶԱՓ, ան. **Լավաշի մեծության:** .... Եթե վարկառու վաճառականը փոքր գումար էր խնդրել, հետևաբար քիչ ունեցվածք

«գրավաղրել»՝ կտակել, ապա թուղթը հազիվ կես էջ էր, և հակառակը՝ կային **լավաշաչափ** կտակներ (*Իր.*, 19.05.2017):

ԼԱՏԻՆԱԱՄԵՐԻԿԱՑԻ, գ. **Լատինական Ամերիկայի բնակիչ:** Ներքևում՝ ափին, **լատինաամերիկացիների** մի խումբ, հավանաբար ընտանիք, խարույկ էր վառել ու զվարճանում էր (*ՊՇ*, էջ 42):

ԼԵԶՎԱԽՐԱԽՃԱՆՔ, գ. (դիպվ.): **Լեզվի խրախճանք:** Վահեն հրավիրեց լիբանանյան մի հրաշալի ռեստորան, որտեղ գերագույն հաճույքը **լեզվախրախճանքն** էր (*ԱՄ*, էջ 359):

ԼԵՆՆԱԾԱՂԿԵԼ, բ. (բնստ., դիպվ.): Այստեղ՝ **բարգավաճել:** Քեզ նորից գավթել չեն կարող երբեք, // **Լեռնաձաղկելու** ես, Մեծ Հայքի եզերք .... (*ԳԹ*, 31.03.2017):

ԼԻԱՀՈԾ, ան. **Չափազանց շատ՝ արտակարգ հոծ:** .... Ես գերադասում եմ .... զատկածաղիկը .... այս գեղեցիկ կակաչներից, որոնք **լիահոծ** են ոսկով, ծիրանիով, շափյուղայով և զմրուխտով .... (*Բ 10*, էջ 635):

ԼԻԱՏԱՄ, մկբ, ան. **Ատամները լրիվ բաց՝ բացած:** .... Նա արշավեց յոթ մղոնանոց մույկերով՝ **լիատամ** ժպտալով ու ծամածռություններ անելով (*Մյուրմ.*, էջ 139):

ԼՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ, ան. **Լյարդաբանությանը վերաբերող: Լյարդաբանական** արդի խնդիրները՝ ուշադրության կենտրոնում (*ՀԱԳ*, *armtur.am*):

ԼՅԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Լյարդի ուսումնասիրությանը զբաղվող գիտաճյուղ:** Ամերիկացի հայտնի մասնագետի հետ քննարկվել են Արցախում **լյարդաբանության** զարգացման խնդիրները (*ՀԱԳ*, *news.am*):

ԼՈՂԱԳԼԽԱՐԿ, գ. **Լողալու ժամանակ դրվող գլխարկ:** Իսկ դու երբեք **լողագլխարկ** չեն դնում (*Մեղ.*, էջ 302):

ԼՈՂԱԽԱՂ, գ. **Կեղծ լող:** Որևէ հիմք չկար, թե նրանք կդիմեն իրենց նենգաբարո **լողախաղին** (*Մեղ.*, էջ 160):

ԼՈՐԴԱՎԱՅԵԼ, ան. **Լորդին վայել:** .... Եկավ վաճառականը, միշտ սիգարը շրթներին, անգլիացու **լորդավայել** հովերով .... (*Մյուրմ.*, էջ 245):

ԼՈՐԴԱՎԱՐԻ, ան. , մկր. **Լորդանման, ինչպես լորդը:** .... Ի բնե **լորդավարի** հպարտություն ուներ *(Գոյւ. 2, էջ 64):*

ԼՈՐՁԱԼՎԱ, ան. (փխբ.): **Լորձով լվացված:** Իսկ 15 թվականը, օրինակ՝ ըստ »Մատնագրի» տեսիլքվում է: «Մութ երկնքից թափվող ճերմակավուն լորձ: Լորձացող ծառեր, լորձածածկ փողոցներ, լորձոտ ագռավներ, **լորձավա** շուն, լորձամած ձի.... *(ԳԹ, 25.11.2016):*

ԼՈՐՁԱԾԱԾԿ, ան. **Լորձով ծածկված:** Տեն ԼՈՐՁԱԼՎԱ-ի օրինակը:

ԼՈՐՁԱՑՈՂ, ան. **Լորձով ցողված:** Տեն ԼՈՐՁԱԼՎԱ-ի օրինակը:

ԼՌԱՐՎԵՍՏ, գ. **Լոռւթյան արվեստ:** Կիսախստ լոռավեստի «չաչանակների» մասին *(Ազգ, 30.09.2016):*

ԼՎԱՑԱՐԱՆԱՅԻՆ, ան. **Լվացարանում օգտագործվող:** Նրա ձեռքին **լվացարանային** սպասք կար *(Սել., էջ 53):*

ԼՎԱՑՔԱՏԱՇՏ, գ. **Լվացքի, լվացք անելու տաշտ:** .... **Լվացքտաշտի** մոտ կանգնած .... շիկափեր կինը մեղմաձայն երգում էր .... *(Կաֆկա, էջ 16):*

ԼՐԱՏՎԱՏԱՐԱԾՔ, գ. **Լրատվության տարածումն ընդգրկող վայր, տարածք, ամբողջություն:** Պոտինի գահակալական վերջին վեցամյակը թևակոխելու կապակցությամբ ռուսաց **լրատվատարածքը** համակած բազմաթիվ հարցադրումների մեջ առանձնանում է մեկը .... *(Բր., 13.04.2018):*

ԼՌԻՍԱԲԻԾ, գ. **Լույսի բիծ:** Նշմարված **լուսաբծերն** սկսեցին արագորեն մեծանալ .... *(ՍՏ, էջ 2284):*

ԼՌԻՍԱԹՈՆ, ան. (բնստ.): **Լուսավոր անձրևով շղարշված:** ... **Լուսաթոն** մշուշից// ձեռքեր են պարզվում դեպի ինձ....*(ԳԹ, 11.11.2016):*

ԼՌԻՍԱՇԵԿ, ան. **Լուսավոր խարտյաշ:** Մազերը **լուսաշեկ** չէին, ինչպես գեղեցիկ աղջիկների պարագայում.... *(Հ, էջ 106):*

ԼՌԻՄՆԱԳԱԼ, գ. (բնստ.): **Լուսնի երևալը, ծագելը:** .... Մինչև **լուսնագալ** չէ՛ի ուզում թողնել *(ԳԹ, 16.02.2018):*



ԼՈՒՄՆԱԼՈՒՄԱՑԻՆ, ան. **Լուսնալույսի գույնի՝ նմանվող:**  
Կարծես խարուսիկ, լուսնալուսային դեմք (Գոլու. 4, էջ 29):

ԼՈՒՄՆԱՄԱՀԻԿ, գ. **Լուսնի մահիկը: Լուսնամահիկը** շեղբի է  
նման (ԱՊ, էջ 50):

ԼՈՒՄՆԱՑՈՒԼՔ, գ. **Լուսնի ցոլք: Լուսնացոլքով** լուսավորված էր  
դեմքի կեսը .... (ԱՏ, էջ 93):

## Խ

ԽԱԶԱԳՐՎԵԼ, ք. **Խազերով գրվել:** Տե՛ս ԳՈՒՆԱԲԻԾ-ի օրինակը:

ԽԱԶԽԶՈՏ, ան. **Խառնիխոուն խազեր քաշած:** Բաժակի պոնկին  
կպածը կարմիր գինի չէր, արյուն չէր, **խազխազոտ** շրթներկ էր (ՀՄ, էջ 686):

ԽԱՂԱԹԱԲՍՏՈՑ, գ. **Սահմանամերձ համայնքների դպրոց-  
ների և մանկապարտեզների տարածքում գտնվող պատասպարան:**  
.... Հիմնադրամը իրագործում է **Խաղաթաքստոց** բարեգործական  
ծրագիր: .... Բացմանը սահմանամերձ համայնքների **խաղաթաքստոց-  
ներից** ոչ ոք հրավիրված չի եղել (Ազգ, 13.10.2017):

ԽԱՂԱՂԱՄՈՒԹ, ան. **Խաղաղ և մույթ:** Մայիսյան գիշերը ....  
Իր **խաղաղամույթ** ձայնով պարուրել [էր] տղամարդկանց և կանանց  
քմահանույքները .... (Գոլու. 3, էջ 523):

ԽԱՇԱՄԵԼ, ք. **Խաշամով ծածկվել:** .... Իսկ ներքևում գետինը  
չանչել էին ամեհի, վիշապագալար արմատները, որ շրջանաձև  
խորանալով **խաշամած** հողում՝ ապահովում էին հաստաբուն ցողունի  
վերելքը (ԼՋ, էջ 57):

ԽԱՉԱՂԵՂ, գ. **Խաչաձև աղեղ:** Գուցե Գորկին շփոթել է, սա  
ավելի շատ նման է **խաչաղեղի**, քան արկերուզի (ՓՄ, էջ 10):

ԽԱՉԿԱՄԱՐ, գ. **Խաչաձև կամար:** Աշտարակի հենամասի մոտ  
խոռոչ կազմող **խաչկամարի** տակ էլ հենց նստած էր «Շղթայակապ  
կմախքը» (ԱՏ, էջ 182):

ԽԱՐՍԽԱԶԱՐԴ, գ. **Խարսխապատկերով զարդարված, վրան  
խարսխանշան ունեցող:** .... Կհագնեմ .... **խարսխազարդ** կոճակներով  
կապույտ բաճկոնակ (Դյունա, էջ 21):

ԽԱՐՏԻՇԱԳԵՂՈՒՀԻ, գ. **Խարտյաշ ու գեղեցիկ կին**: .... Նրան չէր խաթարում ոչ մի պեպեն, որ հաճախակի է լինում ոսկեփայլ **խարտիշագեղուհիների** կաթնաթույր մաշկի վրա (Բ 10, էջ 41):

ԽԵԺԱՄՈՄ, գ. **Խեժից կամ խունկից՝ կնդրուկից պատրաստված մոմ**: .... **Խեժամոմի** լույսի տակ նրա հետ զրուցելու համար ... (Բ 8, էջ 40):

ԽԾՈՒԾԱՊԱՏԵԼ, նր. **Խծուծով պատել**: .... Մի՞թե ես թնդանոթի ռումբ եմ, որ ուզում ես **խծուծապատել** (Մեր., էջ 106):

ԽՃԱԲԱՐԵ, ած. 1. **Խճաքարից պատրաստված**: 2. **Խճաքարի տեսք ունեցող**: Աղջկան .... մոռացության տալը կարծես դրոշմված լիներ նրա **խճաքարե** ճակատին (Բ 2, էջ 609):

ԽՄԲԱՍԵՆՅԱԿ, գ. **Խմբին հատկացված սենյակ**: Հարությունը գալիս է **խմբասենյակ** (Նարեկ, թ. 9, 2013.):

ԽՆԱՄԱԽՈՍՈՒՀԻ, գ. **Կին՝ աղջիկ խնամախոս. խնամախոս աղջիկ՝ կին**: .... Ահավոր բառ, որ մոզոնել են **խնամախոսուհիները** ... (Դյումա, էջ 57):

ԽՆԴԱՓԱՅԼ, ած. **Ուրախ՝ խնդուն ու փայլող**: Դեմքը միայն **խնդափայլ է** ... (Բ 8, էջ 686):

ԽՆԿԱՑՊԻԿ, գ. **Խունկի փոքրիկ ցուպ**: .... Չինական **խնկացալիկներ** էր վառում տանը (Գոլու. 4, էջ 164):

ԽՆԿԱՓԵՇ, ած. (բնստ.): Այստեղ՝ **խնկաբույր արձակող**: .... Սոճին **խնկափեշ** անցյալը հիշեց (ԳԹ, 27.04.2018):

ԽՆՋՈՒՅՔԱՎԱՐ, գ. **Խնջույքը վարող հանդիսավար, թամադա**: Հարկումից կազատվի **խնջույքավարների** գործունեությունը և դարբնոցային գործունեությունը նույնպես (ՀՀ, 09.12.2016):

ԽՈՋԱՆԱՀԵՐԿ, ած. **Խոզանը հերկած**: .... Քայլում էին **խոզանահերկ** գյուղական հարթավայրով ... (ԻՇ, էջ 225):

ԽՈՀԱՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ, գ. (դիպվ.): **Խոհերի, մտքերի համայնապատկեր**: Մեծաց շարունակվող զրուցարանը Հայաստանի մշակույթը պահող անհատականությունների **խոհահամայնապատկերն է** ... (ԳԹ, 02.03.2018):

ԽՈՂԱՏՐՏՈՒՄ, ած. **Խոհուն և տրտում: Խոհատրտում** աչքեր  
(Գող. 2, էջ 6):

ԽՈՆԱՐՀՈՒՍՈՒՅՑ, ած. **Խոնարհություն՝ հնազանդություն  
ուսուցանող՝ սովորեցնող:** ... Եկեղեցական պաշտոնյաները այն  
վերածել են **խոնարհուսույց** ստրկամիտ քարոզչության (Հայրունի, էջ 91):

ԽՈՍՏՈՒՄՆԱՅՈՒՑԱԿ, գ. (դիպվ.): **Խոստումների ցանկ:** Նա  
սկսեց հերթով այցելել դրամատերերին, ներկայացնել գերիների  
ողբալի վիճակը ու փող խնդրել: Բացի մեկից, ոչ ոք չհրաժարվեց, և  
ահա թե ինչպիսի **խոստումնացուցակ** ստացվեց ... (Իր., 21.07.2017):

ԽՈՍՔԱԶԱՐԴ, ած. **Խոսքերով զարդարված:** Պռեմը, իրավամբ  
արժանի է ամենայն ուշադրության և **խոսքազարդ** գնահատանքի  
(ՌԿ, էջ 48):

ԽՈՍՔԱՄԱՐՏ, գ. (դիպվ.): **Լեզվակոխիվ, խոսքակոխիվ:** ... Եվ  
սկսվեց իսկական **խոսքամարտը** (ՍՍ, էջ 273):

ԽՈՏԱԲՈՒՅՐ, ած. **Խոտի բույր ունեցող՝ արձակող:** Քնաթաթախ,  
**խոտաբույր** ու թաց հողի շնչատությունը ըմբռնյալներով նա փակում էր  
աչքերը ... (Մոր., էջ 5):

ԽՈՐԱԶԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Խորագգացություն, խոր գգացող  
լինելը:** Նա ամենայն **խորագգացողությանը** նշմարում էր երևույթի  
սոցիալ-քաղաքական հիմքերը ... (Հայրունի, էջ 123):

ԽՈՐԱՇԵՐՏ, ած. **Ներքին խոր շերտեր ունեցող :** ... Փոխանցեցի  
իմ տպավորությունը Արտակ Մաթևոսյանի՝ սա այսօր հնտորեն  
թաքցրած, **խորաշերտ** արձակից... (ԳԹ, 08.07.2016):

ԽՈՐԱՊԱՏԿԵՐՎԵԼ, ք. Տեն ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-ի օրինակը:

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԲԱՐ, մկբ. **Խորհրդանշական՝ սիմվոլիստական  
կերպով:** ... **Խորհրդանշաբար** ազդարարում է ... այդ հարստության  
վախճանը (Հայրունի, էջ 143):

ԽՈՐՀՐԴԱՊԱՀԱԿԱՆ, ած. **Խորհրդապահություն պարունակող:**  
... Ավագակապետը, մոտենալով Լոուրնին, **խորհրդապահական**  
այսպիսի մի գրույց սկսեց (Կոսպեր, էջ 220):

ԽՌՄՓՈՑԱՅԻՆ, ան. **Խոնփոցին վերաբերող**: Խեղճը իմ **խոնփոցային** համերգը լսելուց հետո է միայն ըմբռնել, թե ինչ ասել կուզեի. «Լամվ մտածած եք...» (ՍՍ, էջ 399):

ԽՍՏԱՊԱՐԶ, ան. **Հստակ, անպաճույճ, անզարդ**: Լեռնաշխարհն իր կնիքն է դրել նրա **խստապարզ** բանատողի վրա .... (ԳԹ, 14.04.2017):

ԽՍՏԱՋԻՆՋ, ան. **Խստորեն՝ շատ ցինջ**: Ձմեռային **խստաջինջ** արև (Գոյւ. 2, էջ 194):

ԽՏԱՆԿԱՐ, գ. **Նկարի՝ նկարչության տեսակ**: Կերպարվեստին բնորոշ բառերի շարքում առատ են նկար վերջնաբաղադրիչով բառամիավորները՝ ինքնանկար, դաշտանկար, դիմանկար, ինքնադիմանկար, գրչանկար, գծանկար, մատիտանկար, ճեպանկար, բնանկար, մանրանկար, **խտանկար**, հայանկար և այլն (ՊԲՀ, 2017, 2, էջ 80):

ԽՈՒՍԱՆՎԱԳ, գ. **Խուսափելու նպատակով կատարվող նվագ**: ... Հեշտանքի բեկբեկուն **խուսանվագներից** .... հետո .... երաժշտուհին դարձ կատարեց ինքն իր վրա (Բ, էջ 172):

## Ծ

ԾԱԾԿԱԹԱՓՔ, գ. **Ծածկված թափք**: .... Մոտեցավ **ծածկաթափքով** ճամփորդական մի մեքենա (ՍՍ, էջ 120):

ԾԱԾԿԱԽՈՒՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Գաղտնախոսություն**: Գուրգեն Խանջյանի «Մատնագրի» գրավչությունը նրա **ծածկախոսությունն** է, որով ներկայանում է աշխարհին ջրմեղ մեղավորությամբ, չնայած ինքն արդեն աշխարհն է, որ կա, թեկուզ մերժված կամ ընդունված.... (ԳԹ, 25.11.2016):

ԾԱԾԿԱՎԱՐԱԳՈՒՅՐ, գ. **Ծածկելու՝ ծածկող վարագույր**: .... Տիկին Մեգրեն ետ տարավ պատուհանի **ծածկավարագույրները** .... (ԺՍ, էջ 22):

ԾԱԾԿՈՑԱՊԱՏ, ան. **Ծածկոց(ներ)ով պատված**: Ընդարձակ սենյակը .... ուղղակի լեփ-լեցուն էր **ծածկոցապատ** կահույքով (Կվին, էջ 247):

ԾԱՂԿԱՇԲԵՐԹ, գ. (փխբ.): **Ծաղկաշատ վայր**: Կանաչ երանգների ու **ծաղկաշքերթի** միջով մեքենան սլանում է առաջ (ԳԹ, 15.06.2018):

ԾԱՂԿԱՊՈՒՐԱԿ, գ. **Ծաղիկների պուրակ:** Ուղիղ ճամփան մտնում է Տեր-Զոր քաղաքը...արմավենիների ծառուղիներով... առանձնատներով, **ծաղկապուրակներով** (ՌՂ, էջ 224):

ԾԱՂԿԱՍՔՈՂ, ած. **Ծաղիկներով ծածկված:** Հետդարձի ճապարհին **ծաղկաքող** լանջերն ու հեռաստանները դարձյալ իրենց հմայանքների գերի են անում ինձ (ԳԹ, 15.06.2018):

ԾԱՂԿԵՓՆՁԻԿ, գ. **Փոքրիկ ծաղկեփունջ:** ... Տեսա մի ... պառավ կնոջ՝ ... ծղոտե գլխարկով՝ արհեստական **ծաղկեփնջիկը** վրան (Կվին, էջ 24):

ԾԱՂՐԱԶԱՆԳ, գ. (դիպվ.): **Միտումնավոր, հատուկ ծաղրելու նպատակով արված զանգ:** Կեղծ պաշտոնական **ծաղրազանգ** (Հեռ., Արմենիա, 26.05.2018):

ԾԱՂՐԱԾՈՒՇԻ, գ. **Կին ծաղրածու, ծաղրածու կին:** Նրա կտավներում ներկա են հավերժ օտարականները, ինչպես Պիկասոն էր ասում՝ «թափառող դերասաններ», ծաղրածու-**ծաղրածուիկներ**, ձեռնածու-ձեռնածուիկներ... (Գայանե, էջ 31):

ԾԱՅՐԱՀԱՐԹԱԿ, գ. **Ծայրի հարթակ:** ... Դիտապահակները ... կանգնած էին երեք կայմերի **ծայրահարթակներին** ... (Մեր., էջ 182):

ԾԱՆՈՒՅԱԹԵՐԹԻԿ, գ. **Ծանուցաթերթ, ծանուցագիր:** ... Ես **ծանուցաթերթիկ** եմ ստացել ... բանկիրական տնից (Դյուսա, էջ 537):

ԾԵԾԱԴԱԶՎԱԾՔ, գ. **Մարմնի վրա արվող դաջվածքի տեսակ:** Ամեն ինչ նույնն էր, անգամ **ձեծադաջվածքներն** էլ այստեղ մոդայիկ են (Հ, էջ 173):

ԾԵՐԱԽՆԱՄ, ած. **Ծերերին ապաստան տվող, խնամող:** **Ծերախնամ** այդ հաստատությունում իրենց կյանքի վերջին տարիներն անցկացնող 5 տասնյակից ավելի տատիկներն ու պապիկները անհամբերությամբ են սպասում Շահան Արծրունու այցերին (Ազգ, 12.05.2017):

ԾԵՐՈՒՆԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ, գ. **Ծերունիներին հատուկ մոլություն:** Թատրոնների ներսում գործում է «անխախտ նվիրակարգ», ստեղծվում է «թատրոնական **ծերունամոլություն**», իսկ երիտասարդ դերասանը հայտնվում է «դեկորի» կարգավիճակում (ԳԹ, 01.07.2016):

ԾԻՍԱՀՄԱՅԱԿԱՆ, ած **Ծիսական և հմայական**: ...Մարդկանց բուժում էին **ծիսահմայական** եղանակների՝ աղոթքների, մոմ թափելու, գարի գցելու, թուղթ ու գիր անելու, ... մատաղ անելու, ուխտագնացության և այլ միջոցներով ... (ՋԸ, էջ 22):

ԾԻՐԱՆՍՓԱՅՏԵ, ած. **Ծիրանենու փայտից պատրաստված: Ծիրանափայտե** կահույք (Բ 10, էջ 73):

ԾԻՍԱԽՈՏԱԲՈՒՅՐ, ած. **Ծխախտոխ հոտով՝ բույրով**: Բաց լուսամուտներից վեր էին բարձրանում **ծխախտաբույր** ամպաքուլաները.... (Հ, էջ 172):

ԾԻՍԱԿՈՒՄ, գ. **Ծխի կում՝ ներքաշում՝ ներշնչում**: .... Նրա քարտուղարը երկու **ծխակում** անելու արանքում դանդաղ արտա\_սանեց.- ... Մեռած է (ԺՄ, էջ 104):

ԾԻՍԱՄՈՄ, գ. **Ծխացող մոմ**: .... Վերցնելով **ծխամոմերն** ու աղոթքի անհրաժեշտ պարագաները՝ նա գաղտագողի սողոսկում էր այնտեղ .... (Դ., Մ., էջ 99):

ԾԻՍԱՍԵՂԱՆ, գ. **Ծխելու համար հարմարեցված սեղան, սեղան, որի վրա ծխելու պարագաներ են դրվում**: .... Էլոիկան ձեռքը մեկնեց մոխրամաններիս, որ իրար վրա դարսված էին **ծխասեղանին** (Սել., էջ 363):

ԾԻՍԱԲՈՂ, գ. **Ծխի քող՝ ծածկույթ**: .... Դիրիժավըն էր ցածրանում՝ պարուրված **ծխաքողով** (ՍՏ, էջ 277):

ԾԻՍԱԲՍԱԿ, գ. **Ծխախտոխ քսակ**: Նրա բռան մեջ շուռ տվի **ծխաքսակիս** ամբողջ պարունակությունը (ԺՄ, էջ 369):

ԾԻՆԵԿԱԼ, գ. (տեխ.): **Ծխնելույզի դրսում՝ վրան ամրացնելու հարմարանք**: [Սյան] ... ծայրին գտնվող ժանգոտած երկաթից հաստ **ծխնեկալը** (Բ 8, էջ 23):

ԾՂՈՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Ծղոտագործի արհեստը, ծղոտից առարկաներ հյուսելը**: .... Որոշ ժամանակ անց կենտրոնի սաները հնարավորություն կունենան մասնագիտանալու նաև փայտամշակման և **ծղոտագործության** մեջ (Ազգ, 13.04.2018):

ԾՄԱԿԵՆԻ, գ. **Խիտ՝ սովերող բուսականություն**: Հրակնատները չեն ծածկվել թփերով, մագլցող **ծմակենին** իր վերարկուն չի գցել նրա քառանկյունի կամ կլոր աշտարակների վրա (Բ 8, էջ 10):

ԾՈՌՆԵԾՈՌՆՈՒՇԻ, գ. **Ծոռների սերունդը ներկայացնող, ծոռնուհի:** .... Արյունս իմ մեջ պահում է // արմատիս հուշաբջիջը, // այն մի օր արթնանալու է // **ծոռնեծոռնուհուս** մեջ (ԳԹ, 09.06.2017):

ԾՈՎԱԳՆՉՈՒ, գ. **Թափառական, (փխբ.) ծովերի վրա դես ու դեն թափառող անձ:** .... Երեք ամիս հետո այդ **ծովագնչուների** բերած տասը նավերի շուրջ աճել էր մի փոքրիկ գյուղ (*Դյունա*, էջ 19):

ԾՈՎԱԲԻՐՏ, գ. **Ծովի դիրտ:** Մենք գնացինք շատ նեղ փողոցով .... Ուրվային մի շառավիղ՝ .... **ծովադիրտի** հոտով հագեցած (*Սյուրմ.*, էջ 94-95):

ԾՈՎԱՀԱՎՔ, գ. **Ծովահավ, ծովային թռչուն:** Նավակը, իր բնից թռչող **ծովահավքի** պես, սուրալով դուրս եկավ բաց ծով .... (*Դյունա*, էջ 300):

ԾՈՎԱՀԵՆՆԱԲԱՐՈ, ած. **Ծովահենի բարոյականություն ունեցող:** .... Ինչպես **ծովահենաբարո** երեք տերություններ մեջ-մեջ արեցին Լեհաստանը (*Մեր.*, էջ 53):

ԾՈՎԱԶՈՆ, գ. **Ծովին նվիրված ստեղծագործություն:** Տես ԱՍՏՂԱԶՈՆ-ի օրինակը:

ԾՊՏԱՀԱԳՈՒՍՏ, գ. **Որպես ծպտապարագա օգտագործվող հագուստ, ծպտվելու հագուստ:** .... Կտավի վրա ավելի գեղեցիկ են, քան **ծպտահագուստով** (*Կուպեր*, էջ 41):

ԾՊՏԱՊԱՐԱԳԱ, գ. **Ծպտվելու՝ իսկությունը ծածկելու համար գործածվող պարագա:** .... Հանելով ծպտապարագաները՝ բացականչեց .... (*Կուպեր*, էջ 40):

ԾՌԱԺԱՌԱՆԳ, ած. (փխբ., բնստ.): **Սասնա ծռերի հետնորդ:** Ակնախորշերումս քեզանից կաթած // արյան կարմիր գնդիկներն են փրփրում, // գունդուկծիկվելով դառնում հայելի՝ // **ծառժառանգ** սիրապարտիդ կանչը // ավետելով որպես ժպիտ (ԳԹ, 08.07.2016):

ԾՌԱՀԱԼԱԾ, գ. (դիպվ.): **Սասնա ծռերին հալածող:** Հիմա էլ թոնդ **ծռահալածները** օրական թուք ու մուր են տալիս Նիկոլին.... (*Հւց*):

ԿԱԹՆԱԽԱՌՆ, ան. **Կաթով, կաթի հետ խառն՝ հետը կաթ խառնած:** Հյուրերը ....հյուրասիրվում են սև կամ կաթնախառն սուրճով (Բ 10, էջ, 615):

ԿԱԹՆԱՈՍԿԵԳՈՒՅՆ, ան. **Կաթնագույնին տվող ոսկեգույն: .... Կաթնաոսկեգույն** շրջանակի մեջ շողում էր ընդամենը մի դիմանկար (Դյուսև, էջ 473):

ԿԱԹՆԱՎԱՐԴԱԳՈՒՅՆ, ան. **Կաթնագույնի երանգով վարդագույն: ....**Իսկ սա քնքուշ կաթնավարդագույն էակ էր՝ սրտիկ հիշեցնող դնչով ու կարճիկ սմբակներով (ՆԱ, էջ 93):

ԿԱԼՄԻԿՈՒՀԻ, գ. **Կին՝ աղջիկ կալմիկ, կալմիկ կին՝ աղջիկ:** Հարկավոր է զգուշանալ կալմիկուհու նմանվող կանանցից (Մոր., էջ 120):

ԿԱԼՈՒԹԱՎԱՐՁ, գ. **Կալույթի վարձ:** Նրա հողերը բերրի են, և կալութավարձը լիովին ապահովված (Բ 2, էջ 663):

ԿԱՂՆԵԿԱՐՄԻՐ, ան. **Կաղնեփայտի կարմրություն ունեցող: Կաղնեկարմիր** շիշը նա պահեց ու հիացավ.... (ՀՄ, էջ 601):

ԿԱՄՐՋԱՊԱՐԻՄՊ, գ. **Կամրջի պարիսպ:** Կորնթարդ, ամպակուտակ կամրջապարսպի ու մեղմահոս ջրի միջև տարածված նեղլիկ ավիեզերքը լոկ գառիթափ լանջերից էր բաղկացած (Հ, էջ 15):

ԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Կայացած լինելը:** Հայաստանի անկախության 25–ամյակի շքերթը, բացի մեր բանակի և պետության կայացվածության մասին վկայելուց, առանձնահատուկ էր ցուցադրված գինտեխնիկայի առումով և դրանով պայմանավորված ուղերձով (Ազգ, 23.09.2016):

ԿԱՅԾԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կայծերի խուրձ, փխր.՝ փնջաձև տարածվող հոսք:** Կայծախրձերը թռչում էին երկինք (ԱՏ, էջ 343):

ԿԱՅԾԱԿՆԱԲԱՑ, ան. **Կայծակի հարվածից բացված:** Իսկ բունն այդպես մնաց մինչև հաջորդ գարուն և կայծակնաբաց վերքից ներքև շիվ տվեց (ԳԹ, 09.12.2016):



ԿԱՅՄԱԾԱՅՐԱՅԻՆ, ան. 1. **Կայմի ծայրի հատուկ՝ վերաբերող:**  
2. **Կայմածայրի: Կայմածայրային** դիտապահակներ*(Մեր., էջ 24):*

ԿԱՅՄԱՑՈՒ, ան. **Կայմ պատրաստելու (պիտանի, հարմար):**  
Զմեռոցում .... **կայմացու** սոճիներ էին կտրում *(ԱՏ, էջ 251):*

ԿԱՅՔԱԴԱՐԱՆ, գ. **Էլեկտրոնային կայքերի շտեմարան:**  
Հայկական էլեկտրոնային կայքերի **կայքադարան** *(Հմց, kayqer.am):*

ԿԱՆԱԶԱԿԱՊՈՒՅՏ, ան. **Կանաչին տվող կապույտ:** Շուրջն  
ամենուր **կանաչակապույտ**, արևացուլ պլիքներ էին .... *(ԱՏ, էջ 358):*

ԿԱՆԱԶԱՀՈՐԴ, ան. **Առատորեն կանաչապատ: Կանաչահորդ**  
մարգագետիններ *(Գուս. 2, էջ 147):*

ԿԱՆԱԶԱՎԱՐԴԱԳՈՒՅՆ, ան. **Կանաչին տվող վարդագույն:**  
Տարածքները ողողվեցին **կանաչավարդագույն** լույսով *(ԱՏ, էջ 200):*

ԿԱՆԵՓԱԳՈՒՆԵԼ, բ. **Կանեփագույն դառնալ: .... Կանեփա-**  
**գունած** մազերից ես սիրում եմ խամրած կանեփագույնը *(ՀՄ, էջ 615):*

ԿԱՆԵՓԱԹՈԿ, գ. **Կանեփի կեղևից հյուսված թոկ, կանեփե**  
**թոկ:** .... Աղի ջրացայտերից թե **կանեփաթոկը** և թե փայտը փտել ու  
փչացել էին *(Մեր., էջ 313):*

ԿԱՇԵՀՈՏ, գ. **Կաշվի հոտ:** Նա ամբողջովին սոգորված էր  
զինվորական **կաշեհոտով** .... *(ԱՏ, էջ 132):*

ԿԱՊԱԳԼԽԱՐԿ, գ. **Կապովի գլխարկ, գլխարկ, որը կապում**  
**են գլխին:** .... Գիշերային **կապագլխարկը** .... դեմքի սմբածությունը  
դարձնում էր կարեկցանք հարուցող *(Կաֆկա, էջ 93):*

ԿԱՊԱՐԱԳԼՈՒԽ, ան. **Կապարե գլուխ՝ գնդաձև ծայր՝ գլխիկ**  
**ունեցող:** Նախկին զինվորականը թափահարեց **կապարագլուխ** իր  
գավազանը .... *(Բ 4, էջ 427):*

ԿԱՊԱՐԱԳՈՐՇ, ան. **Գորշ կապարագույն:** ....Աչքերը երկնքի  
ամպի ընթացքի հետ կապույտ՝ երբեմն դառնում են **կապարագորշ**....  
*(Անդին, թ. 3, 2017):*

ԿԱՊԿԱԾՆՈՒՆԴ, ան. (փխբ.): **Տգեղ:** Քանի այդպիսի զինվոր է  
ծառայում այդ **կապկածնունդ** անտաշի մոտ.... *(Հմց):*

ԿԱՊՏԱԼՈՒՅՍ, ան. (բնստ.): **Կապոյտ լոյս ճառագող՝ արձակող:**  
Սառած հոգուս հետ՝**կապտալոյս** սարսափ (ԳԹ, 29.06.2018):

ԿԱՊՏԱԾՈՂ, գ. 1.**Կապոյտ ծոպ:** 2. ան. **Կապոյտ ծոպ ունեցող՝  
ծոպով:** .... Կրում էր .... Մետաքայա **կապտածոպ** կարմիր ֆես ....  
(Դյունս, էջ 313):

ԿԱՊՏԱՍՈՒՐԱՎՈՒՆ, ան. **Կապտին տվող մոխրագոյն:** ....  
Նայեց .... Անհանգիստ **կապտամոխրավուն** ծովերի այդ հրաշագեղ  
աշխարհին (ՌՇ, էջ 7):

ԿԱՊՏԱՈՍԿԵԳՈՒՅՆ, ան. **Կապտին տվող ոսկեգոյն:** .... Նա  
քաղաքից հեռանում [է]՝ ձեռքին իր փոքրիկ **կապտաոսկեգոյն**  
պայուսակը (ՌՇ, էջ ...):

ԿԱՊՏԱՓԻՐՈՒԶ, ան. **Փիրուզագոյն, փիրուզի կապտություն  
ունեցող:** Անասելի քաղցրությամբ էին շողում նրա **կապտափիրուզ**  
աչքերը (Բ 8, էջ 33):

ԿԱՎՃԱԾԵՓ, գ. **Կավճի ծեփ՝ շաղախ:** .... Պատուհանները կիսով  
չափ ծածկված էին **կավճածեփով**.... (ԱՏ, էջ 26):

ԿԱՎՃԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Կավճային նկարչություն:**  
Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առթիվ  
Ազատության հրապարակը մանուկների համար հերթական անգամ  
**կավճանկարչության** հարթակ էր դարձել (ՀՀ, 02.06.2017):

ԿԱՎՃԱՍՊԻՏԱԿ, ան. **Կավճի նման սպիտակ:** .... Զգում էր  
դրանց ուրվագծերի և **կավճասպիտակ** ճաճանչումների բացառիկ  
հմայքը (Գղս. 3, էջ 464):

ԿԱՏԱԿԵՐԳԱՈՂԲԵՐԳԱԿԱՆ, ան. **Կատակերգական և ողբեր-  
գական:** .... Ավելի ճիշտ **կատակերգաողբերգական** մի պատմություն  
էր (ԱՍԻ, էջ 149):

ԿԱՏԱՐԵԼԱՊԱՇՏ, ան. **Կատարելության ձգտող, պաշտող:**  
...Ամեն հելլենացի արվեստագետ էր, այն էլ ձևի **կատարելապաշտ,**  
փաստ է, իրողություն (ԱՍԻ, էջ 370):

ԿԱՏՎԱԽԱՂ, գ. **Կատվի խաղ:** Սալորի ծառի տակ կատուն սկսել  
էր **կատվախաղը**, ինքն իր պոչից էր վազում (ՄԵ, էջ7):

ԿԱՐԱՊԱՆՄԱՆ, ան. **Կարապի նման: ... Կարապանման** վիզը երկարեց՝ վերստին դիտելու համար Էմանուելին ... (Բ 10, էջ 631):

ԿԱՐԱՍԱՎՈՐՎԵԼ, ք. **Կարասի մեջ լցվել, տեղավորվել:** Մեղորը քամված ու **կարասավորված** էր... (ՀՄ, էջ 502):

ԿԱՐԱՏՈՒՆ, գ. **Տուն, որտեղ կար են անում:** Օժիտը կպատրաստվի Կոթիդի **կարատանը** (Գղու. 5, էջ 624):

ԿԱՐԿԱՌԱՄԱՍ, գ. **Կարկառված՝ դուրս ցցված մաս:** ... Ապրում էր ... Կիսաբոլոր **կարկառամասերով** ... մի հաճելի միջնադարյան տան մեջ (Կվին, էջ 230):

ԿԱՐԿԱՏԱՆԱԾԱԾԿ, ան. **Կարկատաններով ծածկված:** Ալեգարդ մորուքը փովել էր մուգ գույնի ծվատված, **կարկատանաձածկ** թիկնոցի վրա ... (ԱՏ, էջ 201):

ԿԱՐՃԱՏԱԲԱՏ, ան. **Կարճ տաբատ հագած:** Օդանավը լցվեց սպիտակ **կարճատաբատ**, ոսկեգույն, ցուլցացող մաշկով ու աչքերով իսկը աղավնիների մի զվարթ երամ (ՌՉ, էջ 358):

ԿԱՐՄՐԱԹԱՎԻՇ, ան. **Կարմիր ու թավշոտ:** ... Վեր կացավ փոս ընկած, **կարմրաթավիշ** բազկաթոռից ... (Գղու. 2, էջ 116):

ԿԱՐՄՐԱՇԵՐՏ, ան. **Կարմիր շերտերով:** ... **Կարմրաշերտ** ավտոբուսը ... կանգնած էր Փարիզի Աստվածամոր տաճարի գավթի մոտ (ԺՄ, էջ 324):

ԿԱՐՄՐԱՇԻԿԱՎՈՒՆ, ան. **Կարմրին տվող շեկ:** Ղեկի մոտ նստած էր պնդակազմ, **կարմրաշիկավուն** ... մի հաղթանդամ տղամարդ (Կվին, էջ 290):

ԿԱՐՈՏԱԲՈՒՅՐ, ան. **Կարոտագին, կարոտամած:** ... Հրաչօյի մասին վավերագրական գիրը մե՛րթ գրականագիտական-մասնագիտական վերլուծություն է, ...մե՛րթ մտերիմի **կարոտաբույր** վկայություն, մե՛րթ հարազատի բազմագույն, հուզատրոփ երակ (Իր., 25.05.2018):

ԿԱՐՈՏԱԽԱՆՁ, ան. , մկր. **Կարոտալից, կարոտամաշ:** Հիմա իմ պապենական այն սուրբ վայրերում քայլում է, շրջում ամեն մի տականք, իսկ ես էլ նստած գործեր եմ գրում **կարոտախանձ** (ԱՄ, էջ 531):

ԿԱՐՈՏԱԽԵՂԴ, մկր. **Կարոտից խեղդվելով:** Նա մեծ գործովանքով, **կարոտախեղդ** գրկում է կոստյումը, զրուցում, դրան անվանում «գավակս» (ԳԹ, 03.11.2017):

ԿԱՐՏՈՖԻԼԱՈՐԴ, գ. **Կարտոֆիլի որդ:** **Կարտոֆիլատրոները** մի պալարից անցնում էին մյուսին... (Անդին, թ. 5, 2017):

ԿԵՂՏԱՓՈՍ, գ. **Փոս, որի մեջ կեղտ է լցված՝ կեղտ են լցնում:** Ուրիշ մոլորակացեղի պատկանողը այդ նվերը կշարտեր մոտակա **կեղտավիտը** (ՌՇ, էջ 206):

ԿԵՆԴԱՆԱԶԵՐԾԵԼ, բ. **Կենդանիներից ազատել:** Աստված գայրանալով .... Ջրիեղեղով իսպառ **կենդանազերծեց** Երկիրը... (ՌԳ, էջ 260):

ԿԵՆՍԱԷՆԵՐԳԻԱ, գ. **Կենսական էներգիա:** Նրանք **կենսա-էներգիայի** կարիք ունեցող մարդկանց հետ հոգեղիվանագիտություն են խաղում... (ՌԳ, էջ 333):

ԿԵՆՍԱԺԱՄԱՆԱԿ, գ. **Կյանքի ժամանակ:** Գուրգեն Խանջյանի «Մատնագիրքը» ունի 21 բաժին,որոնք ենթատեքստի **կենսա-ժամանակի** զարգացմամբ, մեկ սերնդով պայմանավորված գալար են կազմում... (ԳԹ, 25.11.2016):

ԿԵՆՍԱԼԻՑՔ, գ. **Կենսական լիցք:** .... Գտնում այն արահետները, // որոնցով շարժվում ես // **կենսալիցքերով** հագեցած... (ԳԹ, 11.11.2016):

ԿԵՆՍԱՀԱՍՏԱՏԵԼ, նր. **Կյանքը հաստատել, ճիշտ նկարագրել՝ պատկերել:** .... Պոեզիան ես կրնորոշելի ավելի շատ որպես մեղկացնող, քան **կենսահաստատող** (Կուսկեր, էջ 246):

ԿԵՆՍԱՇԱՐՔ, գ. **Կյանքերի շարք:** .... Թելադրում է մի այնպիսի **կենսաշարք** .... (ԳԹ, 23.03.2018):

ԿԵՆՍԱՔԱՅԼՔ, գ. **Կյանքի ընթացք, կենսաընթացք:** Որքան դանդաղընթաց է ծերության **կենսաքայլը**(ԳԹ, 30.06.2017):

ԿԵՆՎՈՐՈՒՀԻ, գ. **Կին կենվոր, կենվոր կին:** .... Հավանաբար վեցերորդ հարկի **կենվորուհու** մոտ էր գնում .... (ԺՄ, էջ 156):

ԿԵՆՍԱԿՆՈՑ, գ. **Կենտ՝ մեկ ապակիով ակնոց:** .... Բացառիկ էին թվում նրա բարակ, ուղղամեջք կերպարանքը ...., նիհար դեմքը ...., կրեոսկրե շրջանակով **կենտակնոցը** .... (Գղլու, 4, էջ 10):

ԿԵՌԱՍԵՐԱՆԳ, ան. **Կեռասի երանգ՝ գույն կամ նրբերանգ ունեցող:** .... Հագնի կեռասերանգ թավշյա հագուստ .... (Բ 8, էջ 104):

ԿԵՏԱՅՈՒՂ, գ. **Կետաճարպ, կետի հալած ճարպ:** Պատմեցի, թե ինչպես են .... կաթասները լցնում մաշկաճարպով և ինչպես են հալում, դարձնում **կետայուղ**(Մեր., էջ 234):

ԿԵՐԱՄԻԿԱԾԱԾԿ, ան. **Կերամիկական ծածկույթ ունեցող:** Ներկայացնում ենք **կերամիկաձածկ** ակնթարթային ջրատաքացուցիչը (Հւճ, news.am):

ԿԵՐԱՏԵՂ, գ. **Կենդանուն կերակրելու տեղ:** Ինքը տեսել էր նրան բներում ու **կերատեղերում** դնելու համար պատրաստած թակարդները վերցրած՝ առավոտ կանուխ նավակով դուրս գալու պահին (ԳԹ, 09.09.2016):

ԿԵՐՊԱՍԱՎԱՃԱՌԱՆՈՑ, գ. **Կերպաս վաճառելու վայր՝ տեղ՝ խանութ:** Երբ անցնում էի Վահան Մահտեսյանի հսկայական **կերպասավաճառանոցի** մոտով, Վահանը, ողջունելով ինձ, ասաց.... (ԱՄ, էջ 225):

ԿԵՐՊԱՐԱՆԱԳՈՐԾՎԵԼ, չբ.**Կերպարանք ստանալ, տեղի ունենալ:** Տե՛ս ԳՈՅԱՄԱՔԱՌՈՒՄ-ի օրինակը:

ԿԻԲԵՌ-ԴԻՎԻԶԻԱ, գ. **SS ոլորտում գործող դիվիզիա:** Ավտորալիան ստեղծել է առաջին ռազմական **կիբեռ-դիվիզիան** (Հւճ, news.am):

ԿԻԲԵՌԼՐՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գ. **SS ոլորտի լրտեսություն:** ԱՄՆ-ն Չինաստանին և Ռուսաստանին **կիբեռլրտեսության** մեջ է մեղադրել (Հւճ, news.am):

ԿԻԲԵՌԻՍԱՂ, գ. **SS ոլորտի խաղ:** «ԱրմենՏելը» պարզևատրել է ESWC **կիբեռխաղերի** տարածաշրջանային առաջնության հաղթողին (Հւճ, news.am):

ԿԻԲԵՌՄՊՈՐՏ, գ. **SS ոլորտի մարզաձև:** Ամփոփվել են **կիբեռ-սպորտի** Հայաստանի 5-րդ առաջնության արդյունքները (Հւճ, news.am):

ԿԻԶԱԽԱՐԱՆ, գ. 1. **Կիզելու՝ այրելու միջոցով՝ հետևանքով առաջացած խարան:** 2. ած. **Կիզող՝ այրող խարան:** ... Ծոծրակից ներքև, մի ուսից մյուսը, **կիզախարան** է դրված, և պետք է թողնել, որ բավական երկար այրի (Բ 2, էջ 108):

ԿԻԹԱՌԱՀԱՐՈՒՇԻ, գ. **Կին կիթառահար:** Ելույթ ունեցան **կիթառահարուհի** Կարինե Ալեքսանյանը... (ԳԹ, 03.11.2017):

ԿԻԿՈՍԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Կիկոսի կերպարով բնութագրվող հայություն:** Իմ Կիկոսը կես ճամփին դարձավ Գիքոր, հետ Աստծո տված շնորհով տեր դարձավ իր անվանը (Լևոն Ջավախյան), բայց երբեք չդավաճանեց իր արմատներին (**Կիկոսահայությանը**) (ԼԶ, էջ 47):

ԿԻԱՄՈՆԱԿԱՆԱԶԱՎՈՒՆ, ած. **Կինամոնի՝ դարչինի գույնի կանաչավուն:** ... Ասեղնագործ բաճկոնակ՝ **կինամոնականաչավուն** գույնի կերպասից (Բ 6, էջ 139):

ԿԻՆՈԳԼՈՒԽԳՈՐԾՈՅ, գ. **Գլուխգործոց համարվող կինոնկար:** Բոլոր ժամանակների և ժողովուրդների 10 **կինոգլուխգործոցները** (ՀԱԳ, news.am):

ԿԻՆՈԶԳԵՍ, գ. **Կինոկարահանումներում օգտագործվող զգեստ:** Մերլին Մոնրոյի վերջին **կինոզգեստն** աճուրդում կվաճառվի 500 հազար դոլարով (ՀԱԳ, news.am):

ԿԻՆՈԹԱՆԳԱՐԱՆ, գ. **Կինոյի թանգարան:** Երևանում ստեղծվում է **կինոթանգարան** (Իր., 11.05.2018):

ԿԻՆՈԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Կինոյի ոլորտի լրագրություն:** Երևանում մեկնարկել է «**Կինոլրագրություն** առանց սահմանների» ծրագիրը (ՀԱԳ, news.am):

ԿԻՆՈԽԱՐԴԱՎԱՆԵ, գ. **Դավադրական արարք կինոյի ոլորտում:** Նա հիսուն միլիոն ռուբլի փող է տալիս ու կինոհետաքրքրություն և **կինոխարդավանք** է պահանջում (ՀՄ, էջ 593):

ԿԻՆՈՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Համագործակցություն կինոյի բնագավառում:** Ստորագրվել է Հայաստան-Իրան **կինոհամագործակցության** համաձայնագիրը (ՀԱԳ, news.am):

ԿԻՆՈՇԵՏԱԶԲԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ֆիլմի՝ կինոյի նկատմամբ ցուցաբերած ուշադրություն:** Տես ԿԻՆՈԻՆՏԱՐԴԱՎԱՆՔ-ի օրինակը:

ԿԻՆՈՃԱՇԱԿ, գ. **Կինոյի նկատմամբ ունեցած ճաշակ:** Հաքերները հրապարակել են պրոդյուսերների կատակը Բարաք Օբամայի **կինոճաշակի** մասին (*Հւց, news.am*):

ԿԻՆՈՄԱՏՅԱՆ, գ. **Կինոպատում:** Ցեղասպանության 100-րդ տարելից. 40-օրյա **կինոմատյան՝** Բեռլինի Գորկու անվան թատրոնում (*Հւց, news.am*):

ԿԻՆՈՄԵԶԲԵՐՈՒՄ, գ. **Մեջբերում կինոյի միջոցով:** «Մինչև անվերջություն և դրա սահմաններից դուրս» արտահայտությունը դարձել է լավագույն **կինոմեջբերումը** (*Հւց, news.am*):

ԿԻՆՈՄԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Կինոարտադրությամբ զբաղվող կազմակերպություն:** Կժառանգվի՞ արդյոք **կինոմիությունը** հորից որդուն (*Հւց, news.am*):

ԿԻՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ած. **Կինոյին և մշակույթին վերաբերող:** «Նաիրի» կինոթատրոնը կդառնա **կինոմշակութային** կենտրոն (*Հւց, news.am*):

ԿԻՆՈՄՐՑԱՆԱԿ, գ. **Ֆիլմին շնորհվող մրցանակ:** Ֆաթիհ Աքինի «Սպի» ֆիլմը ներկայացվել է գերմանական **կինոմրցանակ-2015**-ին (*Հւց, news.am*):

ԿԻՆՈՆԵՐՄՈՒԾՈՂ, ած. **Ֆիլմ ներմուծող:** Ռուսաստանը պետք է **կինոներմուծող** լինի և ոչ թե արտահանող (*ՀՄ, էջ 593*):

ԿԻՆՈՇՏԱՄՊ, գ. **Կինոյի շտամպ:** Հոլիվուդյան ֆիլմերի 43 **կինոշտամպ**, որոնք ծիծաղ են առաջացնում (*Հւց, news.am*):

ԿԻՆՈՊԱՏՍԱՌ, գ. **Կինոցուցադրման պաստառ:** Հնդկաստանում ստեղծել են աշխարհի ամենամեծ **կինոպաստառը** (*Հւց, news.am*):

ԿԻՆՈՊԼԱՏՖՈՐՄ, գ. **Կինոցուցադրման հարթակ:** Ստամբուլում կկայանա Հայաստան-Թուրքիա **կինոպլատֆորմի** աշխատաժողովը (*Հւց, news.am*):

ԿԻՆՈՊՐՈԳՅՈՒՄԵՐ, գ. **Ֆիլմի պրոդյուսեր:** Բրիտանացի միլիարդատեր **կինոպրոդյուսերն** ինքնասպան է եղել սնանկացման պատճառով (*ՀԱՂ, news.am*):

ԿԻՆՈՏԱՐԻ, գ. **Կինոյին նվիրված տարի:** «Լեհական **կինոտարի**» փառատունը կրացվի հինգշաբթի Երևանի «Նարեկացի» արվեստի միությունում (*ՀԱՂ, mediagid.am*):

ԿԻՆՈՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ, գ. **Կինոյին հատկացվող ֆինանսավորում:** Հայաստանի ազգային կինոկենտրոնի տնօրեն Գևորգ Գևորգյանը «Ա1+»-ի հետ զրույցում նշեց, որ սա **կինոֆինանսավորման** ամենամեծ հիմնադրամն է (*ՀԱՂ, business.facebook.com*):

ԿԻՊՐԱՀԱՅ, գ. **Կիպրոսում բնակվող հայ:** Ես դեռ սրտիս լիարժեք խոսքն ու երախտագիտությունը չեմ ասել Կիպրոսի և իմ **կիպրահայ** բարեկամների մասին (*ԱՄ, էջ 197*):

ԿԻՊՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Կիպրոսում բնակվող հայություն:** Ապրիլի 24-ը Մեղգոնյանի և առհասարակ **կիպրահայության** կողմից միշտ մեծ հանդիսությամբ էր նշվում (*ԱՄ, էջ 246*):

ԿԻՍԱԲԱՑԱՀԱՅՑ, ած. **Կիսով չափ բացահայտ:** Մաշալլահ, **կիսաբացահայտ** հանդիմանությամբ զարմացան բարեկամներս... (*ՌԳ, էջ 368*):

ԿԻՍԱԲՈՒԿ, ած. **Կիսով չափ բոբիկ:** Ես **կիսաբոբիկ** դպրոց էի գնում Ծմակուտից Շամուտ (*ՀՄ, էջ 184*):

ԿԻՍԱԵՐԱԶԱՅԻՆ, ած. (բնստ.): **Կիսով չափ երազային, կիսաիրական:** Ես բանաստեղծությունների մի ամբողջ շարք եմ գրել այդ **կիսաերազային** աշխարհի մասին (*ՍԳ, էջ 24*):

ԿԻՍԱԷՍԵ, գ. **Էսսեի ժանրին հարող:** Տե՛ս ԼՌԱՐՎԵՍՍ-ի օրինակը:

ԿԻՍԱԹԱՐԹ, ած. , մկբ. **Կիսով չափ թարթված (վիճակում):** .... Արնակալած ձախ աչքը **կիսաթարթ** սառեց .... (*ՌՇ, էջ 192*):

ԿԻՍԱԹՎՈՒՐ, ած. **Կիսով չափ թափուր:** **Կիսաթափուր** փողոցներ (*ԺՄ, էջ 505*):



ԿԻՍԱԺՊՏԱԴԵՄ, ած. **Կիսաժպիտ՝ թեթևակի ժպտացող դեմքով:** Վարդգես Հակոբյանը՝ միշտ **կիսաժպտադեմ**, հանդարտ բնավորությամբ, անում էր իր կարևոր գործը (ՍՍ, էջ 341):

ԿԻՍԱԻՆՔՆԱՎԱՐ, ած. **Կիսով չափ ինքնավար:** .... Հայերը ճանաչվեցին Օսմանյան կայսրության մի քանի **կիսաինքնավար** համայնքներից մեկը (ՓՍ, էջ 42):

ԿԻՍԱԻՋՆԵՆԵԼ, նբ. **Կիսով չափ՝ ոչ լրիվ իջեցնել:** Դուրս նայեցի **կիսաիջեցրած** պատուհանից (Կլին, էջ 69):

ԿԻՍԱԼՈՒՍԱՎՈՐՎԵԼ, չբ. **Կիսով չափ՝ մասամբ լուսավորվել:** .... Աջում վիթխարի **կիսալուսավորված** ճակատամուտք էր, վրան ժամացույցի թվահարթակ (ԺՍ, էջ 581):

ԿԻՍԱԽՈՆԱՐՀԵԼ, բ. **Կիսով չափ խոնարհել:** Քահանայից մի քանի քայլ հետ մնալով՝ Մամիկոնը կանգ առավ ու զվարճալի **կիսախոնարհեց** մեծ ու չոր գլուխը (ՆՍ, էջ 142):

ԿԻՍԱԾԱԳ, ած. **Կիսով չափ ծագած:** .... Գծանկար՝ **կիսածագ** արև լեռան ուսից (ՎՆ, էջ 213):

ԿԻՍԱԾՈՎԱՀԵՆ, ած. **Մասամբ՝ կիսով չափ ծովահեն:** .... **Կիսածովահենները** իրար ճանաչում էին (Դյուսև, էջ 215):

ԿԻՍԱԿՈՆՍՈԼԻԴԱՑՎԵԼ, բ. **Ոչ ամբողջապես կոնսոլիդացվել:** Հայաստանը, ինչպես և անցած տարի, հավաքել է 5.36 միավոր և շարունակում է մնալ այն պետությունների շարքում, որոնք **կիսակոնսոլիդացված** ավտորիտար կառավարում ունեն (Հնգ, news.am):

ԿԻՍԱՀԻՊՆՈՍԱՑՎԱԾ, ած. , մկբ. **Կիսով չափ հիպոսացված:** .... **Կիսահիպոսացված** .... դիտում էր .... (ՌՇ, էջ 219):

ԿԻՍԱՀՄՈՒՏ, ած. **Կիսով չափ՝ ոչ լրիվ հմուտ:** Պետք կգան նաև **կիսահմուտ** սանձահարողներ (ՌՇ, էջ 176):

ԿԻՍԱՃՇՄԱՐԻՏ, ած. **Կիսով չափ՝ մասամբ ճշմարիտ:** Աշխատում էր հնարավորին զանազանել .... Ճշմարիտը **կիսաճշմարիտից** կամ ճշմարտանմանից (ԺՍ, էջ 62):

ԿԻՍԱՄԱՐԱԹՈՆ, գ. **Մարաթնի կես տարածության չափով մրցում:** Գերմանիայի ոստիկանությունը բեռլինյան **կիսամարաթնի** ժամանակ ահաբեկչական հարձակում է կանխել (*Հնգ, news.am*):

ԿԻՍԱՄԱՐԶԱԿԱՆ, ած. **Կիսով չափ մարզական:** Նեգրի **կիսամարզական** հագուստը նախանձելի էր (*ՀՄ, էջ 662*):

ԿԻՍԱՊԱՌԱՎ, ած. **Մասամբ պառավ, պառավության տարիքին մոտ:** .... **Կիսապառավները**, որոնց դիմում են երիտասարդները, շատ ավելի լավ գիտեն սիրել .... (*Բ 8, էջ 28*):

ԿԻՍԱՍՊՈՐՏԱՅԻՆ, ած. **Կիսամարզական:** ....Օդաչուն կաշվե **կիսասպորտային** բաճկոնի օձիքն ականջներին է քաշում (*ՀՄ, էջ 686*):

ԿԻՍԱՍՏՈՐԵՐԿՐՅԱ, ած. **Կիսով չափ ստորերկրյա, գետնի մեջ խրված:** .... Նրան տարավ մի կիսաստորերկրյա խուց (*Դյումա, էջ 74*):

ԿԻՍԱՎԱՆԱԿԱՆ, ած. **Վանականին մոտ, մասամբ վանական:** .... Բնակչի **կիսավանական** կերպարանքը .... (*Բ 2, էջ 432*):

ԿԻՍԱՓՈՒԶ, ած. (փխբ.): **Կիսով չափ դատարկ:** Այն, ինչ կարող էր քարոզել այդ կինը, ընդամենը **կիսափուչ**, շունչը կտրած առակաբանություն է.... (*Մադին, թ. 4, 2017*):

ԿԻՍԱՔԱՅՔԱՅՎԱԾ, ած. **Կիսով չափ քայքայված:** .... Իսկ ինքը՝ Թերեզը, արդեն **կիսաքայքայված**.... (*Մոր., էջ 225*):

ԿԻՐՃԱՀԱՅԱՑ, ած. **Կիրճին նայող: Կիրճահայաց** լանջի վրա վաղուց չորացած բարդիների փայտե կմախքներն են վեր խոյանում .... (*Իր., 21.04.2018*):

ԿԼՈՐԱՏԱՌ, 1. գ. **Կլոր տառ:** 2. ած. **Կլոր տառերով:** .... Ամբողջ օրը գեղագրություն էր անում **կլորատառ** ձեռագրով (*Գոյս. 6, էջ 268*):

ԿՂԶԻԱՇԱՐ, գ. **Կղզիների շարք, իրար հաջորդող կղզիների ամբողջությունը:** .... Նավը թեթևասահ անցնում էր ժայռոտ **կղզիաշարի** մոտով (*Մեր., էջ 316*):

ԿՄԱԽՔԱՊԱՏԿԵՐ, գ. **Կմախքի պատկեր:** Ուիզմոր Քլինիքի լուսավոր միջանցքները կզարդարեն գունեղ **կմախքապատկերները** (*Հնգ*):

ԿՅԱՆՔԱԳԵՏ, գ. (ղիպվ.): **Կյանքը իմացող:** Քո անցած ճամփից՝ մտքով թե գաս ետ // Նոր մղոններում՝ դառնաս **Կյանքազեա** (ՌԿ, էջ 14):

ԿՅԱՆՔԱԳԻՆ, գ. **Կյանքի համար վճարվող գին:** Ամեն շենի տակ, այգիների ծառ ու թփի արմատներին պահ տված ոսկի կար, որ հետո թուրքին ու քրդին տալիս հազվադեպ էր միայն **կյանքագին** դառնում (ԳԹ, 15.06.2018):

ԿՅԱՆՔԱԿԱՆՁ, գ. **Կյանքի կանչ:** Աշխարհը՝ Մանկանց՝ //վաղվա **կյանքականչ**(ՌԿ, էջ 16):

ԿՅԱՆՔԱԿԱՐՈՏ, ած. **Կյանքի կարոտ ունեցող:** Օրեր՝ չարոտ, // ճամփադ՝ կարոտ, Ինչքան մնաս // **Կյանքակարոտ** (ՌԿ, էջ 12):

ԿՅԱՆՔԱՄԵԶ, գ. **Կյանքի միջին հատվածը:** **Կյանքամեջում** սղված երիտասարդություն (Գրքի վերնագիր):

ԿՅԱՆՔԱՊԱՏՈՒՄ, գ. **Կենսապատում:** Կյանքիս վեպը (իրականում **կյանքապատումը**, կենսապատումը կամ հուշապատումը) ես հասցրի մինչև 1998 թվականը (ԱՄ, էջ 532):

ԿՆԱԿՈՐԾԱՆ, ած. **Կնոջը՝ կանանց կործանող:** - Դուք **կնակործան** գիշատիչ չեք, Օբրի (Գոլա. 4, էջ 258):

ԿՆՃՈՒՁՈՒՅԼ, ած. **Կնճիներից կազմված, դրանցով ստեղծված:** Բարձրահասակ աթլետիկ մարմին, սեգ, խրոխտ կեցվածք... կամարակապ, փոքր-ինչ նտրավուն հոնքերի ուղիղ մեջտեղում թաղված, դեպի գմբեթ ճակատը բարձրացող **կնճաճույլ** մի խաչ (ԳԱ, էջ 91):

ԿՈԹՈՂԱՆՄԱՆ, ած. **Կոթողի նման:** .... Դպրապետը երգեց վեհ ու **կոթողանման** շարականը՝ «Խորհուրդ խորին»-ը ....(Սյունի., էջ 33):

ԿՈՒԱԺԵԼ, բ. (ղիպվ.): **Կուլած սարքել:** .... Այստեղ երևի 80-85 տոկոսը կենսագրական է, չնայած տեղաշարժել եմ, կտրել-տարել եմ մի տեղից մյուսը, **կուլածել** եմ, բայց սուսինձը իր ապրած կյանքն է, որ պիտի լցվեր այս գրքի մեջ.... (ԳԹ, 13.04.2018):

ԿՈՂԱՇԱՎԻՂ, գ. **Կողքի շավիղ:** .... Արագ շրջանցեց թումբը և **կողաշավիղով** վազեց դեպի տուն (Դյումա, էջ 572):

ԿՈՂԱՊԱՀԱՐԱՆԻԿ, գ. **Փոքրիկ՝ փոքրածավալ կողապահարան:** ... Ընդառաջ ելավ փորագրագարդ **կողապահարանիկներով** հսկայական գրասեղանի առջևից (*Կլին*, էջ 35):

ԿՈՂՊԵՔԱՎՈՐ, ած. **Կողպեք ունեցող, կողպեքով փակվող:** ... Գրպանից հանեց **կողպեքավոր** թղթապանակ (*Դյունա*, էջ 488):

ԿՈՃԱԿԱԲԱՑ, ած. **Կոճակները բաց՝ չկոճկած:** ... Քամին ծածանում էր նրա **կոճակաբաց** պիջակի փեշերը (*ԺՄ*, էջ 296):

ԿՈՃԱՓԱԿ, ած. **Կոճերը փակող՝ փակած:** ... Սև **կոճափակ** կոստյումներ հագած տղամարդիկ ... (*Դ.*, *Մ.*, էջ 63):

ԿՈՃԳԱՄԵԼ, նր. **Կոճգամով՝ սևեռակով ամրացնել:** ... Բազմաթիվ փայլուն լուսանկարներ էին **կոճգամել** պատին (*Սել.*, էջ 261):

ԿՈՃՂԱՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Կոճղի նմանվելը, կոճղի ձև ստանալը:** ... Կազմվածքի մեջ ի հայտ էր եկել **կոճղանմանություն** ... (*Դյունա*, էջ 211):

ԿՈՄՈՒՆԻՍՏԱՄԵՏ, ած. **Կոմունիստական գաղափարախոսությանը միտված:** Սփյուռահայ գրականությունը այն ժամանակ անծանոթ մի բան էր, ծանոթներն էլ **կոմունիստամետ**, միջակ գրողներ (*ԱՊ*, էջ 106):

ԿՈՆՔԱՄԿԱՆ, գ. **Կոնքի մկան:** Հզոր ատամնաշարով և **կոնքամկաններով** գերմանուհին աջ ու ձախ էր հայտնում... (*ԳԹամ.*, էջ 22):

ԿՈՇՏԱԳԵՄ, ած. **Կոշտ դեմք ունեցող:** Մարդը շատ սովորական երևանցու արտաքին ուներ՝ **կոշտադեմ**, ավելառն (*ԱԱ*, էջ 117):

ԿՈՇՏԱԿԱԶՄ, ած. **Կոշտ կազմ ունեցող:** Հայացքը հազվադեպ է շեղում հաստ **կոշտակազմ** գրքից (*ՀՄ*, էջ 4):

ԿՈՐԱԵՁՐ, ած. **Կոր եզր ունեցող:** Այդ փոքրիկ, սևակաշվե, **կորաեզր** ճամպրուկը, նրա փականքը ինձ ծանոթ էր մանկուց (*Անդին*, թ. 5, 2017):

ԿՌՎԱԽՈՍՔ, գ. **Կովի ժամանակ ասված խոսք:** Ես նրա համուհոտով գրույցների չափ սիրում էի նաև նրա **կովախոսքերը**, որոնք հնչում էին զարմանալի գունաշեշտերով... (*ԳԹ*, 02.09.2016):

ԿՏԱԾՎԱԾՔ, գ. **Կտվածք, կտելու՝ վիտելու՝ ցտելու հետևանքով ստացված նկարները, նախշերը և այլն:** ... Մաշկի կտածվածքի նկարները ... տարբեր են (Դ., Մ., էջ 69):

ԿՏՅԱԳԼՈՒԽ, ած. **Կտուցի նման գլուխ՝ սուր գլխածայր ունեցող:** Այդ պատավ օրիորդը գործածում էր փոքրիկ **կտցագլուխ** ձեռնափայտ ... (Բ 8, էջ 41):

ԿՐԱԲԼՈՒԻ, գ. **Կրե բլուր:** Նրանք մեծ մասամբ ապրում են հարավի **կրաբլուրների** վրա ... (Գղու. 6, էջ 143):

ԿՐԱԿԱՇԻԹ, գ. **Կրակի ցայտ՝ շիթ:** Ընկերս մի կտոր խեժ նետեց բոցերի մեջ, որից մի պատիկ ու նիհարուկ **կրակաշիթ** վեր թռավ (Հ, էջ 133):

ԿՐԱԿՄԱՐԻՉԱՅԻՆ, ած. **Կրակ մարելու հարմարանքի:** Իսկ ժամանակին միացրինք նավի **կրակմարիչային** սիստեմը (ԹՇ, էջ 65):

ԿՐԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **1.Կրային լինելը: 2. Կրային հատկանիշ ունենալը: Կրայնությունը** համարյա պրոֆեսիոնալ հատկություն է նրանց համար ... (Գղու. 6, էջ 143):

ԿՐԻՊՏՈՒՐԺՈՒՅԹ, գ. **Թվային արժույթի մի տեսակ, որը ստեղծվում և վերահսկվում է գաղտնագրային մեթոդներով:** Նյութային ֆոնդային բորսայի օպերատորը **կրիպտոարժույթների** համար հարթակ է ստեղծում (Հւց, news.am):

ԿՐԻՊՏՈՒՐՈՒՄ, գ. **Կրիպտոարժույթի ձեռքբերման բորսա:** Բիթքոինն էժանանում է հարավկորեական **կրիպտոբորսայի** վրա հաքերային հարձակման մասին լուրերից հետո (Հւց, news.am):

ԿՐԻՊՏՈՒՄՆՈՒԹ, գ. **Առցանց խանութ, որտեղ գործարքները կատարվում են կրիպտոարժույթով:** Մոսկվայում առաջին անգամ **կրիպտոխանութ** է բացվել (Հւց, news.am):

ԿՐԻՊՏՈՆԵՐԴՐՈՂ, գ. **Կրիպտոարժույթով ներդրում իրականացնող:** Deutsche Bank-ը **կրիպտոներդրողներին** նախազգուշացրել է հավանական ռիսկերի մասին (Հւց, news.am):

ԿՐԻՊՏՈՇՈՒԿԱ, գ. **Կրիպտոարժույթով գործարքների իրականացումով տիրույթ, հարթակ:** Կրիպտոշուկայում հայաստանյան արմատներով նոր պլատֆորմ կգործարկվի (Հւց, news.am):

ԿՐԻՊՏՈՖԵՐՄԱ, գ. **Կրիպտոարժույթների արտադրության համար օգտագործվող սարքավորումների ծրագրային ապահովման համակարգ:** Չինաստանում անձրևների պատճառով կրիպտոֆերմաները մնացել են ջրի տակ (*Հւց, news.am*):

ԿՐԾԵՐԱԿ, գ. **Կրծքի երակ:** Խոտ էին ուտում, փոքի տակ նրանց կրծերակները վարար-վարար կաթ էին տանում (*ՀՄ, էջ 206*):

ԿՐԿՆԱԵՐԱԶ, ան. **Երագի մեջ երագ տեսնելը:** Խոտերը երագում// կրկնաերագ են տեսնում./ գուրգուրում են խայտացող ծիլերը// չաճած ծաղիկների,... (*ԳԹ, 11.11.2016*):

ԿՐԿՆԱԿԱԶՄ, ան. **Կրկնակի կազմ ունեցող:** Այդտեղից դուրս են բերվում .... սակավաթիվ տպագիր գրքեր և ձեռագրեր (մի մասը նկարագարող, արծաթյա կրկնակազմերով Ավետարաններ) (*Գիպ., դեկտ., 2017*):

ԿՐՃԱՏԱՔԻԹ, ան. **Կրճատ (բնականոն՝ սովորական երկարության) քիթ ունեցող: ... Կրճատաքիթ** միդիներտուիներ (*ՄՏ, էջ 113*):

ԿՈՒՂԲՈՐՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Կուղբ որսալը:** Անիրագործելի երազանքը վերածնվել էր որդու մեջ՝ էլ ավելի տանջալից և ուժգին, երազանքն իրագործելու համար էր նա սկսել կուղբորսությամբ զբաղվել (*ԳԹ, 09.09.2016*):

## Հ

ՀԱԼՈՑԱՄԱՆ, գ. **Հալելու աման:** Այստեղ ժանգոտ կափարիչով սալօջախի .... վրա .... ճենապակե հալոցամաններ .... կային (*ՄՏ, էջ 12-14*):

ՀԱԼՈՑՔԱՅԻՆ, ան. **Ձյան՝ սառույցի հալվելուց գոյացած:** Գյումրիում վթարի պատճառով խմելաջրին խառնվել են արտաքին հալոցքային ջրերը (*Հւց, armenpress.am*):

ՀԱԽՃԱՊԱԿԵՂԵՆ, գ. **Հախճապակուց պատրաստված իրեր:** Այդ սենյակի կահավորանքի մնացած մասը կազմում էին .... պահարանները, որոնց մեջ տեղավորված էին .... հախճապակեղեն և .... ափսեներ (*Գյումիս, էջ 442*):

ՀԱԿԱԱՍՏՂԱԳՈՒՇԱԿ, գ. **Ընդունվածին հակառակ աստղագուշակ: Հակաստղագուշակ՝** կենդանակերպի բոլոր նշանների համար (*Հւց, news.am*):

ՀԱԿԱԲԱԿՏԵՐԻԱԼ, ամ. **Հակամանրէային:** Գիտնականները գտել են խոհանոցային սպասքի լավագույն **հակաբակտերիալ** ծածկույթը (*Հւց, news.am*):

ՀԱԿԱԳԱՂԱՓԱՐ, գ. **Հակառակ գաղափար:** Հայաստանում բազում ուրվականներ են շրջում գաղափարների ու **հակագաղափարների** տեսքով (*Իր., 25.05.2018*):

ՀԱԿԱԳՈՎԱԶԴ, գ. **Վատաբանելը, պարսավելը:** Անգամ դրական ազդեցություն է ունենում **հակագովազդը** (*ԱՍԼ, էջ 232*):

ՀԱԿԱԶԻՆՎՈՐ, գ. **Զինվորի կերպարը ժխտող:** Մաքրեք բանակը **հակազինվորից**, պարոնայք, մաքրեք հակահայից ու հակամարդոց (*Իր., 02.02.2018*):

ՀԱԿԱԹՐԵՆԴ, գ. **Հակառակ միտում, ուղղություն:** Գալիս է «տիկնիկ» վիճակները մերժելու սեզոնը. դիզայներ Թերեզա Ղարաբաղյանը՝ 2018 թվականի աշնան **հակաթրենդների** մասին (*Հւց, news.am*):

ՀԱԿԱՈՌՈՒՊՑԻՈՆ, ամ. **Կոռուպցիան մերժող: Հակակոռուպցիոն** ոլորտում Հայաստանը բարելավել է իր դիրքերը (*Հւց, news.am*):

ՀԱԿԱՄԵՆԵԶՄԵՆԹ, գ. **Վնասաբեր կառավարում:** Սևանը **հակամենեջմենթի** և օլիգարխների բիզնես շահերի զոհ է դարձել (*Հւց, news.am*):

ՀԱՂԹԱՄԱՐՏ, գ. **Հերոսամարտ:** Սակայն հայության այս հատվածի ամենակազմակերպված դիմադրությունը Ախալցխայի **հաղթամարտն** էր (1917-1921թթ) (*Ազգ, 18.05.2018*):

ՀԱՄԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ, ամ. **Համագյուղացիների (կողմից անցկացվող):** Հայրիկն ազատ էր՝ մեզ հետ մասնակցելու **համագյուղացիական** դաշտագնացության .... (*Սյուրմ., էջ 66*):

ՀԱՄԱԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ, ամ. **Երիտասարդության լայն շրջանակ ընդգրկող:** Չիլոյին հուղարկավորեցինք հենց Առագաստից,

համաժողովրդական թաղում էր, ավելի շուտ **համաերիտասարդական** (ԱՊ, էջ 92):

ՀԱՄԱԶԳԵՍՏԱՅԻՆ, ան. **Համազգեստի**: ... Սպասարկում էր հունգարական ոճի **համազգեստային** բաճկոնակով ... մի աղջիկ (Կլին, էջ 206):

ՀԱՄԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Համատեղ հաղորդակցություն**: Այդ ակնթարթին ես մի տեսակ **համահաղորդակցություն** ու նախազգուշացնող հորդորի պես մի բան զգացի (Հ, էջ 68):

ՀԱՄԱՀԻՄՆԱԴԻԲԵԼ, ք. **Համատեղ հիմնադրել**: 2013 թ.-ին **համահիմնադրել** է «Քաղաքացիական պայմանագիր» հանրային-քաղաքական միավորումը (Հմգ):

ՀԱՄԱՆԵՐԴԻՐՈՒՄ, գ. **Համատեղ ներդրում**: Ծրագրի ընդհանուր արժեքը 171 մլն դրամ է համայնքի 4 մլն դրամ **համաներդրումով** (ՀՀ, 12.05.2017):

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Համապատասխանատու լինելը**: Հուշարձանի վրա փորագրված տեքստը հուշում է նաև առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ցեղասպանության իրագործման մեջ կայզերական Գերմանիայի **համապատասխանատվության** մասին ... (Ազգ, 20.04.2018):

ՀԱՄԱՊՐԵԼ, ք. **Ապրումակցել**: Պերճուհին նաև կարող է թափանցել կենդանու էության մեջ, մարդացնել փողոցում անտեր թափառող շանը և **համապրել** նրա հետ: Առհասարակ, Պերճուհին իր հերոսների հետ **համապրելու** անսման ձիրք ունի (ԳԹ, 09.02.2018):

ՀԱՄԱՏԱՂԱՆԻ, ան. **Համարժեք, համապատասխան տաղանդ ունեցող**: Տողացի թարգմանություններից յուրաքանչյուրն իր **համատաղանդ** բանաստեղծի տեքստերն է բանաստեղծականացրել (ԳԹ, 07.07.2017):

ՀԱՄԱՐՏԱԴԻՐՈՂ, գ. **Համատեղ արտադրող, արտադրությանը մասնակցող**: Ի վերջո, հայտնի ճշմարտություն է, այն ֆիլմերն են մեծ ճանաչում գտնում, որոնք **համարտադրողներ** են ունենում (Ազգ, 09.06.2017):



ՀԱՄԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Համատեղ արտադրություն:** ... Պետք է մշակվեն գործարար ծրագրեր, աշխատեն այնպես, որ մեր երկիրը, մեր առաջարկածը կինոարտադրության ու **համարտադրության** համար հետաքրքրական ու գրավիչ լինի(Ազգ, 09.06.2017):

ՀԱՄԵՐԳԱՎԱՅՐ, գ. **Համերգ անցկացնելու վայր:** Ժամանակի ընթացքում մեր **համերգավայրերը** շատացան.... (Առին, թ. 4, 2017):

ՀԱՄԼԵՏԱՆՄԱՆ, ան. **Համլետի նման:** Արվեստագետները, իհարկե, ակնհայտորեն **համլետանման** տիպեր են (Գոյս. 2, էջ 185):

ՀԱՄՕՐԻՆԱԿՈՒՄ, գ. **Ստանդարտացում:** Գրադարձման վերաբերյալ հանձնարարականներ է մշակում **Համօրինական** միջազգային կազմակերպությունը .... (ԶԼ, էջ 131):

ՀԱՅԱԿԵՆՏՐՈՆ, ան. **Հայաստանը՝ հայերին իբրև կենտրոն ունեցող:** Հայաստանը, որն իրոք այս պահին աշխարհի և միջազգային հանրության կենտրոնում է հայտնվել, կկարողանա, ինչպես Նիկոլն ու իր պայքարի ընկերներն էին հայտարարում, դառնալ **հայակենտրոն** գոտի, որին գերտերությունները թույլ կտան խաղալ սեփական խաղը, որոշել իր հարցերը ինքնուրույն .... (Իր., 11.05.2018):

ՀԱՅԱԿԵՐՏԻՉ, ան. **Հայ կերտող:**.... Մխիթար Սեբաստացու և նրա նվիրյալ հետևորդների հայերենակերտիչ ու **հայակերտիչ** 300-ամյա գործունեության մասին (Ազգ, 24.06.2016):

ՀԱՅԱՀԱՐԱԶԱՏ, ան. **Հայ(եր)ին հարազատ:** Այդ քանաստեղծությունները, չսայած իրենց **հայահարազատ** բնույթին, ... նորություն չէին հայ քանաստեղծության մեջ (ՎՆ, էջ 252):

ՀԱՅԱՆԵՐԿԱ, ան. **Հայ բնակիչներ ունեցող:** ... Հայաստանի սահմանները ... ձգվում, հասնում են հայաշատ, **հայաներկա** բոլոր եզերքները՝ բիրլիական մեր երկրից մինչև օվկիանոսից անդին (Իր., 10.03.2017):

ՀԱՅԱՆԿԱՐ, գ. **Հայկական, հային, հայկականը պատկերող նկար:** Տե՛ս **ԽՏԱՆԿԱՐ**-ի օրինակը:

ՀԱՅԱՍՏԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Հայաստանաբնակ հայություն:** Խոսելով դարավերջին **հայաստանահայության** միակուռ ու

միահամուռ ոտքի ելնելու, ազգային անկախ պետականությունը վերականգնելու ... մասին՝ Գր. Ջանիկյանն ասաց ... (ԳԹ, 20.10.2017):

**ՀԱՅԵՐԵՆՆԱԿԵՐՏԻՉ, ան. Հայերեն կերտող:** Տես ՀԱՅԱԿԵՐՏԻՉ-ի օրինակը:

**ՀԱՅԵՐԵՆԱՄԵՐԺ, ան. Հայերենը մերժող:** Հայերենամերժ որոշ պատգամավորներ հայոց լեզվի ոստահարված իրավունքները վերականգնելու մեր պայքարը փորձում էին մեկնաբանել որպես ռուսերենի, անգամ Ռուսաստանի դեմ թշնամանք ... (Իր., 20.04.2018):

**ՀԱՅԼԵՆԴ, գ. Դիսնեյլենդի օրինակով կառուցվելիք ժամանակավայրի առաջարկվող անվանումը:** Հայլենդը պիտի կառուցել Ծիծեռնակաբերդի բլրի դիմաց.... (ԳԹ, 13.04.2018):

**ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄ, գ. Հայտ, դիմում:** Ներկա պահին հայտադիմումների ընդունման գործընթացը դադարեցված է .... (Հրայ, 11.05.2018):

**ՀԱՅՐԱՊԱՏՈՒՄ, գ. Հորը նվիրված ստեղծագործություն(ներ):** Նախերգանքից հետո նա [Շիրազը] իր հայրապատումը, նախորդի նման, բաժանել է գլուխների.... (ԳԹ, 13.04.2018):

**ՀԱՅՐԵՆԱԽՏ, գ. Հայրենիքի նկատմամբ կարոտախտ:** Հայատանը կար, պարտավոր էր լինել, որովհետև որդին ահա հիվանդացավ հայրենախտով (ՀՄ, էջ 336):

**ՀԱՅՐԵՆԱՀԱՅԱՅ, ան. Հայրենիքին ուղղված, միտված:** Քարերն Անհունի հայրենահայաց լուսամուտներն են .... (ԳԹ, 02.02.2018):

**ՀԱՅՐԵՆԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ան. Հայրենական մշակույթին վերաբերող:** ...Անմիջապես մտաբերում եմ հայրենամշակութային մարզումները .... (Ասդին, թ. 3, 2017):

**ՀԱՅՐԵՆԱՈԳԻ, գ. Հայրենի ոգի:** Հայրենասոցիոլոգները ասում են՝ դա հայրենագով պայծառանալու նշան է .... (Ասդին, թ. 3, 2017):

**ՀԱՅՐԵՆԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ան. (դիպվ.): Հայրենական սոցիոլոգիային վերաբերող:** Նկարվում եմ նրանց հետ, ուղարկում հայրենասոցիալական ցանց (Ասդին, թ. 3, 2017):

ՀԱՅՐԵՆԱՍՈՑԻՈԼՈԳ, գ. (դիպվ.): **Հայրենական սոցիոլոգ:** Տեն ՀԱՅՐԵՆԱՈԳԻ-ի օրինակը:

ՀԱՅՐԵՆԻՔԱԿԵՆՏՐՈՆ, ամ. (ճիշտ է՝ հայրենակենտրոն): **Հայրենիքը որպես կենտրոն ունեցող:** Սա վերաբերում է ամբողջ հայությանը, որը պետք է դառնա միաբևեռ՝ հայաստանակենտրոն, **հայրենիքակենտրոն** (Իր., 30.03.2018):

ՀԱՆԴԳՆԱՎՈՒՆ, ամ. **Փոքր-ինչ՝ մասամբ հանդուգն:** Նա արտաքուստ թափթփված էր, **հանդգնավուն** .... (Սել., էջ 242):

ՀԱՆՐԱՆՊԱՍՏ, ամ. **Հանրաշահ:** .... Կոչ եմ անում բոլորին՝ ընտրություն կատարելիս հաշվի առնել, թե ով է **հանրանպաստ** օրենքներ մշակելու և պաշտպանելու ՀՀ քաղաքացուն, և ով է թաքնվելու այդ օրենքի ստվերում (Իր., 10.03.2017):

ՀԱՆՐԱՎՏԱՆԳ, ամ. **Հանրության համար վտանգավոր:** **Հանրավտանգ** հանցավոր գործողություններ իրականացնելու միջոցով ձևավորվել է համատարած վախի մթնոլորտ (Հւց):

ՀԱՆՔԱՀԵՆ, գ. **1. Հանքը ապօրինի շահագործող: 2. Հանքավայրից գողություն անող:** Բոլոր **հանքահենները** մեզանում օտարերկրյա ծագում ունեն (ԳԹ, 29.06.2018):

ՀԱՆՔԱՐՏԱԳՐՈՂ, գ. **Հանքերի արդյունահանությամբ զբաղվող:** Կառավարությունը շատ է սիրում նվերներ մատուցել **հանքարտադրող** ընկերություններին (Հւց, news.am):

ՀԱՆՔԻՇԽԱՆՈՒՀԻ, գ. (փխբ.): **Հանքը տնօրինող կին:** **Հանքիշխանուհին** չի մտածում, որ վերններում անգամ գիտեն, թե ինքը քանի ատամ ունի.... (Հւց):

ՀԱՇՎԵՆԿԱՏՈՒՄ, գ. **Հաշվենկատ լինելը:** .... Չթաքցնելով հասարակությունից իր **հաշվենկատումները** և ստորությունը՝ հանգիստ սեղմում է իր բարեկամների ձեռքը (Բ 2, էջ 369):

ՀԱՌԱՉԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Հառաչելու ձայն:** Օրեր շարունակ զբաղված էի միայն իմ ներքին հորձանքների շառաչը լսելով, որոնք այնտեղ՝ իմ ներսում, աղմկում էին ընդերկրյա **հառաչաձայնությամբ** (Հ, էջ 89):

ՀԱՍՏԱՆԵՐԲԱՆ, ամ. **Հաստ ներբանով, հաստ ներբան ունեցող:**  
... Մոխրագույն կոստյումով էր, ...**հաստաներբան** դարչնագույն կոշիկներով ... (ՍՏ, էջ 317):

ՀԱՎԱՔԱՊԱՏԿԵՐ, գ. **Հավաքական պատկեր, նկարագիր:**  
Մա մեղվի ժրաջանությամբ օր օրի հավաքել ու կայացրել էր մի **հավաքապատկեր** ... (ԳԹ, 02.03.2018):

ՀԱՎԵԼԱԿԱՌՈՒՅՈՒՄ, գ. **Հավելյալ կառույց:** Ես իմ կյանքի ընթացքում կառուցել եմ Մոնումենտի իմ կոռպերատիվ բնակարանը, շենքին **հավելակառուցումով** նոր հարկ կառուցել... (ՍՍԼ, էջ 19):

ՀԱՎԵԼԱՀԱՄ, գ. **Հավելյալ համ:** Գիշերվա կեսին արթնացա, դեռ զգում էի երանության **հավելահամը**... (Հ, էջ 27):

ՀԱՎԵՐԺԱՀՈՍՈՒՄ, ամ. **Հավերժահոս, հարահորդուն, հավերժ հոսող:** Ես նույն քամին չեմ // այլ ջրերի պես **հավերժահոսուն**... (ԳԹ, 16.02.2018):

ՀԱՎԿԻԹԱԶԱՓ, ամ. **Հավկիթի մեծության:** Թոռոմած պարանոցին **հավկիթաչափ** վահանագեղձը խոսելու ժամանակ շարժվում է վեր ու վար (ԳՍ, էջ 75):

ՀԱՏԿՈՒԹԵՆԱԶՐԿՈՒԹՅՈՒՄ, գ. **Հատկությունից, էությունից գուրկ լինելը:** Այս առումով, Մուզիլի հերոսի՝ Ուրիխի **հատկութենազրկությունը** պետք է մեկնաբանել որպես ռեակցիա, հակազդեցության կերպարանազրկությանը (ԳԹ, 27.42.2018):

ՀԱՐԳԱՄԵԾԱՐՈՒԹՅՈՒՄ, գ. **Հարգամեծար լինելը:** ... Ձգտում էի մաքրություն, ազնվականություն ու **հարգամեծարություն** ամեն ինչի մեջ ներարկել... (Հ, էջ 105):

ՀԱՐԴԱՐԱՄԵՆՅԱԿ, գ. **Հարդարվելու՝ հարդարանքի սենյակ:**  
... Ես գերադասեցի հսկել նրա **հարդարասենյակը**(ԺՍ, էջ 259):

ՀԱՐԿԱԶԱՓ, ամ. **Հարկի՝ դատիկոնի չափ:** **Հարկաչափ** բարձրությամբ բաց վերանդայում ... պատմեց երեկվա տղայի մասին (ՍՏ, էջ 71):

ՀԱՐԿԱՍԱՆԴՈՒԴՔ, գ. **Հարկերի (միջև ձգվող), հարկերը իրար միացնող սանդուղք:** Քարե **հարկասանդուղքով** իջա խավար, խոնավ նկուղը ... (Մյոսթ., էջ 156):

ՀԱՐՃԱԲԱՐՈ, ած. **Ստրկամիտ, ստրկաբարո:** ... Մեր մեծա-  
քանակ այրերի **հարճաբարո** գործունեության արդյունքում ... (ԳԹ,  
08.12.2017):

ՀԱՐՅՈՒՐԱՇԱՏ, ած. **Հարյուրավոր:** Կուսակցություն **հարյու-  
րաշատ** // էլ ոնց շինես Նոր Արտաշատ (ՌԿ, էջ 24):

ՀԱՐՊՈՒՆԱԶԱՐԿ, գ. **Հարպունով՝ որսատեգով խփելը:** ...  
Դիտապահակները տախտակամածին գտնվողներին հայտնեցին,  
որ ... որսամակույկներից մեկը կետածուկ է **հարպունազարկ** արել  
(Մեր., էջ 227):

ՀԱՐՊՈՒՆԱԹՈԿ, գ. **Հարպունի՝ որսատեգի թոկ:** ... Ձյութը  
... ներծծելու դեպքում ... **հարպունաթոկը** հարկ եղածից ավելի է  
կոշտանում ... (Մեր., էջ 197):

ՀԱՐՊՈՒՆԱԶԻԳ, գ. **Հարպունով՝ որսատեգով որս անող,  
հարպուն ձգող՝ գցող:** Մեր **հարպունաձիգներից** մեկն ասում է, թե  
Շպիցբերգենի ափերի մոտ մի կետածուկ է խփել (Մեր., էջ 226):

ՀԱՐՑԱԴՐՈՒՅԹ, գ. **Հարցադրում, առաջ քաշված դրույթ:**  
... **Հարցադրույթ**, որի ... հիմնավորման համար առատ նյութ է  
մատուցվում ... (Հայրունի, էջ 17):

ՀԱՐՑԱԽՈՒՅՍ, ած. **Հարց տալու հնարավորությունից խույս  
տվող, հարցից խուսափող:** ... Հայր ու աղջիկ փոխանակվում էին  
**հարցախույս** ու անվստահ հայացքներով (Բ 10, էջ 710):

ՀԱՑԱԲՈՎԻՉ, գ. **Հաց թխելու հարմարամք:** Գիտես, քույրս չի  
կարող տրոմբոնը տարբերել **հացաբովիչից** (ՀՄ, էջ 18):

ՀԱՑԱՊԱՇՏ, ած. **Հացը պաշտող:** Մենք հացասեր ժողովուրդ ենք,  
**հացապաշտ** ժողովուրդ, բայց հացը չենք խնայում (ԳԹ, 01.12.2017):

ՀԱՑԱՍԵՐ, ած. **Հացը սիրող:** Տե՛ս ՀԱՑԱՊԱՇՏ-ի օրինակը:

ՀԱՓՇՏԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Հափշտակված լինելը, հափշ-  
տակվածի հատկանիշը:** ... **Հափշտակվածությամբ** վիճում էր  
առօրյա գործերի մասին (Կուսկեր, էջ 203):

ՀԵԳՆԱԾԱՂՐԱԼԻՑ, ան. **Հեգնական և ծաղրալից:** Սովորական **հեգնածաղրալից** կեցվածքն ընդունելով՝ նա արագ-արագ ասաց... (Անդին, թ. 5, 2017):

ՀԵԳՆԱՀՈՐԴՈՐ, ան., մկբ. **Հեգնական և հորդորական:** Տեն ԳՐԱԴՐԱՆՔ-ի օրինակը:

ՀԵԼՈՒՆԱԳՈՐԾ, ան. **Հելունով գործած:** **Հելունագործ** տիկնիկները կրում են Արևմտյան Հայաստանի նահանգների ու քաղաքների անունները .... (Իր., 24.10.2017):

ՀԵԾԱՆՎԱԵՐԹ, գ. **Հեծանիվներով երթ:** ՎիվաՄել-ՄՏՍՍ-ն աջակցել է «Փողկապ և քամի» **հեծանվաերթին** (Հւճ, news.am):

ՀԵԾԱՆՎԱԽՈՒՄԲ, գ. **Հեծանիվների՝ հեծանվորդների խումբ:** **Հեծանվախումբը** խշշոցով անցավ ձիուց (ՀՄ, էջ 149):

ՀԵԾԱՆՎԱԿԱՅԱՆ, գ. **Հեծանիվներ կայան:** Երևանում կբացվեն առաջին **հեծանվակայանները**. կկազմակերպվի հեծանվային արշավ (Հւճ, news.am):

ՀԵԾԱՆՎԱԿԱՅԱՆԱՏԵՂԻ, գ. **Հեծանիվների կայանելու վայր:** Հայաստանում բացվել է առաջին մասնազիտացված **հեծանվակայանատեղին** (Հւճ, news.am):

ՀԵԾԱՆՎԱՃԱՆԱԴԱՐՀՈՐԴ, գ. **Հեծանիվով ճամփորդող:** Աղբբեջանցի **հեծանվաճանապարհորդին** ծեծել են Աֆրիկայում (Հւճ, news.am):

ՀԵԾԱՆՎԱՄԱՐԱԹՈՆ, գ. **Մարաթոն հեծանիվներով:** Կանադայում անհայտ անձը կրակել է **հեծանվամարաթոնի** մասնակիցների վրա (Հւճ, news.am):

ՀԵԾԱՆՎԱՆԱՎԱԿ, գ. **Ջրային փոխադրամիջոց:** Սևանա լճում քաղաքացիները **հեծանվանավակով** հեռացել են ափից և չեն կարողանում վերադառնալ (Հւճ, news.am):

ՀԵԾԱՆՎԱՏԱԲՄԻ, գ. **Որպես տաքսի ծառայող հեծանիվ:** Բրյուսելում նախատեսում են **հեծանվատաքսի** գործարկել (Հւճ, news.am):

ՀԵԾԱՆՎԱՏՐԵՆԱԺՈՐ, գ. **Հեծանվային մարզասարք: Հեծանվատրենաժորի** վրա մարզումները կարող են երիկամները վնասել (Հւճ, news.am):

ՀԵԾԵԼԱԲԱԺՆՅԱԿ, գ. **Հեծյալ բաժնյակ:** Ետ նայելով տեսաթրքական մի **հեծելաբաժնյակ** .... (Մյուրւ., էջ 141):

ՀԵՂԵՂԱԹԱՓ, ած. 1. **Հեղեղ թափող, հեղեղաբեր:** 2. (փխբ.): **Հեղեղը՝ որևէ չարագուշակ բան արգելակող՝ լիցքաթափող:** .... Հավաքվել էին համարյա բոլոր անձինք այն դրամայի, որի իմաստը, **հեղեղաթափ** այդ գոյությունների հենց հունի մեջ թափված, հայտնի էր .... (Բ 6, էջ 331):

ՀԵՂԵՂԱՆՑՔ, գ. **Հեղեղի բացած անցք: Հեղեղանցքի** նման այս փողոցի ներքևի ծայրում .... գտնվում էր Շողակաթ հորաքրոջ տունը(Մյուրւ., էջ 95):

ՀԵՆԱԽՈՌՈՂ, գ. **Հենվելու խոռոչ:** .... Թիկնեց հինավուրց .... փառահեղ մամոռնաստարանին, .... գլուխը հենեց հնամաշ գրանիտե **հենախոռոչին** .... (ՌՇ, էջ 212):

ՀԵՆԱԿԵՐՏՎԱԾՔ, գ. **Հենակառույց:** Դիեզոն սկսում է **հենակերտվածքներ** և կաղապարներ պատրաստել եղբոր ստեղծագործությունների համար (Ազգ, 27.10.2017):

ՀԵՆԱՄԱՍ, գ. **Հենվելու՝ հիմքի մաս:** Տե՛ս ԽԱՉԿԱՄԱՐ-ի օրինակը:

ՀԵՆԱՑԱՏԿՈՒՄ, գ. (փխբ.): **Հենացատկ, թռիչք:** Այդ **հենացատկումը**, որը թոցնում է Ձեզ, մարդկության մեջ մեծագույն ունեցվածքն է, որ յուրաքանչյուր ոք ունի (Հ, էջ 139):

ՀԵՇՏԱՊԱՐԱՐ, ած. **Հաճելիորեն գեր՝ պարարտ:** Կեսգիշերին նա դառնում է բարի ամուսին՝ .... պատկերացնելով .... փարիզյան .... սրունքի **հեշտապարար** կյուրությունը (Բ. 2, էջ 345):

ՀԵՌԱԳՐԱՁՈՂ, գ. **Հեռագրասյուն:** Ես գիտեի ամեն մի քար ու ճեղք ...., գլիցինա ու **հեռագրաձող**(Մյուրւ., էջ 153):

ՀԵՌԱԽՈՍԱՊԱՀԱՐԱՆ, գ. **Հեռախոսի պահարան:** Կաբելային **հեռախոսապահարանի** կափարիչը բացվեց (Կլին, էջ 304):

ՀԵՌԱԽՈՍԱԲԱՐՏ, գ. **Հեռախոսի քարտ:** Դոն Պիպոյի սպանության նախապատրաստության մեջ մեղադրվող խումբն օգտագործել է այլ երկրի բջջային **հեռախոսաքարտեր** (*Հմց, news.am*):

ՀԵՌԱՀԱՂՈՐԴՈՒՄ, գ. **Հաղորդում հեռավորության վրա:** **Հեռահաղորդման** ռադիոսարք էր եղել շեյթանի «ընծան» (*ՌԿ, էջ 51*):

ՀԵՌԱՀԱՅԱՑՈՒՄ, գ. **Հեռահայաց լինելը, հեռուն տեսնելը:** **Հեռահայացումն** ու կանխատեսումը բանաստեղծին .... գատում են սովորական ամբոխից .... (*Հայրունի, էջ 15*):

ՀԵՌԱԶՈՒ, ան. **Հեռուն՝ հեռու վայրեր չվող:** .... Կանգնել էր բոլորովին անշարժ, մտածկոտ ու մենավոր, ինչպես **հեռաչու** թռչունը (*Գոլա. 5, էջ 706*):

ՀԵՌԸՆԿԵՑ, ան. **Հեռագնա:** Բիատրիչեի պատկերը նահանջելու պես տեղի էր տվել՝ .... դառնալով ավելի սովերակերպ, ավելի **հեռընկեց** ու դժգունած (*Հ, էջ 121*):

ՀԵՌՈՒՍՏԱԱԿՆԱՐԿ, գ. **Հեռուստատեսային ակնարկ:** Զորավար Անդրանիկի արձանի մոտ հիշեցի հեղինակին՝ լուսահոգի Միքայել Ավետիսյանին, որի մասին ժամանակին **հեռուստաակնարկ** էի եթեր արձակել (*ՄՀ, էջ 42*):

ՀԵՌՈՒՍՏԱԱՌԵՎՏՈՒՐ, գ. **Հեռուստատեսության միջոցով կատարվող առևտուր:** Ընդամենը այդքանն իմանալուց հետո **հեռուստաառևտրի** արագացված դասընթացներ անցա և աշխատանքի ընդունվեցի նրա իսկ ընկերությունում (*Ասդիս, թ. 3, 2017*):

ՀԵՌՈՒՍՏԱԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Հեռուստատեսությամբ՝ տեսակապով իրականացվող բժշկություն:** ԱՄՆ-ից մասնագետները հայ ակնավիրաբույժներին օգնում են **հեռուստաբժշկության** օգնությամբ (*Հմց, news.am*):

ՀԵՌՈՒՍՏԱԳՈՒՇԱԿ, գ. **Հեռուստատեսությամբ կանխատեսում անող, հեռուստատեսային գուշակ:** «Ռոսիա-24»-ը **հեռուստագուշակ** Մեդվեդևն իսկապես Մոսկվան վստահել է Սոբյանինին (*Հմց, news.am*):

ՀԵՌՈՒՍՏԱԴԱՍ, գ. **Դաս հեռուստատեսությամբ:** Այս ընթացքում ունեցել է ռադիո և **հեռուստադասեր՝** նվիրված բնությանն ու բնապահպանությանը (*ՄՀ, էջ 7*):



ՀԵՌՈՒՍՏԱԴԻՐՎԱԳ, գ. **Հեռուստատեսային դրվագ:** Մեր գրույցի ընթացքում ակամա հիշում էի **հեռուստադրվագներ**, աղքատ ընտանիքին օգնություն են տարել ... (Իր., 20.10.2017):

ՀԵՌՈՒՍՏԱԵԹԵՐ, գ. **Հեռուստատեսային եթեր:** Հայկական **հեռուստաեթերից** հայտնի գեղեցկուհիներ, որոնք դեռ ամուսնացած չեն (Հւց, news.am):

ՀԵՌՈՒՍՏԱԻՐԱՎՈՒՆՔ, գ. **Հեռուստատեսային իրավունք:** Անգլիայի Պրեմիեր լիգան **հեռուստաիրավունքի** վաճառքից կստանա 5,13 միլիարդ ֆունտ (Հւց, news.am):

ՀԵՌՈՒՍՏԱԼՈՒՐ, գ. **Հեռուստատեսությամբ սփռվող լուր:** «Աղբ եթերից» ռուսական **հեռուստալուրերին**՝ «ցինիկ կողմնակալության» համար (Հւց, news.am):

ՀԵՌՈՒՍՏԱԿԻՆՖՈՐՈՒՄ, գ. **Հեռուստատեսային կինֆորում:** Միջազգային «Միասին» **հեռուստակինֆորումի** հաղթողների թվում հայեր կան (Հւց, news.am):

ՀԵՌՈՒՍՏԱՄՐՑԱՆԱԿ, գ. **Հեռուստատեսության կողմից տրվող մրցանակ:** «Մաշան և արջը» մուլտֆիլմը միջազգային **հեռուստամրցանակ** է ստացել (Հւց, news.am):

ՀԵՌՈՒՍՏԱՇՈՒՒ, գ. **Հեռուստատեսային շոու:** Հեռուստաշոուի ժամանակ ակրոբատուհին բարձրությունից ընկել է կրակի մեջ (Հւց, news.am):

ՀԵՌՈՒՍՏԱՊԱՍՏԱՌ, գ. **Հեռուստատեսային պաստառ:** Աթոռին նստած մարդու պատկերը **հեռուստապաստառին** ավելի խոշոր է, քան առաջ (ՀՄ, էջ 36):

ՀԵՌՈՒՍՏԱՊՈՒՄ, գ. **Հեռուստատեսային պոեմ:** Արտեմ Հարությունյանի «**Հեռուստապոեմներ...**» ժողովածուն երևույթ է համաշխարհային պոեզիայում (ԳԹ, 30.09.2016):

ՀԵՌՈՒՍՏԱՊՐՈԴՅՈՒՄԵՐ, գ. **Հեռուստատեսային հաղորդման պրոդյուսեր:** Ես չեմ փախչում, բոլորի գումարները տալու եմ. **հեռուստապրոդյուսերը**՝ չկայացած ուղևորության մասին (Հւց, news.am):

ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՒԹԵՐ, գ. **Հեռուստատեսության և ուղիոյի երթեր:** Գրականությունն անհետացել է հանրահռչակման մեր տրիբուն **հեռուստաուղիներին**, մշակույթը մեծավ մասամբ վերածվել է ցածրորակ ժամանցի ... (ԳԹ, 09.09.2016):

ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՒՄ, գ. **Հեռուստատեսությամբ և ուղիոյով հեռարձակվող խաղ:** Քաղաքացիները բողոքում են «Օդից փող»-ի դեմ. ՄԻՊ-ը **հեռուստաուղիոյաղերի** ոլորտը կարգավորող նախագիծ է մշակել (ՀԱՅ, news.am):

ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Հեռուստատեսությամբ և ուղիոյով իրականացվող հաղորդակցություն:** Քննարկվել են **հեռուստաուղիոյ հաղորդակցության** Հայաստանի և Արցախի կարգավորիչ մարմինները (ՀԱՅ, news.am):

ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԱՐՈՋԻՉ, գ. **Հեռուստատեսությամբ քարոզչությամբ զբաղվող:** Թուրքիայում ձերբակալվել է սկանդալային **հեռուստաքարոզիչը** (ՀԱՅ, news.am):

ՀԵՎՀԵՎՈՒՔ, գ. (փխբ.): **Խառնաշփոթ:** Սկսվել էին դաժան օրերը, աղետ, Սումգայիթ, արդեն քլթքլթացող պատերազմական **հնկնուք** (ԱՊ, էջ 133):

ՀԵՎՈՒՆ, ած. **Հնկնուն, հաճախ՝ շարունակ հնող, հնկնացող:** ... Սարսափահար ու **հնուն** ձայնով ասաց ... (ՄԻՊ., էջ 123):

ՀԵՏԱԳԾԵԼ, բ. **Հետագիծ թողնել:** Գևորգը թրծվեց բազում մարտերում, **հետագծեց** իր մարտական ուղին՝ նվիրյալ զինվորների հետ՝ ... շատ այլ գյուղեր և շեներ Հայաստանում ու Արցախում, Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մուսսահայաց եզերքում (Իր., 17.10.2017):

ՀԵՏԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ած. **Արտադրությանը հաջորդող:** Նա արդեն նկարահանել է նոր տեսահոլովակը. այն **հետարտադրական** փուլում է (ՀԱՅ):

ՀԵՏՏԱՂԱՅԻՆ, ած. **Խաղին հաջորդող:** Լրացուցիչ ժամանակը ավարտվեց ոչ ոքի, իսկ **հետխաղային** 11 մետրանոցների հարվածաշարում ավելի դիպուկ էին... ֆուտբոլիստները (TV ալիք, 28,05, 2018):

ՀԵՏՆՈՐԴՈՒՀԻ, գ. **Կին հետնորդ, հետնորդ կին:** .... Արդեն նրա **հետնորդուհին** էր համարվում (*Կաֆկա, էջ 346*):

ՀԵՐԱԶԱՐԴ, գ. **Գլխի մազերի զարդ:** .... Նկատեց .... ճերմակ **հերազարդով** դեռահաս մի աղախին աղջկա .... (*ԺՄ, էջ 297*):

ՀԵՐԹԱՇՐՋԱՆ, գ. **Շրջափուլ:** Այժմ արդեն հանրահայտ՝ «Նոբելյան **հերթաշրջան**» երեկոներից յուրաքանչյուրի ընթացքում ընթերցվում են մրցանակակիր հեղինակների երկերի լավագույն հատվածները .... (*ԳԹ, 11.04.2017*):

ՀԵՔԻԱԹԱԽՈՒՄԲ, գ. **Հեքիաթների խումբ:** Ինը տարբերակ ունեցող **հեքիաթախումբ** .... այդպես էլ կոչվում է՝ «Իրեք հավկիթ».... (*ՊԲՀ, 2, էջ 92*):

ՀԵՔԻԱԹԱՐԱՆ, գ. **Հեքիաթների շտեմարան, գետեղարան:** [Սելմա Մելիքյանը] .... համակարգում է 2013թ. Աննա Թուրայի նախաձեռնած հայերեն «փոքրիկ **հեքիաթարան**» կայքէջը .... (*Իր., 27.03.2018*):

ՀԻԱՄՐՄՈՒՆՋ, ած. **Հիացմունքով մրմնջացող:** .... Շատ էր սիրում լսել հորաքույրների **հիամրմունջ** հպարտությունը.... (*Գոլու, 2, էջ 14*):

ՀԻՄՆՈՒՂԻ, գ. **Հիմնական ուղի:** Սուրենյանցի **հիմնուղին** եղել է գեղարվեստը (*ՇԽ, էջ 3*):

ՀԻՊԵՐԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Գերակտիվություն, չափազանց ակտիվ լինելը:** Միջերկրածովյան սննդակարգը կօգնի կանխել երեխաների **հիպերակտիվության** ախտանիշը (*Հւց, news.am*):

ՀԻՊԵՐԱՐԺԵՋՐԿՈՒՄ, գ. **Գերարժեզրկում:** 1 կգ գազարը՝ 3 մլն բոլիվար. Վենեսուելայում **հիպերարժեզրկման** պատճառով մարդիկ միլիոններ են ծախսում ամենօրյա ապրանքների գնման համար (*Հւց, tert.am*):

ՀԻՊԵՐԳՆԱՃ, գ. **Չափազանց մեծ չափերի հասնող գնաճ:** Զինքաբվեին նորից սպառնում է 500 մլրդ տոկոսի **հիպերգնաճ** (*Հւց, news.am*):

ՀԻՊԵՐՄԱՐԿԵՏ, գ. **Չափազանց մեծ խանութ:** Թբիլիսիի Carrefour **հիպերմարկետում** կոտրվել է ձկներով լցված ակվարիումը (*Հւց, news.am*):

ՀԻՍՈՒՍԱՎԱՐԻ, մկբ. **Հիսուսի նման:** Բռիդ մեջ առած ում ես տանջելու, Ում ես խաչելու **հիսուսավարի** (ՀՄ, «Սեզամ բացվիր»):

ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄԻԹՅՈՒՆ, գ. **Հիվանդանոց(ներ)ի կառուցում:** Ուիզմոր Քլինիքը կառուցված է **հիվանդանոցաշինության** անգլիական նորմատիվներով (Հմց):

ՀՂԱՆԿՅՈՒՆ, գ. **Տեսակետ, տեսանկյուն:** .... Նկարչական ու բանաստեղծական փորձառությամբ ստեղծած իմ աշխարհը կարող եմ նաև այս **հղանկյունից** հրամցնել .... (ԳԹ, 14.04.2017):

ՀՄԱՅԱՆՇԱՆ, գ. **Ապագայի վրա ազդելու, հմայելու հատկություն ունեցող նշան:** Թանկարժեք քարերը կլիկկիացիների թվում էին **հմայանշաններ** (ԹԶ, էջ 186):

ՀՅՈՒՂԱԿԱՆՄԱՆ, ած. **Հյուղակի նմանվող:** Տատիկս հետո մեր **հյուղականման** տանը մենակ մնաց (ԳԹ, 07.07.2017):

ՀՆԱՆՄԱՆ, ած. **Հնի նման, հնին հմանվող, հնի տեսք ունեցող:** Ճարտարապետը երազել էր ստեղծել մի նոր շենք, որ կատարելապես **հնանման** լիներ (Գու. 4, էջ 14):

ՀՆԱՐԺԵՔ, ած. **Հին և արժեքավոր:** .... Նա այցելում էր .... արևմտյան ծայրամասը ....., ուր **հնարժեք** իրերի բազմաթիվ խանութներ կան (Գու. 2, էջ 44):

ՀՆՈՑԱՀՈՍԱՆՔ, գ. **Հնոցների հոսանք՝ իրար հաջորդող հնոցների շարք:** Ալավերդի: **Հնոցահոսանքները** փայլատակում էին մթին կիրճերում (Մյուր., էջ 17):

ՀՆՉՅՈՒՆԱԶԱՆԳՎԱԾ, գ. **Հնչյունների զանգված:** Ինչպես թանձր ձյունն է վար թափվում, այնպես էլ դաշնամուրի գահավիժող **հնչյունազանգվածը** բացում է երգի երկրորդ կեսը .... (Իր., 06.04.2018):

ՀՈԳԵԲԱՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ, ած. **Հոգեբանական և փիլիսոփայական:** .... Նրանք վերլուծում են ֆաշիզմի առաջացման **հոգեբանափիլիսոփայական** հիմքերը (ՀՄ, էջ 612):

ՀՈԳԵԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Հոգեբանական դիվանագիտություն:** Տե՛ս ԿԵՆՍԱԷՆԵՐԳԻԱ-ի օրինակը:

ՀՈԳԵԽՆԱՌՆՎԱԾՔ, գ. **Հոգեկերտվածք**: Ավելի հոգևոր **հոգեխառնվածքի** տեր մարդիկ էլ կասկած չունեն, որ երկրի (ու նրա ժողովրդի) քաղաքական մակարդակը որոշվում է սրբավայրերի գոյակերպով (Իր., 21.04.2017):

ՀՈԳԵՍՓՈՓ, ած. **Հոգին սփոփող՝ մխիթարող**: ... Քաշվել էր միջանցքի ամենահեռավոր անկյունը՝ չլսելու համար այն **հոգեսփոփ** խոսքերը .... (Կուսկեր, էջ 361):

ՀՈԳԵՎԱՅԵԼՔ, գ. **Հոգեկան վայելք**: Ծովի կողքին լինելը մի հատուկ **հոգեվայելք** է (TV այլք, 05.04. 2018):

ՀՈԳԵՏԱՐԱՆ, ած. Այստեղ՝ **հուզախոսով**: Ով գիտե, թե ես դեռ ինչքան այդպես մոլոր ու **հոգետարան** կմնայի վերելակի խցիկում .... (Մոր., էջ 468):

ՀՈԳՍԱԲԵՌ, գ. **Հոգսի բեռը**: Դարեր ` նախնյաց Մասիս լեռը՝ Վրան՝ հայոց **հոգսաբեռը** (ԹԿ, էջ 11):

ՀՈԳՍԸՆԿԵՐ, գ **Հոգսին ընկեր, կարեկից**: Կանգնեցրել էր գյուղխորհրդի նորընտիր նախագահին ու մեծի իրավունքով խրատել ու հանդիմանել, թե էս ամռան շոգ ու կրակ եղանակին ինչո՞ւ գյուղացու հոգսին **հոգսընկեր** չես դառնում, ինչո՞ւ առու հանել չես տալիս, որ ջուրը գյուղացու արտը հոսի.... (ԳԹ, 01.07.2016):

ՀՈԴԱՔՍԱՆՅՈՒԹ, գ. **Հողերին քսելու նյութ, հողերի քսանյութ**: ...Մարդ այդքան հետաքրքրվում է ... Անուշահոտ **հողաքսանյութերով** ....(ՌՇ, էջ 159):

ՀՈՂԱԳՈՐՇԱԳՈՒՅՆ, ած. **Հողի նման գորշագույն, հողի գորշ գույնով**: Ահա նա մտավ սենյակ: ...**Հողագորշագույն** դեմք՝ փոս ընկած այտերով(Կլին, էջ 121):

ՀՈՂԱՃԱՆԱՊԱՐՀ, գ. **Հողն՝ անծածկույթ ճանապարհ**: ... Ինքը ոչ պակաս չարչարանքով էր առաջ շարժվում, քան երեկ՝ **հողաճանապարհով** (Կաֆկա, էջ 10):

ՀՈՂԱՏՈՒ,գ. (դիպվ.): **Հողը տվող՝ հանձնող**: Լավ, այսքան հող չունենք, այսքան **հողատուներ** որտեղի՞ց ունեցանք.... (Ազգ, 23.12.2016):

ՀՈՂԱՏՎՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Հողեր տալը՝ հանձնելը:** Ո՞վ ասաց, որ **հողատվությունը** խաղաղության հաստատման հիմքն է լինելու (*Ազգ, 23.12.2016*):

ՀՈՍՔԱԶՈՒՐ, գ. **Արտահոսող օգտագործած ջուր:** Դրանք Այսթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատից դուրս եկող **հոսքաջրերն են ....** (*ՀՄԳ*):

ՀՈՏԱԶԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Հոտի զգացողություն:** Դա պետք է որ մի տեսակ **հոտազգացողություն** լինի կամ դրա պես մի բան.... (*Հ, էջ 71*):

ՀՈՐԴԱՆԱՆԱՀՊԱՏԱԿ, գ. **Հորդանան պետության հպատակ:** ...Նա **հորդանանահպատակ** չէր եղել, արաբներն էլ չգիտեր, լուսավորչական եկեղեցու հայրերից էր (*ԱՄ, էջ 364*):

ՀՊԱՐՏԱԽՈՍ, ամ. **Հպարտությամբ խոսող:** ...Մինչև վերջին շունչը մնաց իր ժողովրդի ցավին ու հոգսին մշտապես արձագանքող, հաջողություններով **հպարտախոս** մտավորական (*ԳԹ, 08.07.2016*):

ՀՐԱՇԱԿԵՐՊ, ամ. **Հրաշքանման, ինչպես հրաշք:** Նա իր աղջկա **հրաշակերպ** փրկությունը նախախնամության մի շնորհ էր համարում (*Դյունես, էջ 353*):

ՀՐԵԱՐԱԲԱԿԱՆ, ամ. **Արաբների և հրեաների միջև ընթացող:** Ասեմ, որ դա 1967-ի **հրեաարաբական** «կայծակնային» պատերազմի օրերն էին (*ԱՄ, էջ 333*):

ՀՐՈՒՇԱԿԱՆՈՑ, գ. **Հրուշակներ պատրաստելու և վաճառելու՝ մատուցելու վայր:** .... **Հրուշականոց** մտան ուժերը թարմացնելու (*Գոլու. 2, էջ 250*):

ՀՐԻԶԱԶԳԱՅԱԿԱՆ, ամ. **Զգացմունքային և հուզառատ:** Իմ կարծիքով, ելույթս շատ **հուզազգացական** ստացվեց (*ԱՄ, էջ 277*):

ՀՐԻԶԱԽԱՆԻ, ամ. **Հուզառատ, հուզումնալից:** **Հուզախանդ** խոսքեր էին միտքս գալիս, բայց ես անկարող էի դրանք արտաբերել (*Հ, էջ 162*):

ՀՐԻԶԱՊՐՈՒՄ, գ. **Հուզական ապրում:** Ըստ այդ **հուզապրումների** էլ ձևավորվում են նրա բանաստեղծության տեսակները .... (*ԳԹ, 27.10.2017*):

ՀՈՒԶԱՎԻՃԱԿ, գ. **Հուզված՝ հուզումնալի վիճակ:** .... Մի որոշ ուղեղային **հուզավիճակ՝**կանանց հետ կապված (Գոլու. 4, էջ 13):

ՀՈՒԶԱՏՐՈՓ, ած. **Հուզումնալից, հուզմունքից տրոփող:** Տեն ԿԱՐՈՏԱԲՈՒՅՐ-ի օրինակը:

ՀՈՒԶԱՑՆՈՐ, ած. **Հուզմունքից ցնորված:** .... Ընկավ կառքի տակ իր **հուզացնոր** վիճակում (Գոլու. 3, էջ 645):

ՀՈՒՇԱԲԵԿՈՐ, գ. **Հուշի պատասիկ, դրվագ:** Ձեզ ենք ներկայացնում երկու մեծերին՝ Ե. Չարենցին և Ա. Բակունցին նվիրված մի գողտրիկ **հուշաքեկոր** (Հւց):

ՀՈՒՇԱԲՋԻՋ, գ. (քնստ.,փխբ.): **Անցյալի հուշը, հիշողությունը:** Տեն ԾՈՌՆԵԾՈՌՆՈՒՀԻ-ի օրինակը:

ՀՈՒՇԱՌԱՏ, ած. **Շատ հուշեր ունեցող, հուշերով առատ:** Իրենց մտերմիկ, **հուշառատ** ու նաև գնահատող խոսքն ասացին .... (ԳԹ, 03.11.2017):

ՀՈՒՇԱՐՁԱՆԱՊԱՀՊԱՆ, ած. **Հուշարձանները պահպանող:** Մշակույթի նախարարությունը, որի ենթակայության տակ են **հուշարձանապահպան** կառույցները, 2017-ին ծրագրել էր 7 հուշարձանների նորոգման-վերականգնման աշխատանքները .... (Իր.,13.02.2018):

ՀՈՒՄԱԲԱՆԵԼ, բ. **Հուսալ:** ....Մենք վերստին փարվել ենք իրար// Ու **հուսաքանել՝** Տեր մի արասցե... (ԳԹ, 02.09.2016):

2

ՁԱԽԼԻԿՈՐԵՆ, մկբ. **Ձախլիկի նման, ինչպես ձախլիկը, ձախլիկ լինելով:** .... Սկսեց **ձախլիկորեն** վեր քաշել ձեռնոցները... (Բ 2, էջ 230):

ՁԱՅՆԱԱԶԴԱՆՇԱՆԱՅԻՆ, ած. **Ձայնաազդանշանային** սարքեր՝ անբավարար տեսողությամբ հետիոտների համար (Հւց, news.am):

ՁԱՅՆԱՆԿԱՐ, գ. **Փոքր պատմություն, մանրապատում:** Ըստ էության՝ այս քառապատումը միմյանց լրացնող չորս մանրանկարներ են: Կոմիտասը կասեր՝ **ձայնանկարներ**(Իր., 06.04.2018):

ՁԱՅՆԱՇԽԱՐՀ գ. **Հնչյունների՝ երաժշտության աշխարհ:** .... Այս ստեղծագործությունը .... բանաստեղծական պատկերներ գեներացնող մի գայթակղիչ **ձայնաշխարհ** [է].... (Ազգ, 13.10.2017):

ՁԱՅՆԱՊԱՍԿԵՐ, գ. **Ձայնային պատկեր:** ....Վարուժանը ձեռքը դնում է [Զարենցի վերքին] և արյունը դառնում է **ձայնապատկեր** (Ազգ, 17.06.2016):

ՁԵԹԱՌԱՍ, ան. **Շատ ձեթ պարունակող:** .... **Ձեթառատ** ուտելիքներից միակ փրկությունը կողքին շարված մերձարևադարձային մրգերն էին (ԳԹամ., էջ 15):

ՁԵՂՆԱՌԱՍՏԱՐ, գ. **Ձեղունի առաստաղ:** .... Կենտրոնացնում էր **ձեղնառաստաղի** խորշերից մեկում հաստատված մի կլոր ապակուց հասնող արևի ճառագայթները (Բ 10, էջ 683):

ՁԵՌՆԱԾՈՒՆԻ, գ. **Կին ձեռնածու, ձեռնածու կին:** Կարմրահեր **ձեռնածուհիները** և պարող տիկիհները (Գայանե, էջ 27):

ՁԵՌՆԱԶՈՐ, գ. **Ձեռքի ձողը:** Այնտեղ էր Գրիշան...Նոսր մազաթելերով ծածկված գլուխը հենած **ձեռնաձողին**, հայացքը հողին (ԳԱ, էջ 118):

ՁԵՌՆԱՇՂԹԱՅԵԼ, նր. **Ձեռնաշղթաներ հագցնել:** .... Պահանջվում են վարպետ **ձեռնաշղթայողներ** (ՌՇ, էջ 176):

ՁԻԱԶՈՒՅԳ, գ. **Ձիերի գույգ, գույգ՝ երկու ձի:** .... Ես ձեզանից պահանջել եմ ինձ համար ձեռք բերել Փարիզի լավագույն **ձիագույգը** (Դյունս, էջ 532):

ՁԻԱԿԱՑԱՐԱՆ, գ. **Ձիերի կացարան՝ պահելու տեղ:** ....Նա մտնում էր ....վճարովի **ձիակացարանը** (Գոյս. 2, էջ 91):

ՁԻԱՄԱՐԶԻԿ, գ. **Ձի մարզող անձ, ձիամարզիչ:** .... **Ձիամարզիկն** ուսումնասիրում է ձիուն (Դյունս, էջ 236):

ՁԻԱՐՇԱՎԱՅԻՆ, ան. **Ձիարշավի:** Ի սեր .... **ձիարշավային** զբաղմունքների .... ընտանեկան շատ առաքինություններ նվազեցին .... (Բ 8, էջ 281):



ԶԻԹԱԿԱՆԱԶ, ան. **Ձիթագույնին տվող կանաչ:** .... Մի ձեռքը գեղեցիկ **ձիթականաչ** դռանը հենած հայտնվեց պարզ ու հստակ (Գոյս. 2, էջ 81):

ԶՅՈՒԹԱՎԱԶ, գ. **Ձյութախառն ավագ:** Նա ասֆալտը բահով փռում էր ու լողով լողում տաք **ձյութավագը** հին ասֆալտին (ՀՄ էջ 221):

ԶՅՈՒՆԱԽՈՒԻՎ, ան. **Ձյունից՝ ձյունով խճճված՝ զգզված:** - .... Ցրտահարվել է մի քիչ. – ասաց բարձրահասակ մարդը՝ լայն ժպիտով երկճեղքելով **ձյունախոիվ** մորուքը (ՍՏ, էջ 258):

ԶՅՈՒՆԱԿՈՒՏԱԿՈՒՄ, գ. **Ձյան կուտակում:** Մարդիկ դեռ չէին մոռացել անցյալ ձմռան դժվարությունները .... մինչև տանիքները հասնող **ձյունակուտակումներով** (Կվին, էջ 112):

ԶՅՈՒՆԱՇԱՂ, ան. **Ձյուն շաղոդ:** Դիրիժաբլը բարձրանում էր վեր, դեպի գալարվող **ձյունաշաղ** ամպերը (ՍՏ, էջ 259):

ԶՈՂԱՅԱՏԿԵԼ, չր. **Ձողացատկ կատարել:** Տե՛ս ԲԱՐՁՐԱՅԱՏԿԵԼ-ի օրինակը:

ԶՈՐՁԱԿԱՐ, ան. **Ձորձերից՝ ցնցոտիներից, քրձերից, փալասներից կարված:** .... Քսանհինգամյա վաղեմություն ունեցող քարտեզը նման է **ձորձակար** վերմակի (Դ., Ս., էջ 13):

ԶՎԱԾԵՂԱՆՄԱՆ, ան. **Ձվածեղի նմանվող:** Նախաճաշի տեսականիի մեջ ամենագրավիչը **ձվածեղանման** մի կերակուր էր .... (ԳԹԱՄ., էջ 64):

ԶՎԱԿՃԵՊ, գ. **Ձվի կճեպը:** Տե՛ս ԼՈՐՁՈՒՆՔԱԽՈՐԻՄ-ի օրինակը:

ԶՎԱՄԱՆ, գ. **Ձվի՝ ձուն մեջը դնելու աման:** .... Տեսնելով .... **ձվամանը**, ճերմակ գինու շիշը .... իր ամբողջ էությանը սարսռաց .... (Բ 2, էջ 510):

ՃԱՀՃԱԳՈՐՏ, գ. **Ճահճի գորտ:** Ա՛յ **ճահճագորտ,** եկել եմ քեզ հյուր //Առանց ինձ հիշես, ճահիճդ թափուր (*ՌԿ, էջ 25*):

ՃԱՂԱՏԱՎՈՒՆ, ած. **Մասամբ ճաղատ:** .... Դպրոցի տեսուչը .... դասարան մտավ սատինե սև թասակ **ճաղատավուն** գլխին .... (*Մյուրմ., էջ 181*):

ՃԱՃԱՆՉՈՒՆ, ած. **Ճաճանչող:** .... Այդ **ճաճանչուն** շերտում փոքրիկ Ջոն Ֆորսայթը .... (*Գոլու. 2, էջ 367*):

ՃԱՄԲԱՐԱՓՈՒՄ ԼԻՆԵԼ, բ. (դիպվ): **Քաղաքական թիմը՝ ճամբարը, փոխել:** .... Պատրաստ են շարունակել աշխատանքը՝ անգամ **ճամբարափոխ լինելու** գնով (*Հրսայ., 11.05.2018*):

ՃԱՄՓԱՇԵՐՏ, գ. **Տարածքի՝ որպես ճանապարհ ծառայող շերտը:** Դեպի վեր տանող ճանապարհը սարքել էին թեք լանջով, մուտքը բավականաչափ բարձր էր **ճամփաշերտից** (*ԹԶ, էջ 56*):

ՃԱՄՓԱՓԱԿ, ած. **Ճանապարհը փակող:** Ուղը դնում է սեմին ներս մտնելու համար, Օսեի երկայն ձեռքը **ճամփափակ** գերանի նման իջնում է քարտուղարի կրծքին (*ԳԱ, էջ 34*):

ՃԱՇԱՀԱՇԻՎ, գ. **Ճաշի համար վճարելիք գումար, ճաշի հաշիվ:** Նա իր երազանքներից դուրս կորզեց **ճաշահաշվի** գումարը .... (*Բ 4, էջ 207*):

ՃԱՌԿԳԱՅԹԱԽՈՒՐՉ, գ. **Ճառագայթների խուրձ՝ փունջ:** Լուսարձակների .... երկնագույն **ճառագայթախորձերը** .... նետվեցին դեպի օտար մարմինը .... (*ԱՏ, էջ 2276*):

ՃԱՌԿԳԱՅԹԱՆՄԱՆ, ած. **Ճառագայթի նման, ճառագայթաձև:** .... Նրա որովայնին մի քանի խոր **ճառագայթանման** կտրվածքներ էին անում (*Դ., Մ., էջ 96*):

ՃԱՐՊԱԽՈՒՅ, գ. **Ճարպի խուց:** .... Ժապավենը գլխավոր դռնանցքով իջնում է մի ընդարձակ սրահ, որը կոչվում է **ճարպախուց** (*Մեր., էջ 219*):

ՃԱՐՊԱՆՈԹ, գ. **Ճարպի անոթ:** ... Կաշալոտի գլխում գտնվող խոշոր **ճարպանոթը**, ... ոչ պոչալողակների կատարյալ համաչափությունը ձեզ այնքան չեն զարմացնում ... (Մեր., էջ 260):

ՃԵՐՄԱԿԱԿԱՆԱՉ, ան. **Ճերմակին տվող կանաչ:** Ոչինչ չէիք նշմարի, բացի **ճերմակականաչ** փրփուրից (Մեր., էջ 168):

ՃԵՐՄԱԿԱԿԵՂԵՎ.ան. **Ճերմակ կեղևով, ճերմակ կեղև ունեցող:** ... **Ճերմակակեղև** կեչիներ ... (Ազգ, 22.12.2017):

ՃԵՐՄԱԿԱՓԱՅԼ, ան. **Ճերմակ փայլ ունեցող:** ... Յուրաքանչյուր մարդ ունի կյանքի մի ճանապարհ՝ նորածնի առաջին ճիշից մինչև ծերունու **ճերմակափայլ** մազերը ... (Դ., Մ., էջ 174):

ՃԵՐՄԱԿԱՓԵՏՈՒՐ, ան. **Ճերմակ փետուրներով՝ փետուրներ ունեցող:** Երկնի բարձունքում ... ետուառաջ էին սահում թեթև, **ճերմակափետուր** թռչունները ... (Մեր., էջ 333):

ՃԻՎԱԳՂԱԴԵՄ, ան. **Ճիվաղի դեմքով՝ դեմք ունեցող:** ... Նա ... **Ճիվաղադեմ** պառավին տեսնում էր մշուշի մեջ (Բ 2, էջ 394):

ՃԿԱԶԱՆԳՎԱԾԵ, ան. **Ճկվող նյութից պատրաստված:** Երբեմն ծխախոտ է դնում բերանը ու վառում **ճկազանգվածե** վառիչով (ՀՄ, էջ 5):

ՃԿԱՓԱՅՏ, գ. **Ճկվող փայտ:** Դահլիճում տեսա մի կին, որ նստել էր **ճկափայտից** սարքած փղոսկրյա ոտքերով թախտին... (Անդին, թ. 4, 2017):

ՃՅՈՒՂԱԳՈՐԾ, ան. **Ճյուղերից գործված՝ գործելով պատրաստված:** Պալատական կանանց պես են բազմում իրենց **ճյուղագործ** կառքերում (Բ 2, էջ 661):

ՃՅՈՒՂԱԿՏՈՐ, գ. **Ճյուղի կտոր:** Ծառերից թափվում էին տերևներ, ճյուղեր, պոկվում ամբողջ մեծ **ճյուղակտորներ**(Կլիս, էջ 291):

ՃՆՃՂԱՊԱՐՄ, գ. **Ճնճղուկների խումբ, պարս:** ...Գնում է կալերում **ճնճղապարսերի** վրա կրակելու (ՀՄ, էջ 379):

ՃՇՄԱՐՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Ճշմարիտը տեսնելը, իրականությունը ճիշտ արտահայտելը:** Բանաստեղծի այդ **ճշմար-**

**տատեսությունը** մեզ թելադրում է ավելի խոր ըմբռնելու նրա ստեղծագործության բուն էությունը (*ՎՆ, էջ 257*):

ՃՇՏԱՆԿԱՏ, ան. **Ճիշտը նկատող**: Միթե դուք ձեր հայացքով, որը պետք է այնքան **ճշտանկատ** ու սուր լիներ.... (*Գյումա, էջ 560*):

ՃՈՃԱՆԱԿԱԽԱՎՐ, գ. (փխբ., դիպվ.): **Քաղաքական վայրիվերումներով ստեղծված անկայուն վիճակ**: Քրիստոնյա հայերը ձեռնածությունների գործոն դարձան Թուրքիայով մեկ տարածված ահ ու սարսափների պատճառով առաջացած **ճոճանակախաղի** մեջ (*ՓՄ, էջ 42*):

ՃՈՌՈՄԱԲՈՒՅՐ, ան. **Ճոռոմություն բուրող**: .... Իր հարստության մեկ երրորդը [թողեց] .... բարձրաթիկնակ բազկաթոռում նստած այդ **ճոռոմաբույր** կնոջը (*Գոլու. 4, էջ 100-101*):

## Մ

ՄԱԳԱՂԱԹԱԼԱՐ, գ. **Մագաղաթի լար**: Հովհանը իջեցրել է գլուխը, հենել ձեռքին, որից ճերմակ **մագաղաթալար է** կախված (*ԹՁ, էջ 48*):

ՄԱԳԼՑԻԿ, ան. **Մագլցող**: .... Մի կարմիր վարդ պոկեց այն **մագլցիկ** վարդատուփից (*Գոլու. 3, էջ 587*):

ՄԱԶԱԳԶՈՒԶ, գ. **Մազերը գգուզ՝ խառնակ, անկարգ, չսանրված**: Դու **մագազգուզ** ես, թեև մորուք չունես (*Մեռ., էջ 229*):

ՄԱԶԱԹԱՓՈՒՄ, գ. **Մագաթափություն, մազերը թափվելը**: .... Պաշտպանված էին այնպիսի համաժողովրդական աղետներից, ինչպիսիք են .... **մագաթափումը** և չապահովագրված կյանքը (*Սեղ., էջ 330*):

ՄԱԶԱԽՈՒԻՐՁ, գ. **Մազերի խուրձ**: Էս չէ որ փոշեպատ **մագախուրձ է** (*ՄՀ, էջ 221*):

ՄԱԶԱՌԱՏ, ան. **Մազերը առատ՝ շատ, մագաշատ, շատամագ**: .... Ես ձեռքս դրեցի նրա **մագառատ** գլխին .... (*Սեղ., էջ 276*):

ՄԱԹԵՎՈՍՅԱՆԱԿԱՆ, ան. **Մաթևոսյանին բնորոշ**: Այդ ժայռերից է սկիզբ առնում **մաթևոսյանական** խորը, բազմաշերտ, առինքնող արձակի հորդաբուխ գետը (*Նորք, 03.2016*):

ՄԱԿԱՇԵՐՏԱՎՈՐ, ան. **Մակաշերտ (արտաքին շերտ) ունեցող:** .... Կանգնել էր մոխրագույն **մակաշերտավոր** թռչունի թևի մոտ (ԱՏ, էջ 105):

ՄԱՀԱԾՈՒՂԱԿ, գ. **Մահվան ծուղակ:** Մարդուս Գերբը՝ Սերն է շողակ, //Թե Շահն- անհազ՝ **մահածուղակ...** (ՌԿ, էջ 33):

ՄԱՀԱՄԵՐԺՈՒԹՅՈՒՆ, գ. **Մահը մերժելը:** Ես հիանում եմ քո քաջությամբ, **մահամերժության** քո հզոր փիլիսոփայությամբ (ԳԹ, 29.06.2018):

ՄԱՀԱՆԿԱՐ, գ. **Նախճիրի՝ մահվան պատկեր:** Ցեղասպանության **մահանկարների** խորությամբ Չարենցը .... հարազատ է սիամանթոյական պատկերահամակարգին.... (ԳԹ, 01.06.2018):

ՄԱՀԻԿԱՎՈՐ, ան. **Վրան մահիկ՝ լուսին ունեցող:** .... Հայտնվեց նրա մեծագույն թշնամին իր **մահիկավոր** դրոշով .... (ՎՆ, էջ 6):

ՄԱՄՌԱՆՍՏԱՐԱՆ, գ. **Մամոռապատ նստելատեղով նստարան:** Տե՛ս՝ ս ՀԵՆԱԽՈՒՈՂ-ի օրինակը:

ՄԱՅՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Մորը պաշտելը:** Աճառյանին բնորոշ էր **մայրապաշտությունը** (Գիրք., թ.3, 2016 ):

ՄԱՆԱՆԵԽԱԽԱՆՆ, ան. **Մեջը մանանեխ զգած՝ խառնած:** - **Մանանեխախառն** տաք ջու՛ր պատրաստեցեք ոտքերի համար (Բ 10, էջ 629):

ՄԱՆԿԱԳՐՈՒՀԻ, գ. **Կին մանկագիր:** .... Ինձ մատչելի տպագիր աղբյուրները լուր մ էին **մանկագրուհու** ծագման մասին (Ազգ, 18.05.2018):

ՄԱՆԿԱՀՈՏ, գ. **Մանկանը բնորոշ հոտ:** Ինձ պարուրեց կաթի **մանկահոտը** (ՀՄ, էջ 669):

ՄԱՆՈՒՇԱԿԱԶԱՐԳ, ան. **Մանուշակներով զարդարված, որպես զարդ մանուշակներ կրող:** Մանուշակազարդ տիկինը իր խոսքի տերը եղավ .... (Դյունա, էջ 412):

ՄԱՆՈՒՇԱԿԱՎՈՐ, ան. **Մանուշակ ունեցող՝ կրող:** Ալբերի և **մանուշակավոր** տիկնոջ սիրախաղը շարունակվեց .... ամբողջ օրը (Դյունա, էջ 408):

ՄԱՌԱԽԼԱԿՈՒՈՒ, ան. **Մառախուղի մեջ փաթաթված, շղարշված:** Էստեղ էր ծնվել, երկնքի մոտ, **մառախլակոլոլ** սպիտակ սավանների մեջ (*ԼՋ, էջ 5*):

ՄԱՌԼՅԱՅԵ, ան. **Շղարշե, թափանցիկ ցանցկեն նուրբ գործվածքից պատրաստված:** Դոկտոր Միրելը ... կզակի տակ ճոճվող **մառլյայե** դիմակով այքերով որոնում էր կոմիսարին (*ժՄ, էջ 432*):

ՄԱՄՆԱԳԻՏԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Մասնագիտացված լինելը:** Հաջորդ խնդիրը փորձագետը համարում է անչափահասներով զբաղվող մարմինների **մասնագիտացվածության** բացակայությունը (*Հնց, aravot.am*):

ՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ, ան. **Ավելի մեծ մասնակցություն ապահովող:** Մասնակցելով այս համակարգին՝ մենք հայրենիքի պաշտպանությունը դարձնում ենք շատ ավելի **մասնակցային**, պահանջատիրական ու ժողովրդավարական (*Ազգ, 11.11.2016*):

ՄԱՄՆԱՀԱՏՈՒՄ, գ. (բժշկ.): **Որևէ օրգանի մի մասի հեռացում:** Բացառիկ վիրահատություն «Աստղիկ» ԲԿ-ում. Ուիպլի վիրահատության հետ միաժամանակ՝ հաստաղու լայնական **մասնահատում** (*Հնց, news.am*):

ՄԱՍՍԱՀԱՅԱՑ, ան. **Մասիսին նայող:** Տե՛ս ՀԵՏԱԳԾԵԼ-ի օրինակը:

ՄԱՏԱՆԻԱՎՈՐ, ան. **Մատանի կրող, մատին մատանի եղող:** Պատերազմից հետո որտեղից ... բանեցին ... **մատանիավոր** մագմզոտ մատներով ... այս ճարպիկ տղաները (*ԱՏ, էջ 7*):

ՄԱՏՆԱՀԱՐՈՒՄ, գ. **Մատներով հարվածելը:** - Շատ լավ է նվազողի **մատնահարումը** (*Գոյս. 6, էջ 18*):

ՄԱՐԴԱԶԱՐԴ, գ. (դիպվ., բնստ.): **Մարդու հոգում բարու հաղթանակի տոն:** Մարդն՝ իր հոգուց՝ Չարը զատի, //Կգա տոնը **Մարդագարդի** (*ՌԿ, էջ 13*):

ՄԱՐԴԱԿՈՒՏԱԿՈՒՄ, գ. **Մարդկանց կուտակումը:** ... Շոգը կուտակվում ու թափվում էր ... դռների առաջ կանգնած խանութպանների, լրագրավաճառների ... աշխարհի այս մեծագույն **մարդակուտակման** ամբողջ խառնիճաղանջի վրա (*Գոյս. 4, էջ 304*):

ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ, ած. **Մարզական և առողջա-  
րանային:** Ամառային **մարզաառողջարանային** ճամբարներում 3  
հերթափոխով հանգստացել է 1175 երեխա (*Հւց, news.am*):

ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ, ած. **Մարզական և առողջարա-  
րական:** Պուտինը, Սարգսյանը և Աթամբանը Բիշքեկում **մարզա-  
առողջարարական** համալիր են այցելել (*Հւց, news.am*):

ՄԱՐԶԱԳՈՐԳ, գ. **Մարզական գորգ:** Ֆիզկուլտուրայի ուսուցիչը  
երևանյան դպրոցում **մարզագորգի** տակ թմրանյութ էր պահել  
(*Հւց, news.am*):

ՄԱՐԶԱՆԱՎ, գ. **Մարզական նավ:** .... Բոլոր **մարզանավերն**  
իրենց տեղում են (*ԱՏ, էջ 96*):

ՄԱՐՄՆԱՆԿԱՐԻԶ, գ. **Մարմնի վրա նկարներ անող:** Քեզ նման  
նկարիչ հեշտ է ծնել, հլա ասա՝ **մար-մնա-նկա-րի՛չ** (*Գարուն, 1, 2017*):

ՄԱՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ, գ. **Մարմնի վրա նկարելը:** ....  
**Մարմնանկարչությունը** բացառում է ամոթի և նախնադարյան արքուռի  
կարմրելու հատկություն ունեցող գունաշերտը (*Գարուն, 1, 2017*):

ՄԱՐԶԱՆԱԶԱՐԴ, ած. **Մարջաններով զարդարված:** .... Սաթե  
մուշտակներ ունեցող **մարջանազարդ** չիբուխների .... մի հավաքածու  
սպասում էր ծխամոլների քմայքներին .... (*Դյունա, էջ 443*):

ՄԱՐԶԱՆԱՇՈՒԹ, ած. **Մարջան հիշեցնող շուրթով, կարմ-  
րաշուրթ:** Մերսեդեսը գեղեցիկ էր ....., հելլենուհու պես սևաչյա և  
**մարջանաշուրթ** (*Դյունա, էջ 36*):

ՄԱՔԱԱԶԵՐԾԵԼ, բ. **Մաքսազերծ անել, մաքսատուրքը վճարել:**  
Այսուհետև մեր ապրանքները **կմաքսազերծվեն** իրական գներով (*մա-  
մնյ*):

ՄԱՔԱԱԶԵՐԾՈՒՄ, գ. **Մաքսազերծ անելը, մաքսատուրքը  
վճարելը:** Քանի տարի պայքարում էինք, որպեսզի **մաքսազերծում**  
արվեր ինվոյսային արժեքով, ասում էին՝ անհնար է (*մամնյ*):

ՄԱՔԱՍՏՈՒՐՔԱՅԻՆ, ած. **Մաքսատուրքերին վերաբերող:**  
Հայաստանը վավերացնում է Դրոզդատանի միացումը ԵԱՏՄ-ի  
**մաքսատուրքային** դրույքաչափերի պայմանագրին (*Հւց, news.am*):

ՄԳԱՀԵՐ, ան. **Մուգ հեր՝ մազեր ունեցող, մգամագ:** Տիկին Լամոնտն այն փարթամ կառուցվածքով ... **մգահեր** ֆրանսուհիներից էր (*Գոլու. 2, էջ 47*):

ՄԵԴԱԼԱԴՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Մեղալներ, պարզևներ ստանալը պաշտելը:** –Տեն, բրեժնևյան հիվանդությամբ (**մեղալապաշտությամբ**) չհիվանդանաս, - ասում են շատերը (*ՄՄ, էջ 524*):

ՄԵԴԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Լրատվական ընկերություն:** IAC **մեդիաընկերությունը** Newsweek ամսագրի համար գնորդ է փնտրում (*Հւգ, news.am*):

ՄԵԴԻԱՌԵՍՈՒՐՍ, գ. **Լրատվական ռեսուրս:** ԱՄՆ **մեդիա-ռեսուրսների** համակարգող. ԶԼՄ-ների մասին ՌԴ օրենքը հայելային արձագանք չէ (*Հւգ, news.am*):

ՄԵԾԱՀԱՍԱԿԱՎԱՐԻ, մկբ. **Մեծահասակի նման:** ...Դրանում ևս նա մեր դպրոցական երեխաներին էր նմանվում, այնպես **մեծահասակավարի** էր ու քաղաքակիրթ (*Հ, էջ 37*):

ՄԵԾԱՑՈՒՆՑ, ան. **Մեծապես ցնցող:** Մի **մեծացունց** անհանգստություն հալածում էր ինձ (*Հ, էջ 155*):

ՄԵՂՄԱՀԱՐ, ան. **Մեղմ:** Ցույց են տվել նրա աչքերի անբացատրելի կայծերը և այդ վերերկրային ու **մեղմահար** հայացքը, որ իրականում ոչնչի հատված չէ (*Անդին, թ. 4, 2017*):

ՄԵՂՄԱՇԵՇՏ, ան. **Մեղմորեն շեշտված:** **Մեղմաշեշտ** հարց (*Գոլու. 2, էջ 187*):

ՄԵՂՄԱՇԱՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Շատ մեղք գործելը:** ...Ես խորանալով թաղվել ու **մեղսաշատությամբ** ընկղմվել էի օտար հոսանքի մեջ (*Հ, էջ 23*):

ՄԵՂՎԱԿՆՃԻԹ, գ. Այստեղ՝ փխբ.: **Մեղվի կնճիթ:** Ամբողջ ժամանակ իր հոգու **մեղվակնճիթը** հոտոտում էր նրա հոգու զաֆրանն ու մեղրը փնտրում (*Գոլու. 6, էջ 224*):

ՄԵԶՔԱՄԱՍ, գ. **Մեջքի մաս:** ... Մարմանդ եփվում էր հոչակավոր տապակածը՝ բակլայով ոչխարի **մեջքամասը**(*ԱՏ, էջ 109*):



ՄԵՏԱՂԱԶՆԳՈՑ, գ. **Մետաղի գնագոց՝ գնգալու ձայն:** Հետո ինչ-որ կամաց **մետաղագնագոց** լսեցի (*Կլիկն*, էջ 213):

ՄԵՏԱՂԱԿԱՊ, գ. **Մետաղյա կապ:** [Դափնիները] ... աճում էին սև ու ոսկեգույն **մետաղակապերով** ամրացված տակառիկներում (*Գոլու. 4, էջ 14*):

ՄԵՏԱՂԱՀՈՍԲ, գ. **Մետաղի հոսք:** Նախօրոք պատրաստված հունով հրահալոցից բաց են թողնում եռացող **մետաղահոսքը** (*Կլիկն*, էջ 17):

ՄԵՏԱՔՍԱԴԻՊԱԿԵ, աձ. **Մետաքսյա դիպակից պատրաստված:** Ջույգ պատուհանները ծածկված էին ... **մետաքսադիպակե** լայն կարմիր վարագույրով (*Բ 2, էջ 450*):

ՄԵՏԱՔՍԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Մետաքսային՝ մետաքսե լինելը:** ... Սքանչելի են վզի կորագիծը, հագուստների **մետաքսայնությունը** ... (*Գոլու. 3, էջ 425*):

ՄԵՐԿԱՊԱՐՈՂ, գ. **Մերկապարով զբաղվող:** **Մերկապարող** հայտնի դերասան Չեկինգ Տատումը չափազանց ցավոտ փորձության ենթարկվեց...նկարահանումների ժամանակ (*TV ալիք, 16.07.2018*):

ՄԵՔԵՆԱԳՈՂ, գ. **Ավտոմեքենայի գողությամբ զբաղվող:** Ամերիկացի **մեքենագողերի** շրջանում ամենահայտնի քաղաքը Լոս Անջելեսն է (*Հնց, news.am*):

ՄԻԱԵԶՐ, աձ. **Մի եզր ունեցող, միեզրանի:** ... Հագավ Վիլֆորի դարչնագույն **միանեզր** սերթուկը (*Դյունս*, էջ 105):

ՄԻԱԿԱՌՈՒՅՑ, աձ. **Միանման կառուցված:** **Միակառույց** վեց տներում մետրով չափում են կահույքի տեղադրությունը... (*Անդին, թ. 3, 2017*):

ՄԻԱՆՄԱՆԵՑՆԵԼ, նր. **Միանման դարձնել:** ... Ձգտում է երկրագնդի բոլոր երկրները **միանմանեցնել** (*Դ., Մ., էջ 125*):

ՄԻԱՆՍՏԱՐԱՆ, գ. **Մեկ նստարան՝ նստատեղ ունեցող:** ... Եկել էր իրեն վերապահված **միանստարան** մի կառքով (*Բ 2, էջ 471*):

ՄԻԱՍԵՌԱԿԱՆ, գ. **Համասեռամոլ:** .... Կանադայի ամենանշանավոր փաստաբաններից մեկն է և ամենանշանավոր **միասեռականը** (ԱՊ, էջ 130):

ՄԻԱՍԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Համասեռամոլություն:** Մերոնք դեռևս սովորական երևույթ չեն ընդունում միասեռականությունը (ԱՊ, էջ 130):

ՄԻԿԻՏԱՆՈՒՇԻ, գ. **Գինետան տիրուհի:** .... Միկիտանուհու մատուցած կերակուրները զգվանք էին պատճառում նրան (Կոսպեր, էջ 203):

ՄԻԿՐՈՒՍՏՐԱՄԲ, գ. **Փոքր խումբ:** Մեր **միկրոխմբի** երեք անդամներն էին.... (ԱՍ, էջ 507):

ՄԻՀԱՐԿԱՆԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Միհարկանի լինելը:** Ասատուր Խաչատրյանը շարունակել է զարմանալ գյուղի տների **միհարկանիության** վրա (ՀՄ, էջ 387):

ՄԻՆՉԿԵՍՕՐ, գ. **Կեսօրից առաջ, մինչև կեսօր:** Մի օր՝ **մինչկեսօրին**, .... նրան .... հաջողվեց մագլցել պարիսպը .... (Կաֆկա, էջ 36):

ՄԻԶՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ, ան. **Համալսարանների միջև գործող:** ԹՈՒՄՕ-ն բարձրագույն կրթության **միջհամալսարանական** կենտրոնի ծրագիրը ներկայացրել է ՀՀ վարչապետին (Հմց, arevelk.am) :

ՄԻԶՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ, ան. **Համայնքների միջև տեղի ունեցող՝ եղող:** .... Դա անգնահատելի աջակցություն է .... ներհամայնքային և **միջհամայնքային** ճանապարհների բարեկարգման, աղբահանության կազմակերպման, ջրագծերի .... կառուցման գործում (ՀՀ, 12.05.2017):

ՄԻՋՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ, ան. **Նախարարների միջև առկա՝ եղող:** Հակադրվում է .... **միջնախարարական** հարաբերությունների վերաբերյալ պատմագրության ավանդական տեսանկյունների (Հայրունի, էջ 59):

ՄԻՋՆԱՄԱՐՄԻՆ, գ. **Մարմնի միջին մասը:** Միջնամարմինը քնքուշ ու իդեալական ցիլինդրաձև թեքություններ ուներ .... (ՌՇ, էջ 221):

ՄԻՋՆԱՊԱՏՎԱՐ, գ. 1.Միջին արգելապատ, պատնեշ: 2. Միջին՝ բաժանող շիրմա, առաջակալ: .... Նստած էր նստարանին, միջնապատվարից այն կողմ (ԺՄ, էջ 34):

ՄԻՋՍԵՆՅԱԿԱՅԻՆ, ան. Սենյակների միջև եղած: Մինասը կամաց-կամաց վերանորոգեց միջսենյակային դռները.... (ՆԱ, էջ 34):

ՄԻՋՏՆԱՅԻՆ, ան. Տների միջև եղած: Հողամասը միջտնային ճանապարհից մի փոքր բարձր էր (ՌԴ, էջ 51):

ՄԵԻԹԱՐԻՆ, գ. (դիպվ.)Մխիթարյան միաբանության հայրերի՝ 1889-ից ի վեր թորվող լիկյորի անվանումը: Հայ կաթոլիկ հայրերը սերնդեսերունդ իրենց միաբանության հայտնի լիկյորն են պատրաստել՝ Մխիթարինը (Ազգ, 02.02.2018):

ՄՇԱԿԱՎԱՅՐ, գ. Մշակելու վայր: .... Զարմիկները ծխախոտի մշակավայր ունեն .... (Մյուրմ., էջ 162):

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ.ան. Մշակույթին՝ մշակութաբանությանը վերաբերող: Ես երկու Հայաստանների արդյունք եմ՝ Արևելյան և Արևմտյան՝ իրենց ամբողջ՝ մշակութաբանական հյուսվածքով (TV ալիք, 05.04.2018):

ՄՇԱԿՈՒԹԱԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ, ան. Մշակութային և գործարարական: .... 40 ուսանողների աշխատանքներ այս օրերին ցուցադրվում են «Մոսկվայի տան» մշակութագործարարական կենտրոնի գեղեցիկ ցուցասրահում ... (Ազգ, 22.12.2017):

ՄՇԱԿՈՒԹԱԶՐԿԵԼ, ք. Մշակույթից զրկել: Բայց մեր երկրում փորձում են թացուչոր իրար խառնել, ամեն ինչ բարոյազրկել, ապագգայնացնել, մշակութազրկել.... (Ազգ, 16.12.2016):

ՄՇԱԿՈՒԹԱԽԵՂՎԱԾ, ան. Հակամշակութային: .... Չափից ավելի եմ անդրադարձել մայրաքաղաքի արձանների և քանդակների տեղադրման մշակութախեղված խնդիրներին (Իր., 04.10.2016):

ՄՈՒՆՐԱԿԱԲԱՆ, գ. Մոլորակների խնդիրները ուսումնասիրող գիտնական, մոլորակագետ: Մոլորակաբաններին առաջին անգամ հաջողվել է չափել Յուպիտերի կարմիր բծի տակ առկա ջրի քանակությունը (Հւց, news.am):

ՄՈԼՈՐԱԿԱՑԵՂ, գ. **Մոլորակի ցեղ:** Տե՛ս ԿԵՂՏԱՓՈՍ-ի օրինակը:

ՄՈՒՐԱԴԱԼՈՒԿ, ած. **Դժգույն, մոխրագույն, դալուկ:** Սև, **մոխրադալուկ**, վիրակապ ճիվաղի մեջ անգամ խոսքն ապրում է, իսկ իմ մեջ՝ մեռնում .... (ԼՋ. էջ 52):

ՄՈՒՐԱՇԱՂԱԲ, ած. **Մոխրով շաղախված, թաց մոխրով պատված: Մոխրաշաղախ** սեղանի վրա թափված էին դատարկ շշեր (ԱՏ, էջ 186):

ՄՈՒՐԱՔՈՒԼԱ, գ. **Մոխրի քուլա:** Ամեն մի գալարվող ու կույ եկող **մոխրաքուլա** իմ մեջ երջանկավետ ու գեղատեսիլ, պայծառ ժամեր էր ոգեկոչում.... (Հ, էջ 164):

ՄՈԾԱԿԱՇԱՏ, ած. **Մոծակները շատ, շատ մոծակներ եղող:** .... Ճահճային **մոծակաշատ** այս խոլ տեղում էր հիմնավորվել .... պարտիզանական ջոկատը (Կլին, էջ 163):

ՄՈՄԱԼՈՒՑԿԻ, գ. **Մոմի լուցկի:** Մեզրեն .... վառեց **մոմալուցկին** (ԺՄ, էջ 11):

ՄՈՏՈՑԻԿԼԱԵՐԹ, գ. **Երթ մոտոցիկլետներով:** Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված **մոտոցիկլաերթը** հասել է Երևան (Հնց, news.am):

ՄՈՏՈՑԻԿԼԵՏԱՎԱՐ, գ. **Մոտոցիկլետ վարող:** Գերմանիայում **մոտոցիկլետավարին** կպատժեն 20 ժամհարկադիր ընթերցանությամբ (Հնց, news.am):

ՄՍԱՋԵՐԾԵԼ, բ. **Մսից առանձնացնել:** Ինձ ասացին, որ մինչև կեսօր փղին մինչև ոսկորները **մսազերծել** էին (Անդին, թ. 4, 2017):

ՄՍԱԾԱԾԿՈՒՅԹ, գ. **Մսի ծածկույթ:** [Կզակը] .... Եթե մերկանար իր **մսածածկույթից**, պիտի արտառոց թվար (Գոյս. 2, էջ 14):

ՄՏԱԲԵՎԵՌՈՒՄ, գ. **Մտքի սևեռում:** .... Նրան խորթ չեն անհանգստացնող **մտաբևեռումները** դեպի անցյալ ու ապագա .... (ԳԹ, 23.03.2018):

ՄՏԱԶՆՆՈՒՄ, գ. **Մտորում, վերլուծություն:** Այստեղ ես ուզում եմ իմ, գուցե վիճելի, **մտազննումներով** մոտենալ գեղարվեստական գրականության, տեսության ու փիլիսոփայության մեջ էկզիստենցիալիստ Ալբեր Բամյուին (ԳԹ, 29.09.2017):

ՄՏԱԽՈԿՈՒՄ, գ. **Մտախոհություն, խոհ:** Սուրենը «Ազատագրված հիշողություն» է անվանում իր ապրումները, որոնումները, **մտախոհումները**, մուտքերն ու ելքերը .... (ԳԹ, 27.04.2018):

ՄՏԱՀԱՅԵՑԱԿԱՐԳ, գ. **Մտածելակերպ, մտակերտվածք, հոգեկերտվածք:** Ակնկալիքների մաքսիմալիզմ: Սա հայ հանրայթի **մտահայեցակարգի** հիմնական բնութագրերից է (Հմց, Հ. Պետրոսյանի կայք, 20.04.2018):

ՄՏԱՀԵՂԵՂ, գ. **Մտքերի հեղեղ, տարափ:** Արձակ պոնգիա, տիեզերական խորհորդ, թե՛ **մտահեղեղ**, որ զուգակցվում է աշխարհընկալման բարդ ու անվերժանելի... բացահայտումներով (Ասդիս, թ. 5, 2017):

ՄՏԱՀԶՈՐ, ան. **Զորեղ միտք ունեցող:** Յոթերորդ դարի սկզբում կառուցված Հռիփսիմեի տաճարը դիտվում է իբրև **մտահզոր** արձանացում, իբրև ազգագու անմահության խորհուրդ (ՇԽ, էջ 15):

ՄՏԵՐՄԱՇՈՒՆՉ, ան. **Մտերմություն շնչող՝ բերող:** .... Ամբողջ այդ **մտերմաշունչ** ամսվա ընթացքում .... չկորցրեց այն զգացումը, որով առաջին օրը գնացել էր նրա մոտ .... (Գոլյու, 2, էջ 198):

ՄՏՐԱԿԱՇԱՌԱՉ, ան. **Մտրակի շառաչի նմանվող:** Ձիավորները **մտրակաշառաչ** // Ասքեր են գրում // Հավիտենության հայացքի վրա (ԳԹ, 02.06.2017):

ՄՏՔԱՀՈՏ, գ. **Մտքի հոտ:** .... Ամեն կենդանի իր բնորոշ **մտքահոտն** ունի (ՌՇ, էջ 58):

ՄՏՔԱՏՊԵԼ, նբ. **Մտքերը տպել:** Դռան մոտ հին կառուցվածքի **մտքատպող** թարգմանիչ էր դրված (ՌՇ, էջ 163):

ՄՐԳԱՀԱՆԴԵՄ, գ. **Մրգերի հանդես:** Փեսան վայելելով դիտում էր իմ հիացմունքը այդ ապշեցուցիչ **մրգահանդեսի** դիմաց (ՌԴ, էջ 213):

ՄՐԳԱՇՈՒԿԱ, գ. **Մրգի շուկա, շուկա, որտեղ միրգ են վաճառում:** Իժնչ զարմանալի տեղ է այս **մրգաշուկան** (Գոյւ. 4, էջ 156):

ՄՐԳԱՊՍԱԿ, գ. **Մրգերով հյուսված պսակ:** Նրանք [մուսաները] թն թնի այս այգին են այցելում բոլոր պտղատուներին՝ հայոց հողի յոթնագունակ բարիքների **մրգապսակով** (ԳԹ, 02.11.2018):

ՄՐԳԱՊՐԱՆԵՔ, գ. **Վաճառքի, վերամշակման համար նախատեսված միրգ:** .... Որտեղ են հիմնելու **մրգապարանքի** արտադրության իր ձեռնարկությունը .... (ԳԹ, 23.02.2018):

ՄՐՃԱՀԱՐՎԱԾ, գ. **Մուրճի հարված:** Նոյնիսկ ամենատափակ անհամությունները կամացուկ ու անընդհատ **մրճահարվածներով** դիպչում էին իմ միջի միևնույն կետին.... (Հ, էջ 138):

ՄՐՑԱՆԱՎ, գ. **Մրցության՝ մրցումներին մասնակցող նավ:** Բիբիգոնդա՛ն են տարել՝ ամենալավ **մրցանավը** (ԱՏ, էջ 97):

### Յ

ՅՈՒԲԿԱՅԱԿԻՐ, ած. **Յուբկա հագած. փխբ.՝ կին:** ... Այդ **յուբկայակիրներից** մեկը իրեն բոլորից վեր է դասում (Բ 2, էջ 258):

ՅՈՒՐԱԿԵՐՊՈՐԵՆ, մկբ. **Ինքնատիպ, ինքնօրինակ ձևով:** Գրականության ու արվեստի և ոչ մի ուղղության ռեալիզմն օտար չէ, բոլորն էլ **յուրակերպորեն** ստեղծվում են իրենց իրական ժամանակի ու տարածության հոգեբանական տրամաբանությամբ .... (ԳԹ, 16.02.2018):

### Ն

ՆԱԽԱԳՐԱՆՑՈՒՄ, գ. **Նախնական գրանցում:** Ucom-ը կսկսի նորագույն IPHONE XS և XS MAX մոդելների գնման համար **նախագրանցում** (Հմց, news.am):

ՆԱԽԱԵՐԵԿՈՅԱՆ, ած. **Երեկոյին նախորդող:** Այդ ոգիները ոչ թե անդրաշխարհից են, այլ **նախաերեկոյան** ծրագրից (ՊՇ, էջ 75):

ՆԱԽԱՆԱՂԱՅԻՆ, ած. **Խաղից առաջ տրվող ասուլիս:** Եվրոպայի լիգա. Վարուժան Սուքիասյանի և Էդգար Մանուչարյանը **նախախաղային** ասուլիսը (Հմց, news.am):

ՆԱԽԱԶՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Ձյանը նախորդող եղանակ:** Դուրսը դարձյալ չոր, բայց **նախաձյան** եղանակ է շնչում-արտաշնչում (ԳԹ, 07.09.2018):

ՆԱԽԱՌԱՖԱՅԵԼԿԱՆ, ած. **Ռաֆայելին նախորդած:** Այնտեղ պատկերված էր անգլիական **նախառաֆայելական** ոճի մի աղջկա կերպարանք.... (Հ, էջ 203):

ՆԱԽՇԱՌԱՏ, ած. **Առատ նախշերով:** Նուրբ, բազմերանգ ուստայնով էին պատում.... գորգահյուս ու **նախշառատ** խորանները (ԹԶ, էջ 177):

ՆԱՎԱՃՈՊԱՆ, գ. **Նավի պարան, թոկ:** Նավաճոպանը նոր էր, Ռենատոն տեսավ, որ անվնաս էր, բայց ոչինչ չասաց (ԳԹ, 09.09.2016):

ՆԱՎԱՏՆԱԿ, գ. **Նավի (վրայի) տնակ:** .... Ծաղիկներով զարդարեց իր **նավատնակը** (Գոլու. 2, էջ 100):

ՆԱՎԹԱԳԱԶԱՅԻՆ, ած. **Նավթագազի շահագործմանը վերաբերող:** Պակիստանի **նավթագազային** կարգավորիչը 2.4 մլն դոլարով տուգանել է Royal Dutch Shell-ին (ՀԱԳ, news.am):

ՆԱՎԹԱԴՈՒԼԱՐԱՅԻՆ, ած. **Նավթադոլարներին վերաբերող:** Անխուսափելի պատերազմի **նավթադոլարային** հետագիծը (ՀԱԳ, news.am):

ՆԵՂԹԻԿՈՒՆԶ, ած. **Նեղ թիկունքով, նեղ թիկունք ունեցող:** Դա մի կովբոյ-թափառաշրջիկ էր՝ ոնգախոս, **նեղթիկունք** մի մուրացիկ .... (ՌՇ, էջ 213):

ՆԵՆԳԱԺՊՏԱԼ, բ. **Նենգորեն ժպտալ:** Լռությունը հույս էր տալիս, որ որմերը արդեն պատրաստ են, լռությունը նաև **նենգաժպտում էր**, թե միգուցե դատարկ է ձորի պռունկը (ԱԱ, էջ 4):

ՆԵՌԱԾԻՆ, գ. **Նեռից ծնված:** Ոսկուց կուրացած **նեռածինները** գրչի մեկ հարվածով Նախիջևանի 5 գավառները նվիրեցին «հնարված ազգի» չախկալներին .... (ԳԹ, 30.09.2016):

ՆԵՐԱՆՁՆԱԽՈՇԱԿԱՆ, ած. **Խոհական և ներանձնական:** Բավական դիպուկ է բնորոշում Լիլիթ Աստոնյանը Արթուրի արձակը՝ **ներանձնախոհական** (ԳԹ, 24.06.2016):

ՆԵՐԻՏՈՅԱՆՔ, գ. (քնստ.): **Դեպի ներս ուղղված շարժում:** Ծառերը վերձանում են// ճաքճքված ասֆալտի// ճեղքերից անած// խոտերի հառաչանքը// և տերևների ռիթմիկ սուսափյունով// քաջալերում նրանց **ներխոյանքը** // դեպի հողը խոնավ՝ ... (ԳԹ, 11.11.2016):

ՆԵՐԿԱԲԱՇԽԻԶ, ան. , գ. (տեխ.) **Ներկը բաշխող (գործիք, սարք, հարմարանք):** Ներկաբաշխիչ գլանները տակավին մուտք չէին գործել .... փոքրիկ տպարանները (Բ 4, էջ 9):

ՆԵՐԿԱՇԱՂԱԽ, գ. **Ներկի շաղախը:** Մի պահ դադար առավ, ապա կրկին մոտեցավ, վրձինը թաթախեց **ներկաշաղախի** մեջ (ԳԱ, էջ 104):

ՆԵՐՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Միասնություն:** Միժթե իրերի **ներհամաձայնությունը**, այլ խոսքով ասած միասնությունը, կարգի պարզ արտահայտությունը չէ (Բ 2, էջ 189):

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ, ան. **Համայնքի ներսում տեղի ունեցող:** Տե՛ս՝ **միջհամայնքային**-ի օրինակը:

ՆԵՐՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ան. **Հանրությանը վերաբերող, հասարակությունն ընդգրկող:** Նրանք համարում են, որ Փաշինյանը **ներհասարակա՛ն** խաղաղություն և կայունություն բերեց Հայաստանին (ՀԱԳ):

ՆԵՐՀՈԳԵԿԱՆ, ան. **Հոգու մեջ կատարվող:** .... Փորձում ես փախչել սեփական **ներհոգեկան** ճնշումներից (ՌՇ, էջ 148):

ՆԵՐՀՈՒՋԻԶ, ան. **Ներազդող, հուզիչ:** Առաջնային մասում առավել **ներհուզիչ** են ընկալվում պատառոտված, գետնին թափված միջնադարյան մագաղաթյա մատյանները.... (ՇԽ, էջ 9):

ՆԵՐՄԵՐՄԵԼ, նր. **Ներս մերսել, մերսել մի բանի մեջ:** Նա հարսնացուի մազերի մեջ է **ներմերսում** խեժի մեղրախառն խառնուրդ .... (Դ., Մ., էջ 123):

ՆԵՐՑԱՆՑԱՅԻՆ, ան. **Ցանցի ներսում գործող:** ՎիվաՄեկ-ՄՏՍ. բաժանորդները կարող են **ներցանցային** բոպենները վերածել մեգաբայթերի (ՀԱԳ, news.am):



ՆԵՐՔԱՇՈՒՄ, գ. **Ներքաշելը, ներս քաշելը**: .... Ծխում էր կարճ **ներքաշումներով** (US, էջ 174):

ՆԵՐՔՆԱԿԱԳՈՐԾ, չբ. **Ներքնակ պատրաստող (արհեստավոր)**: Հագին ցնցոտիներ են .... ամբողջապես բմբույով ծածկված, ասես **ներքնակագործ** լինի (Բ 10, էջ 416):

ՆԵՐՔՆԱՀԱԳՈՒՄՏ, գ. **Ներքին՝ այլ հագուստների տակից հագնելու շոր**: .... Պալատական տիկնայք սովոր էին օժանելիք քսած մետաքսե **ներքնահագուստների** տակ ծվեն-ծվեն կեղտ թաքցնել (ՌՇ, էջ 271):

ՆԵՐՔՆԱՓԱՅԼ, գ. **Ներքին հմայք, փայլ**: .... Միանգամայն հնարավոր է, որ երջանկությունից հրաժարված մեկը տեսներ աշխարհը ճառագելիս և ըմբոշխներ մանկական տպավորությունների **ներքնափայլը** (Հ, էջ 180):

ՆԺԱՐԱՎՈՐԵԼ, բ. **Կշռել, արժևորել**: Ուրեմն՝ ժամանակն է ամեն ինչ, առաջին հերթին մեր անհագուրդ կրքերը չափավորելու, աշխարհի հետ մեր տալիք-առնելիքը **նժարավորելու**, մեր ուժերն ու ռեսուրսները ճիշտ բաշխելու.... (ԳԹ, 08.07.2016):

ՆԺԴԵՀԱՊԱՇՏ, ած. **Նժդեհին պաշտող**: .... Ընդհատվեց **նժդեհապաշտ** մի տոհմաձառ (Իր., 19.05.2017):

ՆԻՐՀԱԲԵՐ, ած. **Նիրհ՝ նինջ բերող**: Երբեմն մինչև լուսաբաց մնացել էր դրսում, ականջը գիշերային հավքերի ճիչերին ու գիշերվա **նիրհաբեր** շունջներին (ԹԳ, էջ 95):

ՆԻՐՀԱՐԱՆ, գ. **Ննջարան**: .... Տղան դույլը դրել էր **նիրհարանից** հեռու եղնջի մոտ (ՀՄ, էջ 234):

ՆԿԱՐԱԼԵԶՈՒ, գ. **Նկարների լեզու՝ արտահայտչակերպ**: 19-րդ դարեվերջի մոդեռն ուղղությունը նրա արվեստում միահյուսվել է արևելյան զարդային ու հայկական միջնադարյան մատյանների **նկարալեզվին**.... (ՇԽ, էջ 3):

ՆԿՈՒՂԱՍԵՆՅԱԿ, գ. **Նկուղի՝ նկուղային՝ նկուղահարկի սենյակ**: .... Վազ տվեցի մեր բնակարանատերերի **նկուղասենյակ** .... (Կվին, էջ 334):

ՆՄԱՆՎԱԾՔ, գ. **Նմանությամբ սարքված բան, պատճեն:** ... Խոսում էր .... գնդիկավոր հեռախոսով՝ Էդիսոնի առաջին խոսող սարքի մի **նմանվածք** (Կվին, էջ 5):

ՆՅԱՐԴԱՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ան. **Նյարդավիրաբուծությանը հատուկ՝ վերաբերող:** **Նյարդավիրաբուժական** վիրահատության կարիք ունեցող քաղաքացիները կարող են ցուցակագրվել (Հւց, news.am):

ՆՅԱՐԴԱՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ, գ. **Նյարդային համակարգի վիրաբուծություն:** Կարևորվել է Հայաստանում **նյարդավիրաբուծության** զարգացումը (Հւց, news.am):

ՆՅԱՐԴԱՎԻՐԱԲՈՒԹՅՈՒՆ, գ. **Նյարդավիրաբուծության մասնագետ:** Հայ հայտնի **նյարդավիրաբույժ** այսօր իր 95-ամյակն է տոնում (Հւց, news.am):

ՆՅՈՒԹԱՄԱՐՄՆԱԿԱՆ, ան. **Նյութական և մարմնական:** Կարծում են՝ իշխելու կերպը գերազանցապես **նյութամարմնական** ոլորտի վրա է ազդում.... (ԱՄՄ, էջ 369):

ՆՆՋԱՇԱԳԻԿ, գ. **Գիշերաշապիկ:** Չեմ պատմելու տեսած երագս. // ո՞վ կհավատա, // որ ամբողջ գիշեր եղել եմ // քո **ննջաշապիկը** // ու այն էլ այնքան լայն ու մեծ .... (ԳԹ, 08.07.2016):

ՆՇԱՆԱԳՐԱՅԻՆ, ան. **Նշանագրությամբ արտահայտված:** Նա պիտի ստեղծեր **իր նշանագրային**, նշանապատկերային համակարգը (ԳԹ, 29.06.2018):

ՆՇԱՆԱԿՆՔՎԵԼ, ր. **Նշանակնիքով դրոշմվել:** Դրա համար ենք մենք **նշանակնիքով** ինչպես Կայենը.... (Հ, էջ 190):

ՆՇԱՆԱՊԱՏԿԵՐԱՅԻՆ, ան. **Նշանապատկերներով արտահայտված:** Տես ՆՇԱՆԱԳՐԱՅԻՆ-ի օրինակը:

ՆՇԱՑԱՆԿ, գ. **Ցուցակ:** Ժողովրդական տարբեր տոներին զոհաբերվող պտուղների, մրգերի, բույսերի հետ միասին Աստնե-Թոմփսոն-Ութերի (ATU) **նշացանկի** «ժողովրդական հեքիաթների տիպերի» 408 թվահամարին համապատասխանող հայկական մի շարք հեքիաթներում խաղարկվում է Զատիկի տոնին զոհաբերվող ձուն (ՊԲՀ, 2017, 2, էջ 92):

ՆՇԽԱՐԱՁԵՎ, մկբ. **Նշխարի ձև ունեցող՝ կյոբավուն:** .... Դրեց մի ծրարի մեջ, փակեց և կնքեց **նշխարաձև** (Բ 6, էջ 480):

ՆՈՐԱՀՐԱՏ, ած. **Նոր հրատարակված:** Տե՛ u ԶԻԳԶԱԳԸՆԹԱՑ-ի օրինակը:

ՆՈՐԱՍՏՈՐԱԳԻՐ, ած. **Նոր ստորագրված:** Ինչ վերաբերում է **Նորաստորագիր** պայմանագրին.... (Ազգ, 01.12.2017):

ՆՍՏԱՐԱՆԱՆՄԱՆ, ած. **Նստարանի նմանվող:** .... Պատերի երկարությամբ ձգվող **նստարանանման** քարին թիկն տված նստած էին քսան ավագակներ (Դյուսու, էջ 427):

ՆՍՏԵԼ ԹՄՐԱՍԵՂԻ ՎՐԱ, բ. **Թմրամոլ լինել,** այստեղ՝ **գբաղվել կաշառակերությամբ:** Տարիներ շարունակ ԿԳՆ-ը **նստած է եղել** կոռուպցիայի **թմրասեղի վրա** (Հեռ., Հասըթ, 06.06.2018):

ՆՍՏԵԼԱԳՈՐԳ, գ. **Նստելու համար գործված գորգ:** Կնախընտրեմ հորս այն տեղը, ցուրտ խոհանոցում, նախշուն **նստելագորգի** վրա .... (ԳԹ, 08.12.2017):

ՆՍՏԵԼԱՔԱՐ, գ. **Նստելու քար:** Իշխանն, ըստ երևույթին, նշան էր բռնել մոտիկ **նստելաքարը**.... (ՀՄ, էջ 417):

ՆՎԱԳԱԲԱԺԻՆ, գ. (երժշտ.): **Երաժշտություն՝ տվյալ նվագարանով կատարվող հատված:** Իսկ դաշնամուրի **նվագաբաժնում** գերիշխում է ակորդային, հարմոնիկ կերտվածքը (Իր., 06.04.2018):

ՆՎԱԳԱԿՑՈՂԱԿԱՆ, ած. **Նվագակցող:....** Տիգրան Լևոնյանի բեմադրություններում երգչախումբը և նվագախումբն ստանձնում էին ոչ թե սոսկ **նվագակցողական** դեր.... այլ լիարժեքորեն զարգացնում և խորացնում էին ներկայացման կառույցը և ընդհանուր ասեղիքը (Ազգ, 23.12.2016):

ՆՐԲԱԹԱՐՄ, ած. **Նուրբ թարմություն ունեցող:** Նրա ծոծրակից ելնող **նրբաթարմ** օճառի բույրն էի շնչում.... (Հ, էջ 69):

ՆՐԲԱԹԱՓԱՆՑ, ած. **Նրբորեն թափանցող, նրբությունները ըմբռնող՝ ընկալող:** Նրա մեջ կգտնեք **ամենանրբաթափանց** ու սրտակից մտերմություն (Բ 8, էջ 109-110):

ՆՐԲԱԼՈՒՐ, ան. **Նուրբ լսողությամբ օժտված:** Դրամատիկ սուպրանոյի թավշյա թախիծը վայել չէ շատերի **նրբալուր** ականջին (ԳԹ, 29.06.2018):

ՆՐԲԱՄԵՂՄՈՒԹՅՈՒՆ, գ. **Նուրբ մեղմություն:** Ետևումս լսում էի նրա ձայնը, այն հնչում էր սառնասիրտ հանդարտության մեջ և լիքն էր **նրբամեղմությամբ** (Հ, էջ 185):

ՆՐԲԱՇՆՈՐՀ, ան. **Նուրբ և շնորհալի:** Նրա ամբողջ կերպարանքի **նրբաշնորհ** գեղեցկությունը ու ... նրբաճաշակությունը հուզեցին սողային (Գոլու. 3, էջ 686):

ՆՐԲԱՊԱՀԱՆՔ, ան. **Նրբորեն պահանջող՝ պահանջ առաջադրող:** ... Ծննդյան տոների առթիվ նվիրել էր ճենապակյա իրեր, որոնք այնքան էլ չէին բավարարում իր **նրբապահանջ** բժախնդրությանը... (Գոլու. 2, էջ 13):

ՆՐԲԱՍՐԱՀ, գ. **Ոչ շատ մեծ, ոչ լայն սրահ:** ... Նուրբ ավազի շերտով ծածկված **նրբասրահը** տանում էր դեպի ... բակը (Բ 10, էջ 531):

## Շ

ՇԱԲԱԹԱՆՈՑ, ան. **Լրացնող թվական որոշի նշած շաբաթ(ներ) ի սևողությամբ:** Մի **շաբաթանոց** պայմանագիր է (ԹԸ, էջ 179):

ՇԱԳԱՆԱԿԱՑՈՒ, ան. **Շագանակագույն ցուրերով:** Ոսկերանգ **շագանակացուլ** խոշոր աչքերում զգայական մի արտահայտություն կար ... (Մոր., էջ 437):

ՇԱՂԱԹՂԹԻԿ, գ. **Շաղ տալու՝ ցրելու մանր թուղթ:** Դռան մոտ նրանց սպասում էր ծաղկափնջերով ու **շաղաթղթիկներով** լեցուն մի կառք (Դյուսև, էջ 398):

ՇԱՆԹԱԿՈՒՅՏ, ան. (բնատ., փխբ.): **Ներսում շանթեր կուտակած, խոռվահույզ:** Եվ Նարեկացին ձեռքը ճակատին, //մտքերով խոռվ՝ լուռ ու **շանթակույտ**, //Ձեռքերը ծալեց իմաստուն կրծքին (ԹԿ, էջ 53):

ՇԱՊԿԱԹԵՐԹ, գ. **Շապկաթուղթ:** ... Գրքերը **շապկաթերթերի** վրա կմնան այնքան ժամանակ, մինչև որ դրանք հոչակվեն ... (Բ 4, էջ 5047):

ՇԱՏՐՎԱՆԱՇԻԹ, գ. **Շատրվանի շիթ**: Լինելու է նաև 2800 **շատրվանաշիթով** հրապարակ... (ՀԱԳ):

ՇԱՓՇԱՓՈՑ, գ. **Շափշափելու ձայնը, շափշափելը**: .... Պոմպերի **շափշափոցը** դարձյալ տարածվեց տախտակամածի վրա (Մեր., էջ 189):

ՇԵՂԱԿՏՈՒՐ, ան. **Շեղ՝ թեք կտրվածքով**: .... Կար մի կանաչավուն հայելի՝ **շեղակտուր** տաշված եզրերով .... (Բ 2, էջ 449):

ՇԵՇՏՎԱԾՈՐԵՆ, մկր. **Շեշտված կերպով, շեշտորեն**: Թեն **շեշտվածորեն** հայկական պատմության՝ սա սուկ հայկական չէ (Մյուրմ., էջ 10):

ՇԵՐԵՓԱՑՈՒ, գ. **Շերեփ սարքելու համար հարմար նյութ՝ փայտ**: Տեն ԳԴԱԼԱՑՈՒ-ի օրինակը:

ՇԵՐՏԱԾԱԾԿՈՑ, գ. **Շերտավոր ծածկոց**: Այստեղ-այնտեղ սկսեցին բարձրանալ պատուհանների **շերտածածկոցները** (ԺՄ, էջ 41):

ՇԵՔՍՊԻՐԱՄՈԼ, ան. **Շեքսպիրի մոլի սիրահար**: ....Մեզ բերում-հասցնում են լինել թե չլինել ընտրանքին, որ մոռացել է **շեքսպիրամոլ** ազգս (ՄՊ, էջ 181):

ՇԻԿԱԽԱՐՏՅԱՇ, ան. **Շեկին տվող խարտյաշ**: .... Գլխանոցի տակից դուրս էին պրծնում **շիկախարտյաշ** անհնազանդ մազերը .... (Բ 4, էջ 66):

ՇԻԿԱԿԱՐՄԱՐԱՎՈՒՆ, ան. **Շեկին տվող կարմրավուն**: Երեսը ծածկվել էր .... **շիկակարմրավուն** .... ցից-ցից մազերով (ԺՄ, էջ 432):

ՇԻՆՇԻԼԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Շինշիլա՝ ճահճակուղբ բուծելը**: **Շինշիլաբուծությունը** Սյունիքում զարգանում է (Հեռ., Հ1, Օրակարգ, 18.04.2018):

ՇԻՆՇԻԼԱԲՈՒԹՅՈՒՆ, գ. **Շինշիլա՝ ճահճակուղբ բուծող**: **Շինշիլաբուծները** որոշել են .... (Հեռ., Հ1, Օրակարգ, 18.04.2018):

ՇԻՐՄԱՏԵՂ, գ. **Գերեզմանատեղ**: Մարդս գովքն իր թե շեփորեց // Խոր **Շիրմատեղն**, ասա փորեց (ԲԿ, էջ 105):

ՇՂԱՐՇԱՔՈՂ, գ. **Թեթև ծածկոց**: Բանաստեղծները աշխատում են այնպես ներկայացնել, ....որպես թե Աստված ինքն այն պատմելիս լիներ, առանց դույզն – ինչ **շղարշաքողի**.... (Հ, էջ 6):

ՇՄՈԼԱՀԱՐ, ան. **Շնոլ գազի ազդեցությանը ենթարկված, շնորով թունավորված:** Նա դետուդեն էր նետվում **շնուլահարի** պես ...  
(ԺՄ, էջ 550):

ՇՆԱԲՈՒՐԴ, գ. **Շան բուրդ՝ մազեր:** Այն ամենը, ինչ **շնաբրդի** հոտ չունի, ասպականում է օդը (Բ 8, էջ 705):

ՇՆՈՂԵՐԵՆ, գ. , մկր. (դիպվ.): **Շնող գյուղի խոսվածքը:** Սիրում եմ Շնողը՝ **շնողերենը**.... (ԼՋ, էջ 154):

ՇՆՉԱՆՅՔ, գ. **Շնչելու անցք:** .... **Շնչանցքը** ընդհատ-ընդհատ նետանում և լայնանում էր (Մեր., էջ 203):

ՇՇՈՒԿԱՉԱՅՆ, ան. **Ցածրաձայն, շշջաձայն:** .... Նրա **շշուկաձայն** տեղեկատվությունը ձևով ու ոճով սոսկ ողբերգու նմանեցումն էր երջանիկ անցյալի (ԼՋ, էջ 62):

ՇՈԳԱՀԱՐ, ան. **Շոգահարված, շոգը խփած, շոգից հարված ստացած:** Ինձ դուր է գալիս նրա մեծ, միշտ կիսաբաց ... բերանը, իսկական **շոգահար** ջահել շան երախ (Մոր., էջ 52):

ՇՈԳԵՆՎԱԳԱՐԱՆ, գ. **Շոգիով նվագարան:** .... **Շոգենվագարանի** հնչյունների տակ կսլանան ծնկահաս զգեստներով աղջիկներ.... (ԱՏ, էջ 59):

ՇՈՂԱՄԵՋՔ, ան. **Շողացող մեջքով:** Ցող ու ցայգալույս: Երկնային ուռկան: //Ոսկե ձկնիկներ՝ բյուր ու **շողամեջք** (ՌԿ, էջ 51):

ՇՈՂԱՅԱՅՏ, ան. **Շողեր ցայտող՝ արձակող:** Հանճարեղ մարդիկ ... Ունեն **շողացայտ** աչքեր, իսկ ես՝ դժբախտս, միայն սիրել գիտեմ ... (Բ 8, էջ 129):

ՇՈՂՈՄԱՉԱՅՆ, ան. , մկր. **Շողում՝ շողորթող ձայնով:** Գարինը խոսում էր **շողոմաձայն**.... (ԱՏ, էջ 173):

ՇՈՈՒԲԻՋՆԵՍՅԱՆ, ան. **Շոուբիզնեսի ոլորտին վերաբերող:** Աշխատելու հնարավորությունից զրկվելուց, **շոուբիզնեսյան** ծախու ընկերներից հիասթափվելուց հետո միակ ելքը գտա արտագաղթելու մեջ (ՀԱճ, news.am):

ՇՐՋԱՑԱՏԿԵԼ, ք. **Պարային շարժում՝ շրջացատկ կատարելը:** Վերջերս Ահմադ Ջուդեն հանդիսատեսներին ներկայացավ պարելով, պտովելով և **շրջացատկելով** Էյֆելյան աշտարակի և Փարիզի Օպերայի առջև՝ իր համար հատուկ գրված «Պարիր կամ մեռիր» երգի ներքո .... (Ազգ, 13.10.2017):

ՇՐՋԱՓՈՒԼԱՍՏԵՂԾ, ած. **Շրջափուլ ստեղծող:** Գրքի ֆենոմենն իբրև **շրջափուլաստեղծ** գործոն Եղիշե Չարենցի պոեզիայում (ԳԹ, 17.11.2017):

ՇՐՋԵԿ, գ. **Ջրոսաշրջիկ:** .... Հայլենդի գոյությունը վիթխարի զարկ է տալու զրոսաշրջիկությանը, **շրջեկների** հոսք կարող է բերել Մերձավոր Արևելքի, ԱՊՀ, Հայաստանին հարևան ու նաև հեռավոր երկրներից (ԳԹ, 13.04.2018):

ՇՈՒՏԵԼՈՒԿ, ած. **Շուտ դուրս եկած:** Սուրում-անցնում էին ծիծեռնակները՝ մոծակներ ու **շուտելուկ** ցայգաթիթեռներ որսալով .... (Գոլու. 6, էջ 139):

ՇՓՈԹԱԼԻ, ած. **Շփոթմունքով լի:** .... Այդ երեք օրերը .... եղել էին հուզախոիվ, տխուր և **շփոթալի** (Գոլու. 3, էջ 464):

ՇՔԱԹՈՒՂԹ, գ. **Ջարդաթուղթ, շքեղ տեսք հաղորդող թուղթ:** Աջ ու ձախ կողմերում ձգվում էին կապույտ **շքաթղթով** պատված խոր ցուցափեղկեր (Զոլու, էջ 11):

ՇՔԱԿԵՐՏ, ած. **Շքեղ կերտվածք ունեցող:** ....Դիմացի **շքակերտ** պատը ներկայացված է թեք, ձախ կողմի պյունը բերված առաջ (ՇԽ, էջ 17):

ՇՔԱՊԱՏՎԱՆԴԱՆ, գ. **Շքեղ՝ շքեղորեն զարդարված՝ շքեղ տեսք ունեցող պատվանդան:** .... Հոյակապ **շքապատվանդաններ** .... (Բ 8, էջ 291):

ՇՔԱՎԵՐՄԱԿ, գ. **Շքեղ ծածկույթ:** .... Դեմքը շրջանակված էր հնդկական կտավից մի փոքրիկ, մուգ գլխարկով՝ **շքավերմակով** կարված .... (Բ 8, էջ 34):

ՇՔԵՐԻԻԶԱԳՈՐԾ, գ. **Շքերիզ պատրաստող արհեստավոր:** .... **Շքերիզագործը** հայտնվեց այնտեղ .... (Բ 10, էջ 87):

## Ո

ՈԳԵԼԶՈՒՄ, գ. **Ոգու նահանջ**: Բայց ազգի **ոգելքումը** ինչպե՞ս կարող է ծրագիր լինել .... (ԳԹ, 02.06.2017):

ՈԼՈՐՆԱՊՈՒՐ, գ. **Ոլոռնով ապուր**: Գղալելով **ոլոռնապուրը՝** Ջոնը հաճույքով էր մտածում դրանց մասին (Գոլու. 6, էջ 68):

ՈԼՈՐԱՆԱՇԱՐ, գ. **Ոլորանների հաջորդական շարք**: .... Արծվանիքից դեպի ամառանոցային Կարմրաքար ավանի կես ճամփին՝ չվերջացող **ոլորանաշարի** հետևում .... թաքնվում էր ժայռի վրա գրանիտե կամարի ձև ունեցող Սառնակունքը .... (Գարուն, 1, 2017):

ՈԼՈՐՈՒՂԻ, գ. **Ոլորաններով՝ ոլոր-մոլոր ճանապարհ՝ ուղի**: Հետևելով այս գեղանկար **ոլորուղուն՝** .... դու նկատում ես բավականին մութ մի խորշ .... (Բ 2, էջ 436):

ՈՂԲԵՐԳԱՇՈՒՆՉ, ած. **Ողբերգական շունչ ունեցող**: .... Հանդիպել եմ Վարդանին՝ լինի դա մեր **ողբերգաշունչ** նկուղներում.... (ԳԹ, 01.06.2018):

ՈՂԲԵՐԳԻԿ, ած. **Ողբերգական**: Ցավը պետք է զգար ուրիշը, որ հասկանար ճիշդ **ողբերգիկ** (TV պլիք, 16.07.2018 ):

ՈՃՐԱՊԱՏԿԵՐ, գ. **Հանցագործության պատկեր**: Հիշողությունը պետք է պահպանվի. նրա մեջ հանցավոր կենսակերպի **ոճրապատկերն** է (ՌԴ, էջ 324):

ՈՍԿԵԱԶՎԻ, ած. (փխր.): **Բարյացական**: ....Նրանք միշտ ներկա են ու **ոսկեազվի** հայացքով հսկում են մայրերի կյանքի ընթացքը (ԳԹ, 29. 06. 2018):

ՈՍԿԵԽՑԱՆ, ած. **Ոսկե խցանով, խցանը ոսկե**: .... Երկար հոտ էր քաշում փոքրիկ, **ոսկեխցան** սրվակից (Գոլու. 2, էջ 37):

ՈՍԿԵՏԵՆԴ, գ. **Ոսկու տենդ, ոսկի որոնելու հիվանդագին մոլուցք**: Երբորդ օրն Ամերիկյան ծայրեծայր բռնվեց **ոսկետենդով** (US, էջ 313):

ՈՍԿՐԱԶԱՐԴ, գ. **Ոսկոր(ներ)ից պատրաստված զարդ**: .... **Ոսկրազարդեր** վաճառողներ (US, էջ 202):



ՈՍԿՐԱՇԵՆ, ան. **Ոսկրից շինված՝ պատրաստված: ....** Դուրս էր նետվում **ոսկրաշեն** իր որջից (*Մեր., էջ 78*):

ՈՏԱԲՈՒՍ, գ. (դիպվ.): **Ոտքով տեղաշարժվելը:** Վաղուց գնացքով ճանապարհ չէի գնացել: Հուսալի «**ոտաբուսը**» կա, շտապողականություն չկա, ինչու երկաթուղուց օգտվել (*ՄՀ, էջ 14*):

ՈՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Ճանապարհորդություն ոտքով:** Չեմ կարող հաստատապես որևէ բան պնդել, թե ի՞նչ էր այդ իմ **ոտագնացությունը** գյուղից դեպի քաղաք... (*ԻԲ, էջ 63*):

ՈՏՆԱԼՈԳԱՐԱՆ, գ. **Ոտքերը լվալու լոգարան:** Ջորջ Վաշինգտոնի **ոտնալոգարանը** (*Գոլու. 6, էջ 15*):

ՈՏՆԱԿՈՒՎ, գ. **Կոիվ՝ հարվածներ ոտքերով:** .... Նրան ամբողջ հասակով մեկ փռեց գորգին ... ոտքով հասցրած այն շեշտակի հարվածով, որը ծանոթ է նրանց, ովքեր հնուտ են **ոտնակովի** արվեստի մեջ (*Բ 6, էջ 208*):

ՈՐԴԱԿԵՐ, ան. **Որդը կերած, որդի կողմից ծակծկված: ....** **Որդակեր** երկու բազկաթոռ (*Բ 4, էջ 18*):

ՈՐՄՆԱՇԱՐՎԱԾ, ան. **Պատի մեջ կառուցված:** Հին որմնաշարված բուխարու քիվի վրա ընտանեկան լուսանկարներ էին դրված (*ՊՇ, էջ 34*):

ՈՐՈՏԱՄՐԻԿ, գ. **Որոտացող՝ որոտի ձայն հանող մրրիկ:** Բայց պոնտական **որոտամրրիկը** փույթս չէր (*Սյոբուլ., էջ 143*):

ՈՐՍԱԽԱՆՁ, ան. (փխբ.): **Որսը՝ տղամարդկանց, խանձող՝ հրապուրելով, իր կողմը գրավելով ծուղակի մեջ գցող:** Հոչակավոր երգչուհին, դառնալով **որսախանձ**, ուզում է հարուստ լինել ... (*Բ 10, էջ 22*):

ՈՐՍԱՄԱԿՈՒՅԿ, գ. **Որսի՝ որս անելու մակույկ:** Տե՛ս ՀԱՐՊՈՒՆԱԶԱՐԿ-ի օրինակը:

## Չ

ՉԱՓՌԱՍՏԱՎՈՐ, ան. **Չափոաստ ունեցող, չափոաստով կոճկվող:** .... Զգեստը բաղկացած էր սլաքավոր գուլպաներից, **չափոաստավոր** ոտնամաններից (*Դյուսնա, էջ 406*):

ՉԵԽԱՀԱՅ, գ. **Չեխայում բնակվող հայ: Չեխահայ** ձեռնարկատերը հաղթեց թուրք-գերմանական հզոր ընկերությանը Թուրքիայում (*Ազգ, 27.10.2017*):

ՉԻՆԱՆԿԱՐ, ան. **Չինական նկարներով պատված:** Տեղավորելով **չինանկար** բարձերը՝ նա մտնում էր .... (*Գոյու. 2, էջ 101*):

ՉՈՐԱՀԱՅԻԿ, գ. **Թխվածքի տեսակ:** Ես սափրվեցի, իսկ Ագնեսը իջավ ներքև՝ խանութից **չորահացիկ** և նարնջի հյույզ գնելու (*ՊՇ, էջ 26*):

## Պ

ՊԱԹՈՍԱԽԵՂԴ ԱՆԵԼ, բ. (դիպվ.): **Պաթոսով դատարկախոսել:** Մեկը Շուշանին ասի. **պաթոսախոսող անելու** փոխարեն տղայիդ բանակ ուղարկի.... (*Հնգ*):

ՊԱՀԱՆՑԻԿ, ան. **Անցողիկ:** Քամին ժամ ու պատարագ չունի, ինչպես **պահանցիկ** սերերը (*TV ալիք 16.07.2018*):

ՊԱՀԱՍԱՐՓՈՒՀԻ, գ. **Տարփածուի կողմից պահվող՝ վարձատրվող կին:** .... Նրանց տիրուհին սիրունատես կին է և, ուղղակի ասենք, գրեթե մի **պահատարփուհի** (*Բ 10, էջ 73*):

ՊԱՃՈՒՃԱՀՆԱՐ, ան. **Պաճուճանքներով հնարված:** Տե՛ս ԲՈՒՆՈՒՔԱՎՈՐ-ի օրինակը:

ՊԱՃՈՒՃԱՎՈՐ, ան. **Պաճուճաբանություններ ունեցող:** .... Բոլոր երկրների բարձր դասերում կա **պաճուճավոր** մի ժարգոն (*Բ 2, էջ 305*):

ՊԱՆՐԱՏՈՊՐԱԿ, գ. **Պանրի համար հատուկ տոպրակ:** ....Թաց **պանրատոպրակներ** կախվեցին Ալխոյի թամբից.... (*ՀՄ, էջ 146*):

ՊԱՍՏԱՌԱՇԱՐ, գ. **Պատասանների շարք:** .... Տարածքը .... գոտևորվել է չարագուշակ «Ավելի բարեկարգ Երևան» **պատասանաշարով**.... (Ազգ, 05.05.2017):

ՊԱՏԱՆԴԱՌԵԼ, բ. **Պատանդ վերցնել:** Բուժաշխատողներին **պա\_տանդառելը** աննախադեպ քայլ է (ՀՀ, 28.07.2016):

ՊԱՏԱՆԴԱՌՈՒԹՅՈՒՆ, գ. **Պատանդ վերցնելը:** Հայաստանի բժշկական ամբողջ հանրությունը պահանջում է շտապ ազատ արձակել **պատանդառության** մեջ գտնվող բուժաշխատողներին .... (ՀՀ, 28.07.2016):

ՊԱՏԱՍԽԱՆԱԶԵՎ, գ. **Պատասխանելու ձև՝ եղանակ:** Նրանք նաև ինչ-որ լեզու ունեն և տարբեր **պատասխանաձև** (ՌՇ, էջ 116):

ՊԱՏԳԱՄԱԿԱՆՉ, գ. **Ուղերձ, պատգամ:** Եվ հնչեց նրա ասելիքը իբրև Թորգոմյան տան շարունակվող **պատգամականչ**.... (ԳԹ, 30.09.2016):

ՊԱՏԿԵՐԱԴԱՃ, ան. **Պատկերները դաճած, դաճված պատկերներով՝ նկարներով, դաճելով նկարագարողված:** Պատերի վերևի մասը ծածկված էր իսպանական հիանալի **պատկերադաճ** կաշվով (Բ 8, էջ 19):

ՊԱՏԿԵՐԱՊԱՏՈՒՄ, գ. **Պատկերներով ստեղծվող պատմություն:** .... Ովքեր իրենց բարձր արժանիքներով հանդերձ դուրս չմնացին Գեղամյանի **պատկերապատումների** շարքը համալրելու պատվից .... (ԳԹ, 12.05.2017):

ՊԱՏՄԱԿԵՆՑԱՂԱՅԻՆ, ան. **Պատմական կենցաղին վերաբերող:** Ռիմա Պիպոյանը 2008-ից աշխատում է պարարվեստի պետական քոլեջում՝ դասավանդելով ժողրնորոշ, դասական և **պատմականցաղային** պարեր (Ազգ, 02.12.2016):

ՊԱՏՄԵԼԱՈՃ, գ. **Պատմելակերպ, պատմելաձև:** .... Ժողովրդականությունը բացատրվում է .... Ճարտար **պատմելաճով**.... (Ազգ, 01.06.2018):

ՊԱՅՄԱՆԱՓՈԽ, ան. **Պատյանը փոխած:** - Տխմանր **պատյանափոխներ**(ՌՇ, էջ 207):

ՊԱՏՇԱՃԱԼԻՑ, ան. **Պատշաճությամբ լի, պատշաճ:** Իր աները շատ **պատշաճալից** վերաբերմունք էր ցույց տալիս Ֆլերին (*Գոլու. 4, էջ 121*):

ՊԱՏՈՒՀԱՆԱԽՈՐՇ, գ. **Պատուհանի խորշ, լուսամուտախորշ:** Քոլեջի խոր **պատուհանախորշերում** դրված էին դրվագագարդ պոռոներ (*Կուսկեր, էջ 27*):

ՊԱՐԱԲԵՄԱԴՐԻՉ, գ. **Պար բեմադրող:** Հայկ Սահակյանը հյուրախաղերով ու համերգներով հանդես եկավ աշխարհի շատ երկրներում, որպես **պարաբեմադրիչ** և պարուսույց (*TV ալիք, 04, 2018*):

ՊԱՐԱԳԵՏ, գ. **Պարի մասնագետ:** Բազմաթիվ **պարագետներ** անդրադարձել են այս հարցին (*TV ալիք, 04, 2018*):

ՊԱՐԱԴՈՔՍԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Պարադոքս(ներ) սիրելը, դրանք սիրելու հատկությունը:** .... Նա ձեզ կշամփրի ....., որպեսզի բուժի **պարադոքսասիրության** ակտից (*Դյանս, էջ 449*):

ՊԱՐԱՆԱՀՅՈՒՄ, ան. **Պարաններից՝ պարաններով հյուսված:** .... **Պարանահյուս** ներբաններով քաթանն կոշիկներ(*ԺՄ, էջ 314*):

ՊԱՐԲԵՐԱԲԱԺԱՆՈՒՄ, գ. **Շրջափուլերի բաժանում, շրջանաբաժանում, պարբերացում:** .... [Դա] հստակեցնում է **պարբերաբաժանման** հիմունքները .... (*ԳԹ, 07.07.2017*):

ՊԱՐԲԵՐԱԳԻՐՔ, գ. **Պարբերաբար հրատարակվող գիրք:** ....**Պարբերագիրքը** հետաքրքրական էր նաև նրանով, որ յուրաքանչյուր աշակերտին նվիրված քառատող էլ կար (*ՄՄ, էջ 250*):

ՊԵՏԱԿԱՆԱԿԻՐ, ան. **Պետականություն կրող:** «Դեմոկրատիայի» առաջին հարվածը ստացան ու ստանում են ավանդական արժեքները՝ եկեղեցին, կրթությունը, բարոյական բոլոր նորները, **պետականակիր** ինստիտուտները (*Իր., 19.05.2017*):

ՊԵՏԱՎԻԾՄԱՆԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. (հավ.) **Պետական ավիա-ծառայություն:** Պորոշենկոն կկասեցնի Ուկրաինայի **պետավիա-ծառայության** պետի լիազորությունները (*Հնց, news.am*):

ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ, գ. (հավ.): **Պետական քարտուղար: ԱՄՆ պետքարտուղարը** հայտարարել է Իրանի գործողությունների խմբի ստեղծման մասին (*Հնգ, news.am*):

ՊՂՆՁԱՀԱՏԱԿ, ան. **Պղնձե հատակով՝ հատակ ունեցող: ...** Թունդ ապրումներ էր ունենում ... **Պղնձահատակ** հյուրասենյակում շփվելով նոր սերնդի հետ (*Գոլու. 4, էջ 36*):

ՊՂՆՁԱՓՈՂ, գ. **Պղնձյա փող (երաժշտական գործիք): ...** Նրա հզոր ձայնը որոտում էր **պղնձափողերի** ձայնից ոչ պակաս (*Կոսպեր, էջ 75*):

ՊՆԱԿԱՐԱՐԱՆ, գ. **Պնակները՝ ափսեները դնելու պահարան՝ գետեղարան: ...** Ճաշարահը զարդարված էր կաղնյա բարձր **պնակադարաններով**, որոնց վրա դասավորված էին պապենական սեղանասպասքից ամենից շատ հետաքրքրականները ... (*Բ 10, էջ 585*):

ՊՈԼՍԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ, գ. **Պոլսում բնակվող հայություն: Պոլսահայությունն** օտարանում է իր մայրենիքից (*Իր., 11.05.2018*):

ՊՈԼՍԱՀԱՅՈՒԻՇԻ, գ. **Պոլսում բնակվող հայուհի: Ինչպիսին է պոլսահայուհի** Գայուշ Չալը Քման Գավրիլովի ընտանիքը (*Իր., 11.05.2018*):

ՊՈՌՆԿԱՏԻՊ, ան. **Պոռնիկի տիպ՝ արտաքին ունեցող: ...** Այնտեղ գրեթե մարդ չկար, բացի **պոռնկատիպ** շիկահեր աղջիկներից (*Սել., էջ 76*):

ՊՐՏԱՐՈՒԾՈՐԵՆ, մկբ. **Պորտաբույծի նման, որպես պորտաբույծ, պորտաբույծ լինելով: Անվայել բան էր թվում պորտաբուծորեն** կառչել իր կյանքի անճիգ ու անաշխատ այս մնացորդին (*Գոլու. 3, էջ 434*):

ՊՍԱԿԱԹԱՓ, ան. **Գլխի պսակը՝ մազերը թափած, մազաթափ: ...** Ճաղատ ու **պսակաթափ** գլուխը ... (*Բ 4, էջ 15*):

ՊՏՈՒՏԱԿԱՍՏԵՂՄԻՉ, գ. (տեխ.): **Պտուտակը սեղմող գործիք՝ հարմարանք: ...** Պտուտակասեղմիչն ավելի լավ չէր գործի այդ ձեռքի օգնությամբ ... (*Բ 6, էջ 505*):

ՊՏՈՒՏԱԿԵՆՏՐՈՆ, գ. **Պատման կենտրոն**: .... Հինգ կիլոմետրի հասնող տրամագծով «ջրավուր» թայֆունի **պտուտակենտրոնն** է .... (US, էջ 354):

ՊՏՏԱՀՈՍՔ, գ. Դրանք առաջանում են շնորհիվ **պտտահոսքերի** (Հնց):

ՊՈՒՊՐԻԿԱՆՄԱՆ, ան. **Պուպրիկի՝ մանկական խաղալիք-տիկնիկի նման**: Նա սիրահարվել էր գեղանի, **պուպրիկանման** մի աշակերտուհու .... (Սյուրև, էջ 258):

## Ջ

ՋԱՂԱՅԱԶՈՐ, գ. **Ձոր, որտեղ ջրաղաց կա**: .... Առավոտի հետ ամուսինը իջել է **ջաղացածորի** լանջերը ընկույզ թափ տալու (ՀՄ, էջ 315):

ՋԻՆՍԱՏԵՆԻ, գ. **Ջինսի տենդ, ձեռք բերելու՝ հագնելու հիվանդագին ցանկություն**: **Ջինսատենդը** մի օր էլ չտնեց (Կվին, էջ 8):

ՋՐԱԼԵՌ, գ. **Ջրի լեռ՝ լեռնացած ալիք**: «Արիզոնան» ելավ **ջրալեռան** կատարը (US, էջ 354):

ՋՐԱԽՈՐԻՆՈՐԱՏ, գ. **Ջրի խորխորատ**: .... Թաղվելով **ջրա-խորխորատների** մեջ՝ «Արիզոնան» հեռանում էր կղզուց (US, էջ 342):

ՋՐԱՀԵՏՔ, գ. **Հեռք ջրի մեջ**: Դեկֆիններ էին սլանում զբոսանավի **ջրահետքերով** .... (US, էջ 234):

ՋՐԱՂՄՈՒԿ, գ. **Ջրի աղմուկ**: –Ինձ ինչ, ում տերն ուզում ես եղիր: Ինձ այդ **ջրաղմուկն** է հարկավոր (ԳԹ, 01.07.2016):

ՋՐԱՆԱՊԱՏ, գ. **Ջրի անապատ՝ համատարած ջրային տարածք**: Շոգենավը ծանր ճնշում-տնքում էր՝ վերուվարելով ահավոր **ջրա-նապատում**(US, էջ 17):

ՋՐԱՊԱՏՎԱՐ, գ. **Ջրային՝ ջրի պատվար, պատնեջ**: .... **Ջրապատվարի** մոտ, ....գետի ափին կանգ առավ երկթի մի նավակ (US, էջ 9):

ՋՐԱՑՈՒՔ, գ. **Ջրի ցուլք**: [«Արիզոնայի»] կողերը **ջրացուլքերից** կանաչավուն երանգ էին առել .... (US, էջ 201):

ՋՐԱՓՐԿԱՐԱՐ, գ. **Ջրում փրկարարական աշխատանք կատարող փրկարար: Ջրափրկարարները** մոտ 1 կմ ափի երկայնքով իրականացրել էին որոնողական աշխատանքներ (*Հւց*):

ՋՐԱԲՈՂ, գ. **Ջրի քող՝ ծածկոց՝ ծածկույթ:** Նավաքթից տախտակամածով տարածվող **ջրաքողը** ծածկեց մադամ Լամոլին ... (*US, էջ 342*):

## Ռ

ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ գ. **Ռադիոհաղորդումներ հաղորդող ընկերություն:** Թուրքիայում **ռադիոընկերությանը** տուգանել են Ալիևին ծաղրելու ու վիրավորելու համար (*Հւց, news.am*):

ՌԱԴԻՈԺԱՄ, գ. **Ռադիոհաղորդմանը հատկացվող ժամանակ:** Երևանում մեկնարկել են Ուրուգվայի «Կոմիտաս» **ռադիոժամի** 80-ամյակի միջոցառումները (*Հւց, news.am*):

ՌԱԴԻՈԻՍՍԷ, գ. **Ռադիոյով հաղորդված՝ ասված խոսք:** Այս էր նրա վերջին **ռադիոխոսքը** (*US, էջ 158*):

ՌԱԴԻՈԾԱԾԿՈՒՅԹ, գ. **Ռադիոալիքների սփռման տարածքը:** ՎլիվաՍել-ՄՏՍ-ը հրապարակել է իր **ռադիոծածկույթի** քարտեզը (*Հւց, news.am*):

ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԱԳԻՐ, գ. **Ռադիոյով (հաղորդելու) հաղորդագիր՝ հաղորդագրություն, ռադիոհաղորդագրություն:** ... Հին ու Նոր աշխարհի լրագրերին **ռադիոհաղորդագիր** ուղարկեց (*US, էջ 247*):

ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԱՎԱՐՈՒՅԻ, գ. **Ռադիոյի հաղորդավարուհի:** ԱՄՆ-ում **ռադիոհաղորդավարուհին** ծննդաբերել է ուղիղ եթերում (*Հւց, news.am*):

ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Ռադիոհաճախություն:** ԱՄՆ դեսպանատունը **ռադիոհաճախականությունների** օգտագործման թույլտվություն կատանա (*Հւց, news.am*):

ՌԱԴԻՈՀԱՄԱԿԱՐԳ, գ. **Ռադիոհաղորդման և ռադիոընդունիչ համակարգ:** Իսպանական «Թելտրոնիք» ընկերությունն ուսումնասիրել է ՀՀ-ում **ռադիոհամակարգերի** արտադրության ոլորտը (*Հւց, news.am*):

ՌԱԴԻՈՇԵՌԱՐՁԱԿՈՒՄ, գ. **Ռադիոհաղորդումների հեռարձակում:** Այսօր մանկական հեռուստատեսության և **ռադիոհեռարձակման** միջազգային օրն է (*ՀՄԳ, news.am*):

ՌԱԴԻՈՇԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄ, գ. **Ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումներ:** Կընդունվի **ռադիոհեռուստահաղորդումների** էթիկայի մասին խարտիա (*ՀՄԳ, news.am*):

ՌԱԴԻՈՇԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Ռադիո և հեռուստատեսություն:** Արդեն 2012թ. կսկսվի թվային **ռադիոհեռուստատեսության** անցնելու պայմանագրերի կնքումը (*ՀՄԳ, news.am*):

ՌԱԴԻՈՄՐՑՈՒՅԹ, գ. **Ռադիոյով անցկացվող մրցույթ:** Երգչուհի Լենա Ղազարյանի «Երևան» երգը՝ Նյու Յորքի **ռադիոմրցույթի** հաղթող (*ՀՄԳ, news.am*):

ՌԱԴԻՈՆԱՎԻԳԱՑԻՈՆ, ած. **Ռադիոսարքերով կառավարվող՝ ուղղորդվող:** Իրանը տարեվերջին կներկայացնի հեռավոր **ռադիոնավիգացիոն** գործողության ռադարներ և ՀՕՊ համակարգեր (*ՀՄԳ, news.am*):

ՌԱԴԻՈՇՈՒ, գ. **Ռադիոյով անցկացվող շոու:** ԱՄՆ-ում ինքնասպան են եղել «Երջանկության ձգտում» **ռադիոշոուի** հաղորդավարները (*ՀՄԳ, news.am*):

ՌԱԴԻՈՓՈՐՁԱՐԿՈՒՄ, գ. **Փորձարկում ռադիոսարքերի միջոցով:** Ռուս կապավորները Հայաստանում լեռնային տեղանքում **ռադիոփորձարկումներ** են իրականացվել (*ՀՄԳ, news.am*):

ՌԱԶՄԱՏԻԵԶԵՐԱԿԱՆ, ած. **Ռազմական և տիեզերական:** ՌԴ **ռազմատիեզերական** ուժերի ավիախումբը մեծացրել է Սիրիայում մարտական թռիչքների քանակը (*ՀՄԳ, news.am*):

ՌԵԿՈՐԴԱԿԻՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ռեկորդակիր լինելը:** Բարձրանում էր .... դեպի համաեվրոպական **ռեկորդակիրություն** աշտարակը՝ հեռուստատեսային աշտարակը (*ՀՄ, էջ 694*):

ՌԵՏԻՆԱՏՈԳՈՐՈՒՆ, ած. **Ռետինով տոգորված՝ համակված, հագեցված:** Սև կոստյումի վրայից հագել էր **ռետինատոգորուն** թիկնոց (*ԺՄ, էջ 7*):



ՌՄԲԱԿԱՅՈՒՆ, ած. **Ռումբերի նկատմամբ կայուն, ուրա-  
հարման դեպքում կայուն՝ պաշտպանված:** .... Ռմբակայուն նկուղումն  
էինք պաշտպանվել .... (Սյուրմ., էջ 78):

ՌՄԲԱԲԿՈՒԿԱՆ, ած. **Հակառակորդի դարպասը խոցող,  
գոլ խփող:** Վագներ Լավն ու Յուրա Մովսիսյանը **ոմբարկուական**  
սուպերմենամարտ կպարզեն (Հւց, news.am):

ՌՌՌՏԱՅՆԱՅՆԵԼ, բ. **Ռորոտային դարձնել:** Tesla-ն ներկա-  
յացրել է **որորտայնացված** «օձ» լիցքավորումը էլեկտրոմոբիլների  
համար (Հւց, news.am):

ՌՌՌՏԱՆՄԱՆ, ած. **Ռորոտի նմանություն ունեցող:** .... Նրա  
մեջ երևան էր եկել **որորտանման** մի բան (Կվին, էջ 17):

ՌՌՌՏԱՇԻՆԱԿԱՆ, ած. **Ռորոտաշինությամբ զբաղվող:** Հա-  
յաստանի 50 դպրոցներում կստեղծվեն **որորտաշինական** խմբակներ  
(Հւց, news.am):

ՌՌՌՏԱՅՈՒՄ, գ. **Ռորոտների կիրառում:** Հայաստանում  
կքննարկվեն վիրաբուժության և ուռուցքաբանության **որորտացման**  
հեռանկարները (Հւց, news.am):

ՌՌՌՏԱՅՆԵԼ, բ. **Ռորոտ դարձնել:** Ճապոնացիները **որորտաց-  
ված** թռչող փողրակ են ստեղծել (Հւց, news.am):

## Ս

ՍԱԴԱՓԱԾԱԾԿ, ած. **Սադափով պատած՝ ծածկված:** Գնչուհին  
**սադափածածկ** սեղան բերելով դրեց սուլթանի առջև.... (ԱԹ, էջ 25):

ՍԱԴԱՓԱՅԻՆ, ած. **Սադափի գույնի:** Նրա երբեմնի ձյունա-  
սպիտակ դեմքը ժամանակի ընթացքում դարձել էր ջերմ ու **սա-  
դափային** (Բ 8, էջ 39):

ՍԱԼԻԿԱԶԵՎ, ած. **Սալիկի ձև ունեցող, սալիկանման:** ....  
Մրգերը չորացնում են **սալիկաձև** .... (Դ., Մ., էջ 160):

ՍԱԿԱՎԱՔՈՒՆ, ած. **Քիչ քնող՝ քնած:** .... Սակավաքուն Գրանդեն  
իր գիշերների կեսը հատկացնում էր .... նախապատրաստական  
հաշիվներին (Բ 2, էջ 533):

ՍԱՀԱՎԱԶ ՏԱԼ, ք. **Սահելով վազել:** Ես սահավազ տալով հետևում էի Ազատին... (ԻԴ, էջ 142):

ՍԱՀՄՌԿԱՆԵՔ, գ. **Սարսափ:** Հիշողությունն ինձ խորը սահմոկանք պատճառեց... (Հ, էջ 197):

ՍԱՆԴԱԼԱՓԱՅՏ, գ. **Սանդայի՝ ճանդանի ծառի փայտ:** ... **Սանդալափայտից** պատրաստված ... արկղ ... (Բ 10, էջ 54):

ՍԱՆԴՂԱՓՈՒԼ, գ. **Սանդողքի փուլ՝ աստիճան:** [Պալատը] ... Երեք **սանդղափուլով** իջնում էր դեպի ... ծովախորշի ալիքները (ԱՏ, էջ 260):

ՍԱՊԱՏԱՄԵՋԶ, ան. (փխբ.): **Սապատավոր մեջք ունեցող՝ մեջքով:** Սապատամեջք փոքրիկ «Միտրոններ» (Կվին, էջ 240):

ՍԱՊԱՏԱՎՈՐՎԵԼ, ք. Այստեղ՝ (փխբ.): **Սապատաձև ոլորան կազմել:** Գոմեշը կանգ առավ՝ կապանը կապան էր, արահետը **սապատավորվում** էր կապանով (ՀՄ, էջ 217):

ՍԱՌՆԱԶԻՆԶ, ան. **Սառը և ցինջ:** Իր լուսամուտների դիմաց տարածվող տեսարանն էր այդ սիրո առարկան՝ **սառնաջինջ** լույսը կանաչ բլուրների վրա (Գուլ. 3, էջ 464):

ՍԱՌՆԱՍԱՌՆ, ան. **Շատ՝ արտակարգ սառն:** Պինդ շիթերը **սառնասառն** ասեղների նման հարվածեցին տաքացած մարմնիս (Կվին, էջ 5):

ՍԱՌՈՒՅՑԿՈՏՐԻՉ, գ. **Սառույցը կտրելու, մասերի բաժանելու խոհանոցային գործիք՝ հարմարանք:** ... Նա հավանաբար իր **սառույցկտորիչը** ժառանգություն կթողնի (Սել., էջ 360):

ՍԱՌՑԱԳՆԴԻԿ, գ. **Սառույցի գնդիկ՝ փոքրիկ գունդ:** Երրորդ հարկից թափված ջուրը մայթին է հասնում **սառցագնդիկների** փոխված (ԱՏ, էջ 136):

ՍԱՌՑԱՀՈՒՆՉ, ան. (փխբ.): **Սառը, ոչ ջերմ:** Նրանց **սառցահունչ** մտերմությունից սարսուցի (ԳԱ, էջ 27):

ՍԱՌՑԱՓԱՅԼ, 1. գ. **Սառույցների փայլ:** 2. ան. **Սառույցների փայլ արձակող:** Թանձր մշուշն էր կախել իր շղարշը ձյունափառ // Գետի վրա **սառցափայլ** (Դուպեր, էջ 195):

ՍԱՄՆԱՀԱՅ, գ. **Սասունցի հայ:** Ել, Սասնահայ ես // Նաիրիդ պահես (ՌԿ, էջ 33):

ՍԱՄՆԱՇՈՒՆԶ, ած. **Սասնա շունչ ունեցող:** ....Հայ սասնաշունչ, ուր ես հասել (ՌԿ, էջ 11):

ՍԱՐՍԱՓԱՀԱՐՈՒՅՑ, ած. **Սարսափ առաջացնող՝ հարուցող:** ....Ինչպես ամեն մի նոր ծնունդ, մահն էլ վախ ու երկյուղ է տաձում հանդեպ **սարսափահարույց** նորացումի (Հ, էջ 26):

ՍԳԱՍՐԱՀ, գ. **Սգո արարողությունների սրահ:** ...Մի քանի ընկերների հետ եկավ **սգասրահ՝** մասնակցելու գրչակից ընկերոջ հոգեհանգստին (ԳԹ, 08.07.2016):

ՍԵԿԱՊԱՏ, ած. **Սեկով պատված:** Նա սեղանի վրա իր զոքանչի առաջ դրեց **սեկապատ** բազմաթիվ տուփեր (Ր 4, էջ 182):

ՍԵՂՄԱԳՐԵԼ, բ. **Սեղմ կերպով գրել, համառոտել, կրճատել:** ՀՀ բնապահպանության նախարարությունը ... Ուղղակի **սեղմագրել** է 839 էջանոց նախագիծը 8 էջի վրա և դրան տվել դրական եզրակացություն (ԳԹ, 01.06.2018):

ՍԵՂՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Սեղմ՝ համառոտ՝ կրճատ շարադրանք:** Ինչո՞ւ՝ բնապահպանության նախարարությունը այս **սեղմագրության** մեջ ընդհանրապես չի արտացոլել... (ԳԹ, 01.06.2018):

ՍԵՂՄԱՍԿԱՎԱՌԱԿ, գ. **Խտասկավառակ: Սեղմասկավառակներ** չեն սիրում (ՀՄ, էջ 47):

ՍԵՊԱՀՅՈՒՄ, ած. **Սեպածն հյուսվածքով:** .... Ի ցույց էին դնում կանաչ **սեպահյուս** կարմիր գուլպաներով պրկված սրունքները (Ր 4, էջ 358):

ՍԵՌԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Սեռական հարաբերություն:** Ասա խնդրեմ, այդ Ալֆավիլիում **սեռահարաբերություն** կա (ՀՄ, էջ 44):

ՍԵՌԱՄՈՂԱԳԱՐ, գ. **Սեռական մոլագար: Սեռամոլագարների** մի տեսակ կա գրական ասպարեզում, ընդ որում, երկու սեռին պատկանող (ՄՊ, էջ 92):

ՄԵՌԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Սեռական ոլորտին վերաբերող պատկերացումների համակարգ:** Հայկական սեռամտածողության ամենավատ դրսևորումը (*Հսգ, wordpress.com*):

ՄԵՎԱԹԻԿՈՒՆՔ, ան. **Սև թիկունք ունեցող: Սևաթիկունք** թոջնակին էլ չտեսա (*ՄՀ, էջ 109*):

ՄԵՎԱԿԱՇՎԵ, ան. **Սև կաշվից:** Տես ԿՈՐԱԵԶԲ-ի օրինակը:

ՄԵՎԱԿՈՒՏԱԿ, մկր. **Կուտակվելով սև՝ մուգ գույն ստացած:** Տե՞ս ԱՄՊԱԳՈՐՇ-ի օրինակը:

ՄԵՎԱՄԱՂՁՈՒԹՅՈՒՆ, գ. **Հոգեկան ընկճված վիճակ, մե-լանխոլիա:** Ներքուստ ես հաճախ ենթակա էի լինում **սևամաղձության** ու տարակուսանքի ջախջախիչ գրոհներին (*Հ, էջ 90*):

ՄԵՎԱՄԵԶՔ, ան. **Սև մեջք ունեցող:** Ուռի շիվերին **սևամեջք** ձկներ էին հագցրած (*ՀՄ, էջ 351*):

ՄԵՐԱՌԱՏ, ան. **Մերը (կաթի) առատ, սերավետ, առատ սեր պարունակող:** Դրացի մի ազարակ մեզ հայթայթում էր դույլերով **սերառատ** փրփրալից կաթ (*Սյուրև, էջ 165*):

ՄԹԱՓԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ, գ. **Իրականությունը ճշգրիտ ընկալելը:** ...Ժամանակի ազգային կյանքի շահնուրյան մեկնաբանությունները իրականության հանդեպ **սթափատեսությունից** բացի զգուշաց-ման պես բան են՝ վերահաս ուժացման վտանգից խուսափելու (*Ազգ, 20.05.2016*):

ՄԹԻԵՍԱԿԱՅՈՒՆ, ան. **Դիմակայուն, սթրեսների նկատմամբ կայուն:** ....Զորամասի հրամանատարությանը պարզ է դառնում, թե նորակոչիկ զինվորը որքանով է դիմացկուն, **սթրեսակայուն** և պատ-րաստ տարբեր հանձնարարություններ կատարելուն (*ՀՀ, 25.07.2016*):

ՄԹԻԵՍԱՀԱՐՈՒՅՑ, ան. **Սթրես առաջացնող, հարուցող:** Հետո քաշվեց սարերը նկարելու, հեռու մեղավոր աշխարհից, քաղաքի **սթրեսահարույց** մթնոլորտից (*Ազգ, 09.06.2018*):

ՄԻՍԵՌԱՄԱՌՆ, ան. **Սիսեռի հետ խառն՝ խառնված, հետը աղացած սիսեռ խառնած:** .... Այստեղ կկարողանամ գրպանիս հարմար իջևան գտնել ու **սիսեռախառն** սուրճ (*Մեր., էջ 20*):

ՄԻՍԵՌԱՆԱԽՇ, ան. **Միսեոի նման պուտերով նախշված:** Թռչունները նույնպես վառ գունավորված էին. **սիսեռանախշ**, շերտավոր, խայտաբղետ (*ԹՇ, էջ 110*):

ՄԻՐԱՊՏՈՒՂ, գ. **Միրո պտուղ:** Խնձոժք: Չէ, **սիրապտուղ** կարելի է կոչել (*Գոլու. 6, էջ 244*):

ՄԻՐԱՏԱՐՓԱՅԻՆ, ան. **Միրային տարփանքին վերաբերող:** Միայն **սիրատարփային** դրվագները հետաքրքրում էին նրան (*Գոլու. 5, էջ 526*):

ՄԻՐԱՐԺԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Միրո արժանանալը:** Մանկական **սիրարժանությունն** ամբողջովին չքվել-անհետացել էր ինձանից.... (*Հ, էջ 89*):

ՄԿԱՈՒՏԱՊԵՏ, գ. **Սկաուտների ղեկավար:** Տղաների **սկաուտապետը** սկզբում Միհրան Ճիգմեչյանն էր (*ՍՍ, էջ 240*):

ՄՅՈՒՆԱՇԱՐԱԶԱՐԴ, ան. **Սյունաշարով զարդարված:** Այդ հրապարակից է ճանապարհը տանում **սյունաշարազարդ** նավահանգիստը .... (*ԳԹ, 16.02.2018*):

ՄՆԴՈՒՄԱՆՄԱՆ, ան. **Մնդուսի նման ողորկ ու փայլուն:** .... Այտերի **սնդուսանման** աղվամազը .... (*Բ 8, էջ 100*):

ՄՆԿԱԲԵՐ, ան. **Մսկերի աճը խթանող:** ....Անատոլիան մորից լսած օրորոցայիններ էր երգում **սնկաբեր** անձրևի մասին (*ՆՍ, էջ 236*):

ՄՆԿԱՀՈՏ, գ. **Մունկի հոտ՝ բույր:** Հողից **սնկահոտ** էր գալիս.... (*ՀՄ, էջ 208*):

ՄՆԴԱԹՈՒՆԱՎՈՐՈՒՄ, գ. **Մանդային թունավորում:** Նրա խոսքով՝ **սնդաթունավորման** ախտանիշներից են ընդհանուր թուլությունը, փսխումը, սրտխառնոցը, մարմնի ջերմաստիճանի բարձրացումը, աղիների գործունեության խանգարումները (*Հնց, 168.am*):

ՄՆԴԱԽԱՆՏՈՒՄ, գ. **Մանդի՝ սնվելու գործընթացի խախտում՝ խախտելը՝ խախտվելը:** .... Կետորսը մեկն է նրանցից, ովքեր հյուծվում են **սնդախախտումից** (*Մեր., էջ 249*):

ՄՆՆԴԱԾԱԽՍ, գ. **Մնունդ ձեռք բերելու համար կատարվող ծախս:** .... Կրճատումներ մտցրեց **աննդաժախսերի** մեջ .... (Բ 10, էջ 672):

ՄՆՆԴԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, գ. **Մսվելու սովորական կարգի փոփոխություն:** Այսօրվա դպրոցի վիճակը շատ նման է Ֆասթ-Ֆուդային **աննդահեղափոխությանը**, դյուրին, գրավիչ և մահացու (ԱՊ, էջ 131):

ՄՆՆԴՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, գ. **Մննդի օգտագործում:** Դրանք կարող են օգտակար չլինել **աննդօգտագործման** ժամանակ (Հւց, news.am):

ՍՈՂԱԲԱՅԼ, գ. **Սողալով տեղաշարժվելը:** .... Պետք է կարողանալ // **սողաքայլով** օձի ու մողեսի՝ ճապուկ, // մրջնի քայլով անհույս, // ելնել Լեռը դեպի.... (ԳԹ, 08.07.2016):

ՍՈՃԵԳՈՒԵՆ, ած. **Սոճու գույնի:** Պահապանները հանեցին ցուլի մորթուց **սոճեգույն** կիսաբաճկոնները .... (ՌՇ, էջ 280):

ՍՈՃԵՓԱՅՏ, ած. **Սոճու փայտից պատրաստված, սոճեփայտե:** Բերեց **սոճեփայտ** մի արկղիկ .... (ԱՏ, էջ 47):

ՍՈՅԿԱՅԲ, գ. **Սոցիալական կայք:** Թուրք զինվորը երկաթով դաժան ծեծել է կատվին. **սոցկայքերը** խիստ են արձագանքել (Հւց, news.am):

ՍՈՅՑԱՆՑԱՅԻՆ, ած. **Հանրացանցին վերաբերող:** 28-ամյա կնոջը մեղադրանք է առաջադրվել՝ նախկին ամուսնու **սոցցանցային** էջերը մտնելու համար (Հւց, news.am):

ՍՈՅՓԱԹԵԹ, գ. (հպվ.): **Սոցիալական փաթեթ:** 3 ամսվա ընթացքում ապահովագրական ընկերությունները **սոցփաթեթի** մասով 109 մլն դրամ են աշխատել (Հւց, news.am):

ՄՊԱՍԱՆՈԹ, գ. **Սպասի՝ ճաշատեսակների համար գործածվող անոթ, ճաշաման, սպասաման:** .... Սպասանոթները դրված են .... (Բ 4, էջ 238):

ՄՊԱՍԲԱՎՈՐԵԼ, բ.**Սպասքաղրել:** Գեղեցիկ **սպասքավորեք** սեղանը, կարելի է միացնել հանդարտ երաժշտություն (TV ալիք, 13.08.2018):

ՄՊԻԱՇԵՐՏ, գ. **Սպիների շերտ:** ... Նախնադարյան ցեղի տղայի մարմնին **սպիաշերտեր** էին քաշում ... (Դ, Մ., էջ 68):

ՄՊԻԱՊԱՏ, ած. **Սպիներով պատված, վրան շատ սպիներ ունեցող:** ... Տեսավ մի ճանապարհորդի ... թուխ և **սպիապատ** դեմքով ... (Բ 4, էջ 756):

ՄՊԻՏԱԿԱԾՈՒՓ, ած. **Ճերմակածուփ:** Մեղեդին ահագնանում է, բարձրանում: Վիթխարի ալիք է վազում լեռան պես աժդահա, գալիս առնում ինձ իր կապույտ, **սպիտակածուփ** թևերին ... (ԼՋ, էջ 154):

ՄՊԻՏԱԿԻԱԼԱԹԱՎՈՐ, ած. **Սպիտակ խալաթ հագած:** ... **Սպիտակխալաթավոր** երիտասարդ (ԺՄ, էջ 69):

ՄՎԻՆԱԿԻՐ, ած. **Սվին կրող՝ ունեցող, վրան սվին եղող:** Հետևից քայլում էր **սվինակիր** հրացանով զինված ժանդարմական կատարածուն (Դյունա, էջ 73):

ՄՏԱՊԱՏԿԵՐ, ած. (դիպվ.): **Սուտ պատկեր ունեցող:** Նա ... բոլոր աստվածների համարեց կեղծ, **ստապատկեր...** (ՄՄ1, էջ 437):

ՄՏԱՏՈՒՍԱԳԻՐ, գ. **Ստատուս գրող:** Ինձ նաև զարմացնում է վճարովի **ստատուսագիրների** համառությունը ... (Ազգ, 18.05.2018):

ՄՏԵՂՆԱԿՈՒՅՏ, գ. **Ստեղնաշար:** Երբեմն վեր էի կենում, մոտենում գրամեքենային, թխկացնում էի ինչ-որ մի տառի և հատուկ ցանկություն էի զգում ջարդուփշուր անել **ստեղնակույտը** (ԶՊ, էջ 11):

ՄՏՎԵՐԱԾԱՎԱԼ, ած. (փխբ.): **Ստվերներից հյուսված:** ... Իսկ օձագալար ճանապարհին անդունդի պարանոցին փաթաթվելով՝ մեզ էլի վեր էր տանում, վեր, ծառերի ճյուղերի, սաղարթների, տերևների ու լույսի բախյունից հյուսված **ստվերածավալ** գորգի նախշերի վրայով, հեղեղներից վերքի պես բացված գետնի վրայով ... (ԼՋ, էջ 56):

ՄՐԱԹԵՔ, ած. **Սուր թերություն ունեցող:** ... Նստած էինք մնում եկեղեցում և հայացքներով հետևում բարձրաբերձ, **սրաթեք** լուսամուտների մեջ հայտնվող ու դարձյալ կորսվող աղոտ լուսախաղին (Հ, էջ 143):

ՄՐԱՃԱՂ, ան. **Սուր ճաղերով, սուր ճաղեր ունեցող:** Քայլեց .... պալատական այգու **սրածաղ** ցանկապատի տակով .... (Գոյս. 6, էջ 208):

ՄՐԱՄԱՐԶԻՉ, գ. **Սրամարտի մարզիչ՝ ուսուցանող՝ սովորեցնող:** .... Հինգ տարի ծառայեց որպես **սրամարզիչ՝** առաջին հուսարական գնդում .... (Բ 4, էջ 290):

ՄՐՃԱԴԻՆԱՍՏԻԱ, գ. **Սուրճ արտադրողների դինաստիա:** .... Տեսավ նաև դստեր դիմանկարը՝ .... **սրճադինաստիայի** հիմնադրի դեմքի պես պաղ դեմք (ԺՄ, էջ 64):

ՄՐՆԳԱՆՎԱԳ, գ. **Սրինգի նվագ:** Եղեգների կախարդական **սրնգանվագի** տակ խոխոջում էին դրախտային ատվակները (ԲՂ, էջ 45):

ՍՈՒԼԹԱՆԱՎԱՐԻ, մկբ. **Սուլթանին վայել ձևով, սուլթանի նման, ինչպես սուլթանը:** .... – Փրկեցեք ձեր պիեսը, -**սուլթանավարի** ասաց Լյուսինը (Բ 4, էջ 364):

ՍՈՒՊԵՐԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Արտակարգ լիազորություն:** Պարզ է, որ այդ նոր վարչապետը, որ նոր Սահմանադրությամբ օժտված է **սուպերլիազորություններով,** չի կարող այս օրերին նշանակվելիք վարչապետը լինել (Ազգ, 09.09.2016):

ՍՈՒՊԵՐՎԱՐՉԱՊԵՏ, գ. **Արտակարգ լիազորություններով օժտված վարչապետ:** Երկրի սիմվոլիկ նախագահին ամեն ինչ արդեն **սուպերվարչապետն** է առաջարկելու, առանց նրա ոչինչ տեղի չի ունենում.... (Ազգ, 09.09.2016):

ՍՈՒՊԵՐՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, գ. **Գերվարչապետություն:** Հայաստանում դա կոչում են «**սուպերվարչապետություն**».... (Հնգ):

ՄՐՏԱՀՈՒՆՉ, ան. **Սրտաբույս. սրտից հնչող:** Գեղեցիկ, **սրտահունչ,** կարոտակեզ տողերը .... կյանքի ընկերուհու նկատմամբ անմնացորդ նվիրումի ու հավատարմության վկայություններ են .... (ԳԹ, 15.12.2017):

ՄՓՅՈՒՌԻՔԱՀՐԵԱ, գ. (դիպվ.)**Հայրենիքից դուրս ապրող հրեա:** Որտեղ են ապահովություն գտնում **սփյուռքահրեաները** (Իր., 05.12.2017):

ՄՖԻՆՔՍՈՐԵՆ, մկբ. **Մֆինքսի նման:** Ատոմային սնկի նման շինությունը **սֆինքսորեն** մտածում էր կամ մտածել տալիս (ՀՄ, էջ 572):



## Վ

ՎԱԽՎՈՐԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Վախվորած լինելը**: Քո կանացի **վախվորածությամբ** դու ավելի ես վատացնում վիճակը .... (Կաֆկա, էջ 220):

ՎԱՃԱՌԱՑԱՆԿ, գ. **Վաճառվող ապրանքների ցուցակը**: ...Առողիի **վաճառացանկում** բացակայում է .... (Հեռ., Շանթ, 23.09.2018):

ՎԱՅՐԵՆԱԽՄՈՒԹՅՈՒՆ, գ. **Վայրենի ձևով խմելը**:.... Մեր ուրախությունները, մեր իսկապես բռնեմական կենցաղն իր ծայրահեղություններով, իր անկարգությամբ և մանավանդ իր **վայրենախմությամբ** անբաժան էր մեր ստեղծած գրականությունից .... (ԳԹ, 22.07.2016):

ՎԱՅՐԷՋԲԵԼ , ք. **Վայրէջք կատարել**: Մի հոպոպ **վայրէջքեց** բակում ու քթներիս տակ հանգիստ զրոսնում էր (ՄՀ, էջ 47):

ՎԱՆԴԱԿԱՀՅՈՒՄՔ, գ. **Վանդակավոր՝ վանդակաձև հյուսք**: Որթատունկի **վանդակահյուսքի** վրայով .... ժամերով դիտում էի ծովը (Սյուրև., էջ 132):

ՎԱՆՔԱՆՄԱՆ, ան. **Վանքի նման՝ տեսք ունեցող**: .... Համեստ ճարտարապետական կառուցվածք՝ գրեթե **վանքանման** .... (Բ 4, էջ 66):

ՎԱՐԱԳՈՒՅՐԱՆՄԱՆ, ան. **Վարագույրի նման՝ նմանություն ունեցող**: Իզաբելան աշխատում էր **վարագույրանման** մի բան պատրաստել լուսամուտների համար (Կուսեր, էջ 299):

ՎԱՐԱԿԱՆՅՈՒԹ, գ. **Վարակներ տարածող նյութ**: .... Փողոցները սոսկալի **վարականյութեր** են արտաշնչում (Բ 2, էջ 353):

ՎԱՐԴԱԿԱՊՎԵԼ, նք. **Խաչաձև կապվել**: .... Ասաց .... աչքերը հատելով յուր պարային կոշիկների կրկնակի **վարդակապված** արծաթաթել նրբաքուղերին (ԲՇ, էջ 260):

ՎԱՐԺԱՍԱՐՔ, գ. **Մարգասարք**: Նայում էի նրան...ու ժպտում, համա մարզիչ էր, հա՛...էլ ինչ **վարժասարք**, ինչ ուրիշ բժիշկ (ՄՀ, էջ 219):

ՎԱՐԿԱՑԱՎ, գ. (ղիպվ.): **Վարկ վերցնելու մոլուցք:** Օրինակներ՝ ինչքան ուզեք: Մարդիկ հիվանդացել են: Այդ հիվանդությունը կոչվում է **վարկացավ** (ԳԹ, 09.09.2016):

ՎԱՐՁԱՀՐԱՎԻՐԵԼ, նր. **Վարձով՝ վարձ ստանալու պայմանով հրավիրել:** Զանգել այս կամ այն արտիստուհուն, .... փորձել **վարձահրավիրել** նրան (ԺՄ, էջ 443):

ՎԱՐՈՒՆԳԱԲԵՐ, ած. (ղիպվ.): **Վարունգ բերողը:** –Ես ունեմ մի լուրջ առաջարկ....- շարունակեց «վարունգակիրը» կամ **վարունգաբերը** (ԱՄ, էջ 461):

ՎԱՐՈՒՆԳԱՄՇԱԿ, ած. (ղիպվ.): **Վարունգ մշակող:** Ինչպես երևում է, սրամիտ ռեֆերենտի է հանդիպել **վարունգամշակ** գյուղացին (ԱՄ, էջ 462):

ՎԱՐՁԱԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ, ած. **Վարչական և կազմակերպական:** ....«Հայ թատրոնն իր **վարչակազմակերպական** կառուցվածքով բյուրոկրատական թատրոն է»,– եզրահանգում է թատերագետը.... (ԳԹ, 01.07.2016):

ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԱՅԻՆ, ած. **Վարվելակերպին հատուկ:** ....Նա ձեզ հիմնավոր պատասխան կտա և մանավանդ **վարվելակերպային** բացատրություն (ԱՄ, էջ 242):

ՎԵՀԱԳԵՂՈՒԹՅՈՒՆ, գ. **Վեհ ու գեղեցիկ՝ վեհագեղ լինելը:** Ծառերն էլ, չնայած իրենց **վեհագեղությանը**, լավ բաժակակիցներ չէին (ՌՇ, էջ 132):

ՎԵՀԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ, գ. **Վեհ կեցվածք ունենալը:** Արքայական ընտանիքի կինը երևում է **վեհակեցությունից** (ՀԱԳ):

ՎԵՀԱՇԲԵՂ, ած. **Վեհ և շքեղ, վեհաշուք:** Իմ վերջին գովք՝ **վեհաշքեղ**, սիրահորդ .... (ԳԹ, 27.04.2018):

ՎԵՐԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԵԼ, բ. **Նորից կատարելագործվել:** Անընդհատ **վերակատարելագործվող**, ինքն իրեն գերազանցող նրա տեսակը մեր վերապրող ազգի հաղթանակի գրավականն է (Ազգ, 07.04.2017):

ՎԵՐԱՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ, ք. **Կրկին հայտնաբերվել:** Վալզերն անհայտ էր աշխարհին մինչև 70-ականների կեսերը, երբ նորից **վերահայտնաբերվեց** (*Իր.*, 13.04.2018):

ՎԵՐԱՄԱԳՆԻՍԱՑՆԵԼ, նք. **Մագնիսականությունը վերականգնել, կրկին մագնիսական դարձնել:** ... Ուժեղ ամպրոպը երբեմն մագնիսաթափ է անում և **վերամագնիսացնում** կողմնացույցի սլաքը (*Մեր.*, էջ 312):

ՎԵՐԱՎԱՃԱՌՈՒՀԻ, գ. **Վերավաճառող կին:** ... Ծղոտե այնպիսի գլխարկ, որը կարելի է տեսնել շուկայի **վերավաճառուհիների** գլխին (*Բ. 10, էջ 11*):

ՎԵՐԱՏԵՍԱԳՐԵԼ, ք. **Վերստին տեսագրել:** Բառացի նույնը **վերատեսագրելով** կցել էր իրար, առանց դրանցից մեկը ջնջելու (*ԱՍ, էջ 428*):

ՎԵՐԱՓԱԿՎԵԼ, գ. **Կրկին՝ մեկ անգամ ևս փակվել:** Եթե քարերի արանքից մի քիչ շաղախ թափվեր, ապա բացվածքը անմիջապես **վերափակվում էր** (*Բ 10, էջ 530*):

ՎԵՐԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ, գ. **Ժամանակից վեր լինելը:** Նրա հայացքում ես տեսա նորից այն արտասովոր, կենդանակերպ **վեր-ժամանակությունը**, նրա այդ հաշվանքի չտրվող տարիքը (*Հ, էջ 80*):

ՎԵՐՆԱԴԱՐԱԿ, գ. **Վերին դարակ:** ... Թևերը հենեց **վերնադարակին** (*Գոլյու. 6, էջ 381*):

ՎԵՐՋՆԱՍԱՐՔ, գ. **Ֆինանսական և այլ կարգի գործարքներ իրականացնող սարք:** Դա ներառում է նաև համապատասխան **վերջնասարքի** տեղադրումը (*Հւց, Iragir.am*):

ՎԵՐՔԱՏԵՂ, գ. **Վերքի տեղը:** ... Պանիրն աղաջուր էր տալիս նոր ուռուցքներին ու հին **վերքատեղերին** (*ՀՄ, էջ 148*):

ՎԻԴԵՆՈՒՄ, գ. **Տեսարկուղեր: Վիդեոլուղերի** մասնագիտությունը դառնում է ամենապահանջվածը և մեծ հեղինակություն վայելում (*Հւց, news.am*):

ՎԻԶՎԱՎՈՐՎԵԼ, կր., չք. **Վիզան ձևակերպվել:** ... Այդ գումարն ուղարկում է ... սահմանը, հետո էլ մի **վիզավորված** անձնագիր Իտալիայի համար (*Դյուսևս, էջ 645*):

ՎԻԹԻՍԱՐԱՎՆՉՅՈՒՆ, ած. **Վիթխարի հնչյուններ արձակող:** ... Երգեհոնի **վիթխարահնչյուն** ներդաշնակությունները... (*Բ 2, էջ 171*):

ՎԻԼՆՅՈՒՄԱՐՆԱԿ, ած. **Վիլնյուսում բնակվող:** Դեռևս Երևանում Գրացիան մեզ մի փաթեթ էր տվել նամակի հետ և խնդրել դրանք հանձնել Պարույր Սևակի **վիլնյուսաբնակ** մտերմուհուն՝ Սուլամիթային (*Ատիկ, թ. 3, 2017*):

ՎԻՍԿԻԱՆՄՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Վիսկի խմելու արարողություն:** Այդ ամենի կողքին իմ հիշողության մեջ մնացել է Վարուժան Պետիկյանի «**վիսկիախմությունը**» (*ԱՄ, էջ 340*):

ՎԻՐԱԲՈՒԺԱՐԱՆ, գ. **Վիրահատարան:** ... Եթե վիրահատվեմ ... արաբական կամ հրեական **վիրաբուժարաններում** երբեք չեմ ցանկանա... (*ԱՄ, էջ 103*):

ՎԻՐԱՎՈՐԱԿԱՆՈՐԵՆ, 1. մկբ. **Վիրավորական կերպով:** 2. **Որպես վիրավորանք ընկալվող:** ... Երկու կանայք ... խնայողաբար կարված իրենց շրջագգեստներում ներկայացնում էին **վիրավորականորեն** արտառոց գույների մի ցուցահանդես ... (*Բ 4, էջ 105*):

ՎՇՏԱՊԱՐԱՐ, ած. **Թախիծով՝ վշտով պատված:** Ականջներիս մեջ անընդհատ հնչում է Խորեն Աբրահամյանի **վշտապարար** նախադասությունը... (*ԱՄ, էջ 317*):

ՎՍԵՄԱԲԱՇ, ած. **Վսեմ բաշ ունեցող՝ բաշով:** Դրանք աֆրիկյան **վսեմաբաշ** առյուծների ... մորթիներ էին (*Դյուսևս, էջ 321*):

ՎՍԵՄԱԲԱՅԼ, գ. **Վսեմ քայլվածքով:** Դատավորը ուր որ է ներս էր մտնելու **վսեմաքայլ** ու նստելու էր իր փառահեղ բազկաթոռին (*ՓՄ, էջ 30*):

ՎՐԱՆԱՇԵՄ, գ. **Վրանի շենքը:** **Վրանաշենին**՝ Նարեկն իմաստուն //իջավ ծնկածալ և ձայնը դողաց. //Քեզ ողջույն, ողջույն, հացագործ ով մարդ (*ՌԿ, էջ 52*):

ՎՐԵԺԵՐԳ, գ. **Վրեժի երգ:** ... Համեմատություն է անցկացնում բնկի կնոջ **վրեժերգ**-օրորոցայինի և հայ մոր «լավկան» երգերի միջև ... (Հայրնի, էջ 69):

ՎՐԶՆԱՀԱՐՈՒՄ, գ. **Վրձնահարելը, վրձինով նկարելը:** ... Կետ-կետ **վրձնահարումներ** (Գոլու. 3, էջ 409):

## S

ՏԱԳՆԱՊԱԼԻՈՐԵՆ, մկբ. **Տագնապալի կերպով:** Լսեց Այրի-նի ձայնը, որը **տագնապալիորեն**, սրտաճմլիկորեն մեղմ էր (Գոլու. 2, էջ 160):

ՏԱԺԱՆՔԱՅԻՆ, ած. **Տաժանակիր, տանջալի:** Ես պատրաստ եմ տասը տարի նստել **տաժանքային** բանտում (ՍՏ, էջ 195):

ՏԱԽՏԱԿԱՆՄԱՆ, ած. 1. **Տախտակի նման, տախտակի տեսք ունեցող:** 2. (վիսբ.): **Ուղիղ ու ձիգ:** ... Հակառակ **տախտականման** ֆիգուրին՝ նա ուներ այն վեհ տեսքը ... (Բ 6, էջ 118):

ՏԱԽՏԱԿԱՎԱՃԱՌ, գ. **Տախտակ վաճառող:** Խաղողագործ, **տախտակավաճառ** ... վախենում են անձրևից, քամուց ... (Բ 2, էջ 435):

ՏԱԽՏԱԿԱՔԱՆԴԱԿ, գ. **Տախտակի վրա կատարված քանդակ:** ... Հայացքը հառած պատի մուգ **տախտակաքանդակներից** մեկի վրա ... (Բ 10, էջ 561):

ՏԱՃԱՐԱՆՄԱՆ, ած. **Տաճարի նման՝ տեսքով:** Կայարանը **տաճարանման** շենք էր ... (Սյուրմ., էջ 278):

ՏԱՄԿԱԳՈՐՇ, ած. **Խոնավ և անհրապույր՝ գորշ:** Այն միշտ սահում էր նույն իր հարթած ուղիով՝ թողնելով իր հետևից **տամկագորշ** սառնություն ու խոնավ հող բուրրոջ պատատոտված սպի (ՆՍ, էջ 201):

ՏԱՄԿԱՎՈՒՆ, ած. **Խոնավ: Տամկավուն** ու տաք գիշեր էր (ՍՏ, էջ 121):

ՏԱՌԱՊԱՇԱՏ, ած. **Շատ տառապանք կրած:** Այդ **տառապաշատ** ու գեղեցկատես... աշխարհում էի ապրում (Հ, էջ 77):

ՏԱԳՂԱՀՈՒՆՉ, ան. **Տավիդի հնչամբ**: Է. Միրզոյանի երգաշարը, որ սկսվել էր դաշնամուրի զիլ հնչումով, ավարտվում է նույն դաշնամուրի **տավդահունչ**, երկնասլաց արպեջոյով (*Իր.*, 06.04.2018):

ՏԱՐԱԲԱԺԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ, գ. **Տարաբաժանված լինելը**: ...Բարձրաստիճան մեր կրոնական ղեկավարների այդ բացակայությունը, այն էլ՝ իսկապես պատմական իրադարձության պահին, կրկին ցուցահանեց Հայ եկեղեցու ներքին **տարաբաժանվածությունը**....(*Ազգ*, 01.07.2016):

ՏԱՐԱԳՐՈՒՇԻ, գ. **Տարագիր կին՝ աղջիկ, կին՝ աղջիկ տարագիր**: Խեղճ **տարագրուհին** իր մտքերը դրանով է ցրում (*Էյրամս*, էջ 618):

ՏԱՐԱԶԱՅԻՆ, ան. **Նորածն (մողայիկ)**: Բուժքույրը շատ լավիկն էր իր **տարագային** զգեստով (*ԺՄ*, էջ 99):

ՏԱՐԱԿԱՐԳՈՐԵՆ, մկր. **Կարգից տարբերվող, այլ կարգի պատկանող**: Ամեն ինչ մի տեսակ **տարակարգորեն** հանդիսավոր և ազդու երևույթ ուներ (*ԺՄ*, էջ 13):

ՏԱՐԱՀՈՍԵՑՆԵԼ, նր. **Արտամղել**.... Նրա ծանր քայլերի ձայնը ավելի ուժեղ էր հնչում կանանց ականջներում՝ արյունը **տարահոսեցնելով** դեպի նրանց այտերը .... (*Կոսպեր*, էջ 58):

ՏԱՐԱՇԱՐԺՈՒԹՅՈՒՆ, գ. **Տարաշարժում**: Թատերախմբի տեղում քայլող անդամների միաժամանակյա **տարաշարժությամբ** միգանսցենը պլաստիկ կոլաժի տպավորություն էր թողնում (*Ազգ*, 30.09.2016):

ՏԱՐԱՈՃ, ան. **Տարբեր ոճերի**: Ինչպես տեսանելի է՝ ոճով նման և **տարաոճ** գրողներ .... (*ԳԹ*, 07.07.2017):

ՏԱՐԱՊԱՏԵՀ, ան., մկր. 1. **Այլապատեհ, արտակարգ պատեհ**: 2. **Ոչ պատեհ**: Մա պատասխանեց բացահայտորեն տարապատեհ (*ԺՄ*, էջ 33):

ՏԵԳԱԶԵՎ, ան. **Տեգի ձև ունեցող**: .... Թաքցնում է **տեգաձև** մի կեռիկ .... (*Բ 6*, էջ 48):

ՏԵԽՆՈԱՇԽԱՐՀ, գ. **Տեխնիկայի կիրառման և սպասարկման բնագավառը, ոլորտը**: Մի հարկի տակ են հավաքվել **տեխնոաշխարհի** լավագույն ներկայացուցիչները (*Հւնգ*, news.am):

ՏԵՂԱՇՐՋԱՆ, գ. **Տարածք: Տեղաշրջանում** մի փոքրիկ մարդաբանական աշխատանք էր կատարում (ՌՇ, էջ 109):

ՏԵՍԱԲԼՈԳ, գ. **Տեսամիջոցներով տարածվող բլոգ:** Հոկտեմբերը՝ քրաուդֆանդինգի ամիս. Հեֆեռնի **տեսարկոգ** (Հւց, news.am):

ՏԵՍԱԲԼՈԳԵՐ, գ. **Տեսարկոգ վարող:** Երեք **տեսարկոգեր** է գոհվել՝ Կանադայում ջրվեժից ընկնելով (Հւց, news.am):

ՏԵՍԱԳՈՎԱԶԴ, գ. **Տեսամիջոցներով տարածվող գովազդ:** Facebook-ը իր messenger-ում թողարկել է **տեսագովազդ** (Հւց, brandon.am):

ՏԵՍԱԴԱՍ, գ. **Տեսագրված՝ տեսանկարահանված դաս:** Մենթոր և համագործակցող դպրոցները քննարկել են **տեսադասերի** արդյունավետությունը (Հւց, news.am):

ՏԵՍԱԴԻՄՈՒՄ, գ. **Տեսագրված՝ տեսանկարահանված դիմում:** Մեուլը չի բացառել, որ օգնության խնդրանքով **տեսադիմումով** հանդես եկած երիտասարդը կարող է Կիմ Չեն Նամի որդին լինել (Հւց, news.am):

ՏԵՍԱԴԻՏԱՐԿՈՒՄ, գ. **Տեսակապի միջոցներով դիտարկում:** Հայ-ադրբեջանական սահմանագոտում անցկացվել է հերթական **դիտարկումը**. **տեսադիտարկում** ապահովել հնարավոր չի եղել (Հւց, news.am):

ՏԵՍԱԴԻՏՈՒՄ, գ. **Դիտում տեսակապի միջոցներով: Տեսադիտման** համակարգերը մի քանի անգամ մեծացրել են հայկական կողմի հնարավորությունները (Հւց, news.am):

ՏԵՍԱԴԻՈՒՅԹ, գ. **Տեսական դրույթ:** ... Հայերն առաջինն ընդունեցին քրիստոնեական հավատը: Այդ **տեսադրույթին** նա կրկին և ավելի հիմնարար կերպով անդրադարձավ իր երևանյան այցի ժամանակ՝ հարստացնելով այն նոր մոտեցումներով (Ազգ, 01.07.2016):

ՏԵՍԱԷՔՍԿՈՒՐՄԻԱ, գ. **Տեսագրման՝ տեսանկարահանման միջոցով իրականացվող էքսկուրսիա:** Քրիստոսի ծննդավայրով համայնապատկերային **տեսաէքսկուրսիա** է ստեղծվել (Հւց, news.am):

ՏԵՍԱԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Թարգմանություն համակարգչային տեսամիջոցներով:** ABBYY Lingvo-ի բառարանները **տեսաթարգմանության** գործառույթ են ձեռք բերել (*ՀԱՅ, news.am*):

ՏԵՍԱԺԱՄԴՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Տեսագրման՝ տեսանկարահանման միջոցով իրականացվող ժամադրություն:** «Նոու-հաու» վրացական բանտերում. **տեսաժամադրություն** 15 լարիով (*ՀԱՅ, news.am*):

ՏԵՍԱԺՈՂՈՎ, գ. **Տեսագրման՝ տեսանկարահանման միջոցով իրականացվող ժողով:** Սփյուռքի նախարարությունում Լոս Անջելեսի հայ համայնքի ներկայացուցիչների հետ **տեսաժողով** է անցկացվել (*ՀԱՅ, news.am*):

ՏԵՍԱՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ, գ. **Հարցազրույց տեսակապով:** .... Ընկերությունը անցկացնում է **տեսահարցազրույց** (*Հեռ., 22.05.2018*):

ՏԵՍԱՓՈԽՎԵԼ, բ. (դիպվ.): **Տեսքը փոխել:** Մեր **տեսափոխված** ճերմակ ծերությունը չի նկատում անգամ կնոջ ակնարկներ անող բաց թևերը .... (*ԳԹ, 07.07.2017*):

ՏԵՎԱԿԱՆՏՆԵԼ, նր. **Տեսական դարձնել:** .... Օննիկը **տեսականացնելու** էր մեր ընտանիքի անունը (*ՄյուսԷ., էջ 100*):

ՏԵՐԵՎԱԹԱԳ, գ. **Տերևներից պատրաստված թագ:** Տղամարդը աչքերը բացեց, նկատեց ճյուղին թառած կնոջը՝ գունագեղ **տերևաթագը** գլխին (*Անդին, թ. 5, 2017*):

ՏԵՐԵՎԱԽԱՐՈՒՅԿ, գ. **Տերևներով խարույկ, խարույկ, որի մեջ տերևներ են վառվում:** Տերևախարույկը մարմրելով ծուխ էր արձակում .... (*Գոյս. 5, էջ 475*):

ՏԵՐՄԻՆՍԱՐՐ, գ. **Տերմինների տարր:** Յուրաքանչյուր բառահոդվածում բերված է տվյալ **տերմինատարրով** կազմված ռուսերեն տերմինը և նրա հայերեն համարժեքը (*Հ., Ա., Միջ. բան., էջ 4*):

ՏԻԵԶԵՐԱՐԱՐ, ած. **Տիեզերաստեղծ, տիեզերքը արարող:** .... Մոցարտի նպատակը ոչ միայն .... **տիեզերաարար** ուժերի վեհացումն ու մարդկայնացումն է .... (*Իր., 23.03.2018*):

ՏԻԿՆԻԿԱՆՄԱՆ, ած. **Տիկնիկի նման:** Եզրին նստել էր Եվգինեն, **տիկնիկանման՝** մազի մեջ սանր, ... ժապավեն (*ՄյուսԷ., էջ 160*):



ՏԽՐԱԶԴՈՒ, ան. **Տխրություն ազդող՝ տխուր ազդեցություն թողնող:** ... Ինչու՞ նավի վրա ամեն ինչ այդպես **տխրազդու է** (Դյունս, էջ 4):

ՏՂՄԱՅԱՅՏՎԵԼ, չք.Վրան **տիղմ ցայտել:** ... Հեռանում է ուստոստելով, որպեսզի **չտիղմացայտվի** ... (Բ 2, էջ 41):

ՏՂՄԱՅԱՅՏՔ, գ. **Տիղմի ցայտք, ցայտած տիղմի մնացորդ:** Նրա ոտնամանին ոչ մի **տղմացայտք** [չկա] (Բ 2, էջ 19):

ՏՆՏԵՍԱԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ, ան. **Տնտեսագիտական և իրավաբանական:** Վարչապետը մասնակցել է ԱրՊՀ **տնտեսաիրավաբանական** ֆակուլտետի հիմնադրման 25-ամյակին (Հմց, news.am):

ՏՈԳՈՐԱՊԻՆԴ, ան. **Հատուկ նյութով մշակած:** ... Իր ընտրությունը կատարեց հոգուտ **տոգորապինդ** կաղնեփայտի... (ՆԱ, էջ 17):

ՏՈԿՈՍԱՀԱՆՈՒՄ, գ. **Տոկոսները հանելը:** Գրասենը զեղչել էր մուրհակները, բայց շահաբաժնի մի ահավոր **տոկոսահանումով** (Բ 2, էջ 440):

ՏՈՀՄԱԿՑԱԿԱՆ, ան. **Տոհմակից եղող, նույն տոհմին պատկանող:** ... **Տոհմակցական** պարտավորություններ ... (Հայրունի, էջ 175):

ՏՈՆԱԶԳԵՍՏ, ան. ,գ. **Տոնական զգեստ հագած (անձ):** Անշուշտ կծպտար՝ մտաբերելով **տոնազգեստ** հասարակությանը ... (Բ 10, էջ 175):

ՏՈՆԱԶԳԵՍՏԱՎՈՐՈՒՄ, գ. **Տոնազգեստ հագնելը, տոնազգեստավորելը՝ տոնազգեստավորվելը:** ... Հյուրերից ոմանց **տոնազգեստավորումը** այնպես է ազդում մյուսների վրա ... (Բ 10, էջ 175):

ՏՊԱԳՐԱՏԵՍՔ, ան. **Տպագիր գրքի տեսք ունեցող:** ... Տոպրակի մյուս երեսին իմ հայերենի այբուբենն էր՝ հնարավորին չափ **տպագրատեսք** (ՀՄ, էջ 690):

ՏՐՏՄԱՍԱՌՆ, ան. **Տրտում և սառն:** **Տրտմասառն** լույս (Գոլու. 3, էջ 704):

## Բ

ԲԱՖՖԻԱՊԱՏՈՒՄ, գ. **Բաֆֆու կյանքի և ստեղծագործության վերլուծություն, անդրադարձ:** Մա կանխամտածված մոտեցում է **րաֆֆիապատումին**, թե՛ այն հընթացս ծնվեց (*Իր.*, 02.02.2018):

## Յ

ՑԱԾՐԱՍԱՀ, ած. **Ցածր սահող:** ... Կուրացուցիչ ալ կարմիր լույսը դուրս էր ցայտում խորխորատներից՝ **ցածրասահ** ամպերն արնաներկելով (*ԱՏ*, էջ 254):

ՑԱԾՐԱՎԱՆԴԱԿ, գ. **Ցածր դիրքում գտնվող հարթություն՝ հարթ տարածք:** Ավելի հեռվում լաստենիները երևան էին հանում **ցածրավանդակը** (*Մոր.*, էջ 74):

ՑԱԾՐՈՒՏ, գ. **Ցածրադիր վայր:** Գետերը տիղմ էին բերում **ցածրուտները** (*ԹԶ*, էջ 25):

ՑԱՅՏԱՆՔ, գ. **Ցայտելը:** Կանաչախիտ մարգագետիններ, գետնից բխող հորդառատ աղբյուրների **ցայտանքներով** ողողված բարեբեր հողեր էին, սակայն անխնամ (*ԲԴ*, էջ 47):

ՑԱՆՑԱԳԼԽԱՐԿ, գ. **Ցանցանման՝ ցանցահյուս գլխարկ:** Գլխին դրել էր կարմիր թավշից պատրաստված մի մոդայիկ **ցանցագլխարկ** (*Բ 8*, էջ 95):

ՑԱՆՑԱԼԱՐ, գ. (իմ. նորբ.): **Հյուսվածքի տեսակ, կանվա:** Բյուզանդական նախշով մի ձեռագործի՝ մանր կանվայի (**ցանցալար**) պատրաստման ընթացքը տևել է 3 տարի՝ աշխատել է օրական 2 ժամ (*Հրասպ.*, 13.03.2018):

ՑԱՆՑԱՀԵՆԱԿԱՆ, ած. **Ցանցահենությանը վերաբերող՝ առնչվող:** «Գահերի խաղը» վեցերորդ տարին անընդմեջ դարձել է **ամենացանցահենական** սերիալը (*Հնգ.*, news.am):

ՑԱՆՑԱՊԱՐԻՍՊ, գ. **Ցանցավոր պարիսպ:** Այդ ամբողջի մեջ կար մի ծառ, որի շուրջը **ցանցապարիսպ** էր քաշված և վրան կախված էր նախազգուշացնող ցուցանակ՝ «Չմոտենալ, թունավոր է»: (*Նորբ.*, 3.2016):

ՅԱՎԱՀԱՆ, ան. **Ցավը դադարեցնող:** ...Շրթունքները՝ հաստ, **ցավահան** բաժակ, որ կպցնում են միշտ մեջքին հիվանդի (ՌԿ, էջ 51):

ՅԵԽԱԳՈՒՅՆ, ան. **Ցեխի գույն ունեցող:** Բացի այդ, ձեռքին մի մեծ **ցեխագույն** տնտեսական պայուսակ է (ՀՄ, էջ 6):

ՅԵԽԱՀՈՏ, գ. **Ցեխի հոտ:** Խմիչքի փոխարեն **ցեխահոտ** էր գալիս (TV, 16.07.2018):

ՅԵԽԱՇԻԹ, գ. **Ցեխի շիթ:** ... Անցորդներն այլևս ուշադրություն չէին դարձնում **ցեխաշիթերին** .... (ԺՄ, էջ 154):

ՅԼԻԿԱՅԻՆ, ան. **Ցլիկին հատուկ:** Նրանք միայն իրենց հասկանալի **ցլիկային** լուռ բացատրությամբ եկան կանգ առան... (ՀՄ, էջ 574):

ՅՆՈՐԱՇՂԱՐՇ, ան. (բնստ.): **Ցնորական, երազային:** Այս տոն-գիշերվա ժամերը լի են//... **Ցնորաշղարշ** հմայքով անհաս// Կապույտ ավերի (ԳԹ, 07.09.2018):

ՅՈՐՆԱԹՈՒԻՄ, ան. **Ցորենի նման թուխ:** Ցուցահանդեսի **ցորնաթուխ** ջահել տնօրենը գեղեցիկ տղամարդ էր (ՀՄ, էջ 368):

ՅՈՒՑԱԴԱՐԱԿ, գ. **Ցուցադրության դարակ:** ...**Ցուցադարակ-ներում** փոշուց գորշացած ապրանքները տարտամորեն նիրհում են ստվերում (Զոլա, էջ 9):

ՅՈՒՑԱՍԱՐՔ, գ. **Ցուցատախտակ:** Հասնելով գլխավոր սրահին՝ Գիսանեն մոտեցավ չվացուցակի՝ առաջին իսկ պատահած, էլեկտրոնային **ցուցասարքին** ու ստուգեց իր հաջորդ չվերթի համարը (ԳԹ, 15.06.2016):

## Ու

ՈՒՂԵՂԱԾԻՆ, ան. **Ուղեղում ծնված**: Այն այնպիսի տպավորություն է ստեղծում, որ ասես **ուղեղածին** ստեղծագործություն լինի (Հ, էջ 144):

ՈՒՂԵՍԱԼԻԿ, գ. **Փողոցը սալարկելու՝ հարդարելու քար**: Սովորաբար ես դրսում եմ կանգնած լինում կամ նստոտում **ուղե-սալիկին** (Հ, էջ 129):

ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ, գ. **Ուղևորներ փոխադրող, տանող**: ...Աշխատավորներով լեկ-լեցուն **ուղևորատարը** դանդաղ ընթացքով մոտենում էր... (Նորք, 3.2016):

ՈՒՂԵՏՈՒՓ, գ. **Ուղու՝ ճանապարհի տուփ. ճանապարհ գնալու դեպքում հետը վերցվող տուփ**: Ես հո միշտ էլ դրամարկղումս կամ **ուղետուփիս** մեջ մեկ միլիոն ունեմ (Դյուսև, էջ 539):

ՈՒՌԱԾԱՎՈՒՆ, ան. **Փոքր-ինչ ուռած**: Ուղեկցորդը սարսափելի դուր չեկավ ինձ ... **ուռածավուն** դեմքով (Կլին, էջ 67):

ՈՒՍՈՒՑՉԱՐԱՆ, գ. **Ուսուցանոց**: Մի անգամ **ուսուցարանում** ... որոշեցինք թաքցնել իրենց ծխատուփերը (ԱՄ, էջ 211):

ՈՒՏԵԼԱԶԵՎ, գ. **Ուտելու կերպ՝ ձև**: Սերյոզան շատ արտիստիկ **ուտելաձև** ուներ (ՌԴ, էջ 288):

ՈՒՐՎԱԿԱՆԻ ԿԵՐԱՅ ԻՆԵՑՈՂ: Գրքի կազմին պատկերված է մի **ուրվականակերպ**, բայց այն դեպի ետ է նայում, դեպի լույսը (ԳԹ, 25.11.2016):

## Փ

ՓԱԹԻԼԱՎՈՐ, ան. **Փաթիլներով**: Ձյուն: ... Շարունակ թափվում էր, թափվում. **փաթիլավոր**, փափուկ ... (Կլին, էջ 112):

ՓԱՅԼԱՀԵՂ, ան. **Փայլուն և փառահեղ**: Երբ փոքր էինք, այն բացում էր իր **փայլահեղ** թևերը, բարձրացնում մեզ նրանց վրա... (ԳԹ, 18.05.2018):

ՓԱՅՏԱՁՈՂԻԿ, գ. **Փոքրիկ փայտածող, փայտի փոքրիկ ձող**: Ձախը՝ **փայտածողիկների** ու գիպսի մեջ... (ԱՏ, էջ 162):

ՓԱՅՏԱՄԲԱՐՁ, ան. **Փայտով բարձված:** .... Կանգ էր առնում դիտելու գետն ի վար իջնող **փայտամբարձ** լաստանավերը (*Զոլա, էջ 25*):

ՓԱՅՏԱՆԿԱՐ, գ. **Փայտի վրա նկարած:** Ուրիշ մի երկու բան էլ կար. սուզդայան մի փոքրիկ գանգ ու **փայտանկար** խաչելություն (*ՀՄ, էջ 616*):

ՓԱՅՏԱՇԵՐՏ, ան. **Փայտե շերտ ունեցող:** Հյուրասենյակի **փայտաշերտ** վարագույրները իջեցված էին.... (*Մոռ., էջ 535*):

ՓԱՅՏԵՐԻԶ, գ. **Փայտե երիզ՝ նեղ շերտ:** Բոնկվել է **փայտերիզն** էլ, որ պատի մեջտեղից բոլորում է ամբողջ պատկերասահը (*Գոլու. 6, էջ 381*):

ՓԵՏՐԱԳԼԽԱՐԿ, գ. **Փետուրե գլխարկ:** .... Այնտեղ նա դնում է **փետրագլխարկը** .... (*Դ., Մ., էջ 85*):

ՓԵՏՐԱԶԳԵՍՏ, գ. (փխբ.): **Փետրածածկույթ:** Դե իհարկե, սևուկ կարմրատուտ էգն էր...դարչնագույն **փետրագզեստով** (*ՄՀ, էջ 58*):

ՓԵՐԵԶԱԿՈՒՀԻ, գ. **Կին փերեզակ:** Տիկին Ռաբենը .... հին մի **փերեզակուհի** էր (*Զոլա, էջ 14*):

ՓԻՐՈՒԶԱՇԱՐ, ան. **Փիրուզագույն հատիկներով շար:** Ասես **փիրուզաշար** մանյակ էր կրում, ...ոչ թե վզին, այլ թևիկներին (*ՄՀ, էջ 214*):

ՓԻՐԱԲԵԿ, ան. **Հեշտությանը բեկվող:** ...Ավելի ներքևի մասը նուրբ էր, **փխրաբեկ** ու անճարտար.... (*Հ, էջ 128*):

ՓԻՐԱԹԵԹԵՎ, ան. **Փխրուն և թեթև:** Հետո երկնքի խորքերից մի **փխրաթեթև** ու դեղին ամպի ծվեն պոկվեց ու ցած սահեց (*Հ, էջ 199*):

ՓՂՈՍԿՐԱԿԵՐՏ, ան. **Փղոսկրից կերտված:** Տեսիլքները հայտնվում էին մեկ որպես **փղոսկրակերտ** սյուներ, մեկ որպես նախշափայլ ու ծալազարդ վարագույր (*ԹԶ, էջ 176*):

ՓՇԱԼԱՐԱՊԱՏ, ան. **Փշալարերով պատած:** Խորհրդարանի **փշալարապատ** մատույցներում ոստիկանական պատը արգելակեց Նիկոլ Փաշինյանի մուտքը ԱԺ (*Իր., 17.04.2018*):

ՓՇԱՃՅՈՒՂ, գ. **Փշոտ բույսի ճյուղ:** Չոր ու ցամաք **փշաճյուղեր՝** այրված, այրող, ծակծկող (*ՌԴ, էջ 224*):

ՓՈԹԱԾԱԼՔ, գ. **Փոթերի ծայր**: Կնոջ հագին .... **Փոթածալքերով** ծանրաբեռնված շորեր էին *(Կաֆկա, էջ 43)*:

ՓՈՒԳՈՐԾՈՒՆ, ած. **Փոխադարձաբար իրար վրա ազդող, իրարով պայմանավորված, ինտերակտիվ**: Սովորում ենք **փոխգործուն** տեխնոլոգիաներ *(Հւնց, էջ 220)*:

ՓՈՒՀԱԿԱՍԱԿԱՆ, ած. **Փոխադարձաբար իրար հակասող**: .... Մարդկային խառնվածքի ամենատարբեր և անզամ **փոխհակասական** դրսևորումներում .... *(Հայրունի, էջ 92)*:

ՓՈՒՀԱԿԱՍՈՂ, ած. **Փոխադարձաբար հակասող**: .... Իրենց դատողություններն արտահայտում էին **փոխհակասող** ձևով *(ՆԱ, էջ 220)*:

ՓՈՒՀԱՄԱԿՑՎԵԼ, կր.չբ. **Փոխադարձաբար համակցվել**: .... Բաֆֆու դիտարկումները ... **փոխհամակցված են** ... համանման ըմբռնումներին *(Հայրունի, էջ 30)*:

ՓՈՒՀԱՄԱՁԱՅՆ, ած. **Փոխադարձաբար համաձայն՝ համապատասխան**: Ֆրանսիական գորքերը ....., **փոխհամաձայն** ամերիկյան խոշոր գորամիավորումների գործողությունների հետ, սպառնացին գրոհել .... *(Կուսեր, էջ 430)*:

ՓՈՒՀԱՄԱՏԵՂՈՒՄ, գ. **Փոխադարձ համատեղում, փոխադարձաբար համատեղելը**: .... Անհատի և հասարակության ... երևույթային **փոխհամատեղմամբ** ևս հասարակական հիվանդություններն անհնար է բուժել.... *(Հայրունի, էջ 44)*:

ՓՈՒՀԱՄԱՆԱԼԻՈՒԹՅՈՒՆ, գ. **Փոխադարձ հասկանալի լինելը**: **Փոխհասկանալիության** մակարդակն այնպիսին էր, որ ... դյուրին էր տեսագրվելը.... *(ՄՄ1, էջ 142)*:

ՓՈՒՋԻ, գ. **Ճանապարհների վրա տեղավորված կայաններում ձիերով ժամանածների ձիերը նորերով փոխարինելու համար պահվող ձիեր**: .... – Հոգացեք, որ ... ճանապարհների յուրաքանչյուր տասը մղոնի վրա, կազմ ու պատրաստ, **փոխձիեր** լինեն *(Գյումա, էջ 536)*:

ՓՈԿԱՀՅՈՒՄ, ած. **Փոկերով հյուսված**: .... Փայտացած ձգվել էր **փոկահյուս** մահճակալի վրա .... *(Բ 4, էջ 571)*:

ՓՈՂԱՄՈԼՈՒՑԲ, գ. **Փողի մոլուցք, նյութապաշտություն: ...** [Դա] անբարեխիղճ հանքահանության և դրսի ու ներսի **փողամոլուցքով** հիվանդների մի խմբի գործունեության արդյունք է (ԳԹ, 18.05.2018):

ՓՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, գ. (դիպվ.): **Փող շինելը:** Նրանք ամեն բան, սուրբ թե անսուրբ, վեր են ածում **փողաշինության** (ՌԴ, էջ 257):

ՓՈՍՏԱՂԲ, գ. «Կասպերսկի լաբորատորիայի» հայաստանյան ներկայացուցիչ Արմեն Կարապետյանի հետ մեր նախորդ զրույցը խարդախ կայքերի ու **փոստաղբի** (սպամ.) մասին էր (Իր., 16.03.2018):

ՓՈՍՏԱՆԱՎ, գ. **Փոստի նավ, փոստը տեղափոխող նավ: Փոստանավ** 243-ընանցում էր .... (ՌՇ, էջ 46):

ՓՈՍՏԱՊԱՅՈՒՍԱԿ, գ. **Փոստի պայուսակ, պայուսակ, որի մեջ տեղավորում-տեղափոխում են փոստը:** ... Մի մետաղաձող գտավ, վերցրեց ու մնացրեց գոտու արանքը՝ **փոստապայուսակից** վար (ՌՇ, էջ 59):

ՓՈՐԱՔԱՆԴԱՎԵԼ, կր.բ.**Փորելով քանդակվել:** ... Ուղղաբերձ ճայրի ճակատին նշմարվում էր քարի մեջ **փորաքանդակված...** նետ ու աղեղով զորականի մի պատկեր (ՍՏ, էջ 240):

ՓՈՐՁԱԷԱԿ, գ. **Փորձարկման ենթարկվող էակ:** ...Երեխաներին որպես **փորձաէակներ** պատվաստումներ են արել .... (Մտիին, թ. 4, 2017):

ՓՈՐՁԱԹԵՐԹ, գ. **Առանձնատիպ, սևատիպ (օտիսկ):** ... Վերցրեց **փորձաթերթերը** և երկու բանաստեղծություն կարդաց (Գոլմ. 4, էջ 270):

ՓՈՐՁԱՁՈՂԻԿ, գ. Նվագական **փորձաձող-ի:** Միթե դատավորը պարտավոր չէ լինել .... մարդկանց սրտերը զննող **փորձաձողիկ**, մի փորձաքար .... (Դյունա, էջ 560):

ՓՈՐՁԱՎԱՅՐ, գ. **Փորձ(եր)ի՝ փորձեր կատարելու վայր:** Թաքուն հետևում է Գարինին մինչև **փորձավայրը**.... (ՍՏ, էջ 42):

ՓՍԼԻՆՔԱԽԱՌՆ, ած. ....**Փսլինքախառն** արյան բարակ գիծը մի ոունգի տակ եկավ (ՀՄ, էջ 575):

ՓՐԿԱՐԱՐՈՒՇԻ, գ. **Կին փրկարար, փրկարար կին: ...** Հյուրանոցի տիրոջը ներկայանում է որպես **փրկարարուհի ...** (Կաֆկա, էջ 355):

ՓՐՓՐԱՆՄԱՆ, ան. **Փրփուրի նման:** Ամեն ինչ նրա գլխավերևում գեղեցիկ էր ու **փրփրանման** (Գոլու. 3, էջ 474):

ՓՐՓՐԱՍՈՄԻՆՁ, գ. **Փրփրանման սուսինձ:** Սկզբում նրան ծաղրում էին մեքենան **փրփրասուսնձով** պատելու համար (Հւնց):

ՓՈՒԹԱԳԱՐ, մկբ. **Հիվանդագին՝ չափազանց արագ:** Նրանք **փութագար** ամեն տեսակ խմիչքներ էին կոնծում առավոտից մինչև առավոտ (ԱՏ, էջ 7):

ՓՔՈՒՆԱՏԵՄ, ան. **Փքուն տեսք ունեցող:** Փքունատես «**Բյուրիկներ**» (Կվին, էջ 320):

## Ք

ՔԱՂԱՔԵԶՐ, գ. **Քաղաքի եզր՝ ծայր՝ ծայրամաս:** ... Ես մնացի **քաղաքեզրի** անտատակում (Սյուրև, էջ 136):

ՔԱՂԳՈՐԾԻՉ, (հպվ.): գ. **Քաղաքական գործիչ:** Ակցիան շարունակվում է. շոուբիզնեսը և **քաղգործիչները** նորից պատ են կազմել (Հւնց, news.am):

ՔԱՂՀԱԼԱԾՅԱԼ, գ. (հպվ.): **Քաղաքական հալածյալ:** Բարև, ամենամեծ **քաղհալածյալ** ջան (Հւնց):

ՔԱՂՑԿԵՂԱՇԱՐՈՒՅՑ, ան. **Քաղցկեղ առաջացող:** Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ուռուցքաբանների առանձնացրած ութ **քաղցկեղահարույց** մթերքների ցանկը (Հւնց):

ՔԱՄԱՀԱԼԱԾ, ան. **Քամուց հալածված:** Հայր Թորոսը նայում էր...**քամահալած** ամպերին (ԹՁ, էջ 186):

ՔԱՅԼՈ, գ. **2018թ. թավշյա հեղափոխության խորհրդանիշերից մեկի՝ շան անունը:** ... Նա [Քայլոն] հավատարիմ է Գյումրիից Երևան անցած ճանապարհին... (Իր., 25.05.2018):



ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒՇԻ, գ. **Քանդակագործ կին:** Պատերազմի տարիներին քաջասիրտ, երիտասարդ **քանդակագործուհին...** խիզախությամբ կռվել է ֆաշիզմի դեմ (ՄԳ, էջ 17):

ՔԱՌԱՐՇԱՎԵԼ, ք. **Քառարշավ՝ քառատրոփ վարել:** Նա սովորեց ձի նստել, որպեսզի կարողանա **քառարշավել** կառքերի կողքին ... (Թ 4, էջ 495):

ՔԱՐԵՂԵՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Քարեղեն լինելը:** Նկարչի վրձինը կարողանում էր հաղորդել դրանց էությունը՝ **քարեղենությունը** (Թ 2, էջ 19):

ՔԱՐՈԶՉԱՇԵՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Գաղափարների քարոզչության գողություն** ...Այսօր գեներքի պես վտանգավոր է դարձել է հրահրող, մոլորեցնող, ապատեղեկատվություն սփռող մեդիա **քարոզչահենությունը** (Ազգ, 23.12.2016):

ՔԱՐՈԶՉԱՆԿԱՐ, գ. **Քարոզչական նկար:** ...Երկաթյա ժանգոտ ցցերի վրա կար ամրացված մի **քարոզչանկար** (ԳԱ, էջ 19):

ՔԱՐՈՒԺԱՅՈՒ, գ. **Քար ու ժայռ, քարոտ բնություն:** Նա բնության, հետիոտն արշավների, քարուժայրի սիրահար է (ԱՀ, էջ 23):

ՔԾՆԱՄՈԼ, ան. **Մոլի քծնող:** .... Այդ մարդը **քծնամուլ**, քաղցրալեզու մարմին վաճառողներից չէ (ՌՇ, էջ 177):

ՔՂԱՆՅՔԱԲԱՅ, ան. **Քղանցքը բաց:** .... Դեռ թափառում էին .... **քղանցքաբաց** թիկնոցներով .... տարեց մարդիկ .... (ԱՏ, էջ 166):

ՔՅՈԼՆԱԲՆԱԿ, ան. **Քյոլնում բնակվող:** Քաղաքային իշխանությունները նախաձեռնող խմբին հիշեցրել են, թե իրենք ընդառաջել են **քյոլնաբնակ** հայերի ցանկությանը .... (Ազգ, 20.04.2018):

ՔՆԱԲԱՆ, գ. **Քնաբանության մասնագետ:** **Քնաբանները** պարզել են, թե որքան հաճախ են մարդիկ հայհոյում քնի մեջ (ՀԱՅ, news.am):

ՔՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, գ. **Քնի առանձնահատկություններն ուսումնասիրող գիտություն:** **Քնաբանություն.** քնի հետ կապված ինչ հիվանդություններ է այն ուսումնասիրում (ՀԱՅ, news.am):

ՔՆՆԱԿԵՆՏՐՈՆ, գ. **Քննական կենտրոն:** Նախորդ տարիներին, օրինակ՝ **քննակենտրոնի** մուտքի դռանը հասնելու համար ստիպված էիր լինում ձեռքով «ճանապարհ բացել» (ՀՀ, 20.07.2016):

ՔՆՔՇԱՆՐԲԻՆ, ած. **Քնքուշ և նուրբ:** ...Երկյուղում էի **քնքշանրբին** սիրային մտքերից, որոնք այնպես հաճախ էին ինձ այցելում (Հ, էջ 98):

ՔՐԴԱՊԱՏՈՒՄ, ած. **Քրդերի մասին պատմող:** Աշխարհում առաջին **քրդապատում** ֆիլմին հետևել է պարսիկների մասին ստեղծված առաջին խաղարկային կինոնկարը՝ «Խասսիուշը» ... (ԳԹ, 27.04.2018):

ՔՐԻՂԱՎՈՐ, ած. **Քուղեր ունեցող:** ... Տղամարդն այդ գեներալական համազգեստով էր, **քուղավոր** ուսադիրներով ... (Գյուսու, էջ 476):

ՔՐԻՉԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. Ն. **Քուչակի ստեղծագործությունը ուսումնասիրող գիտություն:** ... Վ. Եղիազարյանի կազմած «Նահապետ Քուչակ. աշուղական երգեր» աշխատությունը արժեքավոր ներդրում է **քուչակագիտության** մեջ (Ազգ, 27.10.2017):

## Օ

ՕԳՏԱԷՔ, գ. **Օգտատիրոջ էջ:** Ուզում եմ տեղեկացնել, որ սա իմ միակ **օգտաէջն** է (ՀԱԳ):

ՕԴԱԳՆԴԱԿ, գ. **Փուչիկ:** Մի մեծ **օղագնդակի** ներսում բազմաթիվ փոքրիկ **օղագնդակներ** կլինեին (Արտ., գրակ., 3, 2017, էջ 24):

ՕԾԱՆԵԼԻՔԱՐՈՒՅՐ, ած. **Օծանելիքի բույր արձակող՝ ունեցող, օծանելիքի նման բուրոդ:** ... Ման էր գալիս հետևիցս, «զգացմունքային» բանաստեղծություններ ուղարկում **օծանելիքաբույր** հատուկ թղթի վրա ... (Կլին, էջ 174):

ՕԶԱԾԻՆ, ած. 1. **Օձից ծնված:** 2. (փխբ):. **Երախտամոռ, խորամանկ, խարդախ:** - Անիծյալ **օձածին** աղջիկ, ... դու լավ գիտես, որ ես քեզ սիրում եմ, և այդ բանը ի չարն ես գործ դնում (Բ 2, էջ 601):

ՕԶԱԿԾԻԿ, գ. **Օձերի կծիկ**: .... Փրփրացող քառսի մեջ .... գիշատիչները վխտում էին այնպես, ինչպես **օձակծիկը** .... (Մեր., էջ 214):

ՕՂԱԿԱՆՄԱՆ, ան. **Օղակի նմանություն ունեցող, օղակաձև, կլորավուն**: .... Այս ինչ բան է,- բացականչեց Ջոն՝ դիտելով **օղականման** կարմրությունը (Բ 6, էջ 505):

ՕՂԵԲԱՂԶ, ան. **Օղի փափագող**: Ձևացնում էր, թե լսում է՝ վարպետորեն թաքցնելով **օղեբաղձ** անհամբերությունը (ԳԹ, 03.11.2017):

ՕՂԵԿԱՊ, գ. (իմ. նորբ.): **Օղակաձև կապ**: .... Գանգուրները արձակված էին, թեպետ պահվում էին շղարշե **օղեկապով** (Բ 2, էջ 224):

ՕՃԱՌԱՔԱՐ, գ. **Օճառի քար**: Դրանք միշտ պահում են արտակարգ մաքուր վիճակում և **օճառաքարով** .... լվանում (Մեր., էջ 233):

ՕՏԱՐԱԼԵԶՎՈՒԹՅՈՒՆ, գ. **Օտարալեզու լինելը**: ....Քարացած նահապետականություն և ապագգայնացում, ....**օտարալեզվություն**.... (Հայրնի, էջ 84):

ՕՐԻՆԱՀԱՐԳՈՒԹՅՈՒՆ, գ. **Օրենքը հարգելը, օրինապահ լինելը**: Հորդոր են ուղղում մեր ժողովրդի գավակներին՝ կոչ անելով պահպանելու զգաստությունն ու ողջախոհությունը, հայրենասիրության մեջ **օրինահարգությունը** և խաղաղության նախանձախնդրությունը .... (Իր., 20.04.2018):

ՕՐԻՈՐԴԱՊԱՐ, գ. **Օրիորդների պար**: Աղջկան հաջողվեց .... մասնակցել «կինակկտային»՝ **օրիորդապարին** (Դ., Մ., էջ 101):

ՕՐՈՐԱՍԱՑ, գ. **Օրոր երգող**: **Օրորասացը** ցանկացած տեքստը հարմարեցնում է իր հոգեվիճակին (ՋԸ, էջ 256):

ՕՐՈՐԱՍԱՑԱԿԵՆՏՐՈՆ, ան. (դիպվ.): **Օրորասացին որպես կենտրոն ունեցող**: Մեզ հուզող տեսանկյունից առանձնացնեք տեքստի հարմարեցման երկու տեսակ՝ **օրորասացակենտրոն** և երեխայակենտրոն (ՋԸ, էջ 256):

ՖԵՏՅԱՐՈՒՔԱՀԱՅ, գ. **Համակարգչային face book հանրացանցից օգտվող հայ:** Միրելի ընկերներ, Հայաստանի Հանրապետության ազատ **ֆեյսբուքահայեր...** (*Հւճ*):

ՖԵՏՅԱՐՈՒՔՅԱՆ, ած. **Համակարգչային face book հանրացանցում կատարված:** Սփյուռքի նախարարը **ֆեյսբուքյան** գրառում է կատարել (*Հւճ, news.am*):

ՖԻԼՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, գ. **Ֆիլմերի արդյունաբերություն, արտադրություն:** ...Մերձավոր Արևելքի հարցերով բաժնի պատասխանատու Ուոլիս Մուրեյն անմիջապես նամակ ուղարկեց **ֆիլմարդյունաբերության** արքա Ուիլ Հեյզին (*ՓՄ, էջ 39*):

ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՂ, գ. **Ֆիլմի արտադրությամբ զբաղվող անձ:** Ռուս **ֆիլմարտադրողները** Հայաստանում վարպետության եռօրյա դասընթաց են կազմակերպում (*Հւճ, news.am*):

ՖԻԼՄԿԵՆՏՐՈՆ, գ. **Կինոկենտրոն:** ... Կազմակերպչական խնդիրները հոգում է գերմանական մանկապատանեկան **ֆիլմկենտրոնը** (*Ազգ, 30.09.2016*):

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ած. **Ֆինանսական և տնտեսագիտական ուղղություն ունեցող:** «Գլոբալ Կրեդիտը» **ֆինանսատնտեսագիտական** քոլեջին նվիրեց մասնագիտական գրքեր (*Հւճ, news.am*):

ՖՈՏՈԲՈՑ, գ. (դիպվ.): **Արտասովոր բովանդակությամբ լուսանկար:** **Ֆոտոբոց** Օբամայից. մանկական քնքուշ համբույր ոչինչ չկասկածող նախագահի թիկունքում (*Հւճ, news.am*):

ՖՈՏՈԴԻՄԱՆԿԱՐ, գ. **Մարդու դիմանկարը ներկայացնող լուսանկար:** Ի բացակայություն հեղինակի լուսանկարի Ման Ռեյ (Man Ray) **«Ֆոտոդիմանկար»** (*Ատիին, թ. 3, 2017*):

ՖՈՏՈԴԻՏԱԿ, գ. **Լուսանկարչական դիտակ:** Հզոր **ֆոտոդիտակը** ձեռքիս բնապատկերներ էի լուսանկարում (*ՄՀ, էջ 36*):

ՖՈՏՈԷՊԻԼԱՑԻԱ, գ. **Լուսային մագաղեղացում:** Ինչպես պարաստվել **ֆոտոէպիլյացիային** (*Հւճ, news.am*):

ՖՈՏՈԹԱԿԱՐԴ, գ. **Գաղտնի լուսանկարման սարք:** Կոլոբի՝ առավոտյան վարժանքը հայտնվել է արգելոցի **ֆոտոթակարդի** օբյեկտիվում (*Հւց, news.am*):

ՖՈՏՈԹԵՐԱՊԻԱ, գ. **Բուժում լուսանկարչության միջոցով:** Երևանում **ֆոտոթերապիայի** առաջին ցուցահանդեսն է մեկնարկել (*Հւց, news.am*):

ՖՈՏՈԼՐՏԵՍ, գ. **Լուսանկարելու միջոցող լրտեսող: Ֆոտոլրտեսները** հրապարակել են Mercedes-Benz G-Class-ի լուսանկարները (*Հւց, news.am*):

ՖՈՏՈԽՄԲԱԳՐԻՉ, գ. **Լուսանկարչական խմբագրիչ:** Հայկական PicsArt-ը ճանաչվել է iOS-ի համար լավագույն **ֆոտոխմբագրիչ** (*Հւց, news.am*):

ՖՈՏՈԿՈԼԱԺ, գ. **Լուսանկարչական կոլաժ:** ԱՄՆ-ում Լեհաստանի պատվո հյուպատոսը հրապարակել է Տուսկի **ֆոտոկոլաժը** ՍՍ-ի համազգեստով (*Հւց, news.am*):

ՖՈՏՈԿՈՄԻՔՍ, գ. **Երգիծական բովանդակությամբ լուսանկար:** Կնոջ հետ ամենօրյա կյանքը՝ տասը **ֆոտոկոմիքսներով** (*Հւց, news.am*):

ՖՈՏՈՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ, գ. **Լուսանկարների հանրագիտարան:** ...Այդ անթոլոգիան տասը ձայնասկավառակից և կից **ֆոտոհանրագիտարանից** է բաղկացած (*Անդին, թ. 4, 2017*):

ՖՈՏՈՀԱՎԵԼՎԱԾ, գ. **Լուսանկարչային հավելված:** Facebook-ը նոր **ֆոտոհավելված** է մշակել՝ iOS-ի հիմքի վրա (*Հւց, news.am*):

ՖՈՏՈՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, գ. **Պատմություն՝ լուսանկարների միջոցով:** Սև ու սպիտակ **ֆոտոպատմություն**. Խորհրդավոր Ջոնի Դեվիդ (*Հւց, news.am*):

ՖՈՏՈՊԱՐՈԴԻԱ, գ. **Լուսանկարչական ծաղրանմանակում:** Բրիտանացի բժիշկը արել է Քիմ Քարդաշյանի, Քենդալ Ջեններ, Էմիլիա Քլարկ և այլ աստղերի **ֆոտոպարոդիան** (*Հւց, news.am*):

ՖՈՏՈՍԵՍԻԱ, գ. **Թեմատիկ ընդհանրությամբ լուսանկարների շարք:** Ամերիկյան զույգը հրապարակել է անհաջող **ֆոտոսեսիայի** արդյունքները (*Հւց, news.am*):

**ՖՈՏՈՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ**, գ. **Լուսանկարներով արվող տարեգրություն:** Ես հանկարծ ճանաչեցի պատերազմի **ֆոտոտարեգրության** այդ պատանուն (*ՀՄ, էջ 633*):

**ՖՈՏՈՏԱՐԲ**, գ. **Լուսանկարչական տարր, մասնիկ:** Ֆինլանդիայում **ֆոտոտարրերով՝** «տերևներով» արհեստական ծառ են ստեղծել (*ՀԱԳ, news.am*):

**ՖՈՏՈՌՈՒՍՈՒՑՈՒՄ**, գ. **Լուսանկարչության ուսուցում:** Հարսանեկան հրավիրատունս՝ ձեր ձեռքերով. NEWS.am **STYLE-ի ֆոտոուսուցումը** (*ՀԱԳ, news.am*):

**ՖՈՏՈՔԱՆԴԱԿ**, գ. **Քանդակի լուսանկար:** Ցեղասպանությունը վերապրածների **ֆոտոքանդակների** ցուցադրություն Լոս Անջելեսում (*ՀԱԳ, news.am*):

**ՖՐԱՆՍԱԳԻՐ**, ած. Այստեղ՝ **Ֆրանսերեն գրված:** Մի քանի նմուշ այն արձակից, ... որը ուշագրավ երևույթ է արդի **ֆրանսագիր** արձակի լայնահուն համապատկերում (*Անդին, թ. 3, 2017*):

**ՖՐԱՆՍԻԱՏԻՊ**, ած. **Ֆրանսիականի տիպի՝ նման, ինչպես ֆրանսիականը:** -Դա շատ **ֆրանսիատիպ** թաղ է (*Գոլու. 2, էջ 334*):

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

## Ա. Գրքեր

- ԱԱ Աղասի Այվազյան, Մեղքով հղացածը, Եր., ՀԳՄ, 2006:
- ԱԹ Ալեքսանդր Թովիցյան, Բանկ օտոման, Եր., Գասպրիհնտ, 2008:
- ԱՊ Ալվարդ Պետրոսյան, Հիշիր, Եր., Տիգրան Մեծ, 2016:
- ԱՍ Արտեմ Սարգսյան (Բագրատունի), Քսանմեկ հազար օրը..., Ինքնակենսագր., Եր., Էդիթ Պրինտ, 2008:
- ԱՍ 1 Արտեմ Սարգսյան (Բագրատունի), Եվս չորս հազար օրը..., Ինքնակենսագր., Եր., Էդիթ Պրինտ, 2009:
- ԱՏ Ալեքսեյ Տոլստոյ, Ինժեներ Գարինի հիպերբոլիդը, Եր., Սով. գրող, 1982:
- Բ Օնորե դը Բալզակ, Երկերի ժողովածու, Մարդկային կատակերգություն, հ2 (Եր., Հայպետհրատ, 1958), հհ 4,6,8,10: Գայանե «Գայանե» պատկերագիրք, Եր., Տիգրան Մեծ, 2010:
- ԳԱ Գևորգ Աբաջյան, Փշրանքներ իմ փշրված կյանքից, Եր., Գրաբեր, 2013:
- ԳԴ Գևորգ Դևրիկյան. Վիրավոր կռունկ, Եր., Հայաստան, 1973:
- ԳԹամ. Գևորգ Թամամյան, Դրախտ օվկիանոսի մեջտեղում կամ (Արտադրված է Թայվանում), Եր., Անտարես, 2016:
- Գոլս. 2 Ջոն Գոլստորդի, Ֆորսայթների պատմությունը, Ասք Ֆորսայթների մասին, Ծուղակի մեջ, Եր., Սով. գրող, 1977:
- Գոլս. 3 Ջոն Գոլստորդի, Ֆորսայթների պատմությունը, Ասք Ֆորսայթների մասին, Վարձու է տրվում, Եր., Սով. գրող, 1977:
- Գոլս. 4 Ջոն Գոլստորդի, Ֆորսայթների պատմությունը, Ժամանակակից կատակերգություն, Սպիտակ կապիկը, Եր., Սով. գրող, 1979:
- Գոլս. 5 Ջոն Գոլստորդի, Ֆորսայթների պատմությունը, Արծաթե գդալը, Եր., Սով. գրող, 1979:

- Գոլս. 6 Ջոն Գոլստորդի, Ֆորայթների պատմությունը, Ժամանակակից Կատակերգություն, Կարապի երգ, Եր., Սով. գրող, 1980:
- Դ.,Մ. Ա. Դրիձո, Լ. Մինց, Մարդիկ և սովորույթներ, Եր., Լույս, 1987: Դյունա Ալ. Դյունա, Կոմս Մոնտե-Քրիստո, գ. 1, Եր., Արևիկ, 1987, թարգմ. Ս. Վահունի:
- ԹԱ Թրուայա Անրի, Էզլեթիերների ընտանիքը, Եր., Սով. գրող, 1980, ֆրանս. թարգմ. Ս. Հ. Ավագյան:
- ԹԶ Թելման Ջուրաբյան, Թորոս Ռոսլին, Եր., Սով. գրող, 1986:
- ԺՄ Ժորժ Միմենոն, Մեգրեի ցասունը, Եր., Սով. գրող, 1984:
- ԼԶ Լևոն Ջավախյան, Ծնկան ձերին, Եր., Լուսակն, 2018:
- Կաֆկա Ֆրանց Կաֆկա, Դոյակը, Եր., Ապոլոն, 1992:
- Կվին Լև Կվին, Ժանգոտ թակարդ կանաչ դաշտում, Եր., Արևիկ, 1988, թարգմ. Դ. Եսայան:
- Կուպեր Ջեյմս Ֆենիմոր Կուպեր, Լրտեսը, Եր., Սով. գրող, 1984: Հ., Ա., Միջ. բառ. Զ. Ա. Հացագործյան, Ս. Ա. Ասլանյան, Միջազգային տերմինային Տարրերի ուսու-հայերեն բառարան, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989:
- Հայրունի Աշոտ Հայրունի, Բաֆֆի. Գրաքննադատը և հրապարակախոսը, Եր., Նաիրի, 2009:
- ՀՀ Հերման Հեսսե, Դեմիան, Եր., Քյուրքյան, 2017, թարգմ. գերմ. Ա. Ալեքսանյան:
- ՀՄ Հրանտ Մաթևոսյան, Հատընտիր, հ. 1, Եր., Հ. Մաթևոսյան հիմնադրամ, 2005:
- ՄԱ Մայքլ Առլեն, Դեպի Արարատ, Եր., Նաիրի, 2000, թարգմ. անգլ. Լ. Զիլֆուգարյան:
- Մեր. Հերման Մերվիլ, Մորի դիկ կամ ճերմակ կետածուկը, Եր., Սով. գրող, 1979:
- ՄԵ Մարգարիտ Եսայան, Գյուլունյա, Եր., Անտարես, 2015:
- Մոր. Ֆրանսուա Մորիակ, Թերեզ Դեպլեյրու, Եր., Նաիրի, 1992:



- Մորավիա Ալբերտո Մորավիա, Չոչարա, Արհամարհանք, Եր., Սով. գրող, 1989, թարգմ. իտալ. Գ. Վիրապյան:
- ՆԱ Նարինե Արգարյան, Երկնքից երեք խնձոր ընկավ, Եր., Օրակույ, 2017, թարգմ. ոռու. Ն. Խաչատրյան:
- ՇԽ Շահեն Խաչատրյան, Վարդգես Սուրենյանց 1960-1921, Եր., Փրինթ ինֆո, 2014:
- ՊՇ Պետեր Շտամ, Ազնես, Եր., Զանգակ, 2017, թարգմ. գերմ. Գ. Գինոսյան:
- ԶԸ «Զահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի գեկուցումների ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017:
- ՌԴ Ռազմիկ Դավոյան, Գերդաստան, Եր., Մունեսիկ, 2017:
- ՌՂ Ռաֆայել Ղազանչյան, Հայրական ձեռագիր, Եր., Գրաբեր, 2003:
- ՌԿ Ռոբերտ Կարայան, Մարդագարդի տոն արարենք, Եր., ՀԳՄ, 2010:
- ՌՇ Ռոբերտ Շեքլի, Մոքի բուրմունքը, Եր., Սով. գրող, 1984:
- ՍԳ Սեյրանուհի Գեղամյան, Հեռացող հիշատակներ, Եր., Գրաբեր, 2005:
- Սել. Զ. Դ. Սելինջեր, Վիպակներ, պատմվածքներ, Եր., Սով. գրող, 1978, թարգմ. Ա. Ղուկասյան:
- Սյուրմ. Լևոն-Զավեն Սյուրմելյան, Ձեզ եմ դիմում, տիկիններ և պարոններ, Եր., Սով. գրող., 1986, թարգմ. անգլ. Հ. Բուջիկանյան:
- ՍՀ Սուրեն Հայրապետյան, Բնության ձայնին ունկնդիր, Եր., «Վ. Մ. Փ. -Պրինտ», 2013:
- ՎՆ Վաղարշակ Նորենց, Հուշեր և արձագանքներ, Եր., Հայաստան, 1968:
- ՎՍ Վազգեն Սարգսյան, Խաղ, Եր., Պետպատվեր, 2000:

## **Բ. ամսագրեր**

Անդին – Անդին

Արտ. գրակ. – Արտասահմանյան գրականություն

Գարուն – Գարուն

Լրաբեր – Լրաբեր հասարակական գիտությունների

Նարեկ-Նարեկ

Նորք – Նորք

ՊԲՀ – Պատմաբանասիրական հանդես

## **Գ. լրագրեր**

Ագրուրատու - Ագրուրատու

Ազգ – Ազգ

Գիտ. - Գիտություն

ԳԹ – Գրական թերթ

Եր. համ. - «Երևանի համալսարան»ամսաթերթ

Իր. – Իրատես

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

Հրապ. – Հրապարակ

TV ալիք - TV ալիք

## **Դ. Այլ աղբյուրներ**

Գովազդ, Հեռ. (հեռուստատեսություն), Հնց (համացանց), ռադիո:

## Օգտագործված բառարաններ

1. Աղայան Էդ. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., Հայաստան, 1976:
2. Բարսեղյան Հ. Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական տերմինաբանական բառարան, Եր., Լույս, 1973:
3. Էլոյան Ս. Ա., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Եր., Նաիրի, 2002:
4. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980:
5. Խղաթյան Ֆ. Խ., Բառարան-տեղեկատու: Նոր բառեր և իմաստներ, Եր., Հայաստան, 1982:
6. Մալխասեանց Սո., Հայերեն բացատրական բառարան, Եր., ՀՍՍՌ-պետ. հրատ., հհ. 1-3, 1944, հ. 4, 1945:
7. Մեյթիխանյան Փ. Գ., Նոր բառերի բացատրական բառարան, Եր., Փյունիկ, 1996:
8. Հ. Մեսրոպեան, Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսի երկերի բառարան, Մոնրեալ, 2000:
9. Նոր բառեր. Ա պրակ (Ա. Ս. Գալստյան, Գ. Կ. Հովսեփյան, Ա. Գ. Սահակյան, Լ. Ե. Սահինյան), Եր., 2015:
10. Նոր բառեր. Բ պրակ (Ա. Ս. Գալստյան, Ս. Ա. Գալստյան, Գ. Կ. Հովսեփյան, Ա. Գ. Սահակյան, Լ. Ե. Սահինյան), Եր., 2016:
11. Նոր բառեր. Գ պրակ (կազմ.՝ Ա. Ս Գալստյան, Ս. Ա. Գալստյան, Գ. Կ. Հովսեփյան, Ա. Գ. Սահակյան), Եր., 2017:
12. Գ. Ս. Չիլինգարյան, Լ. Ե. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն- հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան, Եր., 2015:
13. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան (Զ. Ա. Հացագործյան, Ա. Հ. Դարբինյան, Հ. Գ. Հովույան, Գ. Հ. Սրվանձտյան), Եր., ՀՍՀ գլխ. խմբ., 1988:
14. Սաքապետոյան Ռ. Կ., Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարան, Եր., 2000:

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՍԵՐԳԵՅԻ  
ԳԱԼՍՏՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԱՇՈՏԻ  
ՀԱԿՈԲՅԱՆ ՖՐԻԴԱ ԱՐՏԱՇԵՍԻ  
ՀՈՎՍԵՓՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԿԱՌԼԵՆԻ  
ՍԱՀԱԿՅԱՆ ԱԼԱ ԳՐԻԳՈՐԻ  
ՍԱՀԻՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ ԵՐՎԱՆԴԻ

# ՆՈՐ ԲԱՌԵՐ

Դ պրակ

Համակարգչային էջադրուճը՝ Անուշ Մեսրոպյանի